Ազատ Շահինյան

ՍՈՒՐԻ ԵՎ ՍԱՄԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 3

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ. ԽԵԼԱՀԵՂ ՕՐԵՐ

Գլուխ առաջին. ՍՈՒՐԸ և ՍԱՄԸ 3
Գլուխ երկրորդ. ՄՈԼՈՐՅԱԼՆԵՐԸ 4
Գլուխ երրորդ. ԱՐՏԵՄ ՆԻԿՈԼԱԵՎԻՉԻ ԿԱՏՈՒՆ 5
Գլուխ չորրորդ. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԸ 8
Գլուխ հինգերորդ. ՄԱՀԱՄԵՐՁ ԹԵՅԱՄԱՆԸ 11
Գլուխ վեցերորդ. ԿՐԿԵՍՈՒՄ 12
Գլուխ յոթերորդ. ԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐԸ 16
Գլուխ ութերորդ. ԼՎԱՑՎՈՒՄ ԷԻՆՔ 19
Գլուխ իններորդ. ՀՐԱՇՔՆԵՐԻ ԱՐՔԱՆ 20
Գլուխ տասներորդ. ՉԱՐԱԲԱՍՏԻԿ ՕՐԸ 22
Գլուխ տասնմեկերորդ. ՆՐԱՆՔ ՀԵՌԱՑԵԼ ԵՆ ԸՆԿԵՐՆԵՐԻՑ 26
Գլուխ տասներկուերորդ. ՍԱՐՍԱՓԵԼԻ ԳԻՇԵՐ 27
Գլուխ տասներեքերորդ. ՄՆԱՆԿԱՑԱԾ ԳԵՐԱՁԱՆՑԻԿՆԵՐԸ 32

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ. ԱՐՏԱՍՈՎՈՐ ԱՄԱՌ

Գլուխ առաջին. ՄՈՐԱՔՈՒՅՐ ՄԱՐԹԱՆ ԳԱԼԻՍ Է 33
Գլուխ երկրորդ. ԱՆՍՊԱՍԵԼԻ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ 35
Գլուխ երրորդ. ԿԱՍԿԱԾԵԼԻ ՈՒՂԵՎՈՐԸ 37
Գլուխ չորրորդ. ՀԵՆԱԿԱՎՈՐ ՄԱՐԴԸ 40
Գլուխ հինգերորդ. ԳՅՈՒՂԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ 43
Գլուխ վեցերորդ. ՏԱՏԻ՞ԿՆ Է ԱՐՅԴՈՔ, ԹԵ 46
Գլուխ յոթերորդ. ԿԵՆԴԱՆԻ ԱՆԿՅՈՒՆ 50
Գլուխ ութերորդ. ԳԵՏԱՓԻՆ 52
Գլուխ իններորդ. ՓԱՅՏԵ ՀԻՆ ՏԱՇՏԱԿԸ 55
Գլուխ տասներորդ. «ՓՈԹՈՐԿԱՆԱՎԱԿԻ» ԱՆՓԱՌՈՒՆԱԿ ՎԱԽՃԱՆԸ 56
Գլուխ տասնմեկերորդ. ՄՈՂԵՍՆԵՐԻ ԵՏԵՎԻՑ 62
Գլուխ տասներկուերորդ. ԿԱՂՆՈՒՏԻ ԱՆՏԱՌԸ 64
Գլուխ տասներեքերորդ. ՆԱՎԱԿՈՒՄ ՄԱՐԴ ՉԿԱ 70
Գլուխ տասնչորսերորդ. ԱՐՏԵՄ ՆԻԿՈԼԱԵՎԻՉԻ ՄՈՏ 74
Գլուխ տասնհինգերորդ. ԱՐՇԱՎԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԱԿՆԿԱԼ ԼՈՒՐԸ 77
Գլուխ տասնվեցերորդ. ՇՇՈՒԿՆԵՐ ԳԵՏԻ ՎՐԱ 80
Գլուխ տասնյոթերորդ. ՀԱՌԱՉԱՆՔԻ ՔԱՐԱՅՐԸ 85
ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 87

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Գեղեցիկ է մեր քաղաքը, գեղեցիկ ու շքեղ, շրջափակված անտառածածկ սարերով: Երբ կանգնում ես Նորքի սարալանջին, հեռու-հեռվում, լազուր երկնքի մեջ մխրճված՝ կապտին է տալիս ձյունագագաթ Արարատը:

Խաղողի ողկույզներով, կեռակտուց արծիվներով ու սիրամարգերով են զարդարված մեր տուֆաշար բազմահարկ շենքերի ճակատները: Ամբողջ քաղաքն ասես բռնկվել է վարդագույն բոցով: Եվ իզուր չէ, որ մարդիկ մեր վարդատուֆ շենքերին նայելիս այս չքնաղ քաղաքն անվանում են վարդագույն քաղաք:

Երբ դանդաղ իջնում են ձյան առաջին փաթիլները, քաղաքը զուգվում է ճերմակ զգեստով: Ձմեռն էլ, իհարկե, այստեղ երկար չի տևում, և շուտ է վրա հասնում ցանկալի գարունը: Իսկ երբ ամառ է գալիս, քաղաքի մեծ ու լայն հրապարակի ջրավազանում վեր է ժայթքում շատրվանը, և կյանքը սկսում է ավելի կենդանանալ, փողոցներն ու բակերը թնդում են մեր մանուկների ուրախ ծիծաղից:

Բայց սպասեք... Այս ի՞նչ է: Կարծես դիմացի շենքի բաց լուսամուտից աղմուկ է լսվում: Թեև տգեղ բան է ներս նայել ուրիշի պատուհանից, բայց եկեք տեսնենք՝ ովքե՞ր են այդպես աղմուկ-աղաղակ բարձրացրել:

Դե, իհարկե, նրանք են Սուրն ու Սամը: Սուր ու Սամ... Այս ի՞նչ տարօրինակ անուններ են, կմտածեք դուք: Բայց այստեղ, իհարկե, մտածելու ոչինչ չկա: Նրանց անունները շատ սովորական և գեղեցիկ անուններ են՝ Սուրեն և Սամվել... Բայց բանն այն է, որ նրանք երբեք իրար լրիվ անուններով չեն կանչում, այլ պարզապես Սուր և Սամ:

Այ, եթե հարցնեք այս բակում վազվզող երեխաներին, թե ինչու են նրանք կռվում, ձեզ իսկույն կպատասխանեն.

- Մի՞թե չգիտեք... դե երևի նրանց հետ էլի մի բան է պատահել: Չէ՞ որ նրանց հետ շարունակ ինչ-որ բան միշտ էլ պատահում է:

Իսկ թե ինչու... Ահա հենց դրա մասին եմ պատմելու ձեզ հիմա:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
ԽԵԼԱՀԵՂ ՕՐԵՐ

Գլուխ առաջին. ՍՈՒՐԸ և ՍԱՄԸ

Սուրն ու Սամը անբաժան ընկերներ էին: Նրանք միշտ միասին էին լինում: Իսկ եթե պատահում էր հանկարծ, որ միասին չէին, ուրեմն դա հենց այն ժամն է, երբ նրանք փնտրում են միմյանց:

- Տղե՛րք, ուր գնաց Սամը, չտեսա՞ք... - հարցնում էր Սուրը հևասպառ:

Իսկ Սամն էլ իր հերթին էր փնտրում նրան.

- Սո՛ւր, ա՛յ Սո՛ւր...

Դասարանցի տղաներն այս ամենը տեսնելով ծիծաղում էին ու ասում.

- Մի դրանց նայեք: Էլի կարճլիկը կորցրել է լողլողին...

Եվ ճիշտ որ... Սուրն ու Սամը արտաքինով բոլորովին տարբերվում էին միմյանցից: Սուրը բարձրահասակ էր, մարմնով բարակ, ինչպես արևաածաղկի ցողունը: Տանձի պոչի նման բարալիկ վզի վրա ասես ճոճվում էր նրա երկարավուն գլուխը:

Սամը նրա հակառակն էր՝ տակառի պես հաստ ու կարճ: Նրա կլորիկ մարմնի վրա երկու բան էր աչքի ընկնում, մեկը՝ ձմերուկաձև տռզած փորն էր, մյուսը՝ հովհարի նման լոշտակ ականջները, որոնք, Սուրի ասելով, իմաստուն մարդու տեսք էին տալիս նրան:

Չնայած նրանք արտաքինով նման չէին, բայց բնավորությամբ այնպես էին ձուլվել իրար, որ կարծես Սամի ուսերին Սուրի գլուխն էր դրված, իսկ Սուրի ուսերին՝ Սամինը: Բայց արի տես՝ նրանց մտերմությունը երբեմն այնպիսի տուրուդմփոցներով էր ընդհատվում, որ երեսները զարդարվում էր բազմաթիվ ուռուցքներով ու կապտուկներով: Այդ բոլորը, ասենք, դեռ ոչինչ: Զարմանալին այն էր,

որ այդպիսի սովորական կռիվներից հետո նրանք անմիջապես հաշտվում էին, ասես ոչինչ չէր պատահել:
Եվ այսպես, մեկը մյուսից անբաժան, անտեսելով մյուսներին, ապրում էի աշխարհում երջանիկ ու անհոգ:
Իսկ ժամանակը...
Ժամանակը թռչում էր իր սլաքաձև թևերով, բայց Սուրն ու Սամը, չմտածելով դրա մասին, անց էին կացնում իրենց օրերն անհմաստ ու ապարդյուն:
Աշխարհում եթե մի բան կար, որ նրանց լուրջ մտահոգություն էր պատճառում, դա հռչակավոր մարդ դառնալու երազանքն էր: Նրանք շարունակ մտածում էին մի այնպիսի արտակարգ գործ կատարել, որ մարդիկ զարմանքից ապշեին, բայց...

Գլուխ երկրորդ. ՄՈԼՈՐՅԱԼՆԵՐԸ

Հիշո՞ւմ եք վեցերորդ «բ» դասարանի «Մոծակ» երգիծական պատի թերթի այս տարվա նախավերջին համարը: Դե, այն, էլի, որ գարնանային արձակուրդները վերջանալուց հետո լույս տեսավ ու երկար ժամանակ փակցված մնաց միջանցքի պատին: Այ, հենց այդ թերթի վերջին սյունակում, ինչպես հիշում եք, երկու ծիծաղելի մռութներ կային նկարված: Դրանք, իհարկե, Սուրն ու Սամն էին:
Դեռ անցյալ տարվանից, երբ դպրոցում կազմակերպվեցին թափթփվածների ու ցրվածների դեմ պայքարող խմբակներ, ամեն մի դասարան իր ակտիվ մասնակցությունն ունեցավ այդ, առաջին հայացքից տարօրինակ թվացող, նախաձեռնությանը: Ահա հենց այդ օրերին էլ ծնվեց մեր «Մոծակի» առաջին համարը, որի վերջին սյունակը հատկացվեց ցրվածներին ու թափթփվածներին:
Եվ այսպես ուրեմն, դեռ նոր էր փոխվել «Մոծակ» թերթի հերթական համարը, երբ վերջերս պատահած ծիծաղելի մի դեպք մեր «հերոսներին» նորից բարձրացրեց թերթում գրված իրենց մշտական տեղը:
Սուրի և Սամի ցրվածության մասին գիտեին դպրոցի համարյա բոլոր աշակերտները: Չէր լինում այնպիսի օր, որ նրանք մի որևէ բան չթողնեին դպրոցում: Զանգը տալիս էր, թե չէ, նրանք այնպես էին գլխապատառ դուրս թռչում դասարանից, որ չէին հասցնում անգամ իրենց նստարանի դարակները նայել:
Մի անգամ, դասերից հետո, երբ Սուրն ու Սամը իրենց խորհրդավոր գործերի մասին ոգևորված պատմելով տուն էին վերադառնում, հանկարծ Սամը ուսերին անսովոր թեթևություն զգաց՝ նա ակամայից շոշափեց ինքն իրեն և ամբողջ ձայնով ճչաց.
- Վա՛յ, վերարկուս...
Այս խոսքի վրա Սուրը ցնցվեց: Երկու ձեռքով բռնեց գլուխն ու բացականչեց.
- Պայուսա՛կս, ես էլ պայուսակս մոռացա...
Եվ նրանք գլխապատառ ետ վազեցին եկած ճանապարհով:
Երկրորդ հերթի դասերը դեռ չէին սկսվել, երբ նրանք դպրոց հասան:
Շքամուտքի մոտ խմբված աղմկում էին տղաներն ու աղջիկները: Երբ նրանք բակ մտան, բոլորը միանգամից լռեցին ու նայեցին հուզմունքից կրակված աչքերով, իսկ նրանց այտերը, թվում էր, ուր որ է կպատռվեն զսպված ծիծաղից:
Երկրորդ հարկի միջանցքի կենտրոնական լուսամուտից դանդաղ ներքև էին իջնում թելից կախված Սուրի պայուսակն ու Սամի վերարկուն: Նրանց վրա խոշոր տառերով մի թերթ էր փակցված հետևյալ մակագրությամբ.
«Ո՜վ մոլորյալներ... Եթե դուք շարունակեք մեզ մոռանալ, ապա մենք այս թելի վրայով, սարդի նման, նորից վեր կմագլցենք և դուք ընդմիշտ կկորցնեք մեզ գտնելու ճանապարհը»:
Տակը ստորագրված էր.
«Որբացած պայուսակ և մի դժբախտ վերարկու»:

Երբ Սուրն ու Սամը մոտեցան իրենց կորցրած իրերը վերցնելու, դպրոցի ներսում ու դրսում մի այնպիսի ծիծաղ պայթեց, որ ամբողջ շենքը դղրդաց:
Եվ ահա նրանք տուն են դառնում դպրոցից՝ թթված դեմքերով: Քայլում են կողք-կողքի, ոչ մի բառ չփոխանակելով իրար հետ: Լռությունն առաջինը խզեց Սուրը.
- Այնքան շտապեցրիր, որ խելքս գլխիցս թռավ...
- Դե, դու միշտ էլ ցնորված ես, էլի: Հի՛, հի՛ հի՛, - քրքջաց Սամը իր ճղճղան ձայնով, իսկ Սուրը կատաղությունից քիչ մնաց պայթեր:
- Ի՞նչ ես ճղճղում, գոճի, - բարկացած ճչաց նա:
- Հի , հի՛, հի՛, - շարունակեց քրքջալ Սամը: - Իմս ի՞նչ է որ: Մե՞ծ բան է: Բայց խելոք մարդիկ էլ կարող են մոռանալ իրենց վերարկուները, իսկ պայուսակը... Այ թե բան էին հնարել, հա՛... Որբացած պայուսակ: Հի՛, հի՛, հի՛...
- Լեզուդ չես քաշելու, հա՞: Որ այդպես է, ա՛ռ քեզ...
Սուրի բռունցքն ամբողջ ուժով իջավ Սամի կլորիկ փորին: Նրա կոկորդից ինչ-որ տարօրինակ հնչյուններ դուրս թռան: Սամը երկու ձեռքով բռնեց փորը:
- Սպասի՛ր, ընձուղտ... Ես քեզ... - հազիվ արտաբերեց նա ու ցավից պպզեց:
Հենց այստեղ էր, որ բռնկվեց նրանց այն սովորական կռիվներից մեկը, որոնցից միշտ էլ մեր հերոսները դուրս էին գալիս արնոտված քթերով ու կապտած դեմքերով:

Գլուխ երրորդ. ԱՐՏԵՄ ՆԻԿՈԼԱԵՎԻՉԻ ԿԱՏՈՒՆ

Այն, ինչ հիմա պատմելու եմ, պատահեց Սամի ծննդյան տոնի նախօրյակին:
Դրսում արդեն գարուն էր:
Երկինքն անամպ էր ու պարզ: Արևի գունատ ճառագայթները լուսամուտից ներս էին ընկել ու խաղում էին հատակի վրա:
Պատից կախված ժամացույցը խփեց տասն անգամ: Բազմոցի վրա կուչ եկած կատուն պլշեց կանաչավուն աչքերը ու վախեցած շուրջը նայեց: Վերմակի ծայրը ետ գնաց: Տակից դուրս ցցվեց Սամի շիկավուն գլուխը: Նա երկար ժամանակ շուռումուռ եկավ փափուկ անկողնում, բայց վեր կենալ չցանկացավ: Մյուս սենյակից լսվեց Սամի մոր ձայնը.
- Ժամը տասն է, իսկ դու դեռ թավալ ես տալիս անկողնում: Սամը պատասխանի փոխարեն շրջվեց մյուս կողքի վրա:
- Ես ու տատիկը շուկա ենք գնում: Վեր կաց ու թեյիր: Ամեն ինչ պատրաստ դրված է սեղանին, - ասաց մայրիկը և, զամբյուղները ձեռքին, տատիկի հետ դուրս եկավ տանից:
Օրը կիրակի է, իսկ Սամը շտապելու ոչինչ չունի: Նա մի քանի անգամ հորանջեց, ծռմռվեց, ապա տնքալով ցած իջավ մահճակալից: Նա նկատեց բազմոցի վրա կուչ եկած կատվին: Ձյունաթույր փափլիկ մորթը և աղվեսի բրդոտ պոչը արտակարգ գեղեցկություն էին տալիս նրան:
«Վա՛յ, էս որտեղի՞ց է լույս ընկել...», - մտածեց Սամը և իսկույն հիշեց, որ դա Արտեմ Նիկոլաևիչի կատուն է: Նա զգույշ մոտեցավ բազմոցին: Կատուն փֆֆացրեց ու նետվեց ցած: Սամը՝ ձեռքերն առաջ մեկնած, շարժվեց դեպի պատի մոտ գտնվող կլորիկ սեղանը, որի տակ կծկվել էր ամբարիշտը, բայց դարձյալ բռնել չկարողացավ: Կատուն ճարպիկ ոստյունով թռավ մայրիկի արդուզարդի սեղանի վրա: Սամը մի պահ կանգ առավ: Այստեղ արդեն նրան մոտենալը խիստ վտանգավոր էր: Բավական էր, որ նա մի թռիչք տարեր, և մայրիկի ամբողջ հարստությունը կտապալվեր ներքև. «Չէ՛, հարկավոր է մի ուրիշ հնար գտնել», - մտածեց Սամը:
Հանկարծ նրա գլխում հանճարեղ մի միտք ծագեց: Նա Սուրից լսել էր, որ կենդանիներին հիպնոսացնելու համար հարկավոր է սև, թափանցիկ շորով կապել աչքերը, ձեռքերը առաջ մեկնել ու, դանդաղ մոտենալով մի քանի անգամ կրկնել հետևյալ խոսքերը.
«Ո՛վ թշվառ... Դու հոգնած ես, դու պիտի քնես... Ուրեմն՝ քնի՛ր, քնի՛ր, քնի՛ր...»
«Իհարկե, այս խոսքերից հետո կենդանին ապշած կարծանանա տեղում»,- ասել էր Սուրը:

«Հարկավոր է փորձել... Գուցե մի բան ստացվի», - որոշեց մտքում Սամը և զգույշ բացելով ննջասենյակի դուռը, ոտքի ծայրերի վրա դուրս գնաց: Քիչ անց նա ներս եկավ մի սև ժապավեն ձեռքին:
Այն միջոցին, երբ նա փորձում էր իր կախարդության զորությունը, ննջասենյակի դուռը ճռռոցով բացվեց: Ներս մտավ Սամի տատը՝ մածնով լի պուլիկը ձեռքին: Եվ ինչ...
Սամը՝ կիսամերկ ու ոտաբոբիկ, մազերը գզգզված, աչքերը սև ժապավենով կապած, կույրի նման խարխափելով առաջ էր շարժվում ու շարունակ կրկնում.
- Ո՛վ թշվառ...Դու հոգնած ես, դու պիտի քնես... Ուրեմն՝ քնի՛ր, քնի՛ր, քնի՛ր...
Այդ տարօրինակ տեսարանն այնպես վախեցրեց խեղճ պառավին, որ նա մի պահ ցնցվեց տեղում:
- Ա՛յ որդի, ի՞նչ է պատահել... Ինչի՞ ես աչքերդ էդ սատանի շորով կապել:
- Օ՛, դու ինձ չմոտենաս, տատ, - ասես երազի մեջ շշնջաց Սամը: - Չմոտենաս, թե չէ կախարդությունը կչքանա:
- Տե՛ր իմ Աստված, - ոչինչ չկռահելով, հառաչեց պառավը, - Տե՛ր իմ Աստված, այս տղան բոլորովին խելագարվել է...
- Սո՛ւս, մի՛ խանգարի, տատ: Ա՛յ, հիմա, հիմա կբռնեմ:
- Ի՞նչ բռնես, որդի... Չէ՛, սա կարծես իրենից դուրս է խոսում, - ինքն իրեն մտմտաց պառավը: Նրա ձեռքերը դողացին և սարսափից բաց թողեց մածնով լի պուլիկը: Պուլիկը փշրվեց ու մածնով ներկեց փայլուն հատակը:
Եվ ահա Սամի այս ամբողջ կախարդությունը վերջացավ նրանով, որ հալածված կատուն սարսափահար իրեն ներքև շպրտեց՝ ետևից քաշելով սեղանի վրայի ասեղնագործված ծածկոցը
Փոքրիկ հախճապակյա արձանիկները և օծանելիքներով լի սրվակները շխկշխկալով թափվեցին հատակին:
Սամը վախեցած մի կողմ թռավ և շտապով բաց արեց աչքերը կապող ժապավենը:
- Վա՛յ, էս ի՞նչ եղավ...
Այստեղ պառավը գլխի ընկավ: Սամը փորձեց բացատրել բոլորը, բայց մտածելով, որ տատն այս ամենից հազիվ թե բան հասկանա, ստիպված լռեց:
- Ա՛խ, Սամվե՛լ, Սամվե՛լ... Սի սպասիր մերդ շուկայից գա, - փնթփնթաց պառավը ու սկսեց հատակին թափված մածունը մաքրել: - Ա՛յ, ա՛յ, ա՛յ, ամբողջ հատակը նախշել եմ: Ասենք, դա ոչինչ, բայց էդ անիծված խմորեղենի համար բան չմնաց:
Այստեղ նա հանկարծ հիշեց, որ նորից պետք է շուկա գնար:
- Մերդ էնտեղ ինձ է սպասում, իսկ ես բոլորովին մոռացել եմ, - ասաց նա ու շտապ խոհանոց գնաց: Սամը սկսեց հագնվել:
- Ես գնում եմ, - միջանցքից լսվեց տատի ձայնը, - դե տես, նորից մի փորձանք չբերես իմ գլխին: Աչքդ լույս, հրես ընկերդ էլ եկավ...
Ննջասենյակի դռների մեջ հայտնվեց Սուրի երկարավուն դեմքը:
- Ողջո՛ւյն, այս ի՞նչ իրարանցում է, ի՞նչ խառնաշփոթություն...
- Դու ավելի լավ է օգնիր սրանք հավաքենք, թե չէ մայրիկս ինձ դրա համար մի լավ կհասցնի:
Տղաները շտապ գործի անցան: Արձանիկներից երկուսը փշրվել էին, որոնց համար մայրիկի կողմից Սամին մի լավ հյուրասիրություն էր սպասվում:
- Այս ինչպես պատահեց, հը՞...
- Բոլորը դրա երեսից եղավ, - փնթփնթաց Սամը, մատնացույց անելով անկյունում կուչ եկած կատվին:
- Լավ, իսկ որտեղի՞ց ես գտել այդ կատվին:
- Արտեմ Նիկոլաևիչի կատուն է, էն գիտնականի, որ մեր ներքևի հարկումն է ապրում: Տատիկս պատմում էր, թե ինչպես էր մի անգամ նրա կատուն կորել, խեղճ ծերուկն ընկել էր դռնեդուռ: Գիտես, մի րոպե առանց նրան չի կարող մնալ: Էնքան է սիրում, որ...
- Եթե շատ է սիրում, ուրեմն հարկավոր է վերադարձնել:

- Դե, իհարկե, ես հո չե՞մ ասում պահեմ: Եթե պահեմ էլ, միևնույն է, մնացողը չէ... Ես ուզում էի հիպնոսացնել, իսկ նա էնպես թռավ սեղանի վրայից, որ դեռ ծածկոցն էլ հետը քաշեց: Չէ՛, սա իսկի էլ բանի պետք չէ:
- Դու երևի այնպես չես արել, ինչպես պետք է... Դրա համար էլ ամեն ինչ ավերել ես:
- Իզուր բան են քո էդ հիպնոսությունները: Ուզո՞ւմ ես ինքդ փորձիր...
- Ի՞նչ, ինչ ասացի՞ր: Իզուր բան է, հա՞... - Վիրավորված կրկնեց Սուրը և ավելացրեց. - որ այդպես է, մի կողմ քաշվիր:
Սամը երկու քայլ ետ գնաց:
- Սպասիր, նա հո չի՞ չանգռում:
- Չէ՛, ինչ ես ասում, խելոք է, ինչպես մուկը:
- Ուրեմն սկսում ենք, - գործնականորեն ասաց նա, ձեռքերը մեկնեց առաջ, աչքերը կկոցեց և այնպիսի մի տարօրինակ ձայնով սկսեց, որ Սամը փռթկաց:
- Օ՛, թշվառ կենդանի, դու հոգնած ես, դու...
- Իսկ չէ որ կատուները չեն հոգնում, Սուր... - ընդհատեց նրան Սամը:
- Սո՛ւս, մի՛ խանգարի, - դողդոդացող ձայնով ասաց Սուրը և ապա շարունակեց, - թմրե՛լ են թաթիկներդ, փակվում են աչիկներդ, քնի՛ր, քնի՛ր, քնի՛ր...
Բայց կատուն բոլորովին էլ մտադիր չէր քնելու և կատվային ապշությամբ նայում էր պատշգամբի բազրիքին կանգնած ճնճղուկին:
Օգտվելով այդ առիթից, Սուրը հեշտությամբ բռնեց անհնազանդ կատվին, և, իր հաղթանակը տեսնելով, ուրախ բացականչեց.
- Տեսա՞ր...
Սամը վեր քաշեց ուսերը:
- Չէ, ասա, տեսա՞ր... Ահա թե ինչպես են հիպնոսացնում, - հպարտ ասաց նա: - Սովորել է պետք:
Սամը պատասխանի փոխարեն գրկեց կատվին, ու նրանք արագ երկրորդ հարկ իջան:
- Սա՞ է, - հարցրեց Սուրը՝ ցույց տալով դռան վրայի ապակյա փոքրիկ ցուցանակը, որի վրա բրոնզե տառերով գրված էր.

Ս. Ն. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Սամը գլխով հավանության նշան արեց:
- Դե, զանգը տուր:
- Սպասիր, գուցե նա հիմա մի լուրջ... էսպես ասած, կարևոր հայտնագործություն է անում: Չէ՛, ավելի լավ է ետ դառնանք: Մայրիկս ասում է, որ Արտեմ Նիկոլաևիչը ամենևին չի սիրում, երբ իրեն աշխատանքի ժամին ընդհատում են: Հասարակ բան չկարծես: Մարդը խորասուզվել է աշխատանքում, իսկ մենք, մեկ էլ հո՛պ... Ամեն ինչ փչացնում ենք:
- Դե որ այդպես է, ինչ արած:
Տղաները ստիպված ետ վերադարձան:
- Լսի՛ր, Սամ, նա փողոցի կողմից պատշգամբ ունի՞...
- Ո՞վ:
- Դե նա... Քո այդ ծերուկ գիտնականը:
- Ըհը, ունի: Իսկ դա ի՞նչ կարևոր է, որ...
... Եվ այն՝ ինչ որոշեց անել Սուրը, մի փոքր հետո դրանից այնպիսի խառնաշփոթ բարձրացավ, որ պատմելը դժվար է:
Նրանք թշվառ կատվի ետևի ոտքից մի երկար թել կապեցին ու պատշգամբ դուրս եկան:
- Սրան մենք հիմա այսպես դանդաղ կիջեցնենք մինչև Արտեմ Նիկոլաևիչի պատշգամբը: Իսկ այս գարշելին այնպիսի պտուղ չէ, որ կախված ժամանակ հանգիստ մնա: Անպատճառ կմլավի կամ կչանգռի պատշգամբի դուռը: Դե Արտեմ Նիկոլաևիչն էլ դուրս կգա ու ներս կտանի սրան: Իսկ եթե նա բարկանա կատվի վրա, աշխատանքն ընդհատելու համար, դա արդեն մեր գործը չէ...
Նրանք արագ գործի անցան՝ իրագործելու Սուրի մտահղացումը: Ցավոք սրտի, այդպիսի փայլուն մտքեր նրա գլխում այնքան էլ ուշ-ուշ չէին ծնվում:

Կատուն, որ թելից կախված, աղիողորմ մլավոցներով գլխիվայր ներքև էր իջնում, հանկարծ դադարեց վայրէջք կատարելուց:
Միջանցքում ոտնաձայներ լսվեցին:
- Սպասի՛ր, մերոնք եկան, - շշնջաց Սամը:
Տղաներն իրար խառնվեցին:
- Բա ի՞նչ անեմ թելը, միանգամից բաց թողնեմ, հա՞...
- Չէ՛, չէ՛, գժվե՞լ ես, ի՛նչ է: Ճաղից կապիր...
Սուրը թելի ծայրը արագ փաթաթեց պատշգամբի ճաղին և ներս եկավ, թշվառ կատվին թողնելով օդում կախված:
Երբ Սամի մայրն ու տատը ննջասենյակ մտան, տղաները շփոթված իրար նայեցին:
Մայրիկը նրանց այլայլված դեմքերից ինչ-որ բան կռահելով, մոտեցավ.
- Ինչո՞ւ եք բացել պատշգամբի դռները, - հարցրեց նա և, պատասխանի չսպասելով, մի կողմ քաշեց տղաներին:
Կատվի սրտաճմլիկ մլավոցների հետ մեկտեղ նրա ականջին հասավ նաև մարդկանց աղմուկն ու աղաղակը: Նա պատշգամբ դուրս եկավ ու ակամայից ներքև նայեց: Այ քեզ բա՛ն... Փողոցում հոծ բազմություն էր հավաքվել: Նրանք ինչ-որ անհասկանալի բաներ էին բղավում ու վրդովված ցույց տալիս իրենց պատշգամբը: Նա նկատեց նաև կատվին, որ ճոճվում էր թելից կախ և անզոր թափահարում թաթերը: Հենց այդ միջոցին պատշգամբ ելավ Արտեմ Նիկոլաևիչը:
- Ճիզվիտնե՛ր, բարբարոսնե՛ր... Սա ի՛նչ գազանություն է, - բղավեց նա և բարկությունից այնպես ցնցվեց, որ պենսնեն թռավ քթի վրայից և անշուշտ փշուր-փշուր կլիներ, եթե թելով կապված չլիներ նրա ժիլետից: Նկատելով Սամի մորը, նա հուզված ասաց.
- Տիկին Երանուհի, դե ասացեք, խնդրեմ, ինչպե՞ս կարդարացնեք այս խեղկատակությունը:
Տիկին Երանուհին, ոչինչ չկարողանալով պատասխանել, շփոթված ու կարմրած իրեն մի կերպ ներս գցեց:
- Անմիջապես դադարեցրեք ձեր այլանդակությունը, ապա թե ո՛չ... - բարկությունից խեղդված հազիվ արտասանեց նա:
Սուրը պատշգամբ թռավ և, հայացքը ուղղելով մերթ փողոցում հավաքված մարդկանց, մերթ էլ Արտեմ Նիկոլաևիչին, դողդողացող ձեռքերով արձակեց ճաղին փաթաթված թելի ծայրը: Կատուն մլավոցով թրմփաց ուղիղ Արտեմ Նիկոլաևիչի գիրկը: Փողոցում ծիծաղ բարձրացավ:
Եվ մինչ Սամը կմկմալով կբացատրեր մորը, որ այդ ամենը իրենք չար նպատակով չեն արել... Մայրը բռնեց նրա լոշտակ ականջից և այնպես ձգեց, որ Սամի աչքերի առջև ինչ-որ փայլուն օղակներ հայտնվեցին:
- Ափսոս, որ վաղը քո ծննդյան տոնն է, թե չէ այս ամենի համար դու արժանի պատիժ կստանայիր, - ասաց նա ու վրդովված դուրս գնաց:
«Վաղը քո ծննդյան տո՛նն է...», - կրկնեց Սամը մտքում մայրիկի խոսքերը: Եվ այդ խոսքերն ավելի ցավ պատճառեցին նրան, քան թե բազուկի նման կարմրած ականջը:

Գլուխ չորրորդ. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԸ

Մյուս օրը, առավոտյան, մայրիկը մոտեցավ օրացույցին, պոկեց թերթիկը, ապա դառնալով տղային, ասաց.
- Դե ահա, այսօր քո ծննդյան տոնն է: Քեզ կարգին կպահես, երեկոյան հյուրեր են գալու...
Սամը, որ այդ պահին նոր գնած դրոշմանիշերն էր փակցնում ալբոմի մեջ, միանգամից մռայլվեց: Նայեց օրացույցի վրայի«8» թվանշանին և, ընդհատված աշխատանքը շարունակելով, փնթփնթաց քթի տակ.
- Պա՛հ, հեչ պետքս էլ չի, ինչ մի ծննդյան տոն է որ...
Սամը աշխարհի ամենադժբախտ մարդն էր համարում իրեն նրա համար, որ ծնվել էր կանանց տոնի օրը՝ մարտի ութին: Եվ որովհետև Սամը այդ օրն էր լույս աշխարհ եկել, մայրիկը դրանից գուշակել

էր, որ երբ նա մեծանա, աղջկա նման հեզ ու համեստ կլինի: Բայց արի ու տես, որ բոլորովին էլ այդպես չեղավ: Մայրիկը մոռացել էր, որ նա, համենայն դեպս, մարտ ամսին էր աշխարհ եկել և մարտ ամսվա նման գիժ էր ու խելառ:
Սամին թվում էր, թե մարտի ութը նրա համար են կանանց տոն անվանել, որ այդ օրը ծնվում են միայն աղջիկները: Նրա կարծիքով «իսկական տղաները» այդ օրը չեն ծնվում, բայց ինքը...
Նա հիշեց, թե ինչպես անցյալ տարի, երբ դասարանի աղջիկները կանանց տոնի առթիվ ուսուցչուհիներին ծաղիկներ էին նվիրում, տղաներից մեկը՝ Պետրոսը, վեր թռավ տեղից ու բացականչեց.
- Աղջիկնե՛ր, մի ծաղկեփունջ էլ Սամին տվեք...
Բոլորը հռհռացին: Իսկ ինքը ամոթից քիչ մնաց... Չնայած ուսուցչուհին նկատողություն արեց բավականությունից քրքջացող Պետրոսին, բայց վերջինս այդ դեպքից հետո տղաներին ամեն անգամ ծիծաղեցնելու համար (որը նրան գերագույն հաճույք էր պատճառում) շարունակ կրկնում էր.
- Աղջիկնե՛ր, մի ծաղկեփունջ էլ Սամին տվեք...
Այդ բանը պատճառ դարձավ, որպեսզի նա խզեր Պետրոսի հետ մինչ այդ եղած մտերմական կապերը և բանակցություններ սկսեր իրեն բախտակից տղայի հետ, որին դուք արդեն ճանաչում եք:
Սամը Սուրին բախտակից էր համարում նրա համար, որ վերջինս էլ մի նորմալ օր չէր հայտնվել աշխարհում: Բանն այն է, որ Սուրը ծնվել էր նահանջ տարին՝ փետրվարի 29-ին, և այդ նշանակալից օրը հազիվ չորս տարին մեկ անգամ էր երևում օրացույցի վրա:
Ժամացույցի խուլ զարկերը սթափեցրին Սամին: Դպրոց գնալու ժամանակն էր: Նա խնամքով ծածկեց դրոշմանիշերի ալբոմը ու վեր կացավ:
- Գնալիս կմտնես Արտեմ Նիկոլաևիչի մոտ, - ասաց մայրիկը և մի ծրար տալով նրան, ավելացրեց, - երեկվա հիմարություններիդ համար ներողություն կխնդրես և սա կհանձնես իրեն, հասկացա՞ր:
- Լավ, - դժկամությամբ պատասխանեց Սամը ու, պայուսակը վերցնելով, դուրս եկավ տնից:
Աստիճաններից իջնելիս նա մի պահ կանգ առավ և գրպանից հանեց մայրիկի տված ծրարը: Ծրարի վրա ընդամենը երկու բառ էր գրված, «Արտեմ Նիկոլաևիչին»:
«Տեսնես ի՞նչ կա այստեղ», - մտածեց Սամը: Նա, իհարկե, անմիջապես բաց կաներ ծրարը, բայց մտածելով, որ ուրիշին հասցեագրված նամակը կարդալն անազնվություն է, հրաժարվեց ու շտապ ցած իջավ:
Նա երկար ժամանակ կանգնել էր Արտեմ Նիկոլաևիչի դռան առջև ու չէր համարձակվում սեղմել զանգի կոճակը: Այդ բոլորից հետո ինչպես երևար նրա աչքին: Արդյոք կկարողանա՞ր բացատրել Արտեմ Նիկոլաևիչին, որ իրենք ամենևին էլ չեն ցանկացել վշտացնել նրան, որ այդ բոլորը, հենց այնպես, առանց մտածելու եղավ: Ա՛յ, ինչ լավ կլիներ, եթե նամակով բացատրեր այն, ինչը հիմա դժվարանում է բանավոր ասել: Նա պատրաստ էր ամբողջ մի թերթ լցնել բազմաթիվ ներողություններով, միայն թե... Չէ, ավելի լավ է, որ նա վաղը գրավոր բացատրություն գրի և մայրիկի տված նամակի հետ միասին հանձնի Արտեմ Նիկոլաևիչին:
Այսպես որոշեց Սամը և, ծրարը գրպանը դնելով, շտապեց դպրոց:
Կեսօրին, երբ նա վերադարձավ դպրոցից, տանը արտակարգ իրարանցում էր տիրում: Ճաշասենյակում սեղաններ էին դրված, որոնք ծածկված էին ճերմակ սփռոցներով: Հեղինե մորաքույրն ու Սոնիկն էլ այստեղ էին: Մորաքույր Հեղինեն արագ-արագ ճաշի ափսեներն էր դասավորում սեղանների վրա: Սոնիկը մայրիկի հետ դրսից աթոռներ էր բերում, իսկ խոհանոցից շարունակ լսվում էր տատիկի ձայնը.
- Խմորեղենները երվեցին, մեկն ու մեկդ էստեղ եկեք, է՛...
Մի խոսքով, բոլորն էլ իրար էին անցել:
Մայրիկը գլուխն այնպես էր կորցրել, որ մոռացավ հարցնել ծրարի մասին, իսկ Սամն էլ, առիթից օգտվելով, ոչինչ չասաց:

***

Երեկոյան հավաքվեցին հյուրերը:
Ներս մտնողը հենց մի գլուխ մայրիկին էր շնորհավորում, կարծես ոչ թե Սամի ծննդյան տոնը լիներ, այլ մայրիկինը:
- Տիկին Երանուհի, շնորհավորում ենք կանանց տոնի առթիվ:
- Տիկին Երանուհի, ամբողջ սրտով ձեզ երջանկություն ենք ցանկանում...
Եվ այսպես նրանք ծռմռվում էին, ժպտում, ոգևորված բացականչություններ անում, բայց ոչ մեկը չէր հիշում իր գոյությունը: Իսկ մայրիկը... Մայրիկն էլ կարծես մոռացել էր, որ աշխարհում Սամ կա: Հարկավոր էր տեսնել, թե նա ինչպես էր խառնվել իրար: Սենյակից միջանցք էր վազում, միջանցքից խոհանոց: Եվ այս ամենն այնքան ծիծաղելի էր, այնքան ծիծաղելի:
- Հանվեցեք, խնդրում եմ:
- Ներս եկեք, խնդրում եմ...
Իսկ երբ քիչ հետո մի մարդու ձեռքից բռնած ներս մտավ իրեն հասակակից մի տղա, մայրիկը նրան տեսնելուն պես ընդառաջ վազեց:
- Անուշի՛կս, որքան ուրախ եմ, որ մեզ չես մոռացել,- բացականչեց նա և մի քանի անգամ համբուրեց հնդուհավի նման փքված տղային:
«Տեսնես ո՞վ է, որ մայրիկն այդքան ոգևորված դիմավորեց նրա գալուստը: Մի դրան նայեք, ինչպես էլ հպարտ է պահում իրեն»: Երբ Սամն իմացավ, որ այդ խորոզը մայրիկի դիրեկտորի տղան է, ինքն իրեն փնթփնթաց. «Իսկ ինչի է այդքան երևակայում իրեն... Պա՛հ, մեծ բան է կարծես դիրեկտորի տղա լինելը: Այ, եթե իմ հայրիկն էլ չզոհվեր կռվում, նա հիմա մի ամբողջ նավի նավապետ կլիներ, որը երկու անգամ ավելի լավ է, քան դիրեկտոր լինելը»:
Հայրն օգնեց տղային վերարկուն հանել, ուղղեց նրա վզից կախված պարանի նման երկար, գունավոր փողկապը: Երբ ամեն ինչ պատրաստ էր, տղան հոր առջևն ընկած, ջայլամի նման տնգտնգալով, գնաց հյուրասենյակ:
Այդ գոռոզ տղան, որն առաջին հայացքից դուր չեկավ Սամին, թանկարժեք կտորից կարված մի լայն ու երկար պիջակ էր հագել: Պիջակն այնքան լայն էր, որ ինչպես մեծերն են ասում, «ոնց որ կատվին ջվալը գցես»: Իսկ շալվարը... Շալվարն այնքան նեղ էր կարված, որ թվում էր՝ դրանց միջինը ոչ թե ոտքեր են, այլ փայտե ձողիկներ: Իսկ երբ այդ բոլորից հետո Սամի հայացքը նրա կոշիկներին ընկավ, քիչ մնաց ծիծաղից թուլանար: Նրա կոշիկների տակերը տանկի թրթուրի ձև ունեցող կաուչուկի այնպիսի հաստ շերտերից էին կարված, որ քայլելիս զսպանակի նման ճոճվում էին ոտքերի վրա:
Տղան արհամարհանքով ոտքից գլուխ չափեց Սամին և, նստելով, սկսեց աթոռի ետևի ոտքերի վրա տարուբերվել: Հանկարծ աթոռը չափից ավելի ետ գնաց, և նա մեջքի վրա այնպես դրմփաց, որ առաստաղից կախված լուսամփոփը ասես գնաց-եկավ:
Սամը բարձրաձայն քրքջաց: Տղան շփոթված ու կարմրած վեր թռավ տեղից և խեթ-խեթ նայեց Սամին:
Մայրիկը, նկատելով այդ, զսպված զայրույթով բռնեց Սամի թևից ու խոհանոց տարավ:
- Ինչպես գետինը չես մտնում: Փոխանակ օգնելու նրան, այլանդակ ձևով հռհռում ես:
- Դե թող նա էլ շատ չուռեցնի իրեն, էդ լոպազը...
- Չհամարձակվես, - ոտքը բարկացած գետին խփեց մայրիկը և դուռը շրխկացնելով, դուրս գնաց խոհանոցից:
Այդ բանն այնպես դառնորեն վիրավորեց Սամի ինքնասիրությունը, որ նա որոշեց փախչել, հեռանալ այդտեղից: Ավելի լավ է գնա, թափառի դրսում, միայն թե ներկա չլինի իր համար բոլորովին ձանձրալի այդ խնջույքին:
Այդ պահին միջանցքից անսպասելիորեն լսվեց Սուրի ձայնը, և Սամը ամեն ինչ մոռացած ուրախ դուրս թռավ խոհանոցից:
Սուրը մենակ չէր: Նրա հետ եկել էին իր փոքր քույրը, հայրիկն ու մայրիկը:
Երկու ընկերներ կարոտով գրկախառնվեցին: Կարծես վաղուց կորցրել էին իրար: Խնջույքն սկսվեց...

Գլուխ հինգերորդ. ՄԱՀԱՄԵՐՁ ԹԵՅԱՄԱՆԸ

Այն միջոցին, երբ մյուս սենյակում Սամը ծիծաղելով պատմում էր Սուրին պճնամոլ տղայի ցած ընկնելու պատմությունը, շփոթված ներս ընկավ Սուրի մայրիկը և հուզված ձայնով ասաց.

- Շուտ արա, վերցրու բանալին ու տուն վազիր...

- Ինչի՞, ի՞նչ է պատահել, Սամ:

- Թեյամա՜նը, թեյամա՜նը միացրած թողել եմ սեղանի վրա, շուտ արա, վազիր:

Սուրը վերցրեց բանալին, արագ հագավ վերարկուն և այն է պատրաստվում էր դուրս գալ, երբ Սամը ետևից ձայն տվեց.

- Սպասի՛ր, ես էլ եմ գալիս...

Տղաները դուրս թռան և քամու պես սլացան առաջ: Սուրենց տունը ընդամենը երկու կանգառ ներքև էր գտնվում՝ ուղիղ կրկեսի մոտ: Այնպես որ մի քանի րոպե հետո նրանք արդեն բարձրանում էին Սուրենց տան աստիճաններով:

Տղաները ներս մտան և ինչ... Ամբողջ տունը կորել էր ծխի մեջ, իսկ խոհանոցի դռան արանքից ծուխ էր դուրս գալիս:

- Այրվում է, - սարսափած ասաց Սուրը և դուռը շրխկացրեց կրնկի վրա:

Խոհանոցի սեղանի վրա դրված էլեկտրական թեյամանը, որի մեջ երևի հազիվ մի քանի կաթիլ ջուր մնացած լիներ, տարօրինակ ճկճկոցներ էր արձակում և կատաղած ցնցվում տեղում: Իսկ սեղանի անկյունը, որտեղ թեյամանն էր դրված, այրվում էր հանդարտ ծխալով՝ սպառնում բոց արձակել.

- Շուտ, բաց թող ջրի ծորակը, - բղավեց Սուրը: Նա շտապելուց մի պահ կորցրեց իրեն, մատներով բռնեց շիկացած թեյամանի բռնակից ու ճչալով իսկույն ետ թռավ:

- Ի՜նչ ես անում, լարն անջատի՛ր...

Սուրը պատասխանի փոխարեն ինչ-որ անհասկանալի բառեր կմկմալով ցույց տվեց պատը: Էլեկտրական լարը նույնպես մխում էր:

- Ի՜նչ ես ցցվել, շուտ մի մկրատ հասցրու:

Սուրը շտապ դուրս թռավ խոհանոցից ու քիչ հետո վերադարձավ մկրատը ձեռքին:

Սամը բարձրացավ սեղանի վրա, մկրատով կտրեց մխացող լարը և մի այնպիսի ահռելի գոռոց արձակեց, որ Սուրը սարսափած իրեն դուրս գցեց խոհանոցից: Նրա ետևից դուրս թռավ Սամը:

- Ա՛յ թե դռռացրեց...

- Իսկ, իսկ դու շո... շորով բռնեիր, - հազիվ կմկմաց Սուրը: Նրանք նորից խոհանոց վազեցին: Սամը գրպանից հանեց թաշկինակն ու հարձակվեց կատաղած թեյամանի վրա: Իսկ Սուրը ձեռքի ափով սեղմեց ծորակը և ջուրը պզզացրեց սեղանին: Այրված տեղը թշշաց: Գոլորշին բռնեց խոհանոցը:

Սամը, որ թաշկինակով թեյամանի կանթից բռնած կանգնել էր դռան տակ, սրտնեղած բղավեց.

- Դե շուտ արա, ձեռքս այրվեց, է՜...

- Իսկ դու ի՞նչ ես բռնել ու կանգնել:

- Բա ի՞նչ անեմ:

- Մի տեղ դիր, էլի՜:

- Ո՞ւր դնեմ...

- Տո՜ւր ինձ:

Եվ Սուրը Սամի ձեռքից զգուշորեն վերցրեց թեյամանը, պահեց ջրածորակի տակ: Հանկարծ ուժեղ չրխկոց լսվեց ու թեյամանի ներքևի մասը պոկվեց և ընկավ լվացարանի խեցու մեջ:

Սամի հերոսական ջանքերով փրկված մահամերձ թեյամանն այդպիսով էլ հոգին ավանդեց:

- Վա՜յ, էս ի՞նչ արեցիր...

Սուրն այդ անսպասելի վախճանից հանկարծակիի եկախ, շշմած կանգնել էր ու գլուխն էր քորում:

.....

Երբ տղաները համոզվեցին, որ այլևս ոչ մի վտանգ չկա, փակեցին դուռը և աստիճաններով ներքև իջան:

Գլուխ վեցերորդ. ԿՐԿԵՍՈՒՄ

Գարնանային խոնավ երեկոն փռվել էր քաղաքի վրա: Երկաթյա բարձր սյուներից կախված էլեկտրական լապտերները, խանութների ցուցափեղկերում վառվող գազառեկլամները ցերեկվա նման լուսավորել էին մութ փողոցը:

Շլացուցիչ լույսերով ողողված կրկեսի մուտքի առջև ահագին բազմություն էր հավաքվել: Մարդիկ աղմկում էին, հրում իրար, ամեն մեկը ցանկանում էր շուտ ներս մտնել, որովհետև ներկայացումը վաղուց սկսվել էր:

Դռան մոտ կանգնած ծեր հսկիչը շարունակ կրկնում էր.

- Տոմսերը, ընկերնե՛ր... Ախր, ուր եք հրում: Էսպես չի լինի, ընկերնե՛ր, մի քիչ համբերություն ունեցեք...

Երբ Սամն ու Սուրը անցնում էին կրկեսի պատին ամրացված խայտաբղետ աֆիշների առջևով, Սուրը մատով ցույց տվեց պարսկական շահի տարազով, սպիտակ փաթթոցը գլխին մի ինչ-որ մարդու նկար և դառնալով Սամին, խորհրդավոր տոնով հարցրեց.

- Գիտե՞ս, սա ով է...

Սամը ուսերը վեր քաշեց:

- Սա այն հռչակավոր իլյուզիոնիստն է, որի մասին Միշան էր պատմում: Այ թե բանե՛ր կարող է անել... Այնպիսի սարսափելի աչքեր ունի, որ հենց նայի, իսկույն...

- Կմեռնե՞մ, - հարցրեց Սամը՝ հայացքը չհեռացնելով տարօրինակ մարդու նկարից:

- Չէ՛, չես մեռնի, բայց հենց նայի՝ մեկ, երկու, երեք և դու տեղն ու տեղը կքնես: Կամ էլ, ուզում ես, թող մարդիկ պարաններով կապեն նրա ձեռքերն ու ոտքերը, կամ ուզում ես... թող ամբողջ մարմինն էլ կապկպեն, հետո պարկի մեջ գցեն ու ամուր փակեն մի մեծ արկղում: Միևնույն է, մեկ էլ տեսար հո՛պ... մի տեղից դուրս եկավ:

Սամին էլ մի այդպիսի բան էր հարկավոր, որ հետաքրքրությունից ոտքերն իսկույն դողային:

- Ճի՞շտ ես ասում, - զարմացած հարցրեց նա:

- Բա ի՞նչ... Կարծում ես հնարո՞ւմ եմ: Դեռ դրանք ի՞նչ են... Այնքա՛ն բաներ կարող է ցույց տալ, որ զարմանքից բերանդ բաց կմնա:

Սամը հետաքրքրված ավելի մոտեցավ նկարին ու նրան թվաց, որ սպիտակ փաթթոցավոր մարդու «կախարդական աչքերը» մագնիսի նման ձգում են իրեն: Եվ Սամը հազիվ լսելի ձայնով շշնջաց.

- Այ թե բան է, հա՛... Երանի մարդ մի անգամ տեսներ այդ բոլորը:

- Ի՞նչ մեծ բան է: Ուզո՞ւմ ես, արի ներս տանեմ...

- Ինձ մոտ ընդամենը ութսուն կոպեկ կա:

- Փող հարկավոր չէ: Տոմս չենք առնելու:

- Իսկ առանց տոմսի ո՞վ կթողնի որ...

- Քո բանը չէ: Ասա, ուզո՞ւմ ես, - ոգևորված կրկնեց Սուրը: Ներկայացումը տեսնելու ցանկությունն այնքան ուժեղ էր, որ նրանք իսպառ մոռացան թե՛ խնջույքը և թե՛ հյուրերին: Տղաներին այժմ մի բան էր միայն հետաքրքրում՝ ինչպես ներս խցկվել: Սուրը բացատրեց ընկերոջը ներս մտնելու քաղաքակիրթ ձևերից մեկը: Սամը չնայած դժկամությամբ ընդունեց այդ առաջարկը, բայց, այնուամենայնիվ, համաձայնեց:

Սուրը բաց արեց վերարկուի լայն փեշերը և թխսկան հավի նման՝ Սամին առնելով թևի տակ, խառնվեց հավաքվածներին: Ընկնելով մարդկանց շարժվող հոսանքի մեջ, նրանք ինքնաբերաբար առաջ մղվեցին:

Տարիքավոր մի մարդ գնում էր Սուրի առջևից: Նա ձեռքը մեկնեց և առանց ետ նայելու, ասաց.

- Ամուր բռնիր ձեռքիցս, տղաս... Ետ մի՛ մնա: Սուրը հարմար առիթը բաց չթողնելով, իսկույն բռնեց իրեն պարզած ձեռքը:

Նրանք մոտեցան մուտքին:

- Ձեր տոմսը, ընկեր, - հարցրեց ծերունի հսկիչը: Մարդը իր ձեռքի տոմսը մեկնեց նրան:

- Բա սրա՞նը,- հարցրեց հսկիչը ցույց տալով Սուրին:

Սուրի սիրտը անհանգիստ թպրտաց, իսկ նրա վերարկուի փեշի

տակ մտած Սամը վախից այնպես ցնցվեց, որ քիչ մնաց ամեն ինչ տապալեր:
- Ի՞նչ տոմս... թոռս դեռ հինգ տարեկան չկա, նրան տոմս չի հասնում, - առանց ետ նայելու պատասխանեց մարդը:
Ծերունի հսկիչը այս խոսքի վրա զարմանքից մի պահ ձգվեց տեղում, նայեց մարդուն, նայեց նրա ձեռքից բռնած «հինգ տարեկան թոռանը», ապա դարձավ հավաքվածներին.
- Ա՛յ ժողովուրդ, մի սրան նայեք, - վրդովված ասաց նա, ցույց տալով Սուրին, - բա սա հի՞նգ տարեկան է:
Առջևից եկողների մեջ ծիծաղ բարձրացավ:
Մարդը շփոթված շուռ եկավ:
Սուրը կանխազգալով մոտալուտ վտանգը, բաց թողեց անծանոթ մարդու ձեռքը և խիտ զանգվածը ճեղքելով, իրեն դուրս շպրտեց: Նրա վերարկուի տակից հայտնվեց սփրթնած Սամը:
- Այդ որ սրիկան էր ձեռքս բռնել... ո՞ւր է իմ թոռնիկը, - անհանգիստ բղավում էր մարդը: Իսկ հավաքվածներից հեռու, մի քաղաքացի, հինգ տարեկան հեկեկացող երեխայի ձեռքից բռնած, բարձրաձայն հարցնում էր.
- Ո՞ւմն է այս երեխան...
Տղաները կրկեսի առջև կանգնած մնացին այնքան ժամանակ, մինչև վերջին հույսն էլ չքացավ: Իսկ երբ մուտքի մոտ խմբված մարդիկ բոլորն էլ մտան, և ծերունի հսկիչը ծանր դուռը ճռռոցով փակեց, Սամը հուսահատ ասաց.
- Գնանք տուն, մեկ է չենք կարող...
- Կմտնենք, ինչ ուզում է լինի, կմտնենք, - համառորեն պնդում էր Սուրը: Հանկարծ նրա դեմքը պայծառացավ. - Ուզում ես, բակի կողմից փորձենք, հը՞...
- Բակի կողմի՞ց:
- Ըհը՛... Այնտեղից ավելի հեշտ է:
- Լա՛վ, փորձենք, - ակամա պատասխանեց Սամը ու գնաց ընկերոջ ետևից:
Նրանք երկաթե հսկա դարբասով ներս մտան: Բակում կանգնած բեռնատար մեքենայից մի մարդ արկղեր էր բեռնաթափում, իսկ մի ուրիշ բանվոր բեռնաթափված արկղերը արագ-արագ տեղափոխում էր ներս: Բանվորը ներս ու դուրս էր անում բակի ծայրին գտնվող մի փոքրիկ դռնից: Երբ վերջին արկղն էլ ուսին դնելով շարժվեց դեպի դուռը, տղաները գնացին նրա ետևից ու ներս մտան մի երկար միջանցք: Նրանք դեռ նոր էին հասել միջանցքի ծայրը, երբ նրանց դիմաց դուրս եկավ մի մարդ: Եվ մինչ նա կնկատեր տղաներին, Սամն առանց ժամանակ կորցնելու իրեն շպրտեց անկյունում դրված դատարկ տակառի մեջ, իսկ Սուրը, որ Սամի առջևից էր գնում, տեղում մեխվեց:
- Դու ի՞նչ ես անում այստեղ, - հարցրեց մարդը ռուսերեն,- ա նու, մա՛րշ այստեղից:
Սուրն արագ շրջվեց և ետ փախավ եկած ճանապարհով: Մարդն առաջ եկավ, քթի տակ ինչ-որ բառեր մռթմռթաց ու դուռը բանալիով փակեց:
Երբ ոտնաձայները լռեցին, Սամը զգույշ գլուխը դուրս հանեց: Տեսնելով մարդ չկա, նա շտապ դուրս եկավ տակառից:

***

Սուրը կարծելով, թե Սամը իրենից առաջ էր դուրս թռել, երկար ժամանակ փնտրում էր նրան:
- Սա՛մ, այ Սա՛մ, - բղավում էր նա դես ու դեն վազելով: Բայց Սամը կարծես գետնի տակն էր անցել:
Սուրը երկար փնտրելուց հետո սպասեց տասնհինգ րոպե, սպասեց կես ժամ, բայց Սամը չկար ու չկար:
«Երևի տուն է գնացել, իսկ ես...». Նա բարկությունից քիչ մնաց լաց լինի, բայց զսպելով իրեն, ատամներով սեղմեց շրթունքները և անհանգստությունից սկսեց ետ ու առաջ քայլել: «Ավելի լավ է գնամ, հիմա մերոնք ինձ են ման գալիս», - մտածեց նա ու գնաց...
Սուրը չէր սխալվում:

***

Սուրի հայրը, որ տղաների ուշանալու պատճառով գնացել էր նրանց ետևից, վերադարձավ մենակ: Նա պատմեց, որ ամբողջ խոհանոցը տակն ու վրա է արված, իսկ տղաներին գտնելու իր ջանքերը ապարդյուն են անցել:
Այդ լսելով, կորածների մայրերը սաստիկ անհանգստացան: Անհանգստացան նաև հյուրերը:
Տիկին Երանուհին հյուրերին խնդրեց շարունակել խնջույքը, իսկ ինքը Սուրի հոր հետ պատրաստվեց գնալ կորածներին փնտրելու:
Հենց այդ պահին հայտնվեց Սուրը՝ թթված դեմքով:
- Ո՞ւր էիր այսքան ժամանակ, - բարկացած հարցրեց նրա մայրը...
- Ո՞ւր է Սամվելը,- անհանգիստ վրա տվեց տիկին Երանուհին: Սուրը գլխահակ պատմեց նրանց այն ամենը, ինչ որ դուք արդեն գիտեք: Իսկ թե ուր է Սամը, այդ մասին նա ոչինչ ասել չկարողացավ:

***

Սամը երկար ժամանակ վազվզում էր կուլիսներում, բայց նրան չէր հաջողվում դուրս գալ այդ լաբիրինթոսից: Հեռվից շարունակ լսվող երաժշտությունը, հանդիսատեսների մերթ ընդ մերթ պոռթկացող քրքիջն ու ծափերի դղիրդը մի աննկարագրելի ուժով քաշում էին նրան դեպի հանդիսասրահը, այնքան զվարճալի ու հետաքրքիր բաներ էին կատարվում:
Ահա դիմացի դռան ետևից կարծես մանկական աշխույժ ծիծաղ լսվեց:
«Երևի հենց այդ դուռն էլ դահլիճ է տանում», - մտածեց Սամը և ոտքի թաթերի վրա մոտեցավ ու դուռը զգուշությամբ ծերպ անելով նայեց ներս: Նա տեսավ գույնզգույն զգեստներ հագած մի հաղթանդամ մարդու, որը մեջքի վրա պառկել էր հատակին գցված գորգին: Սամին հասակակից մի շիկահեր տղա՝ հաղթանդամ մարդու ոտքերին նստած, հոլի նման արագ պտտվում էր և ամեն մի պտույտից հետո, ձեռքերը վեր բարձրացնելով, բացականչում.
- Ալե հո՛պ, ալե հո՛պ...
Սամը զմայլված նայում էր ռետինի նման այդ ճկուն տղայի շարժումներին և զարմանքից ճպճպացնում մանրիկ աչքերը:
- Հե՛յ, ո՞վ կա այդտեղ, շո՛ւտ ծածկեք դուռը, - բղավեց ներսից հաղթանդամ մարդը:
Սամը ետ քաշվեց:
Այդ պահին սմբակների դոփյուն լսվեց և քիչ հետո միջանցքի ծայրին հայտնվեց մի մարդ՝ փրփրաբաշ նժույգի սանձից բռնած:
Մետաքսանման երկար պոչը կողերին շրփշրփացնելով ձին ծառս-ծառս էր լինում և փառահեղ գլուխը բարձր պահած, հպարտորեն վրնջում էր:
«Ա՛յ թե նժույգ է, հա՛... էդպիսի նժույգ իսկի հեքիաթներում էլ չի լինում: Տեսնես ո՞ւր են տանում...», - մտածեց Սամը և այդ գեղեցկությունից շլացած՝ գնաց ետևից:
Անսպասելի նա իրեն գտավ մի մեծ սրահում, ուր այնպիսի նժույգներից բացի ուրիշ շատ կենդանիներ էլ կային:
Հանկարծ մի ահռելի մռնչյուն դղրդացրեց ամբողջ սրահը: Սամը սարսափած ցնցվեց տեղում: Համարյա նրա կողքին, երկաթե վանդակի մեջ, մի հսկա առյուծ էր կանգնած: Սամի աչքերը մշուշվեցին, վանդակի ճաղերը կամաց-կամաց չքացան և նրան թվաց, ուր որ է ահավոր գազանը կուլ պիտի տա իրեն: Նա վախեցած ետ-ետ գնաց:
Առյուծը կատաղած, պոչով շրխկացրեց վանդակի և երախը լայն բանալով, նորից մռնչաց:
- Վայ, մամա՛... - ամբողջ կոկորդով ճչաց Սամն ու լեղապատառ իրեն դուրս գցեց:
Այդ ձայնի վրա արտիստները դուրս թափվեցին իրենց առանձնասենյակներից ու հետաքրքրված շրջապատեցին հեկեկացող Սամին:
- Ո՞ւմ երեխան է:
- Օ՛յ, ինչ էլ հաստլիկն է...
- Մի՛ լա, ջանիկս:
Բացականչում էին այս ու այն կողմից:
- Ի՞նչ է պատահել, փոքրի՛կ, ինչո՞ւ ես լալիս... - լսվեց բամբ ձայն:

Սամը բարձրացրեց գլուխը: Ասես երազ լիներ: Նրա առջև կանգնած էր սև թիկնոցը ուսերին, սպիտակ փաթթոցավոր այն իլյուզիոնիստը, որի նկարը քիչ առաջ տեսել էր դրսում: Նրա խոշոր աչքերը բոլորովին էլ այնպես սարսափելի չէին, ինչպես Սուրն էր նկարագրում:
- Ես... ես մոլորվել եմ: Մայրիկս հիմա ինձ է սպասում, - լացակումած պատասխանեց Սամը:
- Գնանք ինձ հետ, - ասաց նա և Սամի ձեռքից բռնած՝ մտավ իր սենյակը:
- Աղաչում եմ ձեզ, բաց թողեք... Ես մեղավոր չեմ... Մայրիկս հիմա փնտրում է ինձ: Ինչո՞ւ բերեցիք այստեղ, բաց թողեք, - խնդրում էր Սամը և սրտաճմլիկ լալիս:
- Մի՛ լա, տղաս: Ես կօգնեմ քեզ մայրիկիդ գտնել: Այս խոսքերը մի փոքր հանգստացրին Սամին:
- Դե, սրբիր, սրբի՛ր աչքերդ...
Երբ Սամը հանեց թաշկինակը աչքերը մաքրելու, նրա գրպանից աթոռի վրա ընկավ այն ծրարը, որ հասցեագրված էր. «Արտեմ Նիկոլաևիչին»:
Նրանցից ոչ մեկը չնկատեց այդ:

***

Սամի մայրը, որ խնջույքը թողած Սուրի ու նրա հոր հետ կրկես էր եկել, դահլիճում նստած մարդկանցից հարցուփորձ էր անում Սամի մասին՝ նկարագրելով նրա արտաքինը:
Սուրը նույնիսկ մի քանի անգամ բարձրաձայն կանչեց.
- Սա՛մ, Սա՛մ... - Բայց պատասխան չեղավ: Այդ միջոցին ավելի ուժեղ վառվեցին դահլիճի լույսերը և ներկայացման երկրորդ բաժինը սկսվեց:
Արենա մտավ հայտարարողը.
- Այժմ ելույթ կունենա հանրահռչակ իլյուզիոնիստ Արտեմ Նիկոլաևիչ Արզումանյանը:
Երաժշտությունն սկսվեց: , . ,
Ծափերի ուղեկցությամբ, հանդիսավոր քայլվածքով ներս մտավ իլյուզիոնիստը:
Հանդիսասրահում ամեն մի շշուկ լռեց: Գեղեցիկ սփռոցով ծածկված սեղանի վրա, որը դրված էր արենայի կենտրոնում, փոքրիկ արկղ կար, վրան բազմաթիվ հարցական նշաններ: Փաթթոցավոր մարդը մոտեցավ արկղին, ձեռքի փոքրիկ փայտով ինչ-որ տարօրինակ շարժումներ արեց և ա՛յ քեզ զարմանք... Այդ փոքրիկ արկղից նա սկսեց այնքան իրեր հանել, որ այդ ամենը երեք մեծ սնդուկի մեջ հազիվ թե տեղավորվեր: Վերջացնելով, նա դարձավ հանդիսատեսներին ու թավ ձայնով ասաց.
- Ասում են, այստեղ մի մայր կորցրել է իր երեխային...
Սամի մայրը, որ դեռ շարունակում էր հարցուփորձը, այս խոսքերը լսելով, ապշած կանգ առավ: Դահլիճում շշուկներ լսվեցին:
- Ա՛յ, մենք հիմա կդիմենք մեր կախարդական արկղին, - շարունակեց իլյուզիոնիստը, - և նա կօգնի մեզ:
Մարդիկ լարված հայացքներով սկսեցին հետևել նրա խորհրդավոր շարժումներին: Եվ ահա նա դուրս քաշեց արկղիկից տասներեք-տասնչորս տարեկան մի հաստլիկ տղայի:
- Սամվե՛լ, - նկատելով իր տղային՝ հուզված բացականչեց մայրը և նետվեց դեպի արենան:
- Մա՛մ, - բացականչեց սեղանի վրա կանգնած տղան և հուզմունքից թե վախից մի այնպիսի զռռոց դրեց, որ հանդիսատեսների մեջ ծիծաղի փոթորիկ բարձրացավ:
Տիկին Երանուհին գլուխը կորցրած վազեց դեպի տղան և սեղմելով իլյուզիոնիստի ձեռքը, ծափերի որոտի տակ դուրս տարավ նրան:
-Իրենց արտիստներից էր,- բացատրեց նստածներից մեկն իր կողքինին, իսկ վերջինս էլ խորիմաստ շարժելով գլուխը, հավանության նշան արեց:

***

Մայրիկն այդ անմիտ արարքների համար, իհարկե, մատներով լավ կշոյեր Սամի լոշտակ ականջները, բայց հյուրերի խնդրանքով այս անգամ էլ ներեց նրան:
Խնջույքն սկսեց աշխուժանալ:
Եվ մինչ հյուրերը զվարճանում էին, Սամը՝ մյուս երեխաներին շուրջը հավաքած, ոգևորված պատմում էր այն բոլոր հրաշքների մասին, որոնց նա ականատես էր եղել կրկեսի կուլիսներում:
- Լավ, բա դու ո՞նց էիր այդքան փոքր արկղում տեղավորվել,- հարցրեց Սուրը:

- Չգիտեմ: Ես մենակ հիշում եմ, որ նա ինձ պառկեցրեց ինչ-որ բանի մեջ և մեկ էլ, որ արդեն կանգնած եմ սեղանի վրա:
- Այդ է, որ կա, քնացրել է, - հաստատեց Սուրը, - ինչ ես ծիծաղում, հա՛, հա՛, քնացրել է, իսկ դու չես նկատել: Գիտես, թե նա ինչե՞ր կարող է անել: Ո՛ւխ... Երբ մեծանամ, ես էլ անպատճառ այդպիսի հիպնոզիոնիստ կդառնամ: Ա՛յ, հենց վաղվանից սկսելու եմ փորձել:
.... Տիկին Երանուհուն անհանգստացնում էր այն միտքը, որ Արտեմ Նիկոլաևիչը հրաժարվել էր մասնակցել իր որդու ծննդյան օրվա առթիվ կազմակերպված խնջույքին:
«Երևի ծերուկը խիստ վիրավորվել է», - մտածեց նա ու իսկույն մոտեցավ անկյունում քչփչացող երեխաներին:
- Սամվել, երբ դու հրավիրատոմսը հանձնեցիր Արտեմ Նիկոլաևիչին, նա քեզ ի՞նչ ասաց:
- Ի՞նչ հրավիրատոմս...
- Այն, որ ծրարի մեջ դրած առավոտյան քեզ հանձնեցի:
Սամը մի քանի անկապ բառեր կմկմաց և...
Դռան զանգը տվին:
«Երևի ծերուկն է...», - մտածեց տիկին Երանուհին ու շտապ գնաց դուռը բանալու:
Բայց այ քեզ բա՛ն... Դռների մեջ հայտնվեց բարձրահասակ, անծանոթ մի մարդ՝ նվերների փոքրիկ կապոցը ձեռքին:
- Համեցեք, խնդրեմ, - շփոթված ասաց տիկին Երանուհին և անծանոթ հյուրին ներս հրավիրեց:
- Կարծեմ, մենք արդեն ծանոթներ ենք, - պատասխանեց հյուրը և, բռնելով տիկին Երանուհու ձեռքը, ավելացրեց, - Արտեմ Նիկոլաևիչ Արզումանյան:
- Շատ ուրախ եմ, - ակամայից պատասխանեց Սամի մայրիկը, - դուք երևի Արտեմ Նիկոլաևիչի բարեկա՞մն եք, - ավելացրեց նա, ինքն էլ չհասկանալով իր հարցի իմաստը:
- Ոչ, ոչ... Ես հենց ինքս եմ՝ Արտեմ Նիկոլաևիչը:
- Ոչի՞նչ չեմ հասկանում, - տարակուսանքով ասաց տիկին Երանուհին և նրան հյուրասենյակ առաջնորդեց:
Երբ հյուրը ներս մտավ, Սամը հանկարծակիի եկած՝ վեր թռավ տեղից:
- Սամ, սա էն քեռին է, որ ինձ դուրս հանեց կախարդական արկղից, - բացականչեց նա և ուրախությունից սկսեց թռչկոտել:
Հյուրը, հավաքվածների զարմացած հայացքները տեսնելով, շփոթված դարձավ տիկին Երանուհուն:
- Ես տեսնում եմ, դուք հանկարծակիի եք եկել իմ անակնկալ այցելությունից, բայց ես միայն կատարել եմ իմ պարտքը: Ահա ինձ հասցեագրված հրավիրատոմսը...
Հավաքվածները խորին ակնածանքով ցանկալի հյուրին հրավիրեցին սեղանի մոտ:
Երբ ամեն ինչ պարզվեց, տիկին Երանուհին շտապեց ծերուկ գիտնականի ետևից:
Մի փոքր հետո, հյուրերի ուրախ ծիծաղի ու ծափերի տակ, երկու Արտեմ Նիկոլաևիչներ բարեկամաբար սեղմեցին միմյանց ձեռքերը:
Ամբողջ երեկոն այնպես զվարճալի ու հետաքրքիր անցավ, որ Սամը կարծես այնքան էլ դժգոհ չմնաց իր ծննդյան տոնից:

Գլուխ յոթերորդ. ԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐԸ

Հաջորդ օրը, կենդանաբանության ժամին, երբ ուսուցչուհին պատմում էր նոր դասը, Սամն անհանգիստ դրության մեջ էր: Որքան ցանկանում էր ուշադրությունը լարել ուսուցչուհու պատմածը լսելու, չէր կարողանում: Կոպերը ինքնաբերաբար փակվում էին, գլուխը դանդաղ իջնում էր ցած: Նա երբեմն սթափվում, մի պահ լարում էր լսողությունը ու նորից... Մի քանի անգամ էլ փորձեց այդպես աչքերը փակ լսել, դարձյալ չկարողացավ:
Ինչ-որ բան շարունակ դժժում էր ականջներում: Ուսուցչուհու արտասանած բառերը շիլայի նման շաղախվում էին գլխում: Ի վերջո, նա սկսեց դանթել՝ ընկնելով հաճելի ինքնամոռացության մեջ:

Սամը երևի դեռ երկար ժամանակ այդպես լող կտար երազների ծովում, եթե կողքին նստած Սուրը արմունկով չիրեր նրան:
- Սա՛մ, այ Սա՛մ, լսում ես, մի քնիր...
Սամը բարձրացրեց գլուխը, մշուշված աչքերով նայեց ուսուցչուհու կողմը:
Տեսնելով, որ իր «բացակայության» ժամանակ շուրջը արտակարգ փոփոխություն չի կատարվել, բերանը լայն բացած հորանջեց, տրորեց քնաթաթախ աչքերն ու մռթմռթաց.
- Ի՞նչ ես անընդհատ քաշքշում...
- Ո՞վ է քաշքշում: Ես մենակ արմունկով կամաց հրեցի: Ախր Լուսինյանը երկու անգամ քեզ նայեց, իսկ դու ննջում էիր:
- «Ննջո՛ւմ էիր, ննջո՛ւմ էիր», - խեղդված ձայնով բարկացած կրկնեց Սամը: - Հենց էնպես հո չեմ ննջում: Ես վարժեցնում եմ ինձ:
- Ինչի՞ն ես վարժեցնում, քնած ժամանակ լսելո՞ւն:
- Հենց էդպես, ինչ զարմանալու բան կա: Բոլորն էլ պետք է վարժեցնեն իրենց քնելիս լսել, իսկ լսելիս՝ քնել: Այդպես ժամանակի խնայողություն կլինի, և մարդիկ ավելորդ ժամեր չեն կորցնի:
- Այդպիսի բաներ միայն ֆանտաստիկ գրքերում են լինում, - շշնջաց Սուրը:
- Ոչ մի ֆանտաստիկ գիրք, դա իմ հայտնագործությունն է:
- Դադարեցրեք քչփչոցները, - նկատողություն արեց ուսուցչուհին և այդպիսով Սամի նոր հայտնագործության պարզաբանումն ընդհատվեց:
Սուրի զգուշացումները, իհարկե, ապարդյուն անցան: Սամը նորից սկսեց դանթել:
Ուսուցչուհին, տեսնելով նրա գլխի մարզանքները, Սուրի անհանգիստ վիճակը, հարցրեց.
- Ի՞նչ է պատահել...
Սուրը պատասխանի փոխարեն ուժեղ հրեց ընկերոջը: Սամը վեր թռավ նստած տեղից ու սկսեց հարբածի նման օրորվել:
- Ապա, Սամվե՛լ, թվիր երկկենցաղների դասին պատկանող կենդանիների անունները, - դիմեց նրան ուսուցչուհին:
Սամը ճպճպացրեց մանրիկ աչքերը, մի քանի անգամ թուքը կուլ տվեց ու շփոթված նայեց շուրջը:
- Երկկենցաղների՛... Երկկենցաղների՛, - հազիվ կմկմաց նա և նստարանի տակից աննկատելի սեղմեց Սուրի ոտքը:
Վերջինս շտապեց օգնության հասնել նեղն ընկած ընկերոջը:
- Սարյակները, ծիծեռնակները, արագիլները, - ձեռքը բերանին դնելով շշնջաց Սուրը:
Սամը համարձակ կրկնեց.
- Երկկենցաղների դասին են պատկանում սարյակները, ծիծեռնակները, արագիլները... - Եվ վերջացնելով, ինքնաբավակ հայացքով նայեց ընկերներին:
Աշակերտները փռթկացրին:
- Լսի՛ր, Սամվել, - ծիծաղելով դիմեց նրան ուսուցչուհին,- կարող ես ինձ ասել, թե ինչո՞ւ են նրանք երկկենցաղների դասին պատկանում:
Դասարանում մի պահ լռություն տիրեց:
- Երկու ապրելաձև ունեն, - թաքուն շշնջաց Սուրը, - ամռանը մեզ մոտ... ձմռանը՝ տաք երկրներում:
Սամը կրկնեց.
- Որովհետև նրանք... Որովհետև նրանք երկու ապրելաձև ունեն: Ամռանը լինում են մեզ մոտ, իսկ ձմռանը... ձմռանը չվում են տաք երկրներ:
Վրդովված ուսուցչուհին պահանջեց Սուրի օրագիրը:
- Իմը՞, - շփոթված հարցրեց նա:
- Այո՛, քոնը, - պատասխանեց ուսուցչուհին:
Սուրը տարակուսանքով նստարանի տակից դուրս քաշեց պայուսակը, հանեց օրագիրը և անհաստատ քայլերով մոտեցավ ուսուցչուհու սեղանին:
Ուսուցչուհին սկսեց ինչ-որ նշումներ կատարել օրագրում: Սուրը երկար վիզը սագի նման առաջ պարզած, հետևում էր նրա ձեռքի յուրաքանչյուր շարժումին: Հանկարծ նա այլայլվեց:

- Ինչի՞ համար... Չէ որ դուք ինձ դաս չեք հարցրել...
- Դու շատ լավ գիտես, թե ինչի համար, - բարկացած պատասխանեց ուսուցչուհին:
Սուրը վերցրեց օրագիրը, հուսահատ նայեց աշակերտներին ու գլխահակ ետ վերադարձավ:
Դե, իհարկե, նա չէր սխալվում, երբ մտածում էր, որ իր հետ պատահած բոլոր դժբախտությունների պատճառը միայն ու միայն Սամն է: Մեկ էլ տեսար խելքին մի բան փչեց, էլ պրծում չկա: Գործն այնպես շուռ կտա, այնպիսի մի օյին կսարքի, որ վերջում ամեն ինչ շիլա-փլավ կդառնա:
Իսկ Սամն էլ իր հերթին մտածում էր, որ եթե աշխարհիս երեսին գոյություն չունենար Սուրը, ապա ամեն բան էնպես կանոնավոր կընթանար, ինչպես մեծերի մոտ:
... Զանգը հնչեց:
Աշակերտները աղմուկով շրջապատեցին Սամին ու Սուրին:
- Այ թե բան էիք գտել, հա՛... - ընդհանուր ժխորի մեջ լսվեց տղաներից մեկի ձայնը, - պատկերացնո՞ւմ եք, թե ինչքան ծիծաղելի կլիներ, եթե մի օր գորտերն ու դոդոշները թռչեին օդում և նույնիսկ չվեին տաք երկրներ:
Իսկ աղջիկներից մեկն իր բարալիկ ձայնով ծղրտաց.
- Կամ դրա փոխարեն արագիլներն ու ծիծեռնակներն ապրեին ջրում և լուսնյակ գիշերներին կռկռային:
- Զարմանալու ի՞նչ կա որ, - հեգնանքով ասաց Պետրոսը, - դա էնպիսի մի խոշոր նորություն կլինի, որ մեկ էլ տեսար Սուրը մի նոր գիրք գրեց, «թե ինչպես գորտերն ու դոդոշները գրավեցին տիեզերքը»:
Ընկերների ծաղրն ու ծիծաղն այնպես կատաղեցրեց Սամին, որ նա վեր թռավ տեղից և հարձակվեց Սուրի վրա:
- Այս ինչ արեցիր, հը՞... Ի՞նչ արեցիր: Առանց մտածելու բերանդ բաց ու խուփ ես անում և մարդկանց գցում կրակի մեջ: «Սարյակնե՛րը, արագիլնե՛րը», բայց նրանք իսկի էլ երկկենցաղների դասին չեն պատկանում:
- Քո պատճառով «երկու» ստանամ և դեռ ես եմ մեղավորը, հա՛... Ինչի՞ էիր ոտքս տրորում, «հուշի՛ր, հա հուշի՛ր», - պոռթկաց Սուրը և միանգամից վեր թռչելով՝ բռնեց ընկերոջ օձիքից,- այ թե ինչ պտուղն ես եղել:
- Քաշի՛ր ձեռքդ, ասում եմ:
- Չե՛մ քաշում...
- Վերջը վատ կլինի, քաշի՛ր, ասում եմ, - սպառնաց Սամը և ուռած թշերն ավելի ուռացրեց: Դա նշանակում էր, որ փոթորիկ է պայթելու:
Սուրը վախեցած բաց թողեց նրա օձիքը և, ետ-ետ գնալով դեպի գրատախտակը, կմկմալով ասաց.
- Իսկ ես... ես քո քիթ ու մռութը պո... պոմիդոր կդարձնեմ:
- Ապա մի դարձրու:
- Եվ կդարձնեմ:
- Դե դարձրու, էլի՛: Դարձրո՛ւ, ասում եմ:
Տղաները կռվի պատրաստվող աքաղաղների նման դեռ երկար ժամանակ այդպես մարտահրավերներ կկարդային, եթե Պետրոսը չբացականչեր.
- Օհո՛, տղերք, մեր «երկկենցաղները» կարծես լուրջ պատերազմ են սկսում:
Պետրոսի այս բացականչության վրա Սամը սթափվեց, դադարեցրեց լեզվակռիվը և արագ մոտեցավ գրատախտակին: Վերցնելով կավիճը, նա տարօրինակ մի կենդանի նկարեց, որը ավելի շատ ավանակի էր նմանվում:
- Գորտերն ու դոդոշները պատկանում են երկկենցաղների դասին, իսկ դու, իսկ դու ահա թե ում դասին ես պատկանում - ասաց նա ու մատով գրատախտակը ցույց տվեց:
Առաստաղն ասես միանգամից փուլ եկավ Սուրի գլխին: Նա բարկությունից սեղմեց բռունցքները և մոտենալով Սամին, սպառնագին ասաց.
- Իսկույն մաքրիր...

- Ինչի մաքրեմ: Սա ինձ իսկի էլ չի խանգարում ,- հեգնորեն պատասխանեց Սամը և անտարբերությամբ ավելացրեց, - ինքդ մաքրիր, եթե այդքան անհանգստացնում է քեզ:
Սուրը զայրույթից ամբողջ մարմնով դողաց: Նա արագ վերցրեց փոքրիկ բարձիկը և, ջնջելով գրատախտակի վրայի այլանդակ մռութը, կավճոտ ջնջոցը շպրտեց Սամի դեմքին:
Փոշու մի փոքրիկ ամպ բարձրացավ, և նրա շիկավուն, պեպենոտ երեսը ծածկվեց կավճափոշով:
- Ա՜խ, ուրեմն, այդպե՞ս... - փնչացրեց նա և, ճանկելով գետին ընկած ջնջոցը, հարձակվեց Սուրի վրա:
Քաշքշուկն սկսվեց:
Երկու «ախոյաններն» էլ, չզիջելով մեկը մյուսին, ճարպկությամբ իրար ձեռքից խլում էին ջնջոցը և կավճով անգթորեն սպիտակեցնում միմյանց, չխնայելով ո՛չ մազ, ո՛չ հագուստ:
Աշակերտները դեռ նոր էին բաժանել ջրաղացպանի պես ոտից գլուխ ճերմակած տղաներին, երբ բացվեց դասարանի դուռը և ներս մտավ մաթեմատիկայի դասատուն:
Երեխաներն արագ իրենց տեղերը գլորվեցին, իսկ Սուրն ու Սամը այնպես էին տաքացել, որ առանց ուշադրություն դարձնելու շրջապատի վրա, շարունակում էին բզկտել իրար:
- Սա ի՜նչ ներկայացում է, - թնդաց դասատուի թավ ձայնը: - Զանգը վաղուց տվել են, իսկ դուք ահա թե ինչո՜վ եք զբաղված: Անմիջապես դուրս կորեք դասարանից և մինչև չլվացվեք, աչքիս չերևաք... Շփոթված տղաները դուրս եկան դասարանից:

Գլուխ ութերորդ. ԼՎԱՑՎՈՒՄ ԷԻՆՔ...

Ջրախողովակի վերանորոգման պատճառով դպրոցի շենքում ջուր չկար, իսկ բակում գտնվող ցայտաղբյուրի մոտ հավաքարար Շուշան մայրիկն էր կանգնել և ռետինե բարակ խողովակով ջուր էր լցնում դույլի մեջ:
Տղաները ստիպված եղան սպասել այնքան ժամանակ, մինչև աղբյուրն ազատվեց: Նրանք, հրմշտելով իրար, սկսեցին լվացվել: Անշուշտ այստեղ էլ մի նոր քաշքշուկ կսկսվեր, եթե ինչ-որ աղեկտուր լացի ձայն չսթափեցներ նրանց:
Շենքի ներքնահարկում գտնվող հնոցատան գետնափոր լուսամատի առջև, ուր վառված քարածխի հսկայական շեղջ կար կուտակված, կանգնել էր չորսից-հինգ տարեկան մի տղա ու սրտաճմլիկ լալիս էր:
Սուրն ու Սամը մոտեցան:
- Ի՞նչ է պատահել, պստիկ, - հարցրեց Սուրը:
Փոքրիկ տղան մի պահ ընդհատեց լացը:
- Փախա՜վ, ա՛յ էստեղ փախավ, - հեկեկալով ասաց նա և մատով ցույց տվեց հնոցատան լուսամուտը:
Տղաները ոչինչ չհասկանալով, նայեցին նրա ցույց տված ուղղությամբ:
- Ի՞նչը փախավ... - հարցրեց Սամը:
- Քոթոթը, ի՜մ քոթոթը, - պատասխանեց փոքրիկը, - ա՛յ հենց էստեղ խաղում էինք... Հետո... Հետո մեկ էլ մի մեծ տղա եկավ «փը՜խկ» արեց ու ոտքը ուժեղ խփեց գետնին, ա՛յ, էսպես: Հետո... իմ քոթոթն էլ վախեցավ ու փախավ:
Տղաները մի պահ նայեցին իրար, ապա քարածխի շեղջի վրայով, պպզած լուսամուտից ներս սահեցին:
Փոքրիկի լացը կարծես հաշտեցրել էր տղաներին: Եվ ահա նրանք, քիչ առաջ տեղի ունեցած կռիվն ու վիճաբանությունը մոռացած, փնտրում էին կորած շանը: Բայց քոթոթն անհետացել էր:
Սամը շրթունքները կուչ բերելով (ինչպես այդ անում են շներին կանչելու ժամանակ) ծպծպացնելով, սկսեց կանչել քոթոթին:
Հանկարծ կզմզտոց լսվեց:
- Վա՛յ, ձայնը կարծես այստեղից եկավ, - ուրախ բացականչեց Սուրը և գլուխը աղյուսե վառարանի դռնակից ներս խոթեց,- դե իհարկե, այստեղ է... Մի սրան տեսեք, տեղ է գտել թաքնվելու:
Այս խոսքերը լսելով, Սամն էլ իր հերթին վառարանի դռնակից գլուխը ներս մտցրեց:

Քիչ հետո նրանք վախից կուչ եկած քոթոթին գրկած՝ դուրս եկան հնոցատան լուսամուտից: Նրանց երեսներն ամբողջովին սևացել էին մրից:
Փոքրիկը հրճվանքից փափլիկ թաթիկներն իրար խփեց և սկսեց ուրախ ցատկոտել տեղում:
- Առ քոթոթդ ու իսկույն տուն գնա, - ասաց Սուրը և վախից դողդողացող շնիկը տվեց տղային: Հենց այդ պահին բակի մյուս ծայրից երևաց ուսմասվարը: Նրանք գլխապատառ ներս վազեցին:
Երբ տղաները հնոցապանի նման մրոտված երեսներով հևասպառ դասարան մտան, աշակերտների ուժգին ծիծաղից լուսամուտների ապակիները ասես շխկշխկացին:
Սուրն ու Սամը ոչինչ չկռահելով, վեր քաշեցին ուսերը և զարմացած ու շփոթված նայեցին ուսուցչին:
- Ո՞ւր էիք... Ի՞նչ էիք անում այսքան ժամանակ, - նրանց մրոտված երեսները տեսնելով, զայրացած հարցրեց ուսուցիչը:
- Լվացվում էինք... - միաբերան պատասխանեցին նրանք: Ծիծաղի փոթորիկը պայթեց դասարանում:
- Լվացվո՞ւմ էիք: Ինչպե՞ս չեք ամաչում: Իսկ երեսներիդ մուրն ի՞նչ է...
Ուսուցչի այս հանդիմանական խոսքերից Սուրն ակամայից ձեռքը երեսին քսեց ու տեսնելով սևացած մատները, հուսահատ նայեց ընկերոջը:
Սամի մրոտված դեմքի վրա փայլում էին միայն նրա զարմանքից չռված աչքերը:

Գլուխ իններորդ. ՀՐԱՇՔՆԵՐԻ ԱՐՔԱՆ

Այն, ինչ տեղի ունեցավ հինգշաբթի օրը, երևի բոլորովին այդպիսի տխուր վախճան չունենար, եթե Սուրը պատահմամբ չգտներ պղնձյա բանալին և դանակով չփորեր սնդուկի պատը: Բայց եկեք չշտապենք ու ամեն ինչ պատմենք սկզբից: Սուրենց տանը մի մեծ հինավուրց սնդուկ կար: Սնդուկը բոլոր կողմերից երեսապատված էր գույնզգույն, եռանկյունաձև թիթեղիկներով, որոնք արտակարգ շքեղություն էին տալիս նրան:
Սնդուկը փակվում էր ինքն իրեն: Բավական էր սեղմել կափարիչը և նա ամուր կփակվեր: Իսկ բացվելու համար օգտագործվում էր նուրբ փորագրություններ ունեցող մի բանալի, որը մայրիկը խնամքով թաքցնում էր երեխաներից: Բանն այն էր, որ սնդուկը զարմանահրաշ մի հատկություն ուներ: Հենց որ բանալին պտտվում էր փականի անցքում, սնդուկը ծնգծնգալով նվագում էր ու բացվում: Այս բանն այնքան էր դուր գալիս երեխաներին, որ նրանք անընդհատ բացուփուփ էին անում կափարիչը և կլանված լսում կախարդական հնչյունները: Ամեն ծնգծնգոցից հետո նրանք շունչները պահած սպասում էին, թե ուր որ է սնդուկում կհայտնվի հեքիաթային քաղաքն իր բարձրաբերձ աշտարակներով, որոնց ծայրերին կփայլփլեն ոսկե խաչերը: Ու նրանց թվում էր, թե քիչ առաջ լսվող ծնգծնգոցները հեքիաթային քաղաքի զանգակատներից հնչող զողանջներն էին: Նրանք այդ բոլորը պատկերացնում էին ճիշտ այնպես ինչպես նկարագրված էր հայրիկի վերջերս նվիրած նկարազարդ գրքում:
Սակայն, չգիտես ինչու, ամեն անգամ այդ երազային քաղաքի փոխարեն նրանց առաջ հայտնվում էին խունացած շորերն ու մաշված սավանները, որոնք մայրիկը պահում էր սնդուկում:

***

Այն օրից սկսած, երբ Սուրն ու Սամը ծանոթացան կրկեսի իլյուզիոնիստ Արտեմ Նիկոլաևիչի հետ, Սուրի համար անհանգիստ օրեր սկսվեցին: Հռչակավոր իլյուզիոնիստ դառնալու երազանքներն օրեցօր ամրանում էին նրա մեջ: Նա պարզ պատկերացնում էր, թե ինչպես իր անունը խոշոր տառերով տպված կլինի բոլոր կրկեսների ազդագրերում: «Մոտ օրերս մեր արենայի վրա ելույթ կունենա համաշխարհային իլյուզիոնիստ, հռչակավոր Սուր... Սուր...»: Չէ՛, դա իսկի բանի նման չի: Չէ՞ որ այն ժամանակ նա արդեն չափահաս մարդ կլինի, և այդ անունն ամենևին էլ չի սազի նրան: Ուրեմն հարկավոր է մի այնպիսի անուն ընտրել, որ մարդիկ լսելուն պես զարմանքից քարանան: Ա՛յ, օրինակի համար, «Հրաշքների արքա սև թիկնոցավոր...» Այո՛, այո՛, հենց այդպես էլ կգրվի՝ «...Ելույթ կունենա Հրաշքների արքա սև թիկնոցավորը»: Իսկ ծննդյան վկայականը... Չէ՞ որ այնտեղ բոլորովին էլ այդպես չի գրված: Ասենք, դա էլ մի դժվար բան չէ: Նա դիտմամբ կկորցնի ծննդյան վկայականը և նորը ստանալիս անունը կփոխի: Եվ այսպես ուրեմն, իր անունը լսելուն պես մարդիկ

հետաքրքրությունից վառված, կհավաքվեն կրկեսների մուտքերի առջև: Հիացմունքից չռված աչքերով կդիտեն պատերին փակցված ազդագրերը, ուր նկարված կլինի ինքը՝ ադամանդներով զարդարված սպիտակ փաթթոցը գլխին: Կնայեն բոլորը ու կշշնջան միևնույն բառերը.
- Ահա նա, «Հրաշքների արքան...»:
Իսկ երեկոները, երբ կրկեսի բարձր ու լայնարձակ գմբեթի տակ կվառվեն պայծառ լույսերը, նվագախմբի հաղթական քայլերգի տակ, ծափերի որոտի ներքո, դուրս կգա ինքը՝ սև թիկնոցի մեջ փաթաթված: Սրահում շատ ու շատ մարդկանցից բացի, հավաքված կլինեն նաև իրենց դասարանի տղաներն ու աղջիկները, տանեցիք, ուսուցիչները: Բոլորը զարմացած կբացականչեն.
- Սուրն է, մեր Սո՛ւրը...
Այդտեղ, իհարկե, կլինի նաև Սամը: Նա բերանը լայն բացած ապշած աչքերով կնայի իր ոսկեզօծ շորերին ու նախանձից կպայթի: Նա կզղջա այն խոսքերի համար, որ շարունակ կրկնում էր.
- Չես կարող, բան չի դուրս գա, համբերություն չունես...
Համբերությո՛ւն...
Ու նա հիշեց իլյուզիոնիստ Արտեմ Նիկոլաևիչի խոսքերը.
«Ամեն ինչում, ինչպես և իլյուզիոնիստ դառնալու համար, հարկավոր է ունենալ մեծ համբերություն...»:
Այս դառը միտքը միշտ էլ միանգամից ցրում էր Սուրի երազները: Նրա երևակայությունից ծխի նման չքանում էր «Հրաշքների արքա սև թիկնոցավորը», և նա նորից դառնում էր սովորական մի տղա: Այսինքն՝ պարզապես վեցերորդ «բ» դասարանի աշակերտ Սուրեն Կակոսյանը:
Ինչո՛ւ, ինչո՛ւ նա այդքան անհամբերն է ծնվել...
Գուցե հենց դրանից է, որ նա ինչ գործ էլ սկսելիս լինի, շտապում ու տապալում ամեն ինչ: Ախր, ինչպե՛ս չշտապես: Հենց գործը ձգձգվեց, մեկ էլ տեսար մի ուրիշ բան մեջ ընկավ: Դե արի ու համբերի:
Չնայած այդ միտքը բավականին անհանգստացնում էր նրան, բայց Սուրը չէր հրաժարվում իլյուզիոնիստ դառնալու մտադրությունից:
Դասերից հետո, երբ տանը մարդ չէր լինում, Սուրը երկար ժամանակ, փակվում էր հոր առանձնասենյակում ու մտածում, թե ինչպես իրականացնի իր վաղուց փայփայած երազանքը:
Մայրիկի ծաղկավոր սև խալաթը սկսեց ավելի հաճախակի անհետանալ շորերի պահարանից: Իսկ լվացարանի մոտ կախված երեսսրբիչներից մեկն անհետ կորավ:
Մի առավոտ, երբ մայրիկը պատրաստվում էր լվացք անել, նկատեց, որ սրբիչներից մեկը չկա: Երկար որոնելուց հետո էլ սրբիչը չգտնվեց, նա ստիպված դիմեց Սուրի փոքրիկ քրոջը.
- Մանո՛ւշ, աղջի՛կս, դու չգիտե՞ս, թե ուր է կորել Սուրի սրբիչը:
- Սրբիչը իսկի էլ չի կորել: Գիտեմ որտեղ է, բայց չեմ ասի...
- Ինչո՛ւ, - աղջկա պատասխանից զարմացած հարցրեց նա:
- Հենց այնպես, չե՛մ ասի...
- Դա ինչ պատասխան է, ես չեմ հասկանում:
- Եթե ասեմ, Սուրն ինձ կդնգստի:
- Երևի պատռվե՞լ է...
- Չէ:
- Թանաքոտե՞լ:
- Չէ:
- Հապա ինչի՞ չես ասում, թե որտեղ է:
Մանուշը երկար չեմուչումից հետո վերջապես բռնեց մոր ձեռքից ու պատշգամբ տարավ:
- Ահա այստեղ է, - ասաց նա՝ ցույց տալով անգործության մատնված թիթեղյա վառարանը:
- Ինչպե՛ս... Ի՞նչ գործ ունի այստեղ սրբիչը, - զարմացավ մայրիկը և վառարանից դուրս հանեց թերթերով փաթաթված մի տռզած կապոց ու դնելով հատակին՝ բաց արեց: Ի զարմանք նրա, կապոցում հայտնվեց արդեն պարսկական չալմա դարձած երեսսրբիչը և իր ծաղկավոր սև խալաթը: Մայրիկը չկարողացավ զայրույթը զսպել, երբ խալաթի վրա տեսավ տարբեր գույնի

հարցական նշաններ և սատանաների ինչ-որ այլանդակ կերպարանքներ: (Այդ ճիվաղները Սուրն ուղղակի սարսափ ազդելու համար էր նկարել):
- Ահա թե ինչու չէիր ուզում հայտնել տեղը, անպիտա՜ն աղջիկ, - բարկացավ մայրը և ապա սպառնալից ավելացրեց. - Սպասիր, Սուրե՜ն, սպասիր, մի տուն կգաս, չէ՞... Ես քեզ ցույց կտամ այս այլանդակություններիդ համար:
Սուրը ճաշին կինոյից տուն վերադարձավ: Հայրն արդեն վերադարձել էր աշխատանքից և բազմոցին պառկած՝ հանգստանում էր: Մայրը բարձրաձայն ինչ-որ բան էր բացատրում նրան: Երբ Սուրը ներս մտավ, նա ընդհատեց խոսակցությունը և զսպված տոնով հարցրեց.
- Սուրե՜ն... ճաշելուց առաջ դու, իհարկե, կլվացվես, այնպես չէ՞...
Սուրը նրա խոսակցությունից վտանգավոր մի բան զգաց: Չէ՞ որ մայրն այդ տոնով խոսում էր այն ժամանակ միայն, երբ սաստիկ բարկացած էր լինում:
- Բա ինչ, մամ... - այնուամենայնիվ պատասխանեց նա:
- Իսկ կարո՞ղ ես ինձ ասել, տղա՛ս, մարդիկ լվացվելուց հետո ինչո՞վ են սրբվում:
- Սրբիչո՛վ, - ծոր տվեց Սուրը և թեթևակի նայեց հայրիկին՝ հայրիկը չգիտես ինչու, ժպտում էր:
- Ապա մի այստեղ բեր սրբիչդ...
Սուրը շփոթվեց: Այտերը անսովոր կերպով կրակվեցին: Չկարողանալով պատասխանել՝ կախ գցեց գլուխը և աչքի պոչով նայեց քրոջը:
Մայրիկը ջղային քայլվածքով ներս բերեց սրբիչից պատրաստված գլխի փաթթոցն ու զանազան ներկերով զարդարված խալաթը:
- Այստեղ նայիր, մա՛րդ: Տե՛ս, թե ինչ պատրանքներով է լցված քո հիմար որդու գլուխը: Իսկ դու, անպիտան տղա, երևի որոշել ես ամբողջ տունը կրկեսի հանդերձատո՞ւն դարձնել: Եթե այդպես ամեն անգամ մի շոր փչացնես, մի գեղեցիկ օր ստիպված կլինենք կիսամերկ շրջելու: Լռում ես, հա՞... Ես քեզ հազար անգամ եմ ասել, որ գլխիցդ դուրս շպրտես քո բոլոր ֆոկուս-մոկուսները և որևէ մի լուրջ բանով զբաղվես:
Հայրիկը, որ մինչ այդ լուռ լսում էր, վեր կացավ պառկած տեղից, ուղղեց ակնոցը և հանդարտ ասաց.
- Ուսումնական տարին վերջանալուն շատ քիչ ժամանակ է մնացել: Դու հիմա ավելի լավ է դասերովդ զբաղվես, իսկ տունը կրկես դարձնելու դեռ ժամանակ կունենաս:
Հայրիկի ամբողջ դատավճիռն այսքանով էլ ավարտվեց:
Բանը վերջացավ նրանով, որ Սուրը մի քանի սովորական խոստումներից հետո ետ ստացավ այն իրերը, որոնք արդեն կորցրել էին իրենց հեղինակությունը մայրիկի աչքում:

Գլուխ տասներորդ. ՉԱՐԱԲԱՍՏԻԿ ՕՐԸ

Մի օր Էլ, երբ Սուրը մայրիկի արդուզարդի գզրոցում ինչ-որ բան Էր փնտրում, պատահմամբ նրա ձեռքն ընկավ սնդուկի պղնձյա բանալին, այն սնդուկի, որի մասին քիչ առաջ պատմեցի: Եվ հենց այդ պահին էլ նրա գլխում մի այսպիսի միտք փայլատակեց:
Այդ սնդուկով այնպիսի ֆոկուս կարելի Է անել, որ նայողի բերանը բաց մնա: Ասենք այսպես... Սնդուկը նախօրոք դրված կլինի ննջասենյակի դռան մոտ: Այնպես, որ բանալու անցքը ուղղված լինի ննջասենյակի կողմը, իսկ սնդուկի ետևի մասը դեպի նայողները: Նա կմտնի դատարկ սնդուկը և կխնդրի հանդիսատեսներից որևէ մեկին (օրինակի համար, Սամին) իր սեփական ձեռքով փակել կափարիչը և նույնիսկ մի լավ ստուգել, թե չի բացվում արդյոք: Նախքան ներս մտնելը, արդեն բոլորից թաքուն, նա իր հետ վերցրած կլինի պղնձյա բանալին: Դրանից հետո ներսից բաց կանի փականը և աննկատ դուրս կսողա այնտեղից: Սնդուկի կափարիչը, ինչպես գիտեք, մի թեթև սեղմվելու դեպքում փակվում է: Ուրեմն նա իր ետևից շտապով կփակի կափարիչը և չորեքթաթ սողալով՝ կթաքնվի ննջասենյակի դռան վրա կախված վարագույրի ետևը: Սամը, կարծելով, թե ինքը դեռ սնդուկումն է, ըստ պայմանի, մատով երեք անգամ կթխկացնի կափարիչը, սպասելով պատասխան թխկթխկոցների: Իսկ նա դուրս կթռչի իր թաքստոցից և, ի զարմանք բոլորի, կհայտնվի նրանց կողքին:

Հայրիկն ու մայրիկը տանը չէին, իսկ Մանուշն այդ միջոցին խաղում էր բակում: Սուրն արագ մոտեցավ պատի տակ դրված սնդուկին: Բարձրացրեց վրան գցված գորգի ծայրը, և ապա պղնձյա բանալին պտտեցրեց փականի անցքում: Լսվեցին վաղուց լռած նվիրական ծնգծնգոցները: Սուրի սիրտն ուռկան ընկած ձկան պես թպրտաց: Անհամբեր բարձրացրեց կափարիչը: Այ քեզ բա՛ն... Նա բոլորովին մոռացել էր, որ սնդուկը ներսի կողմից բանալու համար անցք չունի: Ուրեմն իր բոլոր հույսերը ջուրն ընկան: Բայց սպասիր... Իսկ մի՞թե չի կարելի նոր անցք բաց անել: Ուղղակի դանակի ծայրով փականի դրսի անցքի ուղղությամբ:

Սուրը երկար չմտածեց: Նա շտապ բաց արեց պահարանի գզրոցը, հանեց սուր ծայրով մեծ դանակը և արագ գործի անցավ: Պարզվեց, որ փականը երկու կողմերից էլ բանալու համար անցք ուներ: Պարզապես սնդուկ պատրաստողները աննպատակահարմար գտնելով, ներսից անցք չէին փորել: Սուրն իր աշխատանքն ավարտելուց հետո, փորձի համար, մի քանի անգամ բացուփուփ արեց փականը: Ամեն ինչ կարգին էր: Լսվեց ոտնաձայն: Նա շտապով փակեց սնդուկը, գորգի ծայրը գցեց վրան ու վեր կացավ: Ներս մտավ Մանուշը: Սուրը բանալին գրպանը խոթեց և, դառնալով քրոջը, հանդիսավոր ձևով ասաց.

- Ուզո՞ւմ ես, քեզ մի հրաշք ցույց տամ:

- Հրա՜շք, - զարմացած ծոր տվեց Մանուշը, - ի՞նչ հրաշք...

- Հրաշք էլի, իսկական հրաշք: Ասա, ուզո՞ւմ ես:

- Իսկ ինչ բան է լինելու այդ հրաշքը:

- Ո՜ւխ, այնպիսի բան, որ զարմանքից մազերդ բիզ-բիզ կկանգնեն: Շուտ ասա, ուզո՞ւմ ես:

- Ըհը, ուզում եմ:

Սուրը համարձակ առաջ եկավ: Թեև տանը իրենցից բացի մարդ չկար, չգիտես ինչու, նա թեքվեց քրոջ ականջին ու հազիվ լսելի ձայնով շշնջաց.

- Դե լավ, որ շատ ես ուզում, չեմ խնայի, ամեն ինչ ցույց կտամ: Բայց միայն այսպիսի մի պայման կա...

- Պայմա՞ն, ի՞նչ պայման, - հարցրեց քույրը:

- Դե ուրեմն իմացիր: Ինչ հիմա կտեսնես, պարտավոր ես լռել այդ մասին: Ոչ ոքի ոչ մի խոսք, իմացա՞ր...

- Իմացա, Սուր:

- Նույնիսկ մայրիկին:

- Մայրիկին էլ չեմ ասի:

- Ուրեմն լուռ կմնաս ձկան նման:

- Ինչի՞ նման:

- Ձկան նման: Դա հենց այնպես, խոսք է, մեծերն են ասում:

- Իսկ ի՞նչ է, Սուր, ձկները լուռ են մնում, հա՞...

- Ա՜յ քեզ հիմար: Իհարկե լուռ են մնում: Բա դու որտե՞ղ ես տեսել ձկները խոսեն:

- Ես լուռ կմնամ, Սուր: Ինչի նման ուզում ես լուռ կմնամ: Միայն թե ցույց տուր ինձ այդ հրաշքը:

- Է՜հ, դուք բոլոր աղջիկներդ այդպես եք: Սկզբում կխոստանաք, կերդվեք, բայց հենց ոգևորվեցիք, բերաններիցդ ամեն ինչ շաղ կտաք: Ինչպես խալաթի ու սրբիչի մասին: Հիշո՞ւմ ես:

- Էլ չեմ ասի, ազնիվ խոսք, չե՜մ ասի:

- Դե լավ, բայց տես, հա՜...

Այդ ասելով, Սուրը մոտեցավ սնդուկին, գրպանից հանեց բանալին ու բաց արեց կափարիչը: Հանեց ներսում եղած հնամաշ շորերն ու սավանները: Երբ սնդուկը լրիվ դատարկվեց, նա քարշ տվեց այն ննջասենյակի դռների մոտ:

- Դե լսի՜ր, - դիմեց նա քրոջը, որը, եղբոր արածներից ոչինչ չհասկանալով, ապշած կանգնել էր սենյակի անկյունում: - Ես հիմա կմտնեմ դատարկ սնդուկը, իսկ դու իմ վրա կփակես կափարիչը: Ես ներսից կհաշվեմ մե՜կ, երկո՜ւ, երեք: Հենց որ ասեմ երե՜ք, դու արագ կմոտենաս ռադիոընդունիչին և կպտտեցնես կոճակը: Երբ ռադիոընդունիչը կսկսի խոսել, (որը պետք է խլացներ սնդուկից լսվող ծնգծնգոցները) մոտեցիր սնդուկին, մատով երեք անգամ ուժեղ թխկացրու և հետո նստիր իմ վրա: Թյո՜ւ, դե, ոչ թե իմ, այլ կափարիչի:

- Սուր, իսկ ռադիոընդունիչ միացնելը շա՞տ կարևոր է, հա...
- Ա՛յ քեզ դմբո: Իհարկե կարևոր է: Հենց դրա մեջ է ամբողջ կախարդությունը, ասենք ոչ մի կախարդություն էլ չկա: Պարզապես ռադիոալիքների միջոցով ես կանհետանամ փակված սնդուկից:
Եվ Մանուշը տեսավ այդ «հրաշքը»: Տեսավ ու զարմանքից արձանացավ տեղում:
- Օ՛յ, դու իսկական կախարդ ես, Սուր, ազնիվ խոսք, կախարդ ես...
- Հյուո՛ւ, - ցածրաձայն սուլեց նա և իր հաջողությունից ոգևորված՝ բացականչեց, - դա դեռ ի՞նչ է որ... Ես դեռ այնպիսի հրաշքներ կտամ, որ աշխարհով մեկ կթնդա:
Սուրն անչափ գոհ էր իր բախտից: Ամեն ինչ կատարվեց «փայլուն» կերպով: Նրան անհանգստացնում էր մի բան. Մանուշն այդ բոլորի մասին կարող էր հայտնել տանեցիներին: Հարկավոր էր ամեն կերպ համոզել նրան, որ ոչ մի խոսք բերանից չթռցնի:
Ահա եկավ և հինգշաբթի օրը:
Ինչպես միշտ, այդ օրն էլ հայրիկն աշխատանքի էր գնացել, իսկ մայրիկը դեռ երեկվանից հերթապահում էր հիվանդանոցում:
Սուրը, հարմար առիթը ձեռքից բաց չթողնելու համար, որոշեց հենց այդ օրն էլ իրենց տուն հրավիրել Սամին և ցուցադրել նրան իր առաջին հրաշքը:
Կեսօրին Սուրը դպրոցից տուն եկավ թե չէ, անմիջապես անցավ գործի: Հագավ սատանաներով նկարազարդված խալաթը, գլխին դրեց սրբիչե փաթթոցն ու, կանգնելով հայելու առաջ, սկսեց վրձինով դեմքը ջրաներկել: Եղբոր արտակարգ պատրաստությունը տեսնելով, Մանուշը հարցրեց.
- Էդ ինչի՞ ես երեսդ ներկում:
- Հարցնելու ժամանակը չի: Շտապիր, հիմի Սամը մեր տուն կգա: Ներկայացում է լինելու, թող տեսնի, թե ինչ...
Նա խոսքը դեռ չէր ավարտել, զանգը տվին: Սուրը շտապ թաքնվեց ննջասենյակում, իսկ Մանուշը գնաց դուռը բանալու:
Ներս մտավ Սամը: Առաջին բանը, որ գրավեց նրա ուշադրությունը, դա ննջասենյակի դռան մոտ դրված սնդուկն էր, որի կողերին Սուրն արդեն հասցրել էր սև ներկով մի քանի ծուռումուռ հարցական նշաններ խազմզել: Սնդուկի կափարիչը բաց էր:
Սամը հետաքրքրված մոտեցավ ու սկսեց մատներով տնտղել սնդուկի վրայի փայլուն եռանկյունաձև թիթեղիկները: Հենց այդ պահին մյուս սենյակից լսվեց Սուրի խեղդված ձայնը.
- Ի՞նչ ես այդտեղ բզբզում... Սնդուկին մոտենալ չի՛ կարելի, - ասաց նա՝ վախենալով, որ Սամը կարող է նկատել ներսի փորված անցքը:
- Իսկ դու ինչ ես խցկվել էդտեղ ու պտպտում: Ես ոչինչ էլ չեմ բզբզում, այլ հենց այնպես նայում եմ:
- Քեզ ասում են հեռու քաշվիր: Նայել չի՛ կարելի, լսո՞ւմ ես, - լսվեց նորից Սուրի բարկացկոտ ձայնը:
Երբ վերջապես մեր անհանգիստ հանդիսատեսն իր տեղը գրավեց, հպարտ կեցվածքով ներս եկավ Սուրը՝ ձեռքի փոքրիկ փայտիկը աջ ու ձախ շարժելով:
Սամը հազիվ հասցրեց ծիծաղը զսպել:
Սուրի աչքերին ընկած սրբիչի փաթթոցն ու զանազան ճիվաղներով զարդարված խալաթը իսկ և իսկ խրտվիլակի տեսք էին տվել նրան: Բայց նրա աչքերում փայլատակող հպարտությունը հասկացնել էր տալիս նայողին, որ «Հրաշքների արքան» իրեն փառավորապես բավարարված էր զգում այդ շքեղ հագուստի մեջ:
Եվ մինչ Սուրը հանդիսավոր շարժումներով ներս կմտներ դատարկ սնդուկի մեջ, Մանուշը բարձրաձայն հայտարարեց արդեն անգիր արած խոսքերը,
- «Հրաշքների արքան» հարգելի հանդիսատեսներից որևէ մեկին խնդրում է մոտենալ և փակել սնդուկի կափարիչը:
Սամն այդ լսելով, իսկույն վեր թռավ նստած տեղից: Եվ երբ Սուրը կոտրված ձողի նման երկտակ դառած իր բարալիկ մարմինը տնքալով մի կերպ տեղավորեց նեղ սնդուկի մեջ, Սամը շտապով ծածկեց կափարիչը:

- Օ՜ֆ, կամաց: Ի՞նչ ես այդպես ամուր սեղմում, մեջքս կոտրեցիր է՜,- լսվեց ներսից մեր իլյուզիոնիստի ցավատանջ ձայնը:
«Գուցե կափարիչը իսկի էլ չի փակվում, հը՞...», - մտածեց Սամը և մի քանի անգամ քաշեց բռնակից: Կափարիչը ամուր փակված էր:
Անցան սպասումի մի քանի ծանր րոպեներ: Սամի հետաքրքրությունից քարացած դեմքի վրա ոչ մի մկան չէր շարժվում: Չէին թարթվում աչքերն անգամ: Իսկ Մանուշն անհամբերությունից տրորում էր մատները և շնչասպառ սպասում, թե ուր որ է տեղի կունենա «խորհրդավոր հրաշքը»:
Բայց հակառակ դրան, սնդուկի ներսում մեռելային լռություն էր տիրում:
Հանկարծ սնդուկից տնքոցներ լսվեցին, որոնց հաջորդեց Սուրի տագնապալի ձայնը.
- Օ՜ֆ, ի՞նչ եղավ է... (տնքոց): Ախր էս ո՞նց պատահեց: Ո՞ւր կորավ էդ... էդ (տնքոց): Օ՜ֆ, մեջքս կոտրվեց:
Սամն ու Մանուշը վախեցած նետվեցին դեպի սնդուկն ու սկսեցին քաշքշել կափարիչի բռնակից, բայց կափարիչը համառորեն մնում էր փակված:
Իսկ սնդուկի ներսում դժբախտ Սուրը, անհանգիստ շուռումուռ գալով, շարունակում էր գրպանները պրպտել: Երբ նա վերջապես համոզվեց, որ զանազան անպետք իրերով տռզած գրպանները ոչնչով չեն կարող ուրախացնել իրեն, հուսահատ բացականչեց.
- Թյո՜ւ, բա էդ ինչ եղավ, հը՞... Ախր խալաթիս գրպանն էի դրել, բա էդ ո՞ւր կորավ, է՜...
- Ի՞նչը կորավ, Սուր, - հարցրեց Սամը:
Լռություն:
- Ինչի՞ ես լռում, ձայն հանիր, է՜, - հուսահատ ծվծվաց Մանուշը:
- Դե դուք ի՞նչ եք վրա տալիս, - լսվեց սնդուկի ներսից:- Դա գաղտնիք է, հասկանում... Ասենք էլ ի՜նչ գաղտնիք, երբ ամեն ինչ տապալվեց: Սամ, դու լսո՞ւմ ես ինձ, - աղերսող ձայնով հազիվ արտասանեց նա: - Բանն այն է, որ ը՜ը... Հասկանում ես, Սամ, բանն այն է, որ ես ինձ հետ էի վերցրել բանալին...
- Ի՞նչ բանալի, Սուր:
- Դե բանալին, էլի՜, - տրտնջաց Սուրը, - սնդուկի բանալին: Ես նրանով ներսից պետք է բացեի կափարիչն ու աննկատ դուրս գայի այստեղից: Ահա ամբողջ գաղտնիքը: Օ՜ֆ, ես մեռնում եմ: Օ՜դ, շունչս կտրվեց, վա՜յ, վա՜յ... Այս ինչ է, կարծես սառը քրտինք է հոսում ճակատիցս:
- Հիմա ինչ պիտի անենք, հը՞, - տագնապով դիմեց Սամը Մանուշին, - սառ քրտինք... Դա վատ նշան է, հասկանո՞ւմ ես, հարկավոր է փրկել նրան:
- Վա՜յ, այդ ի՞նչ ես ասում, Սամ... Վա՜յ, մամա ջան, - հուսահատ ծղրտաց նա ու ձայնը զլեց:
- Հիմա՜ր, ի՞նչ ես տզզում: Այստեղ իմ շունչը կտրվում է, իսկ նա ժամանակ է գտել զռալու: Գտեք, բանալին գտեք: Ննջարանում նայեք, շորերի պահարանի մոտ...
Նրանք թողեցին սնդուկը, ուր ամփոփված էր մեր դժբախտ իլյուզիոնիստի կենդանի մարմինը, և շտապով ննջարան մտան: Նրանք ման եկան պահարանի շուրջը, անկողինները քանդուքարափ արեցին, ամեն ծակուծուկ նայեցին, բայց բանալին այդպես էլ չգտնվեց:
Գուցե նրանք մի հարյուր անգամ անցուդարձ արեցին պահարանի մոտ ընկած բանալու կողքով, բայց չտեսան:
Իսկ սնդուկից Սուրը շարունակ հարցնում էր.
- Չգտաք, հը... չգտա՞ք:
- Ամեն տեղ նայեցինք, Սուր, բայց չգտանք: Դու այդտեղ նայիր, գուցե քեզ մոտ է... - հեկեկալով պատասխանեց Մանուշը:
- Դե ես արդեն հազար անգամ եմ նայել, - բողոքեց Սուրը:
- Ախր քեզ ասացինք ձեռք քաշի, բան դուրս չի գա: Իսկ հիմա ի՞նչ պիտի անենք, - վրա տվեց Սամը:
- Ինչ ես դու էլ... Ես արդեն խեղդվում եմ, աչքերս մթնեցին: Շուտ արեք...
Եվ մինչ Սամը ելք կգտներ թակարդ ընկած ընկերոջը փրկելու, Մանուշն արդեն օգնության էր կանչում հարևաններին: Մի քանի րոպեից հետո սենյակը լցվեց մարդկանցով:
- Ինչպե՞ս պատահեց:
- Ո՞վ փակեց վրան...

- Ինչի՞ էր սնդուկ մտել:
Հարցնում էին այս ու այն կողմից: Իսկ հարևանուհիներից մեկը բարկացած ասաց.
- Երեխան խեղդվում է, իսկ դուք հարցեր եք տալիս: Շո՛ւտ, կոտրեք սնդուկը:
Հարևանուհու այս խոսքի վրա հավաքվածներից մեկը արագ դուրս վազեց և քիչ հետո ներս եկավ մի երկաթե լինգ ձեռքին: Նա լինգի ծայրը շտապով անցկացրեց սնդուկի կափարիչի արանքը և ուժեղ սեղմեց: Փականը չրխկաց ու կափարիչը ճռնչալով բացվեց: Ջրում սուզված խցանի նման, սնդուկից դուրս ժայթքեց Սուրը՝ տրորված շորերով, երեսը ներկի ու քրտինքի մեջ շաղախված:
Հենց այդ միջոցին միջանցքից լսվեց նրա մոր սարսափահար ճիչը:
- Աստվա՛ծ իմ, ի՞նչ է պատահել նրանց...
- Մի՛ անհանգստացեք, առանձնապես ոչինչ չի եղել, - հանգստացրեց հարևաններից մեկը, ճամփա տալով նրան:
Իսկ մեր «Հրաշքների արքան» այդ պահին խեղճացած կանգնել էր անկյունում, մեղավոր ու սարսափահար:

Գլուխ տասնմեկերորդ. ՆՐԱՆՔ ՀԵՌԱՑԵԼ ԵՆ ԸՆԿԵՐՆԵՐԻՑ

Այդ չարաբաստիկ դեպքից հետո Սուրենց տանը երկար ժամանակ չէր դադարում խոսքն ու վիճաբանությունը:
- Չե՛մ կարող, - բարկացած կրկնում էր մայրը, - հասկանում ես, չե՛մ կարող... Ես այլևս ջղեր չունեմ այդ անպիտան տղայի արարքները տանելու...
Եվ նա շարունակում էր վրդովված գանգատվել, որ իր որդու ապագան կամաց-կամաց խորտակվում է, որ ինքը մայր է և չի կարող անտարբեր մնալ, և էլի շատ ու շատ բաներ: Իսկ հայրը՝ իր բնավորության համաձայն, լուռ լսում էր այդ ամենը և առանց շտապելու աշխատում էր համոզել, որ...
- Նա երեխա է, Աննա՛: Այո՛, այո՛, ընդամենը երեխա: Եվ դու իզուր ես ամեն ինչ այդքան չափազանցված տեսնում: Մեր Սուրենը անկարգ տղա չի՝ այդ բոլորը նրա երևակայության արդյունքն է միայն և ուրիշ ոչինչ:
- Իսկ ես չե՛մ ուզում, որ նա իր գլուխը այդպիսի դատարկ երևակայություններով լցնի, - պնդում էր մայրը:
- Բայց դու մոռանում ես, սիրելիս, որ բոլոր երեխաներն էլ սիրում են երազել: Երազանքն ու երևակայությունը թև է տալիս նրանց և կյանքում դարձնում ազնիվ ու համարձակ:
- Հը՛մ... Քո կարծիքով, փակված սնդուկում խեղդամահ լինելը նշանակում է երևակայությո՞ւն: Ո՛չ, սիրելիս, ես չեմ կարող հանդուրժել, որ իմ տղան զոհ դառնա զանազան երևակայությունների: Դու տեղի-անտեղի արդարացնում ես նրան, իսկ դպրոցում նախատում են ինձ, որ Սուրենը բացի Սամվելից ուրիշ ոչ մեկի հետ ընկերություն չի անում: Դպրոցով կինո են տանում, չի գնում, ընկերները որոշում են էքսկուրսիա կազմակերպել, չի մասնակցում... Գիշեր-ցերեկ Սամվելի պոչից պոկ չի գալիս: Ուրիշ ընկեր չկա՞, ինչ է:
Մայրիկի այս խոսքերից հայրիկը մի պահ մռայլվեց, ուղղեց ակնոցը, թեև այն ամուր նստած էր քթի վրա, ապա մտածկոտ ասաց.
- Դա արդեն ուրիշ բան է... Ա՛յ, այդ մասին հարկավոր է լուրջ մտածել:
- Տիկին Երանուհին նույնպես դժգոհում է իր Սամվելից, - արագ վրա տվեց մայրիկը: - Դժգոհում է, որ նրա հետ էլ, մեր Սուրենի նման, շարունակ մի որևէ փորձանք է պատահում:
- Հը՞մ... Դե, իհարկե, եթե նրանք հեռացել են ընկերներից ուրեմն ամեն ինչ կպատահի: Ընկերներից հեռացած մարդուց փորձանքը միշտ էլ անպակաս է, - վճռականորեն ասաց հայրիկը և ոտքի կանգնեց:
Այս ամբողջ վիճաբանությունը վերջացավ նրանով, որ հայրիկ ու մայրիկը սնդուկը հանդիսավոր կերպով ներքնահարկ իջեցրին, զանազան անպետք իրեր լցրին մեջը ու վրան մի մեծ կողպեք դնելով՝ ամուր փակեցին:
Սրանով էլ ավարտվեցին Սուրի հռչակավոր իլյուզիոնիստ դառնալու բոլոր երազանքները:

Գլուխ տասներկուերորդ. ՍԱՐՍԱՓԵԼԻ ԳԻՇԵՐ

Մայիսյան խաղաղ երեկո է:

Բաց լուսամուտից գարնանային մեղմիկ զեփյուռի հետ ներս է հորդում նաև փողոցով սրընթաց անցնող ավտոմեքենաների ու տրամվայների խուլ հռնդյունը:

Ննջասենյակի խորհրդավոր լռության մեջ նստել է Սամը և խորասուզված գիրք է կարդում: Նրա հետաքրքրությունից բոցկլտացող աչքերն արագ թռչում են գրքի տողերի վրայով: Ո՛չ դրսի աղմուկը, ո՛չ մյուս սենյակից լսվող տատիկի ու մայրիկի խոսակցությունը և ո՛չ էլ իր իսկ բարձրաձայն ընթերցանությունը չէին խանգարում նրան: Այդ բոլորի փոխարեն նա լսում է միայն անծայրածիր օվկիանոսի ահեղամռունչ ալիքների շառաչը և «Իսպանյոլա» առագաստանավի կայմերի խուլ ճռնչյունը: Սամը վերացել, դարձել է պատանի Ջիմ Գոկինս և «Իսպանյոլայի» հետ միասին մտքով լողում է դեպի հեռավոր Գանձերի կղզին: Նա պարզ պատկերացնում է իրենց, այսինքն պատանի Ջիմենց պանդոկում իջևանած Բիլլի Բոնսին, որի դեմքի վրա դաշույնի հարվածից մի մեծ սպի կար, լսում էր նրա ահավոր գոռում-գոչյունը, երբ ռոմից հարբած գալարվում էր հատակի վրա: Նրա աչքերի առջևով, մեկը մյուսի ետևից անցնում էին համարձակ ու խստադեմ նավապետ Սմոլետը բժիշկ Լիվսին և «Իսպանյոլայի» ամբողջ անձնակազմը: Իսկ այդ բոլորի հետ մեկտեղ, գրքի տողերի արանքից, կատաղի աչքերով շարունակ իրեն էր նայում ծովահենների սարսափելի առաջնորդը՝ միոտանի Ջոն Սիլվերը:

«Սիլվերի մասին մենք այլևս ոչինչ չլսեցինք, - շարունակում է կարդալ Սամը: - Ձզվելի միոտանի ծովագնացն ընդմիշտ հեռացավ իմ կյանքից: Երևի նա գտել է այն սևամորթ կնոջը և իր հաճույքի համար, նավապետ Ֆլինտի հետ, որևէ տեղում ապրում է: Գանձի մնացած մասը՝ ձույլ արծաթ և զենք, դեռևս այնտեղ են, որտեղ թողել է հանգուցյալ Ֆլինտը: Եվ իմ կարծիքով, թող մնա այնտեղ: Այժմ ինձ, այդ անիծված կղզին գնալու համար, ոչ մի բանով չես հրապուրի...»:

Գրքի վերջին տողերն էր կարդում Սամը, երբ ննջասենյակի դուռը կամաց ճռռաց և ներս ցցվեց Սուրի գլուխը:

- Ողջո՛ւյն...

Սամը ծածկեց գիրքն ու վեր կացավ:

- Ինչ ես ճգնավորի նման նստել, - ասաց Սուրը: - Մայրիկս այսօր հերթապահում է հիվանդանոցում, իսկ հայրիկիս շտապ կանչեցին գործարանից: Արի մեզ մոտ գնանք, հա՞... Ամբողջ գիշեր միասին կլինենք:

- Չեմ կարող, Սուր, մայրիկս չի թողնի:

- Ինչի՞:

- Նա ասում է, որ երբ միասին ենք լինում, անպայման մի փորձանք է պատահում մեզ հետ:

- Իսկ դու հանգամանորեն պարզաբանիր ամեն ինչ:

- Իզուր բան է, ոչինչ չի ստացվի, - դժգոհ պատասխանեց Սամը՝ ձեռքը հուսահատ թափ տալով օդում:

- Բայց փորձիր, գուցե թողնի...

... Տղաների երկար թախանձանքից հետո մայրիկը վերջապես համաձայնեց:

- Բայց տեսեք, հա՛... նորից ֆոկուսներ չսարքեք գլխիս:

- Չենք սարքի, մորաքույր: Ես այլևս ֆոկուսներ չեմ անում, ազնիվ խոսք, չեմ անում, - պատասխանեց Սուրը, ու նրանք տանից դուրս եկան:

***

Ամբողջ ճանապարհին Սամը քթի տակ ինչ-որ տարօրինակ երգ էր մռմռում, շարունակ կրկնելով միևնույն քառյակը.

«Տասնհինգ մարդ մեռելի սնդուկի վրա:
Յո-հո-հո և մի շիշ ռոմ,
Խմիր ու սատանան քեզ մինչև վերջը կհասցնի,
Յո-հո-հո և մի շիշ ռոմ»:

- Ինչ ես շարունակ մեռելների ու սատանաների մասին երգում,- հարցրեց Սուրը՝ զարմացած նայելով Սամին:
- Սա ծովահենների երգն է, հասկանո՞ւմ ես: Նրանք միշտ էլ այսպիսի սարսափելի երգեր են երգել:
- Ի՞նչ ծովահեններ...
- Դե, նրանք, էլի, որ ուզում էին գրավել «Իսպանյոլա» նավը, - պատասխանեց Սամը, բայց հիշելով, որ ընկերն այդ մասին ոչինչ չգիտի, իսկույն ավելացրեց, - ա՛յ, երբ ձեր տուն հասնենք, այնպիսի հետաքրքիր բան կպատմեմ, որ ամբողջ գիշեր աչքերդ չռած մնան:
Երկաթյա բարձր սյունից կախված կլոր ժամացույցը ցույց էր տալիս ժամը 9-ը: Տղաները արագացրին քայլերը:
Նրանք դեռ նոր էին մոտեցել տանը, երբ Սուրը նկատեց, որ ամբողջ շենքից միայն իրենց լուսամուտն էր մթնած: Անհանգիստ մի կասկած ընկավ սիրտը: Նա արագ բարձրացավ աստիճաններով և, մինչև Սամը կհասներ նրա ետևից, մի քանի անգամ սեղմեց զանգի կոճակը, բայց զանգը չհնչեց: Նա սկսեց բռունցքով թմբկահարել դուռը:
- Ո՞վ է, - լսվեց ներսից Մանուշի ձայնը:
- Մենք ենք, խլացե՞լ ես, ինչ է:
- Իսկ դուք ո՞վ եք:
- Բաց արա, է՛, կատակ անելու ժամանակ չի, - սրտնեղեց Սամը, որն արդեն բարձրացել էր աստիճաններով:
- Չէ՛, նախ ասացեք ո՞վ եք, հետո բաց կանեմ, - համառորեն պնդեց Մանուշը:
Թեև այդպիսի դեպքում մարդ միշտ էլ դժվարանում է բարձրաձայն հայտնել իր սեփական անունը, այնուամենայնիվ, Սուրը հազիվ լսելի ձայնով ասաց.
- Սուրն ու Սամն ենք, բա՛ց արա...
Վերջապես բացվեց դուռը և միջանցքում տիրող խավարի մեջ գծագրվեց քրոջ սարսափահար կերպարանքը:
- Ուր էիք, հը՞ : Ո՞ւր էիք, - բարկացած ճղճղաց նա և հեկեկալով ավելացրեց, - ինձ թողել եք մթի մեջ, իսկ դուք ձեզ համար հանգիստ ման եք գալիս:
- Իսկ դու ինչի՞ ես մթի մեջ նստել, - հարցրեց Սամը:
- Լույսերը փչացան:
- Ի՞նչ, - բացականչեց Սուրը:
Մանուշը հեկեկալով պատմեց, թե ինչպես եղբոր գնալուց հետո նա միացրել է էլեկտրական արդուկն իր մետաքսյա ժապավենները հարդարելու համար, բայց միացնելուն պես ուժեղ չրխկոց է լսվել և ամբողջ տունը թաղվել է խավարի մեջ:
- Ա՛յ քեզ փորձա՛նք... Ախր քեզ ո՞վ էր ասում արդուկը միացնես, հը՞... - հուսահատ ասաց Սուրը:
- Սպասիր, - ընդհատեց նրան Սամը և դարձավ Մանուշին, - ասում ես չրխկա՞ց...
- Ըհը՛, չրխկաց, - մռթմռթաց քթի տակ Մանուշը:
- Ուրեմն ապահովիչներից կլինի: Այ, երբ մեր տանն այդպիսի բան է պատահում, մայրիկս անմիջապես պտտեցնում է ապահովիչների խցաններից մեկն ու մեկը, և լույսը նորից վառվում է:
Սուրը, մթության մեջ խարխափելով, մի կերպ գտավ լուցկին ու վառեց: Միջանցքը լուսավորվեց թույլ լույսով: Սամը բարձրացավ աթոռի վրա և զգուշությամբ սկսեց պտտեցնել պատին ամրացված ապահովիչների հախճապակյա խցանիկները: Նա այնքան ետ ու առաջ պտտեցրեց, այնքան բզբզեց, մինչև որ խցաններից մեկը կոտրվեց, վերջնականապես թողնելով նրանց մթության մեջ:

***

Մայթի եզրին գտնվող բարձր սյունից կախված էլեկտրական լապտերը հայրիկի աշխատասենյակը ողողել էր խավար, դեղնավուն լույսով: Եվ, որովհետև մյուս սենյակներում լրիվ մթություն էր տիրում, ուստի երեխաները հավաքվեցին այնտեղ: Սամը, իհարկե, անմիջապես սկսեց իր պատմությունը Գանձերի կղզու մասին: Ճիշտ է, նա ամեն ինչ շիլա-շփոթ էր դարձրել, բայց այնպես ոգևորված էր պատմում, որ լսողները հետաքրքրությունից քարացել էին: Սամը պատմում էր, իսկ ժամերը թռչում

էին աննկատ: Դրսում վաղուց էր դադարել տրամվայների ու ավտոմեքենաների աղմուկը: Չէր լսվում անցորդների ուրախ ծիծաղն ու խոսակցությունը:
- Թը՛խկ, թը՛խկ, թը՛խկ...
Լսվում էր միայն շենքի ներքևի հարկում տեղավորված խանութը հսկող պահակի ձեռնափայտի համաչափ թխկթխկոցը: Ուշ գիշեր է արդեն:
Քնել է քաղաքը խաղաղ ու քաղցր քնով: Քնել է նաև Մանուշը՝ բազմոցի վրա կծկված: Երևի պատմության կեսին՝ դեռ Գանձերի կղզի չհասած, փակվել էին սևաթույր աչքերը, և նա այժմ մուշ-մուշ քնել էր: ... Սամը դեռ չէր ավարտել իր պատմությունը, երբ նրա հայացքն ընկավ դռան մոտ դրված երկաթյա պահարանին:
Սուրենց տանը եթե մի բան կար, որ անչափ հետաքրքրում էր Սամին, ապա հենց այդ պահարանն էր, որի էությունը մինչև օրս էլ նա ոչ մի կերպ չէր կարողացել հասկանալ: Շատ անգամ էր ցանկացել հարցնել այդ մասին, բայց երբ հանդիպել էր նրան, բոլորի մոռացել էր:
- Սուր, ինչի՞ համար է այդ երկաթյա արկղը, - հարցրեց Սամը, ընդհատելով պատմությունը:
- Ինչ ասացի՞ր...
- Ասում եմ, այդ արկղը ինչի՞ համար եք օգտագործում:
Սուրը սթափվեց, թեթևակի մի հայացք գցեց դռան մոտ դրված երկաթյա պահարանին, որի նիկելապատ բռնակները փայլփլում էին լուսամուտից ներս ընկած լույսի տակ, ապա հոգնած ձայնով ասաց.
- Ի՞նչ արկղ, դա սեյֆ է. այսինքն՝ չհրկիզվող պահարան:
- Չհրկիզվող պահարան: Իսկ ի՞նչ է, փո՞ղ եք պահում դրա մեջ:
- Դու էլ բան ասացիր, փո՛ղ... Ի՞նչ փող: Այդտեղ միայն հայրիկիս գծագրերն ու կարևոր փաստաթղթերն են պահվում: Իսկ դու գիտե՞ս, Սամ, այդ գծագրերը շատ մեծ նշանակություն ունեն: Հայրիկս ասում է, որ եթե դրանք այրվեն կամ թշնամու ձեռքն ընկնեն, իրենց դատի կտան: Դրա համար էլ այդ երկաթյա սեյֆի մեջ ենք պահում:
- Ուրեմն ասում ես, մեծ նշանակություն ունեն, հա՞... - մտածկոտ ասաց Սամը, ապա շշուկով ավելացրեց, - պատկերացնում ես. Սուր, որքան սարսափելի կլինի, եթե հանկարծ գիշերվա կեսին Ջոն Սիլվերի նման կատաղի մի ծովահեն գաղտագողի ներս մտնի ձեր տունը, հատուկ պատրաստված բանալիով բաց անի չհրկիզվող պահարանը և գողանա այդ կարևոր փաստաթղթերն ու գծագրերը:
Սամի այս խոսքերից Սուրի մեջքի վրայով կարծես բազմաթիվ միջատներ վազեցին:
- Ծովահենների ինչին է պետք հայրիկի գծագրերը: Չէ՞ որ նրանց միայն ոսկիներ ու թանկարժեք իրեր են հարկավոր:
- Ա՛յ քեզ հիմար: Դե, իհարկե, նրանց ոսկի ու արծաթ է հարկավոր և ոչ թե գծագրեր: Բայց ծովահենները միշտ էլ գողանում են այն իրերը, որոնց համար կարող են շատ փող ստանալ: Օրինակի համար նրանք գողանում են հարուստ իշխաններին ու գեղեցիկ կանանց և նրանց փոխարեն պարկերով ոսկի են ստանում ու հետո բաց թողնում: Այ, եթե նրանք իմանային, որ հայրիկիդ գծագրերը կարևոր նշանակություն ունեն, անպայման կգողանային ու կծախեին... Դե, ասենք, կծախեին մի որևէ լրտեսի, իսկ նա շա՛տ փող կտար:
Սուրը, որ այդ պահին մտազբաղ դուրս էր նայում, հանկարծ այնպիսի մի ճիչ արձակեց, որ բազմոցի վրա կուչ եկած Մանուշը վեր թռավ քնից:
- Ի՞նչ պատահեց, Սուր, - նրա անսպասելի ճչոցից վախեցած հարցրեց Սամը:
- Հլա մի այստեղ արի, - շշնջաց Սուրը: Սամը մոտեցավ նրան:
- Տե՛ս, ինչ-որ մեկը կանգնած՝ անընդհատ մեր լուսամուտին է նայում:
Սամը տարակուսանքով դուրս նայեց: Եվ ճիշտ որ... Մայթի եզրին մի մարդ էր կանգնել: Ով էր այդ մարդը կամ թե ում էր սպասում, դժվար էր գուշակել:
Տղաները դեռ երկար կանգնած կմնային լուսամուտի մոտ, եթե այդ պահին Մանուշը չթնգթնգար.
- Սո՛ւր, քունս տանում է: Ախր քնել եմ ուզում...

- Դե որ այդպես է, ես կվառեմ լուցկին, իսկ դու անկողինը պատրաստիր, - ասաց Սուրը և հիշելով, որ այնտեղ՝ խոհանոցում, ճարպամոմի մի փոքրիկ կտոր էր մնացել, իսկույն վառեց լուցկին ու շտապ խոհանոց գնաց:
... Եվ ահա լուսամուտի գոգին պլպլալով վառվում է մոմը: Կիսախավար ննջասենյակը խորհրդավոր տեսք է ընդունել:
Գիշերային խաղաղ լռության մեջ արձագանքվեցին քաղաքային ժամացույցի խուլ զարկերը.
- Դա՜նգ... Դա՜նգ...
Մանուշը վաղուց քնել էր իր փափուկ անկողնում, իսկ տղաները դեռ արթուն են:
- Սուր, գուցե այդ մարդը բոլորովին էլ այն չէ, ինչ մենք կարծում ենք, հը՞... - շշուկով հարցրեց Սամը:
Սուրը լուռ էր:
- Ի՞նչ է, դու արդեն քնեցի՞ր...
- Չէ, չեմ քնել, մտածում եմ, - պատասխանեց Սուրը:
- Իսկ ի՞նչ ես մտածում:
- Մտածում եմ, թե ինչպես քիչ հետո քունս կտանի... Դու էլ կքնես: Իսկ դրսում կանգնած մարդն էլ հենց դրան է սպասում:
Սամը, որ մինչ այդ լուռ լսում էր, հանկարծ ինչ-որ բան հիշելով, ուրախ բացականչեց.
- Այ թե բան մտածեցի, հա՜... Գիտե՞ս ինչ: Արի դրա գլխին մի օյին խաղանք:
- Ի՞նչ օյին:
- Դուք լվացքի պարան ունե՞ք:
- Իհարկե ունենք: Ի՞նչ կա որ...
- Գնա բեր՝ կասեմ:
- Ես այս մթնով ո՞նց գտնեմ պարանը, - տրտնջաց Սուրը և, դժկամորեն վերցնելով վառվող մոմը, ննջարանից դուրս եկավ, Սամը հետևեց նրան:
Երկար փնտրելուց հետո նրանք վերջապես գտան լվացքի պարանը:
- Հիմա էլ հարկավոր է մի քանի մեխ ճարել:
Մեխերը լցված էին խոհանոցի պահարանի գզրոցում, այնպես որ դրանք գտնելու համար տղաները շատ ժամանակ չկորցրին:
Սամն սկսեց մեխերը դեմ-դիմաց խփել միջանցքի պատերին՝ հատակից մի ոտնաչափ բարձրությամբ: Ստացվեց այնպես, որ նա ամեն մի պատի վրա խփեց հինգական մեխ: Հետո՝ վերցրեց պարանը և կապեց մի մեխից մյուսը:
Սուրը, այս ամենից ոչինչ չկռահելով, բռնել էր մոմը և բերանը լայն բացած՝ հետևում էր նրա ամեն մի շարժումին:
- Ա՛յ, մենք հիմա կարող ենք հանգիստ քնել, - վերջացնելուց հետո ասաց Սամը, - դե թող հիմա էդ մարդը փորձի ներս մտնել: Էնպես կդրմփա հատակին, որ դեռ քիթ ու մռութն էլ կջարդի:
Տղաներն անկողին մտան:
Լուսամուտին դրված ճարպամոմը, որից հազիվ մի խցանաչափ կտոր էր մնացել, ճտճտալով հալվեց ու հանգավ:
Սուրը երկար ժամանակ չէր կարողանում քնել: Անհանգստացնող մտքերը շարունակ պտտվում էին նրա գլխում: Մի պահ նրան թվաց, որ միջանցքից ձայներ լսվեցին:
- Սամ, լսո՞ւմ ես, կարծես մարդ է շարժվում այնտեղ:
- Ա՛յ թե նապաստակն ես, հա՜... Մի բան չեղած, վռազ լեղիդ ջուր է դառնում: Իսկ ես ոչնչից չեմ վախենում: Եվ գիտես, թե ինչ եմ որոշել: Վաղվանից սկսում եմ փող հավաքել, ամբողջ ամառ պաղպաղակ չեմ ուտի, կինո չեմ գնա, տասներկու տարի շարունակ կհավաքեմ, երբ քսանհինգ տարեկան դառնամ, էնքան փող կունենամ որ...
- Իսկ ի՞նչ պետք է անես այդքան փողը:
- Ինչ պիտի անե՜մ, - ծոր տվեց Սամը, - այ թե ինչ... էդ փողերով իսկական փոքրիկ առագաստանավ պատրաստել կտամ և կճանապարհորդեմ: Ես նոր կղզիներ կհայտնաբերեմ, ուր ոչ մի մարդ դեռ ոտք չի դրել: Իսկ երբ մեռնեմ, Քրիստափոր Կոլումբոսի, Մագելանի ու Միկլուխո-Մակլայի հետ

միասին մարդիկ կհիշեն նաև իմ անունը: Քեզ էլ հետս կտանեմ, և մենք կլողանք միասին հեռո՛ւ, հեռո՛ւ... էնպիսի ալիքների միջով կլողանք, որ մազերդ սարսափից բիզ-բիզ կկանգնեն: Հետո բաց երկնքի տակ կքնենք ու մեր նավը... Իսկ ինչ ես կարծում, Սուր, ի՞նչ անուն կարելի է տալ մեր առագաստանավին, հը՞... - քնկոտ ձայնով հարցրեց Սամը:
Բայց Սուրը ոչինչ չպատասխանեց: Նա արդեն քնել էր:
Տեսնելով, որ այլևս իրեն լսող չկա, Սամը շուռ եկավ մյուս քին ու փակեց աչքերը:
Հանկարծ միջանցքից մի ուժգին դրմփյուն լսվեց: Կարծես մեկը ամբողջ մարմնով տապալվեց գետին ու խռպոտ ձայնով տնքաց: Այդ անսովոր դրմփոցից տղաները խայթվածի նման անկողնուց վեր թռան և գլուխները կորցրած՝ սկսեցին անհանգիստ դես ու դեն վազվզել սենյակում: Վերջապես Սամը տիրապետեց իրեն ու «կռահելով» ողջ էությունը, խեղդված ձայնով բացականչեց.
- Ի՞նչ ես խառնվել իրար: Շուտ, դու միլիցիա զանգահարիր, իսկ ես կսկսեմ ռմբակոծել էդ... էդ սրիկա ծովահենին...
Սուրը տագնապահար վազեց դեպի հեռախոսը: Մթության մեջ մի կերպ հավաքեց համարը և ինչ-որ անկապ բառեր կմկմաց.
- Ալլո՛... Ալլո՛... Լսո՞ւմ եք: Դե եթե լսում եք, շուտ օգնության հասեք: Ի՞նչ ասացիք... Այրվե՞լ... Դե ինչ այրվել: Եթե ուշանաք, մենք գուցե նույնիսկ կենդանի չմնանք... Ի՞նչ... Հասցե՞ն...
Եվ մինչ Սուրը կհայտներ հասցեն, ընկերն արդեն սկսել էր հարձակումը: Նա կիսախավարի մեջ խարխափելով վերցնում էր ձեռքն ընկածը և ննջարանի բաց դռնից շպրտում միջանցք:
- Վերջ տվեք ձեր հիմարություններին... Սա ի՞նչ ներկայացում է, ի՞նչ խայտառակություն, - բղավեց մարդը և խոսքը բերանում նորից դրմփաց հատակին:
- Սպասիր, ավազակ, - ամբողջ ուժով գոռաց Սուրը և օգնության հասնելով քաջաբար մարտնչող ընկերոջը, ճանկեց ծաղկամանի մոտ դրված ափսեն ու ամբողջ ուժով շպրտեց թակարդն ընկած «թշնամու» վրա, - ա՛ռ քեզ...
- Օ՜ֆ... այս ինչ ես անում, անիրավ տղա, գլուխս ջարդեցիր, լսվեց ծանոթ մի ձայն, և Սուրը հանկարծակիի եկած արձանացավ տեղում:
Մանուշը, որ այդ աղմուկից արթնացել ու ոչինչ չհասկանալով՝ քնաթաթախ աչքերն էր տրորում, ծանոթ ձայն լսելով, ուրախ բացականչեց.
- Հայրի՛կը: Հայրիկը եկավ:
Թե ինչ կատարվեց այդ պահին Սուրի և Սամի հետ, անհնար է նկարագրել:
Ահա թե ով էր այդ «ավազակը», այ թե ում էին նրանք այդպես անխղճորեն հարվածում: Օ՜, եթե հնար լիներ, նրանք ամոթից տեղն ու տեղը կմեռնեին: Երանի հայրիկի փոխարեն դաժան մի ոճրագործ ներս մտած լիներ և դաշույնով կտոր-կտոր աներ իրենց, քան թե...
Ահա և ներս մտավ հայրիկը, շորերը տրորված, ջարդված ակնոցը ձեռքին, գզգզված մազերի մեջ փշրված ափսեի մանրուքներ:
- Ա՛յ թե ինչ փորձանք կարող ես բերել իմ գլխին, - բարկացած ասաց նա և ապտակը շրխկաց Սուրի այտին:
- Նա մեղավոր չէ, քեռի Գարեգին: Այդ ես եմ կապել պարանը, - քթի տակ մռմռաց Սամը, - դե, գիտեք, փողոցում մի էսպես... էսպես ասած կասկածելի մարդ էր կանգնած: Մենք էլ կարծեցինք, որ նա պատրաստվում է գողանալ սեյֆից ձեր փաստաթղթերն ու գծագրերը: Ախր չէ՞ որ նրանք կարևոր նշանակություն ունեն:
- Հը՛մ... Փողոցում միշտ էլ մարդիկ են կանգնում և հենց դրա համար էլ փողոցը փողոց է... Իսկ ինչ վերաբերում է գծագրերը գողանալուն, ապա ժամանակն է իմանալ, հարգելի «փրկարարներ», որ ես կարևոր փաստաթղթերն իմ սեյֆում չեմ պահում:
Սամն ու Սուրը ապշած մի պահ իրար նայեցին և թոթվեցին ուսերը:
Հայրիկը մոտեցավ անջատիչին ու մի քանի անգամ պտտեցնելուց հետո վրդովված հարցրեց.
- Իսկ լույսն ինչի՞ չի վառվում... Երևի այստեղ էլ մի ավերմունք եք գործել:
.....

Երևի այս ամբողջ խայտառակությունը սրանով էլ կվերջանար, եթե այդ միջոցին դրսից չլսվեին հրշեջ մեքենաների ականջ ծակող հռնդյունը և անընդմեջ ճչացող տագնապածայն ազդանշանները: Եվ այն պահին, երբ հայրիկն ապահովիչի կոտրված խցանիկը փոխելուց հետո լույսերը վառեց, երկարատև հնչեց դռան զանգը:
Ի զարմանք բոլորի՝ միջանցքը լցվեց բազմաթիվ հրշեջներով:
- Որտե՞ղ է հրդեհը... Ինչի՞ չեք դիմավորում, - հևասպառ վրա տվեց նրանցից մեկը:
Հայրիկը այս անակնկալից ապշած, նայեց տղաներին, նայեց սենյակ մտած հրշեջներին, ապա շփոթված պատասխանեց.
- Ի՞նչ հրդեհ, այստեղ ոչ մի հրդեհ չի եղել...
- Ինչպե՜ս.., Քաղաքացի, դուք մեզ ձե՞ռք եք առել, ինչ է... Չէ՞ որ քիչ առաջ զանգահարեցիք:
Սուրը հանկարծ այլայլվեց: Երկու ձեռքով բռնեց գլուխը և ամոթահար փախավ միջանցքից:
Ամեն ինչ պարզ էր: Նա միլիցիայի փոխարեն սխալմամբ 01 էր զանգ տվել:

Գլուխ տասներեքերորդ. ՍՆԱՆԿԱՑԱԾ ԳԵՐԱԶԱՆՑԻԿՆԵՐԸ

...Ահա և ուսումնական տարին էլ վերջացավ: Դպրոցի լայն ու երկար միջանցքում հավաքվել են վեցերորդ «բ» դասարանի աշակերտները և սրտատրոփ սպասում են տարեվերջի ծնողական ժողովին:
Այդտեղ են նաև Սուրն ու Սամը:
Ամբողջ տարվա ընթացքում դեռ չէր եղել այնպիսի մի օր, որ մեր հերոսներն այսքան ընկճված և հուսահատված զգային իրենց, ինչպես այդ օրը: Նրանք, որ ամեն տարի ծնողական ժողովների ժամանակ, անհոգ ու զվարթ խաղ են արել դպրոցի բակում, այժմ ձեռք ու ոտք ընկած անհանգիստ դես-դեն են վազվզում միջանցքով, իսկ Երբեմն էլ սրտի դողով մոտենում դասարանի դռանը և ականջները մոտեցնում բանալու անցքին՝ լսելու, իրենց մասին են խոսո՞ւմ, թե ոչ:
Միջանցքում իրար գլխի խռնված աշակերտներն այդ տեսնելով սկսեցին ծիծաղել: Իսկ Պետրոսն այս անգամ էլ նորից մեջ ընկավ և, շարունակ ժպտացող աչքերը խորամանկորեն կկոցելով, բացականչեց.
- Տղե՛րք, մի էդ սնանկացած գերազանցիկներին նայեք: Վախից ո՞նց են դողում:
Այս խոսքի վրա միջանցքը թնդաց ծիծաղից:
Ճիշտ է, Սուրն ու Սամը վերջին ժամանակներս ամեն ինչ մոռացած, օր ու գիշեր պարապեցին և մի կերպ վերացրին չարաբաստիկ երկուսները, բայց եթե այդ բոլորից հետո ծնողներն այժմ իմանան որ իրենք հազիվ մի քանի խղճալի երեքներով են փոխադրվում հաջորդ դասարան, ամեն ինչ կորած է:
Ասենք, նրանց մտատանջում էին ոչ թե երեքները, այլ այն, որ այդ երեքների պատճառով գուցե նրանք իսպառ զրկվեցին հռչակավոր մարդ դառնալու իրենց հույսերն ու երազանքներն իրականացնելուց: Իսկ առանց դրանց, կյանքը նրանց համար կդառնար անիմաստ ու ապարդյուն:
Երևի այսպես էին մտածում նրանք, երբ հանկարծ ներսում բարձրաձայն խոսակցություններ և նստարանների փեղկերի խուլ թխկթխկոցներ լսվեցին: Ուրեմն ժողովը վերջացավ:
Եվ իրոք, քիչ հետո դասարանի դռները բացվեցին և իրար ետևից դուրս եկան ծնողները՝ ոմանք ուրախ ժպտալով, իսկ ոմանք էլ՝ մռայլ ու խստադեմ:
Սուրն ու Սամն, իհարկե, փոխադրվեցին հաջորդ դասարան, բայց ինչպես...
- Լսիր, Սուրե՛ն, - դիմեց նրան հայրը, երբ ժողովը վերջանալուց հետո միասին դուրս ելան դպրոցի շենքից, - երբ մայրդ մեղադրում էր ինձ քո այդ կրկեսային զանազան հիմարություններդ արդարացնելու համար, ես նրան համոզում էի, որ դրանք ոչ մի բանով չեն խանգարի քո դասերին, բայց ի՞նչ դուրս եկավ այդ բոլորից...
Սուրը ոչինչ չպատասխանեց:
- Մի այստեղ նայիր, - շարունակեց նա՝ ծոցագրպանից հանելով փոխադրման վկայականը, - բոլոր առարկաները, որոնցից դու միշտ էլ չորս ու հինգ էիր ստանում, հիմա երեքներով ես զարդարել... -

Հայրիկը մի պահ լռեց, ապա գլուխը սպառնալից թափահարելով, զսպված զայրույթով ասաց. - սպասիր մի տուն հասնենք, նոր քեզ հետ կխոսեմ...
... Իսկ կես ժամ հետո նույնանման փոթորիկ էլ Սամենց տանը պայթեց:
Սամը մինչև լոշտակ ականջների կոթերը կարմրած, գլխահակ կանգնել էր սենյակի անկյունում և համբերությամբ ընդունում էր նախատինքների անվերջանալի տեղատարափը, որ մայրիկն առանց տնտեսելու, առատորեն շաղ էր տալիս նրա գլխին:
- Այ թե ինչի հասցրեց քո այդ արկածային գրքերով տարվելը: Քանի անգամ ասացի՝ վերջ տուր, դրանց ժամանակը չէ: Դու դասերդ պարապիր, իսկ այդ գրքերը ամռանն էլ կկարդաս: Ո՞ւմ հետ էի... Ինքս ասացի, ինքս էլ լսեցի... Այստեղ են ասել, գայլի գլխին ավետարան կարդացին, իսկ նա թե՝ գառը սարից տարան: Ամբողջ ժամանակ քիթդ խոթեցիր այդ գրքերի մեջ, իսկ դասերդ աչքաթող արիր: Մագելա՛ն... Միկլուխո-Մակլա՛յ... ճանապարհորդ ես ուզում դառնալ, բայց աշխարհագրությունից՝ քո սիրած առարկայից, երեքներ ես ստանում: Չէ՛... միևնույն է, այդ գլխով ոչինչ չես դառնա:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ
ԱՐՏԱՍՈՎՈՐ ԱՄԱՌ

Գլուխ առաջին. ՄՈՐԱՔՈՒՅՐ ՄԱՐԹԱՆ ԳԱԼԻՍ Է

Անցան օրեր:
Սկսվեցին ամառային տաք ու հաճելի եղանակները: Արևը կարծես մի նոր եռանդով սկսեց չորացնել գարնանային հորդառատ անձրևներից խոնավացած գետինը: Մինչ այդ մռայլ ու կապարի նման ծանրացած ամպոտ երկնակամարը պարզվեց ու լազուրացավ: Հստակ երկնքում, ուր ամպի մի փոքրիկ պատառ անգամ չկար, ուրախ ճռվողյունով անդադար վեր ու վար էին ճախրում ծիծեռնակները:
Թեպետ դեռ հունիս ամիսն էր, բայց միանգամից այնպիսի շոգեր սկսվեցին, որ փողոցների ասֆալտն անգամ տաքությունից փափկեց: Բարկ արևն իր հրե մտրակներով անողոքաբար քշում էր մարդկանց ստվերոտ տեղերը՝ պուրակներն ու այգիները:
Կեսօրյա շոգին հաջորդում էր երեկոյան հեղձուցիչ տոթը:
Չնայած այս ամենին, այնուամենայնիվ, ամառն էլ իր թովչանքն ու գեղեցկությունն ուներ: Մանրիկ տերևներով ծածկված ծառերն ավելի էին փարթամանում ու սաղարթախիտ դառնում: Օդը շաղախվում էր լորենու և փշատենու անուշ բույրով: Իսկ քաղաքում, օրեցօր սաստկացող շոգերից ազատվելու համար, ձմռանը չվող թռչունների նման, մարդիկ «երամ-երամ» հեռանում էին դեպի ամառանոցներ, ուր սարերից փչող մեղմ զեփյուռների, կախարդիչ ու զովասուն անտառների, գետերի և սառնորակ աղբյուրների շնորհիվ արեգակի կիզիչ ճառագայթները դառնում էին ավելի նվազ ու հաճելի:
Չէ՛... Ինչ ուզում եք ասեք, տարվա բոլոր եղանակներից ամառն ավելի գեղեցիկ է ու սքանչելի: Հատկապես նրանց համար, որոնց գրավում են ամառային ուրախ խաղերն ու հետաքրքիր արշավները բնության հեքիաթային գրկում:
Ահա հենց այդ ամռանն էլ մեր Սուրի ու Սամի համար արտասովոր օրեր սկսվեցին: Այնպիսի օրեր, որ նրանք գուցե չմոռանան իրենց ամբողջ կյանքում:
.....
Հունիսյան մի առավոտ Սուրենց տուն մտավ փոստատարը և մի նամակ հանձնեց մորը: Նամակը (ինչպես հետո պարզվեց) գյուղից էր ուղարկված: Մորաքույր Մարթան էր գրել: Մայրը, նամակն ուշադիր կարդալուց հետո, դարձավ երեխաներին ու ժպտալով ասաց.
- Տատիկը շատ է կարոտել ձեզ: Նա ցանկանում է, որ այս ամառ հյուր գնաք իր մոտ: Ա՛յ, Մարթան մի քանի օրից հետո մեզ մոտ կգա, որ ձեզ գյուղ տանի:
Այդ լուրը թեև անչափ ուրախացրեց Սուրին, բայց միևնույն ժամանակ մի անասելի տխրություն համակեց նրան: Գյո՛ւղ... Սուրը վաղուց է ինչ չի եղել գյուղում: Նա միշտ էլ կարոտով էր հիշում խիտ ու համարյա անանցանելի Կաղնուտի անտառը, գյուղի կողքով անցնող լայն ու հանդարտահոս

գետը, ուր առավոտից մինչև իրիկուն լողանում էր տղաների հետ և տուն դառնում միայն այն ժամանակ, երբ կովերի նախիրը գալիս էր հանդից: Նա հիշում էր, թե ինչպես շոգ գիշերներին, մոծակներից պաշտպանվելու համար, գյուղի տղաները Կաղնուտի բացատն էին տանում կոլխոզի ձիերի երամակը և խարույկ վառելով, մնում էին այնտեղ մինչև լուսաբաց: Նա այն ժամանակ շատ փոքր էր ու տղաները նրան չէին տանում իրենց հետ: Տարիներ են անցել և նա հիմա մեծացել է... Ա՛յ թե հետաքրքիր օրեր էին սկսվելու նրա համար:

Բայց այդ բոլորից հետո Սուրը չէր ուզում հեռանալ քաղաքից, ասենք, ավելի ճիշտ Սամից: Որքան հրաշալի մտքեր էին ծնվել նրանց գլխում, ինչպիսի փայլուն ծրագրեր էին կազմել նրանք, իսկ հիմա՞...

- Վե՛րջ ամեն ինչին: Ինչ որոշել էինք, բոլորը ջուրն ընկավ, - հուսահատ ասաց Սուրը, երբ երեկոյան Սամենց տուն գնաց:

- Ի՞նչ է պատահել, - նրա խոսքերից ոչինչ չհասկանալով՝ զարմացած հարցրեց Սամը:

- Ի՞նչ պիտի պատահի: Մի քանի օրից հետո գյուղ եմ գնում՝ տատիկիս մոտ: Ամբողջ ամառ այնտեղ եմ մնալու:

Սամի տրամադրությունը միանգամից ընկավ:

Տհաճ լռություն տիրեց:

- Իսկ դու չե՞ս ուզում գնալ, - վերջապես խոսեց Սամը:

- Չեմ ուզում, բայց...

- Դե էլ ինչ բայց: Եթե չես ուզում, հրաժարվիր:

- Փորձեցի, բան դուրս չեկավ:

Եվ Սուրը պատմեց նրան նամակի մասին և այն մասին, թե ինչպիսի հիանալի վայրեր կան իրենց գյուղում, և որքան հետաքրքիր կանցնեին այնտեղ օրերը, եթե նրանք միասին լինեին ու վերջում ավելացրեց:

- Այ, եթե հանկարծ մայրիկդ համաձայներ, որ դու էլ մեզ հետ գայիր...

- Իսկ ձերոնք կհամաձայնե՞ն որ... - ոգևորված վրա տվեց Սամը:

***

Արդեն մի քանի օր էր, ինչ մորաքույր Մարթան եկել էր գյուղից, բայց Սուրը դեռ ոչ մի խոսք չէր բացել Սամի մասին: Վերջապես մի կիրակի առավոտ, երբ հայրը մենակ էր իր աշխատասենյակում, նա կամաց բացեց դուռը և ներս մտնելով՝ ցածրաձայն ասաց.

- Ես քեզ հետ կարևոր բան ունեմ խոսելու, հայրիկ... Մեզնից, բացի, ոչ ոք չպետք է իմանա:

Հայրը՝ տղայի այդ տարօրինակ թվացող պաշտոնական այցից զարմացած, ծիծաղելով հարցրեց.

- Այդ ինչ կարևոր բան է, որ մեզանից բացի ոչ մեկը չպետք է իմանա:

Սուրը միանգամից սկսեց.

- Հայրիկ, ինչ կլինի, եթե Սամին էլ մեզ հետ գյուղ տանենք, հը՞... Ախր, նա այս ամառ ոչ մի տեղ չի գնալու: Ինչ կլինի: Տանենք, հա՞...

- Գիտես ինչ, տղաս, - մի փոքր լռելուց հետո պատասխանեց հայրը, - ինձ դուր է գալիս քո անկեղծ ու ազնիվ սերն ընկերոջդ նկատմամբ: Իհարկե, լավ բան է ընկեր ունենալը, բայց ավելի լավ է, երբ մեկի փոխարեն այդպես անկեղծորեն կարողանում են ընկերություն անել բոլորի հետ, իսկ դու... Կարո՞ղ ես ինձ ասել, Սամվելից բացի, էլ ո՞ւմ հետ ես ընկերություն անում: Ո՛չ մեկի հետ, թեև ձեր դասարանում շատ լավ տղաներ կան:

- Պա՛հ, ինչ անեմ, որ նրանք չեն ուզում ընկերություն անել, - հազիվ լսելի ձայնով մռթմռթաց Սուրը:

- Ճիշտ չես ասում: Ոչ թե նրանք, այլ դուք չեք ուզում ընկերություն անել: Երկուսով, ամբողջ տարին քիթներդ վեր ցցած՝ ման եկաք, խուսափեցիք բոլորից, առանձնացաք և ահա թե ինչ օրի հասաք: Ձեզ թվում էր, թե բոլորը նախանձում են ձեր ընկերությանը: Մարդն առանց ընկերների նույնն է, ինչպես ձուկն առանց ջրի: Ա՛յ, գյուղ ես գնալու: Ես ուզում եմ, որ անպատճառ մտերմանաս գյուղի տղաների հետ և տեսնես, թե ինչպես են նրանք ընկերություն անում:

- Բա Սա՞մը, - տագնապով հարցրեց Սուրը:

- Ես, իհարկե, դեմ չեմ նրա գալուն և նույնիսկ երեկ երեկոյան մորդ հետ հենց այդ մասին էինք խոսում: Բայց մայրդ համաձայն չի, որովհետև նա վախենում է, որ դուք գյուղում էլ դարձյալ կմեկուսանաք բոլորից և նոր փորձանքներ կբերեք ձեր գլխին:
- Չէ, հայրիկ ջան, չէ՛... Մենք բոլորի հետ էլ ընկերություն կանենք, մենակ թե Սամը թող մեզ հետ գա:
- Իսկ ինչ ես կարծում, նրա մայրը կհամաձայնի՞...
- Եթե խնդրես, անպատճառ կհամաձայնի, - ասաց Սուրը և ուրախությունից՝ փարվելով հոր վզին, մի քանի անգամ ամուր-ամուր համբուրեց նրան:

Գլուխ երկրորդ. ԱՆՍՊԱՍԵԼԻ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Նա ուրախությունից համարյա ամբողջ գիշեր չկարողացավ քնել: Եվ միթե քունդ կտանի, երբ գիտես, որ վաղը սպասվում է քեզ արկածներով լի հեռավոր լի ճանապարհորդություն, որին դու երազել ես տարիներ շարունակ:
Սամի համար աշխարհում չկա ավելի հետաքրքիր բան, քան ճամփորդելը, այն էլ գնացքով... ճիշտ է, նա ավելի շատ գերադասում է ծովերով ու օվկիանոսներով նավարկել, բայց չէ որ գնացքն էլ հետաքրքիր է: Պառկիր հանգիստ, գլուխդ դուրս հանիր վագոնի լուսամուտից, և թող գնացքը քեզ տանի հեռո՛ւ, հեռո՛ւ... Այդ բոլորը դեռ ի՞նչ է որ... Ա՛յ, մորաքույր Մարթան ասում է, որ այն գյուղը, ուր իրենք մնալու են ամբողջ ամառ, գտնվում է մի լայն ու խորունկ գետի ափին: Նրա սիրտը հրճվանքից քիչ էր մնում պայթեր, երբ պատկերացնում էր, թե ինչպես Սուրի հետ նավակներով հեռավոր արշավներ կկազմակերպեն, ձուկ որսալու կգնան...
Եվ այստեղ Սամը հիշեց, որ շորերի պահարանի գզրոցներից մեկում երեք զույգ կարթ պետք է մնացած լիներ: Այդ կարթերը նա դեռ անցած տարի էր գնել, այն ժամանակ օգտագործելու համար ոչ մի առիթ չգտնվեց, իսկ հիմա...
«Հարկավոր է հենց հիմա գտնել, թե չէ մեկ էլ տեսար մոռացա», - մտածեց Սամը և իսկույն դուրս սողաց անկողնուց:
... Մոտենալով պահարանին, նա մի պահ նայեց շուրջը: Ննջասենյակում խաղաղություն էր տիրում: Մայրիկը հանգիստ քնած էր, իսկ տատիկի մահճակալից «ահռելի» խռմփոց էր լսվում:
Սամն ատամներով սեղմեց ներքևի շրթունքը, դանդաղ դուրս քաշեց առաջին գզրոցը և շոշափելով, սկսեց արագ-արագ փնտրել: Ստուգեց առաջին գզրոցը, քանդրտեց երկրորդը, տակն ու վրա արեց երրորդը, բայց կարթերը չգտնվեցին:
Մայրիկի արդուզարդի սեղանին վառվող կապույտ լուսամփոփը Սամի հսկայական ստվերն էր ուրվագծել պատի վրա: Շարժվելիս ստվերը անճոռնի ձևով ծռմռվում էր՝ մերթ երկարում, մերթ էլ կարճանում: Նա այնքան էր տարվել իր որոնումներով, որ ուշադրություն չէր դարձնում անգամ կիսով չափ դուրս կախված գզրոցի խուլ ճռճռոցին: Մեկ էլ այդ ճռճռոցից տատիկը դադարեց խռմփալուց, բաց արեց աչքերը և պատի վրայի շարժվող տարօրինակ ստվերը նկատելով՝ սարսափած նստեց անկողնում: Նա լարեց լսողությունը, լարեց տեսողությունն ու սկսեց ուշադիր աչք ածել շուրջը և հանկարծ...
«Աստված իմ, ո՞վ է քանդրտում պահարանի դարակները», - ինքն իրեն մտմտաց պառավը և վախից դողդողացող ձեռքը մեկնեց մահճակալի մոտ դրված աթոռակին:
- Հե՛յ, ո՞վ կա էդտեղ... - որքան ուժ կար կոկորդում, բղավեց նա:
- Մի՛ վախեցիր, ա՛յ տատ... Ես եմ, - լռության մեջ լսվեց Սամի մեղավոր ձայնը:
Տատը, որի մտքով այդ միջոցին ո՞վ գիտի, թե ինչեր էին անցել, հանգստացած շունչ քաշեց և ցած դրեց ձեռքի աթոռակը:
- Սա ի՞նչ բան է, Սամվել... Դու ինչո՞ւ ես մինչև հիմա արթուն մնացել, - բարկացած հանդիմանեց մայրիկը, որ տատիկի ձայնից արթնացել էր արդեն:
- Ի՞նչ անեմ, քունս չի տանում...
- Իսկ ինչո՞ւ էիր քանդրտում պահարանը:
- Իմ կարթերն էի ման գալիս: Երեք զույգ էին... Ես էստեղ, դարակի անկյունն էի դրել, իսկ հիմա չկան:

- Մի սրան տեսեք, կարթեր փնտրելու ժամանակ է գտել: Անմիջապես գնա քնիր, դու վաղն էլ կարող ես փնտրել: Կարթերդ տեղից չեն փախչի, - ասաց մայրիկը և, նայելով պատից կախված ժամացույցին, ավելացրեց. - Գիշերվա կեսն է, իսկ դու չղջիկի նման քունջ ու պուճախ ես ընկել:
Ժամը երեքն էր:
«Ուրեմն դեռ շատ ժամանակ կա լույսը բացվելուն: Դե արի ու համբերի», - տրտնջաց մտքում Սամը, և նրան թվաց, որ ժամացույցի սլաքները չափից ավելի դանդաղ են առաջ շարժվում:

***

Առավոտյան Սամն արթնացավ ավելի ուշ, քան ուզում էր: Արևը վաղուց ընկել էր անկողնու վրա և իր ջերմացնող ճառագայթներով հաճելի խուտուտ էր տալիս նրան: Թեև բավականին ուշ էր, բայց մայրիկը, խախտելով իր սովորությունը, չէր արթնացրել տղային՝ մտածելով, որ նա համարյա ամբողջ գիշեր անքուն էր մնացել, իսկ գնացքում հազիվ թե կարողանա հանգիստ քնել:
Սամն անկողնուց ցած իջավ թե չէ, իսկույն սկսեց զզրոցների ընդհատված հետազոտությունը:
- Հերիք է այդտեղ քանդրտես: Կոճակների տուփի մեջ նայիր: Ախ, Սամվե՛լ, Սամվե՛լ: Մի բան որ խելքիդ փչեց, էլ պրծում չկա, - կշտամբեց մայրիկն ու շարունակեց տղայի ճամպրուկը դասավորել:
Սամը հանեց կոճակներին հատկացված գուտապերչե կլորիկ տուփը և միջի պարունակությունը շաղ տալով հատակին, սկսեց մատներով հավի նման քջջել:
Ահա և կարթերը...
- Ուռա՛աա... - ոգևորված բղավեց նա ու հանկարծ ինչ-որ բան հիշելով, միանգամից լրջացավ:
Մի քանի ամիս դրանից առաջ նա իրենց բակում ապրող Ռուբիկի ձեռքին մի մեծ հեռադիտակ էր տեսել: Հեռադիտակը շատ լավն էր: Իսկական մարտական հեռադիտակ... Վատը միայն այն էր. որ ապակիներ չուներ, հետո մի քիչ ծռմռված էր և մեկ էլ աջ կողմի դիտակի կեսը չկար: Իհարկե, նա այն ժամանակ շատ հեշտությամբ կարող էր տեր դառնալ այդ հեռադիտակին, բայց մենակ մի պայմանով, եթե ինքն էլ համաձայներ փոխանակել նրա հետ իր «կոնստրուկտորը»: Ճիշտ է, նա այն ժամանակ հրաժարվեց այդ փոխանակությունից, բայց հիմա համաձայն է, միայն թե այս անգամ էլ Ռուբիկը չփոշմանի: Իսկ եթե փոշմանի, ուրեմն ամեն ինչ կորած է: Չէ՞ որ հեռադիտակը շատ էր պետք գալու հեռավոր արշավների ժամանակ, իսկ «կոնստրուկտորը» բոլորովին էլ հարկավոր չէր իրեն: Նա հիմա տանը կուչ եկող բալիկներից չի, որ նստի մի անկյունում ու խաղալիքներով խաղա: Այժմ նա օվկիանոսների անվախ նավապետ է, որը գնում է նոր երկրներ հայտնաբերելու:
Այս մտքերով ոգևորված, նա շտապ վերցրեց իր «կոնստրուկտորը» և արագ դուրս թռավ տանից:
Սամը հեռադիտակի տիրոջը գտավ բակի կենտրոնում գտնվող ջրավազանի կողքին, խմբված երեխաների մեջ: Նա, մի կողմ տանելով տղային, սկսեց...
... Եվ ահա, մի քանի րոպե տևող այդ բանակցությունը վերջացավ նրանով, որ Սամն ուրախ-ուրախ տուն վերադարձավ հեռադիտակը ձեռքին:
Մայրիկն այդ փոխանակության մասին այդպես էլ ոչինչ չիմացավ: Նա հեռադիտակը տեսավ այն ժամանակ միայն, երբ Սամը եռանդով խցկում էր փոքրիկ պարկի մեջ: Սամն այդ պարկը հատկացրել էր հետագա արշավների ժամանակ պետք եկող իրերին:
- Սպասիր, սա ի՞նչ է, - զարմացած հարցրեց մայրիկը, երբ պատահմամբ ձեռքը դիպավ ինչ-որ կոշտ բանի, որ պարկի միջից ձմերուկի տպավորություն էր թողնում: - Ապա մի բոլորը դատարկիր...
Սամի աչքերի առջև ամեն ինչ մթնեց: Եվ այն միջոցին, երբ նա ելք էր որոնում այդ անելանելի դրությունից դուրս գալու համար, մայրիկը բռնեց պարկի ցածրի ծայրերից և ամբողջ ուժով շուռ տվեց: Շխկշխկոցով հատակին թափվեցին հեռադիտակը, ժանգոտված ու ծռմռված մի քանի դանակ, շարքից դուրս եկած մի ջարդված լապտեր և վերջապես այդ անիծյալ, երկկանթանի չուգունե կաթսան, որը Սամը մեծ չարչարանքով հանել էր ցախատան փայտերի արանքից:
- Այ թե ի՜նչ... Ուրեմն սրանց համա՞ր էիր ժամերով քարշ գալիս ցախատնում, - բարկացավ մայրիկն ու հրամայեց անմիջապես պարկն ազատել այդ ավելորդ իրերից:
- Գոնե կաթսան ու մեկ էլ հեռադիտակը թող մնան, ի՞նչ կլինի մամ... - թախանձագին խնդրեց նա:
- Ոչ մի դեպքում: Ինձ թվում է, որ առանց այդ խառախուռների էլ կարելի է յոլա գնալ:

- Ախր, մամ, մենք էնտեղ ձեռքներս ծալած հո չենք նստելու՝ ճանապարհորդություններ կլինեն... Իսկ կաթսան մեզ պետք կգա անտառում՝ ճաշ եփելու համար: Ախր չէ՞ որ մենք ինքներս պետք է սովորենք մեր կարիքները հոգալ: Երեխաներ հո չենք:
Սամը գիտեր, թե ինչպիսի խոսքեր կարող էին փափկացնել մայրիկի սիրտը, ուստի հնարավորին չափ շաղ տվեց դրանք: Խոսքերը հասան իրենց նպատակին:
- Դե լավ, թող քո ասածը լինի: Միայն թե մնացածը դուրս թափիր, որ ճանապարհին ավելորդ բեռ չդարձնես գլխիդ:
Թե ինչ դուրս թափեց Սամը կամ թե ինչ թողեց պարկում՝ մենք հետո կիմանանք, երբ հասնի այդ իրերն օգտագործելու ժամանակը:

Գլուխ երրորդ. ԿԱՍԿԱԾԵԼԻ ՈՒՂԵՎՈՐԸ

Գնացքը ծանր փնչոցով, օձապտույտ առաջ էր սլանում՝ ճեղքելով այգաբացի կապտավուն, թափանցիկ մշուշը: Հեռվում հանդարտորեն արթնանում էին թավշե դաշտերն ու անտառածածկ սարերը: Վաղորդյան սառը քամին մի նոր թարմությամբ ներս էր հորդում վագոնների կիսաբաց լուսամուտներից:
Վագոնի ներսում նորից աշխուժություն տիրեց: Այս ու այն կողմից կրկին լսվեցին ուղևորների բարձրաձայն խոսակցությունն ու լիաթոք ծիծաղը:
Սուրն ու Սամը, որ ամբողջ գիշեր ուրախությունից շատախոսել էին և տեղի-անտեղի բացականչություններ արել, այժմ հանգիստ քնած էին վերևի որմնաթախտերի վրա:
- Վեր կացեք, թամբալներ: Լույսը բացվել է, - ձայն տվեց մորաքույր Մարթան և բաց արեց լուսամուտի տակ ամրացված ծալովի սեղանը:
Գնացքը, որ մինչ այդ ուժեղ թափով առաջ էր սլանում, կամաց-կամաց դանդաղեցրեց ընթացքը և փնչալով կանգ առավ մի փոքրիկ կայարանում:
Այստեղ արտակարգ եռուզեռ էր տիրում: Կառամատույցով վագոնների ուղղությամբ, վազվզում էին տղամարդիկ, կանայք գյուղացի փոքրիկ երեխաներ, որոնք ձեռքներին ինչ-որ բաներ բռնած՝ շարունակ բացականչում էին.
- Հա՛վ, տապակած հա՛վ...
- Եփած ձու տամ, եփած ձո՛ւ...
- Մածո՛ւն, լավ մածո՛ւն:
Սա ճանապարհային շարժական այն շուկաներից մեկն էր, որը պատահում է համարյա ամեն մի կայարանում:
Ուղևորներն արագ ցած էին իջնում վագոններից և իրենց ցանկացած ուտելիքը գնելուց հետո շտապ ետ գալիս: Սուրն ու Սամն էլ պատրաստվեցին իջնել, բայց մորաքույր Մարթան արգելեց նրանց:
- Ոչ մի դեպքում... Դու մոռացա՞ր, Սուրեն, թե հերդ ինչ ասաց կայարանում:
- Առանց մորաքրոջ թույլտվության ցած չիջնել վագոնից, - արագ վրա տվեց Մանուշը, մատը հանդիսավոր թափ տալով օդում:
- Ի՞նչ ես դու էլ թանի ճանճի նման մեջ ընկնում, - մռթմռթաց Սուրը:
- Ինչ կլինի, Մարթա մորաքույր, մենք հենց էնպես... Մի անգամ իջնենք ու էլի իսկույն ետ կգանք, հա՞...
- Չի կարելի, հասկանո՞ւմ եք, չի կարելի, կիջնեք ու էլ չեք հասցնի վագոն մտնել: Գնացքը էստեղ շատ քիչ է կանգնում:
Մորաքույր Մարթան չէր սխալվում: Հանկարծ լսվեց շչակի երկարատև սուլոցը: Վագոնները ցնցվեցին, և անիվները դղրդալով, նորից դանդաղ գլորվեցին գծերի վրայով:
Չմոռանամ ասել, որ վագոնում այս կայարանից նոր ուղևորներ ավելացան: Եվ այն միջոցին, երբ մորաքույր Մարթան, Մանուշն ու մեր երկու հերոսները դեմ-դիմաց նստած հանգիստ նախաճաշում էին, նրանց գլխավերևում ցցվեց հաղթանդամ մարմնով տարեց մի կին:

Նոր ուղևորը, որ իր տարիքին անհամեմատ շքեղորեն պճնված էր, մի քանի անգամ ծռմռվեց կանգնած տեղում և դիմելով մորաքույր Մարթային՝ կոտրատվելով ասաց.
- Այս տեղը դուք եք զբաղեցրել, այո՞... Ուրեմն ես վերևի «պոլկա՞ն» պետք է բարձրանամ: Օ՜, բայց ես այնտեղ բոլորովին շնչահեղձ կլինեմ: Ներքևում ինձ համար շատ հարմար է: Օ՜, բարի եղեք զիջելու ինձ այս տեղը: Իսկ այս երկու ասպետների համար, - ցույց տվեց Սուր ու Սամին, - ինձ թվում է վերևում էլ ձանձրալի չի լինի:
Վագոնի մյուս կողմում նստած ուղևորները, որ տարօրինակ, ձևով նայում էին այդ կնոջը, բարձրաձայն փռթկացին: Վերջինս արհամարհանքով չափեց նրանց ոտքից մինչև գլուխ և, չսպասելով մորաքույր Մարթայի համաձայնությանը, իր ճամպրուկները նստարանի տակ հրեց ու անտարբերությամբ փլվեց ամբողջ որմնաթախտի վրա:
Սուրն ու Սամը, պատառները ձեռքներին, ստիպված վերև բարձրացան:
Եվ ահա, իր տիրապետության սահմանները վերջնականապես որոշելուց հետո, մեր նոր ուղևորն ամենայն զգուշությամբ նստարանի տակից դուրս քաշեց ծղոտե մի կլորիկ զամբյուղ և հարմար տեղ չգտնելով՝ խնամքով դրեց գոգին: Հանկարծ նա սկսեց անհանգիստ շարժումներ անել և հազալ: Հետո փոքր-ինչ բաց արեց կափարիչը՝ կասկածանքով նայեց շուրջը, ապա թեքվելով զամբյուղի վրա, մի քանի անհասկանալի բառեր շշնջաց:
Սամը, որ այդ պահին վերևից զարմացած հետևում էր նրա տարօրինակ շարժումներին, այս ամենից ինչ-որ կասկածելի մի բան զգաց: Աչքը չկտրելով խորհրդավոր զամբյուղից, նա ձեռքը դեպի դիմացի որմնաթախտը մեկնեց ու կամաց հրեց Սուրին:
- Հլա մի ցած նայիր...
- Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել, - հանկարծակիի եկած հարցրեց Սուրը և, հայացքը հեռացնելով վագոնի լուսամուտից՝ կիսով չափ ներքև կախվեց:
- Տեսնո՞ւմ ես էդ կնոջ գոգին դրված զամբյուղը, - շշուկով հարցրեց Սամը:
- Սովորական զամբյուղ է, ի՞նչ կա որ...
- Սովորակա՞ն... Սխալվում ես, բանն էլ հենց այն է, որ բոլորովին էլ սովորական չէ: Էդ զամբյուղի մեջ մի շատ կասկածելի բան կա պահված, էնպիսի բան, որ իսկի մտքովդ էլ չի անցնի: Ա՛յ, երբ քիչ առաջ պատահմամբ ներքև էի նայում, մեկ էլ տեսնեմ նստարանի տակից նա հանեց էդ զամբյուղը, մատով մի քանի անգամ տկտըկացրեց... Դե ոնց որ մորզեի ժամանակ: Ի՞նչ էի ասում, հա... Ուրեմն մատով մի քանի անգամ տկտկացրեց, հետո բերանը մոտեցրեց զամբյուղին ու կափարիչի արանքից սկսեց... Այ, այ, նայի՛ր...
Կինը, որ նորից սկսեց անհանգստության նշաններ ցույց տալ, այս անգամ մեջքով շրջվեց դեպի մորաքույր Մարթան ու Մանուշը և գրպանից մի բան հանելով, գաղտնի մտցրեց զամբյուղի մեջ: Իսկ երբ հետո, երկաթուղայինի համազգեստ հագած մի մարդ անգամ վագոնի միջանցքով, նա այնպես տարօրինակ ձևով հազաց որ բոլոր ուղևորները զարմացած նրան նայեցին, իսկ տղաները հետաքրքրությունից վերևում իրար անցան:
- Ճիշտ է: Նա կարծես զամբյուղի մեջ ինչ-որ բան է թաքցրել, - շշուկով հաստատեց Սուրը:
- Բա որ ասում էի, բա որ ասում էի... - ոգևորված կրկնեց Սամը:
- Իսկ տեսնես ի՞նչ կա այդտեղ...
- Ամեն ինչ պարզ է: Նրա զամբյուղում հատուկ ապարատ կա և կարևոր հաղորդումներ է տալիս գնացքից:
- Կարևոր հաղորդումնե՞ր...
- Հա՛, հա ... զարմանալու ինչ կա որ...
- Դե լավ, է՜, Սամ: Դա արդեն բոլորովին խելքին մոտ բան չէ: Նա գժվել է, ինչ է, որ այսքան մարդկանց մեջ այդպիսի բան անի:
- Պա՛հ, դու էլ բան ասացիր: Կարծես մարդիկ շատ պիտի գլխի ընկնեն, թե ինչ կա զամբյուղում:
- Եթե բոլորը չէ, բայց մորաքույրս կամ Մանուշը հո կիմանային: Նրանք ներքևում են նստած, իսկ մենք վերևում, այդ ինչպես նրանք չլսեցին, իսկ դու լսեցիր:

- Ի՞նչ ես դու էլ շարունակ... «Ինչպե՞ս... Ո՞նց»: Ես էլ չեմ լսել, բայց, ասենք, դու էդպիսի բաներից ի՞նչ ես հասկանում որ... Ա՛յ, եթե դու մի անգամ կարդացած լինեիր հռչակավոր հետախույզ Շերլոկ Հոլմսի գիրքը, երբեք էլ էդպես չէիր խոսի, - վիրավորված շշնջաց Սամը, ապա ավելացրեց, - լավ, քո կարծիքով նա ինչի՞ էր էդպես տարօրինակ հագում ու հետո ձեռքը մտցնում զամբյուղի մեջ, հը՞...
Դե ասա:
- Ես ինչ գիտեմ:
- Պարզ չի՞, ինչ է... Հագում էր, որ ներսից լսվող պատասխան ձայները մարդիկ չլսեն: Իսկ ձեռքը... Ձեռքը ը՛ը՛... Դե երևի հենց այդ ժամանակ ապարատի մասերից մեկն ու մեկը փչացավ, նա էլ իսկույն սարքեց:
Սուրը թեև սկզբում այնքան էլ չէր հավատում ընկերոջ այդ հայտնագործությանը, բայց վերջինս այնպիսի փաստերով էր պարզաբանում բոլորը, որ Սուրը ոչ միայն սկսեց հավատալ, այլև վերջնականապես համոզվեց, որ հենց իրենց վագոնում, իրենց իսկ քթի տակ նստած է մի «կասկածելի ուղևոր», որին աչքաթող անելը մեծ հանցագործություն կլինի:
- Բայց առաջուց հարկավոր է ստուգել, - փսփսաց Սուրն ընկերոջ ականջին:
- Ի՞նչ ստուգել... ախպեր ջան, քեզ համար թվաբանության խնդիր չէ: Սա էնպիսի լուրջ գործ է, որ հետախուզել է պետք:
Հետախուզել... Բայց ինչպե՞ս: Նրանք ուղղակի կբարձրացնեն զամբյուղի ծղոտե կափարիչն ու ամեն ինչ կպարզվի: Բայց արի տես, որ այդ կինը հակառակի պես, ոչ մի վայրկյան չէր բաժանվում իր կասկածելի բեռից: Եվ եթե որևէ առիթով էլ հեռանում էր նստած տեղից, ապա այդպիսի դեպքում իր հետ էր քարշ տալիս չարաբաստիկ զամբյուղը և դրանով ավելի ամրապնդում տղաների կասկածը:
Եվ ահա, վերջ ի վերջո, մեր երկու հերոսների բոցավառված հետաքրքրությունն այն աստիճան թեժացավ, որ նրանք ստիպված մի գաղտնի որոշում կայացրին...
***
Գնացքն ուժեղ թափով շարունակում էր իր ճանապարհը: Վագոնի լուսամուտի առջևով ասես արագ ետ էին փախչում ճանապարհի երկայնքով ձգվող հեռագրասյուների անվերջանալի շարանները, հանդարտ ու մեղմիկ ետ էին լողում կանաչախիտ դաշտերն ու ցորենի ոսկեգույն արտերը:
Չնայած լուսամուտները կիսով չափ բաց էին, այնուամենայնիվ, վագոնի ներսում սաստիկ շոգ էր:
Կեսօրյա տոթը, անիվների միօրինակ, խուլ դղրդյունը, այս ու այն կողմից լսվող միապաղաղ, հոգնեցուցիչ խոսակցությունը՝ թուլացնող ու քնաբեր թմրություն էին տարածել ուղևորների վրա:
- Ժամանակն է, - շշնջաց Սուրը:
Սամը, սթափվելով, ցած նայեց:
Կինը, որ իր ամբողջ լայնքով փռվել էր նստարանի վրա, գոգին դրված զամբյուղը երկու ձեռքով բռնած հանգիստ ննջում էր: Նրա դիմաց նստած մորաքույր Մարթան ու Մանուշը նույնպես քնած էին: Սամն իսկույն բաց արեց արդեն մեզ ծանոթ պարկի կապը, հանեց այնտեղից թղթի մեջ փաթաթված կարթերը և նրանցից մեկը կապելով մի երկար թելի ծայրից՝ դանդաղ ցած իջեցրեց: Հարմարեցնելով այնպես, որ կարթը կառչի զամբյուղի կափարիչի կանթին՝ նա զգույշ քաշեց թելի ծայրից, իսկ Սուրն էլ իր բարալիկ վիզը երկարացնելով՝ վերևից սկսեց հետախուզել բացված զամբյուղի պարունակությունը:
Եվ հենց այստեղ զարմանալի մի բան կատարվեց. Սամի պատկերացրած «հատուկ ապարատի» փոխարեն, զամբյուղից դուրս թռավ մի սպիտակ շնիկ և, գլուխը խփելով նստարանի եզրին, կլանչոցներով վազեց դեպի վագոնի ծայրը:
Շան այդ անսպասելի կլանչոցից նրա տիրուհին խայթվածի նման վեր թռավ քնից և այնպիսի մի հարայ-հրոց դրեց, որ կարծես՝ գնացքը շուռ եկավ:
Սուրն ու Սամը շփոթված ու վախեցած՝ ճանճի նման կպան որմնաթախտերից:
Ուղևորները զարմացած վեր բարձրացան պառկած տեղներից և տեսնելով ուրախ-ուրախ այս ու այն կողմ վազվզող շնիկին ու նրա ետևից ընկած տակառաձև տիրուհուն, փորները բռնեցին:

Փոքրիկ շնիկը, որ հազիվ էր հրաշքով մութ զամբյուղից լույս աշխարհ ընկել, ուրախ հաչոցով այս անգամ էլ թռավ որմնաթախտերի վրա:
- Մոմզիկ, սիրելիս... Ցած իջիր, Մոմզիկ, - խռպոտած ձայնով աղերսում էր տիրուհին, որը գլխի չէր ընկել զամբյուղի կափարիչի հանկարծակի բացվելու գաղտնիքը:
Բայց Մոմզիկը, ուշադրություն չդարձնելով նրա աղերսին, հրճվալից թափահարեց ճանճաքշիկի ձև ունեցող փոքրիկ պոչն ու կանգնելով ետևի ոտքերի վրա, առջևի թաթիկները դրեց լուսամուտի կիսաբաց փեղկին և, գլուխը դուրս հանելով, սկսեց ուրախ կզմզտալ:
- Օ՜յ, ցած իջիր, Մոմզիկ, թե չէ վշտից բոլորովին ինձ կմեռցնես, - լացակումած խնդրեց նրա տիրուհին:
Ուղևորները թուլացան ծիծաղից: Իսկ Մոմզիկը, ասես իր տիրուհուն վշտամահ անելու համար, ավելի ցած կախվեց լուսամուտից: Կարծելով, որ շնիկը պատրաստվում է դուրս շպրտել իրեն, կինը մի այնպիսի ահռելի ձայնով գոռաց, որ վագոնի ուղեկցողը գլխապատառ դուրս թռավ իր կուպեից:
- Թող հիմարություններդ, Մոմզիկ, թե չէ քո փոխարեն տիրուհիդ իրեն դուրս կշպրտի վագոնից, - կատակով ավելացրեց ուղևորներից մեկը և ճարպկորեն բռնելով շան ետևի ոտքերից, տվեց տիրուհուն:
- Տիկի՛ն, ինչո՞ւ եք վագոնում աղմուկ բարձրացնում, ինչո՞ւ եք խանգարում ուղևորների հանգիստը, - վրդովված նրան մոտեցավ ուղեկցողը, - կամ ձեզ ո՞վ է թույլ տվել գնացքով շներ տեղափոխել...
- Շնե՞ր... Սա, ընկեր, ձեր կարծած հասարակ շներից չէ: Այսպիսի շներ միշտ էլ թույլատրվում է տեղափոխել, այնպես որ կարող եք հանգիստ ձեր գործին գնալ, - անտարբերությամբ պատասխանեց կինը և, շոյելով Մոմզիկի փափուկ մորթը, գնաց ու նստեց իր տեղը:
Ուղեկցողը սաստիկ բարկացավ և պահանջեց իսկույն դուրս շպրտել շանը: Բայց Մոմզիկի տիրուհին ավելի նպատակահարմար գտավ իր ցանկացած տեղից մի կայարան շուտ ցած իջնել, քան թե զրկվել այնպիսի շնից, որին նա գուցե աշխարհում սիրում է այնպես, ինչպես ոչ ոքի:

Գլուխ չորրորդ. ՀԵՆԱԿԱՎՈՐ ՄԱՐԴԸ

- «Հատո՛ւկ ապարատ, կարևոր հաղորդումներ»... Հանգստացա՞ր... Ախր որ մի բան հաստատ չգիտես, ուր ես քիթդ մարդկանց զամբյուղի մեջ խոթում, հը՞... - բարկացած վրա տվեց Սուրը, երբ Մոմզիկի տիրուհին հաջորդ կայարանում ցած իջավ վագոնից:
- Դեռ լավ էր չնկատեց, - շարունակեց նա, - թե չէ դրա համար մի լավ կհասցնեին մեր վզակոթին:
- Պա՛հ, ինչի՞ պիտի հասցնեին որ... - ընկճված պատասխանեց Սամը:
- Հա ինչ, կարծում ես ճակատդ կհամբուրեի՞ն: Մարդն իր համար հանգիստ ննջում է, իսկ դու թաքուն նրա զամբյուղն ես բաց անում: Դրա համար դեռ գող էլ կանվանեին: Դու հա բացատրիր նրանց որ բանն այդպես չի եղել, միևնույն է, ոչ ոք չէր հավատա, ով էլ լսեր՝ կծիծաղեր վրադ:
Այս խոսքերը միանգամից փշրեցին Սամի տրամադրությունը, որը մինչ այդ, ճիշտն ասած, այնքան էլ բարենպաստ պայմաններում չէր գտնվում: Եվ նա, թշերն ուռցնելով, բարձրաձայն մռթմռթաց.
- Իհարկե, դու էլ բոլորի հետ միասին կծիծաղեիր, հը՞, ինչ ուզում ես ասա, քեզ հետ ընկերություն անել չի լինի: Մի բան չեղած, վռազ հեռու ես քաշվում ու սկսում քարոզներ կարդալ: Իսկ եթե հանկարծ էդ կինը... - Նա այստեղ մի պահ լռեց և ապա ոգևորված շարունակեց, - ինչ է, կարծում ես էդպիսի մարդիկ հիմի չկա՞ն, ասա, չկա՞ն...
Մինչ վերևում պառկած տղաները տաք-տաք վիճում էին, գնացքը երկարատև սուլոցով կանգ առավ: Վագոնում բոլորն իրար անցան: Գնացքը, ինչպես երևում է, այստեղ երկար էր կանգնելու, որովհետև մորաքույր Մարթան տեղից վեր բարձրացավ ու ձայն տվեց տղաներին.
- Ցած իջեք: Թերմոսում մի կաթիլ ջուր չկա: Գնացեք, ջուր բերեք կայարանի ծորակից:
Սուրն ու Սամն այդ լսելուն պես՝ ուրախացած ցած թռան որմնաթախտերի վրայից և, ճանկելով լուսամուտի կողքից կախված թերմոսը, սրան-նրան դիպչելով՝ դուրս վազեցին:
- Սպասեք, ախր ո՞ւր եք գլխապատառ վազ տալիս, - ձայն տվեց նրանց ետևից մորաքույր Մարթան, - եկեք փող վերցրեք, որ մի քանի հատ էլ պաղպաղակ առնեք:
Տղաները ետ դարձան:

- Իզուր տեղը չթափառեք դրսում, շուտ կվերադառնաք, - զգուշացրեց մորաքույր Մարթան՝ դրամը մեկնելով նրանց:
...Իջնելով վագոնից, տղաները քայլերն ուղղեցին դեպի կառամատույցի ծայրին գտնվող ջրի ծորակները, որոնց առջև ուղևորների ահագին բազմություն էր հավաքվել: Նրանք թերմոսը բերնեբերան լցրին ջրով և, դուրս գալով խմբված մարդկանց միջից, շտապեցին պաղպաղակ գնելու:
Հակառակ մորաքույր Մարթայի զգուշացումներին, նրանք այնքան թրև եկան կայարանում, մինչև ձեռքների պաղպաղակները սկսեցին հալվել: Հանկարծ հնչեց գնացքի շարժվելն ազդարարող զանգը, և մեր երկու հերոսները գլուխները կորցրած՝ շնչասպառ ետ վազեցին:
Վագոնի ուղևորներից շատերն արդեն իջել էին, իսկ նրանց տեղերը գրավել էին նորերը:
Իրենց բաժանմունքում էլ մի նոր ուղևոր էր ավելացել:
Նորեկը, որ տռզած դեմքով ու բազուկի նման կարմրած քթով մի կարճահասակ մարդ էր՝ նստել էր ներքևի նստարանին ու մորաքույր Մարթայի հետ զրուցում էր: Ուղևորի մի ոտքը չկար, իսկ նրա կողքին, նստարանի երկայնքով, մի փայտե հենակ էր դրված:
Երբ Սուրն ու Սամը ջրով լի թերմոսն ու կիսահալ պաղպաղակները դրեցին սեղանին, զարմանքով տեսան, որ նույնանման մի թերմոս էլ ուղևորի առջևն է դրված: Երկու թերմոսներն իրար այնքան էին նման, որ մի պահ տղաները շփոթվեցին թե քիչ առաջ որ մեկն էր իրենց ձեռքում:
Մորաքույր Մարթան, իհարկե, սաստիկ զայրացավ նրանց ուշանալու համար և վրդովված ասաց, որ սա առաջին ու վերջին անգամը կլինի, որ ցած իջնեն վագոնից:
- Դե լավ, Մարթա, դու էդքան էլ մի նեղիր նրանց, - միջամտեց միոտանի ուղևորը և ապա դառնալով տղաներին, ժպտալով ավելացրեց, - ուրեմն էդպես, իգիթներ... Մեր գյո՞ւղն եք գալիս: Եկեք, եկեք, մի տեսեք, թե ի՛նչ տեղեր ունենք: Է՛հ, ոնց որ դրախտ լինի՛, դրա՛խտ: Բա մեր անտառները, էնքան մոշ ու հոն կա, որ ուտելով՝ չեք կշտանա:
Մորաքույր Մարթան երեսը շարունակ թեքում էր նրանից: Ինչպես երևում էր, նա տհաճությամբ էր լսում իր զրուցակցին, որովհետև վերջինիս բերանից մի ամբողջ գինետան հոտ էր փչում:
Վերջացնելով «զրույցը», նա սեղանի վրայից վերցրեց իր թերմոսը, ինքնաբավական ժպիտը դեմքին բաց արեց նիկելապատ կլորիկ կափարիչը ու խմեց...
Եվ այսպես ամբողջ ճանապարհին: Իսկ գնացքը դղրդյունով սլանում էր առաջ... Սուրին ու Սամին (որոնց անհայտ էր թերմոսի պարունակությունը) ամենից շատ զարմացնում էր այն, թե ինչու էր ամեն խմելուց հետո նա ուժգին փնչացնում, ծռմռում դեմքը և հետո գրպանից հացի մի փոքրիկ պատառ հանելով՝ մոտեցնում քթին ու հոտոտում:
Եվ ահա այդ բոլորի արդյունքը եղավ այն, որ նա քիչ հետո փտած ծառի նման տապալվեց նստարանի վրա ու սկսեց խռմփացնել:
Տղաներն այլևս ուշադրություն չդարձրին նրա վրա: Բայց ահա գիշերվա կեսին տարօրինակ մի դեպք տեղի ունեցավ: Դրանից մեր Սամի երևակայությունն այն աստիճան բորբոքվեց, որ միոտանի ուղևորը նրա աչքին դարձավ մի նոր Ջոն Սիլվեր, որը սոսկալի դավադրության էր պատրաստվում ինչ-որ մեկի դեմ:

***

Գիշերը Սամն արթնացավ անսպասելի թխկոցից ու դրանից հետո երկար ժամանակ չկարողացավ քնել: Գիշերային խաղաղ լռության մեջ շարունակվում էր լսվել անիվների խուլ դղրդյունը և քնած ուղևորների շնչառության ձայները: Նա զբաղվելու ոչինչ չգտնելով, ստիպված շրջվեց փորի վրա ու թեև դրսում անթափանցելի խավար էր դեմքը մոտեցրեց լուսամուտի ապակուն ու սկսեց մտաբերել իրենց տունը, հարազատներին:
«Տեսնես ի՞նչ են անում տատիկն ու մայրիկը... դե, իհարկե հիմա նրանք քնած կլինեն և գուցե երազում իրեն են, խոսում հետը: Առավոտյան տատիկը կարթնանա, և ինչպես միշտ՝ անպայման կսկսի պատմել, թե ինչպես է երազում տեսել տունը պղտոր ջրով լցված, կամ թե ինչպես անծանոթ մեկը մի ամբողջ աման եփած միս է տվել իրեն ու էլի շատ ու շատ բաներ...»:
Հանկարծ ներքևից լսվող ինչ-որ տարօրինակ խոսակցություն կտրեց Սամի մտքի թելը:
- Չէ, չեմ կարող, էս անգամ որ ընկա, ոտով-գլխով կորած եմ:

- Տո, ինչի՞ ես վախենում, սարի նման մեջքիդ կանգնած եմ, Է՛... Դատավորն էլ, հո գիտես, իմ ախպեր տղեն ա... Հրեն, կակռազ մյուս վագոնում ա նստած:
- Սսմ՛... Կամաց, ա՛յ մարդ: Ինձ հո կրակը չես գցելու...
Խոսողը միոտանի ուղևորն էր:
Սամի սիրտն անհանգիստ մի կասկած սողաց: Նա փոքր-ինչ ցած թեքվեց ու աչքի պոչով նայեց խոսողներին:
- Որ ըտենց ա, վեր կաց, մի կողմի վրա գնանք, - շշնջաց անծանոթ մարդը, և միոտանին տնքալով բարձրացավ տեղից:
Երբ նա հենակը թևատակին դնելով գնաց անծանոթ մարդու ետևից, Սամը շտապեց արթնացնել ընկերոջը, բայց Սուրը քնած չէր:
- Լսեցի՞ր, - շշուկով հարցրեց Սամը:
- Ամեն ինչ լսեցի: Ի՜նչ սարսափելի է, Սամ... Նրանք կարծես ինչ-որ մտադրություններ ունեն, - դողացող ձայնով ասաց Սուրը:
- Էլ ինչ «կարծես»: Պարզ չի՞: Նրանք ուղղակի ուզում են կողոպտել մեկն ու մեկին կամ գուցե սպանե՞լ: Լսիր, Սուր, ի՞նչ գիտես, որ սա հենց ինքը՝ միոտանի Ջոն Սիլվերը չէ: Չէ՞ որ գրքի վերջում նա փախչում է «Իսպանյոլա» նավից ու մինչև հիմա մարդիկ չգիտեն նրա տեղը:
Սուրը պատրաստվեց առարկել նրան, բայց քիչ առաջ տեղի ունեցած խոսակցությունը հիշելով՝ միայն այսքանն ասաց.
- Ի՞նչ Ջոն Սիլվեր... Դա հո մորաքույր Մարթայենց գյուղի պահեստապետն է: Իսկ քո միոտանի ծովահենը վաղուց է փոշի դարձել:
- Ասենք, էդ ճիշտ ես ասում: Ջոն Սիլվերը վաղուց մեռած կլինի: Բայց դու քո ականջով լսեցիր ամեն ինչ, չէ՞:
- Ըհը՛, լսեցի...
- Դե, ուրեմն նշանակում է, նրանք մի շատ սոսկալի բան են որոշել անելու: Հարկավոր է հետևել նրանց:
- Բայց, Սամ...
- Էլ ինչ բայց, - կտրեց նա ու գլխով իջնելու նշան արեց: Տղաները զգույշ ցած կախվեցին որմնաթախտերից: Իջնելիս Սամը հանկարծ ոտքով դիպավ սեղանին դրված թերմոսներից մեկին ու շրխկոցով ցած գլորեց այն: Նրանք շտապով նորից վեր մագլցեցին որովհետև այդ ձայնից մորաքույր Մարթան արթնացավ ու գետին ընկած թերմոսը կախ տալով լուսամուտի կողքից կասկածով շուրջը նայեց:
Այդ միջոցին հայտնվեց նաև միոտանի ուղևորը: Տղաները սսկվեցին:

***

Լուսադեմին, երբ Սուրն ու Սամը քնից արթնացան, նկատեցին, որ հենակավորն իր տեղում չէր: «Երևի իջել է...» - մտածեցին նրանք ու անմիջապես ցած թռան որմնաթախտերի վրայից:
Մորաքույր Մարթան ու Մանուշն արդեն իրերն էին կապկպում:
- Դե, երեխեք, մի ժամից հետո տեղ կհասնենք, - հանդիսավոր ասաց մորաքույր Մարթան: - Այնտեղ, ուր մենք իջնելու ենք, գնացքը ընդամենը մեկ-երկու րոպե է կանգնելու: Այնպես որ պատրաստ եղեք:
Սուրին ու Սամին այժմ ամենևին էլ չէր հետաքրքրում այդ: Նրանց անհանգստացնում էր ավելի կարևոր մի բան՝ հենակավոր մարդու հանկարծակի անհետանալը: Նրանք սկսեցին հարցերի տարափ տեղալ խեղճ մորաքրոջ գլխին:
- Իսկ ինչպիսի՞ մարդ է նա, հը՞, մորաքույր, - հարցրեց Սուրը:
- Մարդ է, էլի, սովորական մի մարդ:
- Իսկ եթե բոլորովին էլ սովորական չէ, - ավելացրեց Սամը:
- Այդ ո՞նց հասկանալ, սովորական չէ...
Տղաներն այստեղ մի պահ լռեցին ու խորհրդավոր նայեցին միմյանց: Հետո Սամը, ինչ-որ բան հիշելով, հարցրեց,
- Նրա ոտքը պատերազմո՞ւմն է կտրվել:

- Ի՞նչ պատերազմ: Փոքր ժամանակ գնացքի տակ է ընկել: Իսկ ի՞նչ կա, ինչո՞ւ նա հանկարծ ձեզ այդպես սկսեց հետաքրքրել:
Այդ ժամանակ վագոնի ծայրին երևաց հենակավորը, և տղաները լռեցին:
Փայտե հենակը վագոնի հատակին թխկթխկացնելով, նա շնչասպառ մոտեցավ սեղանին, արագ վերցրեց թերմոսն ու նորից ետ դարձավ: Տղաներն իսկույն վերցրին երեսսրբիչները և լվացվելու պատրվակով գնացին նրա ետևից:
Հասնելով վագոնի ծայրին գտնվող երկաթյա փոքրիկ կամրջակին, միոտանին ճարպկորեն թռավ դիմացի կամրջակի վրա և արագ անցավ մյուս վագոնը:
Տղաներն այստեղ մի պահ վարանած կանգ առան: Գծերը իրար հետ միացնող մազութոտ կոճափայտերը գլխապտույտ արագությամբ ետ էին փախչում վագոնների տակից:
...Հենակավորին գտնելու համար մեր երկու հետապնդողները երկար ժամանակ չկորցրին: Անցնելով մյուս վագոնը, առաջին իսկ բաժանմունքում տեսան նրան՝ մի քանի անծանոթ ուղևորներով շրջապատված: Այստեղ էր նաև այն մարդը, որին տղաները գիշերը տեսել էին հենակավորի հետ զրուցելիս: Սուրն ու Սամը թաքնվեցին միջնորմի ետևը և աշխատեցին աչքից չփախցնել նրանց:
Միոտանին, որ գերագույն ոգևորությամբ բաց էր անում թերմոսի կափարիչը, վեր բարձրացավ ու, հենվելով թևատակի հենակին, սկսեց լցնել սեղանի վրա դրված ճանապարհորդական գուտապերչե փոքրիկ բաժակները:
Նրանց դիմաց նստած բարձրահասակ մարդն ու նրա կողքին տեղավորված խստադեմ տիկինը՝ մերթ ընդ մերթ անհանգիստ շարժվում էին նստած տեղերում: Երևում էր, ամուսիններն այդ անակնկալ ու անցանկալի հյուրասիրությունից և շարունակ լսվող կեղծ խոսքերից սաստիկ վրդովված էին:
- Ախր, ո՞վ է օղի խմում, որ լցնում եք, - սառնությամբ հենակավորին դիմեց տիկինը:
- Վա՛յ, էդ ի՞նչ ես ասում, Սաթենիկ քույրիկ, - մեջ ընկավ հենակավորի կողքին նստած մարդը (որն, ինչպես երևում էր, հին ծանոթ էր ամուսիններին): - Բա ես մեռա՞ծ եմ, որ իմ ազիզ դատավոր ընկերն առանց խմիչքի հացի նստի:
- Օ՛ֆ, վերջ տուր է, Մուշեղ: Անհարմար բաներ ես ասում, - անհանգստացած նայելով շրջապատի մարդկանց, ասաց դատավորը, բայց քաղաքավարությունից դրդված, վերցրեց իր առջև դրված բաժակը:
- Կենա՛ցդ, դատավոր... Քո թագուհու քաղցր կենացը, - ոգևորված բացականչեց հենակավորը:
Բոլորը խմեցին, բայց... այստեղ տարօրինակ մի բան կատարվեց: Հենակավորի դեմքը, որ մինչ այդ պոմիդորի պես կարմիր էր միանգամից գաջի գույն ստացավ, նա երկու ձեռքով բռնեց թերմոսն ու մոտեցնելով քթին, չգիտես ինչու, սկսեց հոտոտել: Իսկ նրա կողքին նստած Մուշեղը շփոթված նայեց սեղանակիցներին ու ապշած ճպճպացրեց շրթունքները:
- Ինչպես... Դուք ուզում եք ինձ վրա ծիծաղե՞լ, ի՛նչ է, - այլայլված ոտքի կանգնեց դատավորը և ձեռքի կիսատ բաժակը բարկացած խփեց սեղանին և արագ դուրս ելավ կուպեից...
Մուշեղն ու հենակավորը թրջված հավերի նման տեղերից վեր կացան:

***

Իսկ այդ միջոցին, մյուս վագոնում ահա թե ինչ կատարվեց: Մանուշը, որ պատրաստվում էր ջուր խմել «իրենց» թերմոսից, բաժակը շրթունքներին մոտեցնելուց հետո, գլուխը զզվանքով մի քանի անգամ թափ տվեց ու խեղդվելով ասաց.
- Այս ի՞նչ էր խմեցի, մորաքույր... Բերանս այրվեց:

Գլուխ հինգերորդ. ԳՅՈՒՂԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Հենակավորը բաժանվեց ընկերոջից և քթի սոսկ փնթփնթալով ու հայհոյելով, իրենց վագոնը վերադարձավ: Հարկավոր էր տեսնել միայն, թե նա զայրույթից ինչպես էր կրծոտում շրթունքները, երբ մորաքույր Մարթան պատմեց նրան երկու թերմոսների փոխս ընկնելու մասին:

- Ախր, անտերներն էնքան են իրար նման, որ մի որպե շփոթվեցի ու մերի փոխարեն քոնը կախ տվի գլխավերևս, - ընկճված եզրափակեց մորաքույր Մարթան:
- Տո շփոթվելս ո՞րն է... Պատվավոր մարդկանց առաջ ինձ ոտով-գլխով ցեխը թաղեցիր: Մարդը բաժակը բերանն է տանում, ու ի՞նչ... Արաղի փոխարեն՝ ջուր... Վա՛յ, էս ի՞նչ խայտառակվել էր, որ խայտառակվեցի, - շարունակ կրկնում էր հենակավորն ու կատաղած փնչացնում:
Իսկ տղաները վերևում պառկած, երկար ժամանակ չէին կարողանում հանգստանալ, և թերմոսների անսպասելի փոփոխումից առաջացած ամբողջ պատմությունը վերհիշելով՝ ծիծաղից թուլանում էին:

***

Գնացքն սկսեց ավելի դանդաղ ընթանալ:
Մորաքույր Մարթան, որ շարունակ դուրս էր նայում վագոնի լուսամուտից, հանկարծ ոտքի կանգնեց և նստարանի տակից արագ- արագ դուրս քաշեց նախօրոք կապկպված իրերը:
- Դե պատրաստվեք, երեխեք, հասանք, - ասաց նա: - Ճամպրուկները մուտքի մոտ տարեք, որ իջնելիս բան չմոռանանք:
Տղաները ուրախությունից իրար անցան, մրջյունների նման սկսեցին իրերը քարշ տալ դեպի վագոնի մուտքը: Նրանցից ետ չմնալու համար Մանուշն էլ վերցրեց չարաբաստիկ թերմոսն ու փոքրիկ ճամպրուկը:
- Դու չես իջնո՞ւմ, - դառնալով նստարանի վրա երկար ու մեկ փռված միոտանուն, ցածրաձայն հարցրեց մորաքույրը:
- Չէ, ես վերևի գյուղում գործ ունեմ, - սրտնեղած պատասխանեց նա ու շրջվեց մյուս կողքին:
Գնացքը կանգ առավ մի փոքրիկ կայարանում, եթե, իհարկե, այդպես կարելի է անվանել, որովհետև երկաթգծից քիչ հեռու գտնվող անտառապահի աղյուսաշեն փոքրիկ տնակից բացի, այդտեղ ուրիշ ոչ մի շինություն չկար: Այդ թիթեղածածկ տանիքով տնակից այն կողմ սկսվում էր մի նեղլիկ ճանապարհ, որը ոլորապտույտ կորչում էր անտառի խորքում:
Մեր ուղևորները շտապ ցած իջան: Նրանք դեռ նոր էին իրենց ձեռքի ճամպրուկները դրել գետին, որ գնացքը շարժվեց տեղից:
Սամը մի այնպիսի հայացքով նայեց հեռացող գնացքին, որով կարծես ցանկանում էր ասել՝ «Տեսա՛ր... Նա գնաց ու մենք էդպես էլ չկարողացանք իմանալ, թե նրանք ի՞նչ էին անելու...»
Երբ վերջին վագոնն էլ անհետացավ հեռվում կանաչին տվող անտառածածկ սարի ետևը, մորաքույր Մարթան նստեց ճամպրուկների վրա և՝ թեթևացած շունչ քաշելով, ասաց.
- Մի քիչ սպասեք, հիմա ուր որ է գյուղի սայլերը կերևան:
- Իսկ գյուղն էստեղից շա՞տ է հեռու...
- Հազիվ մի երկու կիլոմետր լինի:
- Դե որ էդպես է, եկեք ոտքով գնանք, - առաջարկեց Սամը:
- Չէ, Սամվել, շտապելու բան չկա: Քիչ էլ որ սպասենք, հանգիստ տեղ կհասնենք:
- Ես հիշում եմ, - մեջ ընկավ Սուրը, - որ մի քիչ գնում էինք, ճանապարհը բաժանվում էր երկու մասի: Նրանցից մեկը մեր գյուղ էր տանում: Ա՛յ հենց այդտեղ էլ, ճամփամիջում, մի մեծ մամռոտ քար կար: Ճիշտ չէ՞, մորաքույր...
Մորաքույր Մարթան գոհունակ ժպտաց ու գլխով հավանության նշան արեց:
Եվ հենց այդ միջոցին անտառապահի տնակի ետևից դուրս եկավ երկձիանի մի սայլ ու ճռնչալով շարժվեց դեպի անտառ տանող նեղլիկ ճանապարհով:
Նկատելով այն՝ Մանուշը հրճվալից բացականչեց.
- Սա՛յլը, սա՛յլը:
Մորաքույր Մարթան արևից աչքերը պաշտպանելու համար, ձեռքը ճակատին դրեց և սկսեց ուշադիր նայել: Հանկարծ նրա դեմքը պայծառացավ: Նա ոտքի կանգնեց և...
- Հե՛յ, քեռի Հարո՛ւթ... Այ քեռի Հարո՛ւթ, - ամբողջ կոկորդով ձայն տվեց նա հեռացող սայլի ետևից:
Տղաները նկատեցին, թե ինչպես սայլապանը երկու ձեռքով կտրուկ քաշեց սանձերը, ու զույգ ձիերը, գլուխները համառորեն թափահարելով, կանգ առան:

- Կանգնե՛ց, կանգնե՛ց, - ծղրտաց Մանուշը և, չսպասելով մյուսներին, ուրախ թռչկոտելով վազեց դեպի սայլը:
- Տեսնում եք, քթներիս տակն էր, իսկ մենք նրան էինք սպասում: Շուտ արեք, երեխեք, բախտներս բերեց: Ուղիղ մեր գյուղն է գնում, - ասաց մորաքույրը, ճամպրուկները վերցնելով:
Տղաները գնացին նրա ետևից:
- Բարի օր, քեռի Հարութ, - մոտենալով սայլին, ողջունեց մորաքույր Մարթան:
- Ա՛յ բարին արևդ... Էս ինչ է, Երևանի՞ց ես գալի Մարթա - թավ բեղերի տակից ժպտաց քեռի Հարութն ու ցած իջավ սայլից:
- Հա՛, մեր Անոյենց տունն էի գնացել: Գեղացոնց, քե՛զ շատ բարև էր անում, - ասաց մորաքույրը, իրերը տեղավորելով սայլում:
- Հազար բարու մեջ մնա... Էս էլ Անոյի երեխեքն են, հա՞: Վա՛յ, էս հո մեր Սուրենն է: Ա՛յ տղա, պա՛հ, պա՛հ... էս ի՞նչ բոյ ես քշել - ժպտաց սայլապանը, ապա նայելով Սամին, հարցրեց, - բա էս իգիթն ո՞վ է:
- Սա իմ ընկերն է, - արագ վրա տվեց Սուրը:
- Ա՛յ, ես քեզ էլ մատաղ, քո ընկերոջն էլ: Դե նստե՛ք, նստեք - ասաց քեռի Հարութն ու թավ բեղերը սղալելով, տեղը բարձրացավ: Մանուշը նստեց նրա կողքին, իսկ մորաքույր Մարթան ու տղաները նստոտեցին ճամպրուկների վրա: Եվ երբ բոլորն էլ տեղավորվեցին, սայլապանը թեթևակի մտրակեց ձիերին:

***

Խուլ ճռնչում էին սայլի անիվները և անտառամիջյան նեղ ճանապարհով գլորվում առաջ: Ճանապարհի երկու կողմից ձգվող հսկա կաղնիների ու հացենիների տերևախիտ ճյուղերի միջից երկինքը չէր երևում: Ասես անտեսանելի հզոր մի ձեռք քաշել, իրար էր կապել ծառերի կատարները, դարձնելով ճանապարհը երկար, կանաչածածկ մի թունել, որտեղից հազիվ էին ներքև թափանցում արևի շողերը: Անտառից հաճելի խոնավություն էր փչում, որից մարդու կուրծքն ուռչում էր՝ լայնանում:
Խոտերի միջից շարունակ լսվող սվվոցները, ճյուղերի խշշունն ու թռչունների զվարթ ծլվլոցը խորհրդավոր մի հանդիսավորություն էին տալիս անտառին:
Թրա՛խկ...
Հեռվից լսվեց մի ճայթյուն, հետն էլ ցավատանջ խշշոց: Ինչ-որ տեղ չորացած հսկա մի ճյուղ պոկվեց իր հարազատ բնից և հառաչելով տապալվեց ներքև:
Սուրն ու Սամը կախարդված նայում էին բնության այդ հրաշալիքներին, և նրանց մանկական երևակայությունը թռչում, հասնում էր աշխարհի բոլոր ծայրերը, թափառում գեղեցիկ, բայց միևնույն ժամանակ սարսափելի ջունգլիների անանցանելի բավիղներով ու ծմակներով...
...Հանկարծ ձիերի ոտքերի տակից դուրս պրծավ ինչ-որ գորշագույն բան և շպրտված քարի արագությամբ նետվեց մոշու խիտ թփերի մեջ:
- Նապաստա՛կը, նապաստա՛կը, - բղավեց Սուրը, երկար վիզը ձգելով դեպի թփուտները:
- Այ թե մի թվանք էր եղել, հա՛... Էդ սատանի ձիուն տեղն ու տեղը կնալեի, - ափսոսանքով ասաց քեռի Հարութն ու բաց թողեց ձիերի սանձը:
Առույգ ու մկանուտ ձիերը, ազատ զգալով իրենց, սայլը տաշեղի նման թռցրին տեղից:
Ինչպես երևում էր, մի քանի օր առաջ հորդառատ անձրև էր եկել, և գետինը դեռևս խոնավ էր, փափուկ, իսկ տեղ-տեղ էլ նույնիսկ ցեխ: Ճամփի վրա պարզ երևում էին անցած սայլերի անիվների զուգահեռ գծերը, անասունների ոտնատեղերը, որոնց մեջ երբեմն մի բռաչափ պարզ ու վճիտ ջուր էր լինում:
Սուրը, որ գլուխը ներքև թեքած մտասույզ նայում էր սայլի տակից արագ ետ փախչող ոտնատեղերին, երազկոտ ասաց.
- Գիտես ինչ, Սամ: Չգիտեմ ինչի, երբ ինձ ջրով լցված կովի կամ ձիու ոտնատեղ է հանդիպում, միշտ հիշում եմ «Գառնիկ ախպերը», - ու նա ցածրաձայն արտասանեց.
- Չէ, ախպեր ջան, չէ՛, դու կով կդառնաս,

Կովի կճղակի տեղից մի խմի...

- Ինչ ես կարծում, Սուր... Եթե մարդ հանկարծ էդ ոտնատեղերից ջուր խմի, կով կդառնա՞... Է՜հ, ասենք, դա մենակ հեքիաթում կարող է պատահել, - ինքն իրեն պատասխանեց Սամն ու չսպասելով, որ Սուրը շարունակի, հաստլիկ մարմինը փոքր-ինչ վեր ձգեց և որքան ուժ ուներ, իր բարալիկ ձայնով ծվծվաց.

Երկու որբեր,
Քուր ու ախպեր,
Կորած գնում են հեռու,
Արևը վառ, ճամփեն երկար,
Ոչ աղբյուր կա, ոչ առու...

Մորաքույր Մարթան ու Մանուշը, որ մինչ այդ գոհունակ ժպիտները դեմքերին ականջ էին դնում նրանց, բարձրաձայն ծիծաղեցին:

- Այ ես ձեր կարդացվոր հոգուն մատաղ... Ասեք է՜, ասեք, - ոգևորված կանչեց քեռի Հարութը:

...Ահա վերջապես նրանք հասան այն մամռոտած քարին որտեղից ճանապարհը բաժանվում էր երկու մասի: Եվ հենց այդ բաժանման տեղից քիչ ներքև, ուր սկիզբ էր առնում իրենց գյուղ տանող ճանապարհը, զարմանալի մի բան պատահեց: Ձիերը, որ հանդարտ վարգով առաջ էին սլանում, հանկարծ խրտնած կանգ առան ու տարօրինակ ձայնով վրնջացին: Սայլապան Հարութը մի րոպե չկռահելով եղելությունը, մտրակի մի քանի հարված հասցրեց նրանց: Բայց առաջ գնալու փոխարեն ձիերը սարսափած ծառս- ծառս եղան ու սայլը թափով ետ հրեցին:

- Յ՜ա, էս ի՜նչ պատահեց ձեզ, ա՛յ օձի կծածներ, - բարկացավ քեռի Հարութն ու հենց խոսքը բերանում. Մանուշը լեղապատառ ճչաց.

- Օ՜ձը, օ՜ձը...

Ձիերից մի քանի քայլ հեռու, ճամփամիջով ոլորապտույտ առաջ էր սողում...

- Ախար, ես էլ ասեմ էս հայվաններն ինչի են խլուշտ-խլուշտ լինում, - ասաց քեռի Հարութն ու ցած իջավ սայլից: Ճամփի վրայից նա մի մեծ քար վերցրեց և զգույշ առաջ գնաց: Բայց որքան մեծ եղավ սայլում նստածների զարմանքը, երբ սարսափելի սողունի գլուխը ջախջախելու փոխարեն, նա մի կողմ շպրտեց ձեռքի քարը և կռանալով, ձայն տվեց.

- Ինչ օձ, լորտու է, լորտո՛ւ...

Տղաներն այդ լսելուն պես իսկույն ցած թռան սայլից ու նետվեցին դեպի սայլապանը, որն արդեն պատրաստվում էր բաց թողնել լորտուն:

- Մի գցի, քեռի Հարութ... Ինչ կլինի՝ մեզ տուր, - աղերսող ձայնով խնդրեց Սամը:

- Ինչների՞դ է պետք: Մեղք է... Ավելի լավ է թող գնա, իր համար ազատ շունչ քաշի:

- Չէ, չէ, պետք է... Հետներս քաղաք կտանենք, դպրոցին կնվիրենք, - մյուս կողմից վրա տվեց Սուրը: Քեռի Հարութի համար, իհարկե, պարզ չէր, թե դպրոցի ինչին էր հարկավոր «էդ խեղճ հայվանը», բայց նա չառարկեց:

- Լավ, որ էդպես է, վեր կալեք...

Սուրը թեև գիտեր, որ լորտուները չեն խայթում, բայց և այնպես զզվանք ու սարսափախառն ինչ-որ բան զգալով՝ հրաժարվեց ձեռք տալ: Նրա փոխարեն Սամը երկու ձեռքով զգույշ բռնեց սողունի մեջքից, և երկուսով ետ վազեցին:

Սայլը շարունակեց իր ճամփան:

Մի քանի ոլորապտույտ անցնելուց հետո նրանք վերջապես դուրս եկան ընդարձակ մի բացատ: Հեռվում երևացին տների կղմինդրածածկ տանիքներն ու գյուղի կիսավեր եկեղեցին:

Տներից այն կողմ, հանդարտ ու անխռով հոսում էր արծաթափայլ գետը:

Գլուխ վեցերորդ. ՏԱՏԻ՞ԿՆ Է ԱՐՅԴՈՔ, ԹԵ...

Անցնելով գյուղի ծուռումուռ փողոցներով, սայլը կանգ առավ բարձր տան դիմաց, որը շրջապատված էր փոքրիկ այգով: Այգու առջև աճած սլացիկ բարդիների արանքից տունը հազիվ էր երևում: Դա գյուղի ծայրին գտնվող ամենավերջին տունն էր, որտեղից մի երկու-երեք հարյուր

քայլ այն կողմ սկսվում էր գետի կանաչապատ ափը: Ափի երկայնքով ձգվող վարսաթափ ուռենիներն իրենց դալար ճյուղերն էին կախել գետի հայելանման ջրերի վրա: Իսկ մյուս ափին փռվել էր Կաղնուտի խիտ անտառը, որը հեռվից նայողին երկնքի ու գետի կապույտն իրարից անջատող մի երկար, կանաչ գիծ էր թվում:
- Դե ահա՛... էս էլ մեր տունը, - ուրախ ասաց մորաքույր Մարթան ու շրջազգեստի փեշերը հավաքելով, ցած իջավ սայլից:
Երբ իրերը ցած իջեցրին, քեռի Հարութն իր գործը ավարտած համարելով՝ մտրակեց ձիերը, ու սայլը շարունակեց իր ճամփան: Սուրը զմայլված նայում էր արևի շողերի տակ փայլփլող գետի կապույտ ջրերին, մյուս ափին տարածված Կաղնուտի անտառին և նրա հիշողության մեջ վերակենդանանում էին ծանոթ արահետներն ու ոլորապտույտ կածանները:
Հարևան տան կտուրին կիտված խոտի դեզի վրա արևկող էին արել չորս-հինգ տարեկան երկու կարմրաթուշ տղաներ: Նրանք իրենց շեկլիկ գլուխները վեր ցցած, հետաքրքրությամբ նայում էին եկվորներին: Քիչ անց բացվեց այդ տան դուռը և շեմքին հայտնվեց պառավ մի կին:
- Յա, էդ դո՞ւ ես, Մարթա ջան, - խզված ձայնով ասաց նա ու տնքտնքալով մոտեցավ: - Աղջի, մերդ հանդ է գնացել, հրես էս էլ բանալին...
Մորաքույր Մարթան բարևեց ծեր կնոջը ու նրա ձեռքից բանալին վերցնելով, այգու փոքրիկ դռնակից ներս մտավ: Մանուշը խրտնած հորթի նման, նրանից առաջ վազեց ու փայտե աստիճաններով սլացավ վերև:
Երբ բոլոր իրերը ներս բերին, մորաքույր Մարթան ասաց.
- Դուք հանգստացեք, իսկ ես գնամ տատի ետևից:
- Ես էլ եմ գալիս, մորաքույր, - շտապով մեջ ընկավ Մանուշը: Նրանք տանից դուրս եկան:
Սամը, որ ոչ մի վայրկյան բաց չէր թողնում եզրերն իրար վրա բերված ծղոտե գլխարկը, նրանց գնալուց հետո սրտնեղած ասաց.
- Ի՞նչ ես շարունակ դես ու դեն վազվզում: Ավելի լավ է արի սրան տեղավորենք, թե չէ էսպես ձեռքիս բռնած հո շարունակ ման չենք տալու:
Լորտուն, որ ամբողջ ճանապարհին անշարժ կծկվել էր Սամի տրորված գլխարկի մեջ, այժմ անհանգստության նշաններ էր ցույց տալիս: Փշփշոտ մաշկը խզխզացնելով ծղոտի վրա, նա գալարվում էր ու պատեպատ դիպչում:
- Հլա մի ձեռքդ էստեղ կպցրու, տես թե ոնց է բարկությունից գունդ ու կծիկ դառնում, - անհանգիստ վրա բերեց Սամը:
Սամին անհանգստացնում էր այն միտքը, որ եթե անմիջապես լորտուի համար մի ուրիշ, ավելի հարմար տեղ չգտնեն, ապա նա դուրս կպրծնի գլխարկի միջից ու կփախչի: Իսկ Սուրին էլ այդ պահին մի ուրիշ բան էր սարսափեցնում, լորտուն շատ որ գազազեց, հանկարծ կարող է պատռել ծղոտե գլխարկի մաշված կողը ու հարձակվել իրենց վրա:
- Սամ, արի դրան դեն շպրտենք, հը՞... Ով գիտի, մեկ էլ տեսար գլխներիս ինչ փորձանք կբերի:
- Ի՞նչ փորձանք:
- Վնաս կհասցնի, էլի...
- Իսկ ի՞նչ է, չգիտե՞ս, որ լորտուները մողեսների ցեղին են պատկանում: Նրանք օձերի նման չեն խայթում:
- Ճիշտ է, չեն խայթում, բայց մոռացա՞ր, թե մի անգամ բնագի դասատուն ինչ ասաց:
- Ի՞նչ...
- Լորտուները շատ ուժեղ են: Նրանք անգամ օձերին են հաղթում...
- Օձերին կարող են:
- Կարծում ես մարդուն չե՞ն կարող...
- Չէ՛, չեն կարող, - համոզված պատասխանեց Սամը:
- Ուժները չի պատի, հա՞... - ձայնը երկարացնելով կրկնեց Սուրը: - Հանկարծ որ փաթաթվեց վզիդ վերջ: Այնպես կսեղմի, որ աչքերդ էլ դուրս կթռչեն:

Որքան էլ Սուրը ճիգ թափեց ապացուցել Սամին, որ լորտուին երկար ժամանակ պահելն անհնարին է ու վտանգավոր՝ բան դուրս չեկավ:
Եվ ահա տղաներն ընկան քունջ ու պուճախ: Նրանք սկսեցին մի այնպիսի հարմար բան փնտրել, որտեղ հնարավոր լիներ պահել լորտուն: Երկար փնտրելուց հետո, վերջապես, Սամը սենյակի անկյունում կավե մի փոքրիկ կուժ նկատեց: Տեսնելով, որ կուժը դատարկ է, նա ոգևորված ասաց.
- Սրանից էլ լավ բա՛ն... Լորտուին կգցենք մեջը, թղթից մի հաստ խցան կպատրաստենք ու դրանով պինդ կփակենք:
- «Պինդ կփակե՛նք», - հեգնանքով կրկնեց Սուրը: - Բա որ բերանը փակենք, որտեղի՞ց շունչ կքաշի:
Սամը մի պահ լռեց, ապա փոքր-ինչ մտածելուց հետո ուրախ բացականչեց.
- Գտա՛... Որպեսզի լորտուի շունչը չկտրվի, մենք կժի տակ կծակենք: Դե ինչ ես թթվում: Մի վախի, շա՛տ փոքր, հազիվ մեխի հաստության չափ:
- Չէ՛... Հո չե՞ս գժվել: Կուժը, ով գիտի, պետք կգա: Եթե տատս իմանա...
- Բան էլ չի ասի: Ազնիվ խոսք, Սուր, բան չի ասի, - աղերսագին ձայնով համոզեց Սամը և հետո գլխարկի մեջ կոլոլված լորտուն պարզեց Սուրին, - դու բռնի, ես հիմա խցան պատրաստեմ: Դե բռնի, էլի, հո քեզ չի ուտի,..
Սուրը դողդողացող մատներով ընկերոջ ձեռքից վերցրեց գլխարկն ու իրենից այնպիսի պատշաճ հեռավորության վրա պահեց, որ ասես լցված լիներ պայթուցիկ նյութերով:
Մինչ Սամը թղթերը ձեռքի մեջ տրորելով, կժի բերանը փակելու համար խցան էր պատրաստում, Սուրը հանկարծ ինչ-որ բան մտաբերելով, հուսահատ ասաց.
- Լավ, ասենք թե շունչ քաշելու համար անցք բացեցինք, բայց չէ որ լորտուն եթե շատ մնա, քաղցած կսատկի, դե մենք էլ ի՞նչ գիտենք, թե նրանք ինչ են ուտում:
- Բա չգիտե՞նք... Չէ որ կենդանաբանությունից անցանք, որ լորտուները գորտ են կուլ տալիս: Դե մենք էլ գորտ կգցենք կժի մեջ: Նրանք մի գորտով կարող են երկու-երեք ամիս ապրել:
- Վա՛յ, ասենք ճիշտ որ... Ես մոռացել էի, - պատասխանեց Սուրը:
Այդպիսով էլ նրանց ամբողջ վիճաբանությունն ավարտվեց:
... Սամը կուժը դրեց հատակին, Սուրի ձեռքից վերցրեց գլխարկն ու ծալած եզրերը կամաց ետ տարավ: Լորտուն հանեց դեղնավուն գլուխը և բարակ, երկճյուղանի լեզուն շարժելով, սկսեց դանդաղ դուրս սողալ: Տեսնելով այդ, Սուրը վախից ետ-ետ փախավ ու սարսափախառն ձայնով ճչաց.
- Զգո՛ւյշ, Սամ: Նա կարծես ուզում է հարձակվել:
Սամը պատասխանի փոխարեն ժպտաց քթի տակ, բռնեց սողունի գլխից և իսկույն մտցրեց կժի մեջ: Այդ միջոցին աստիճանների վրա ոտնաձայներ լսվեցին:
- Տատս եկավ, շո՛ւտ, կուժը մի տեղ թաքցրու: Շորերդ էլ ուղղիր, թե չէ նա բոլորովին տանել չի կարող թափթփված մարդկանց, - արագ վրա տվեց Սուրը: Նա, ժամանակ չկորցնելով, ճամպրուկի վրայից վերցրեց ծաղիկների փունջը, որը Մանուշն էր հավաքել ճանապարհին:
- Բռնիր, սա էլ քո կողմից կտաս իրեն...
- Ճառ եմ ասելու, ինչ է... - տրտնջաց Սամը և դեռ խոսքը չվերջացրած, կիսաբաց դուռը թեթևակի ճռռոցով բացվեց կրնկի վրա:
Սուրը, որ ժպտալից տեսք էր ընդունել, միանգամից մռայլվեց: Իսկ Սամն էլ, որ ձգվել էր տեղում ու առաջ պարզել ծաղկեփունջը, քրքջաց ամբողջ ուժով: Այ քեզ ծիծաղելի բան... Դռների մեջ հայտնվեց կեռ եղջյուրներով մի սևուկ այծ ու մկկալով առաջ վազեց: Տղաներն այս անակնկալից ապշած՝ միմյանց նայեցին և հռհռացին այնպիսի բարձր ձայնով, որ այծն այս անգամ վեր ցցեց մորուքավոր դունչն ու, կարծես ցանկանալով ձայնակցել նրանց, մկկաց:
- Ախ դու հիմարի գլուխ... Մռութդ խոթում ես այնտեղ, ուր քեզ չի կարելի, - բղավեց Սուրն ու բռնելով այծի եղջյուրներից, աքացի տալով, դուրս քշեց նրան: Սուրը դեռ նոր էր ոտքը ներս քաշել, երբ այծը նրա ետևից կրկին սենյակ վազեց:
Սամը թուլացավ ծիծաղից:

- Դու էլ ի՞նչ ես հռհռում, - կատաղեց Սուրն ու ամբողջ բարկությունը թափեց թշվառ այծի գլխին: Նա այս անգամ բռնեց կենդանու ետևի ոտքերից և քաշքշելով դուրս գցեց: Այծը, ըստ երևույթին, վշտացավ մեր փոքրիկ տանտերերի անհյուրընկալ վերաբերմունքից ու փոր-փոշման ցած իջավ՝ թխկթխկացնելով փայտե աստիճանները:
- Խեղճը կարոտել, քեզ տեսնելու է եկել, իսկ դու դուրս ես շպրտում, - կատակով ավելացրեց Սամն ու բարալիկ ձայնով կչկչաց. - Հի՛, հի՛, հի՛...
Սուրը բարկութունից ատամներն էր կրճտացնում: Իսկ մի քանի րոպե հետո աստիճանները դարձյալ թխկթխկացին:
- Էլի հա... Դե հիմա ես... - սպառնաց Սուրը ու ջղային շարժումներով սկսեց շուրջը նայել, ապա կռացավ, թախտի տակից դուրս քաշեց մի երկար ցախավել և ոտքի թաթերի վրա քայլելով գնաց, կանգնեց դռան ետևը: Անցան սպասումի մի քանի վայրկյանները:
Ահա և բացվեց դուռը: Սուրը շտապով վեր բարձրացրեց երկար ցախավելը և այն է ուզում էր ամբողջ ուժով ցած իջեցներ «անհրավի» գլխին, բայց ձեռքը քարացավ օդում:
Այծի փոխարեն շեմքին կանգնած էր տատը:
- Էս ի՞նչ է... Ա՛խ դու ոչ ու փուչ, էդպե՞ս ես դիմավորում քո տատին, - վրդովված ասաց նա ու ձեռքերը կանթելով կողերին, ներս մտավ: Մորաքույրն ու Մանուշը նրա հետ չէին:
- Դե գիտես, տատ, - շփոթված ու կարմրած կմկմաց Սուրը, - մենք, ը՛ը... Մենք կարծեցինք այծն է, բայց, բայց...
Սամը հազիվ հասցրեց երկու ձեռքով փակել իր բերանը, որ ծիծաղը չպայթի:
Տատը, գլխի չընկնելով, թե խոսքն ինչի մասին է, վշտացած ասաց.
- Ասում ես էծ եմ, հա՞... էդպես է, բալամ, էդպես է... Մարդ որ պառավեց, էծ էլ կդառնա, հլա մի բան էլ դենը:
...Սամին ներկայացնելու հարկ չեղավ: Երևի մորաքույր Մարթան արդեն պատմել էր նրա մասին, որովհետև տատն առաջ եկավ և տալով նրա անունը, սիրալիր ասաց,
- Էդ ինչի՞ ես էդպես սառած կանգնել, Սամվել: Նստի՛ր, որդի: Այ Սուրեն, հենց թողեն լողլող բոյդ առնես ու կանգնես... Այ տղա, մի սրանք (նա ցույց տվեց ճամպրուկները) մեկ էլ օթախը քարշ տուր, է՛... - և ապա համբուրելով տղաներին, ավելացրեց, - ես էլ գնամ, սառը թան բերեմ, որ խմեք, սրտներդ հովանա...
Տարօրինակ բնավորություն ուներ Նոյեմզար տատը: Շարժ ու ձևի մեջ կոպիտ, խոսքերի մեջ՝ կծու և հեգնող, բայց միշտ խստադեմ ու բարկացկոտ այդ կինն իր կրծքի տակ պահում էր անչափ զգայուն, բարեգութ մի սիրտ, որը հավասարաչափ բաբախում էր ոչ միայն իր հարազատների, այլև ուրիշների համար: Մի խոսքով, ինչպես գյուղացիներն էին ասում՝ դրսից զանգակ էր, ներսից՝ բամբակ:
Սուրն ու Սամը, իհարկե, իսկույն գործի անցան: Եվ այն ժամանակ, երբ նրանք զբաղված էին իրերը մյուս սենյակ տեղափոխելով, չնկատեցին, թե ինչպես տատը վերցրեց թախտի ոտի մոտ թեք ընկած փոքրիկ կուժն ու սենյակից դուրս գնաց:
Չանցած մի քանի րոպե, բակից սարսափած մի ճիչ հասավ նրանց ականջին: Տղաները շտապով դուրս թռան և ինչ...
Առաջին աստիճանի վրա թուլացած նստել էր տատը ու ակնապիշ նայում էր աստիճանների կողքին դրված քարե սանդին: Խեղճ տատի շրթունքները վախից դողդողում էին: Ձավար ծեծելու քարե սանդի շուրջը ցաք ու ցրիվ թափված էին փշրված կժի կտորները:
Տեսնելով տղաներին, տատը տեղից վեր կացավ ու ցույց տալով փշրված կուժը, ահաբեկված ասաց.
- Անտերի մեջ օձ էր մտել... Կուժը տարա, ասի՝ թան լցնեմ: Հենց բերանից թուղթը ետ քաշեցի, մեկ էլ տեսնեմ, էդ սատանի ճիպոտը գլուխը դուրս հանեց, որ գլուխը դուրս հանեց, ոտներս տակիս ծալվեցին...
Սուրն ու Սամը, որ առանց նրա պատմությունը լսելու, արդեն հասկացել էին ամեն ինչ, աստիճանները դմբդմբացնելով՝ ցած սլացան:
- Ո՞ւր փախավ, տատի, - շնչակտուր հարցրեց Սամը:

- Թփերի մեջ մտավ: Դեսն արեք, ամա՛ն... Օձը որ կատաղեց, էլ պրծում չկա:
- Ի՜նչ արիր, տատ... Ի՜նչ օձ, լորտու էր, անտառում էինք բռնել: Ախար քեզ ո՞վ էր ասում առանց մեզ հարցնելու կուժը բաց անես, է՜... - հուսահատ վրա տվեց Սուրը:
- Յա՜... Դե ասեք ձեր սարքած օյիններն են, էլի... Ա՜խ, շան լակոտներ, էդ մուռտառը կժի մեջ եք պահել հերիք չի, հլա մի բան էլ ես եմ պարտ մնացել, հա՞: Ուզում էիք տեղն ու տեղը լեղաճաք լինեի, որ ձեռքերդ վեր պարզած պար գայիք, հա՞... Հլա մի սպասեք, ես ձեզ ցույց կտամ, անիծվածներ:
Եվ մինչ տատն աստիճանների վրա կանգնած դեռ շարունակում էր բարկացած նախատել, տղաները տակն ու վրա էին անում այգու ցանկապատի տակ բուսած խիտ թփուտները, բայց լորտուն չկար:
Իսկ Սամն էլ լացակումած ձայնով շարունակ կրկնում էր.
- Էլ ինչ, ամեն ինչ կորավ... Էլ ինչ, բոլորն իզուր անցավ...

Գլուխ յոթերորդ. ԿԵՆԴԱՆԻ ԱՆԿՅՈՒՆ

Սամը ոչ մի կերպ չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ լորտուն այդպես էլ անհետ կորավ: Չգիտես ինչու, նրան թվում էր, որ սողունն անպայման կծկվել է մի որևէ թփի տակ, իսկ ինքը չի նկատում: Եվ նա նորից սկսեց որոնումները, այգու բոլոր թփուտները նորից տակն ու վրա արեց, նույնիսկ հարևան բակի ցանկապատի տակ կիտված փայտերի արանքը մտավ, բայց իզուր... Երբ բոլոր ջանքերն իզուր անցան, Սամը հուսահատ ետ եկավ, նստեց սանդի քարին և մռայլ հայացքով շուրջը նայեց:
- Դե լավ, էհ... - մխիթարիչ ձայնով սկսեց Սուրը, - ի՞նչ ես մռութդ կախել, մեծ բան հո չի, մի լորտու է, էլի... Դեռ այնքան կբռնենք որ իսկի տեղ էլ չենք ունենա պահելու: Այ, եթե ուզում ես, նույնիսկ ոզնի էլ կարող ենք բռնել: Ազնիվ խոսք, Սամ, իսկական ոզնի:
- Ոզնի՞...
- Դե իհարկե: Մայրիկս ասում է, մեր գյուղի այգիներում ոզնիներ շատ են լինում: Հենց որ խաղողը սկսում է մի քիչ հասնել, նրանք խաղող գողանալու համար մտնում են այգիները: Իսկ դու գիտե՞ս, թե ինչպես են ոզնիները խաղող գողանում:
- Պարզ չի՞... Բերանով բռնում են ու տանում, էլի, - անտրամադիր պատասխանեց Սամը:
- Բերանո՞վ... - ծիծաղեց Սուրը, - իսկի էլ չէ:
- Բա էլ ո՞նց...
- Ա՜յ թե ոնց: Մայրիկս պատմում էր, թե ինչպես ոզնին գաղտագողի մտնում է այգի, դնչիկով պոկոտում, ցած է թափում խաղողի գիլաները և հետո մեջքի վրա թավալ է տալիս, գիլաները ցցվում են նրա փշերի վրա և նա բեռնված վերադառնում է իր բույնը: Իսկ եթե մարդ ուզենա նրան բռնել, իսկույն մի հաստ փալաս կգցի վրան, որ փշերը ձեռքը չծակեն, ու կբռնի: Մենք էլ այդպես կարող ենք բռնել:
Այս խոսքի վրա Սամի աչքերը հրճվալից փայլեցին ու նա, մոռանալով քիչ առաջ տեղի ունեցածը, ոգևորված ոտքի թռավ:
- Էդ դու ճի՞շտ ես ասում, Սուր... Ուրեմն մենք կարող ենք ոզնի բռնել:
- Ինչի՞ միայն ոզնի: Մենք ամեն ինչ էլ կբռնենք: Նապաստակ, կրիա, լորտու, հետո... հետո մողես: Գիտես ինչ, Սամ: Մեր գյուղի եկեղեցու պատերի ճեղքերում այնքան մողես կա ո՜ր... Հենց որ բռնես պոչից, նա իսկույն պոչը կթողնի ձեռքիդ մեջ ու արագ կմտնի քարերի արանքը: Դրա համար հարկավոր է գլխից կամ ոտից բռնել:
- Բա որ պոչը կտրվի, չի սատկի՞:
- Ինչի պիտի սատկի: Համ էլ նրա կտրված պոչը հետո նորից երկարում է:
- Ուխ, ինչ հետաքրքիր է, Սուր, - հիացած բացականչեց Սամը, - ուրեմն, եթե ուզենանք, մենք իսկական կենդանի անկյուն կարող ենք ունենալ: Արի հենց այսօրվանից էլ սկսենք, հա՞... Իսկ հետո ուրիշ կենդանիներ որսալու համար հատուկ արշավներ կկազմակերպենք:
- Իհարկե... Այ թե բան կլինի, հա՜... Տղերքը զարմանքից տեղն ու տեղը կմեռնեն, երբ մեր այդ կենդանի անկյունը տեղափոխենք դպրոց, - տաքացած վրա տվեց Սուրը, - բոլորից շատ այդ

Պետրոսը նախանձից կպայթի: Եվ թող տրաքվի, թե չէ նա մի գլուխ մեզանից էր կպչում և հավաքույթներում ամենից շատ էր գլուխ ցավեցնում: «Մեր ընկերները ոչ մի նախաձեռնության չեն մասնակցում... Մեր ընկերներն այս չեն անում, մեր ընկերներն այն չեն անում...»: Իսկ մենք ցույց կտանք նրան բոլորն ու մի լավ կշշպռենք, ինչպես հարկն է: Ահա քեզ նախաձեռնություն, կասենք մենք նրան... Փորձիր էլի, փորձիր ինքդ էլ անել, թե չէ հավաքույթների ժամանակ բաժակից ջուր խմելն ու ճառ ասելն ավելի հեշտ է:

- Ա՛յ ճիշտ է, - անհամբերությամբ ավելացրեց Սամը, - կտանենք, բոլորը զարմացած կշնորհավորեն մեզ, իսկ էդ Պետրոս-մետրոսը՝ կանգնած մի անկյունում, նախանձից շարունակ թուքը կուլ կտա:

Եվ այսպես, տղաները սկսեցին զոռ տալ իրենց երևակայությանը: Ձանազան ծրագրեր կազմեցին, թե ինչպես պետք է որսան դժվար բռնվող կենդանիներին, ինչպես նրանց համար առանձին-առանձին վանդակներ պետք է պատրաստեն, ինչպես պետք է կերակրեն և էլի շատ ու շատ բաներ: Իսկ Սամն էլ այս բոլորից այնքան ոգևորվեց, որ առաջարկեց նույնիսկ հատուկ օրագիր պահել ու մեջը մանրամասն գրի առնել այս կամ այն կենդանուն բռնելու ժամանակ տեղի ունեցող դեպքերի նկարագրությունը: Մի խոսքով, գրի առնել իրենց կենդանի անկյունը ստեղծելու ամբողջ պատմությունը: Եվ երբ այս ամենի մասին վերջնական ու հաստատուն վճիռ կայացվեց, մեր երկու հերոսները որոշեցին գետափ գնալ, կամ ավելի ճիշտ՝ գյուղն ուսումնասիրելու համար մի փոքր թափառել շրջակայքում:

- Որ էդպես է, արի կարթերն էլ հետներս վերցնենք, - առաջարկեց, Սամը:

- Վերցնենք, բա ինչ... Վերցնենք, ով գիտի, մեկ էլ տեսար ուզեցինք ձուկ բռնել:

- Հա, բայց որ կարթաձողեր չունենք... Հետս միայն երկու խցան ու հետո մի քանի հատ էլ կարթ եմ բերել: Անպայման երկու հատ էլ երկար ճիպոտներ են հարկավոր, թե չէ առանց դրանց ձուկ չես բռնի:

- Պահ... Դրա մասի՞ն ես մտածում: Գետափին լիքը ուռի ծառ կա. ճիպոտ է պետք, ինչքան ուզում ես կկտրենք:

Տատն այդ պահին քաշվել էր բակի ծայրին գտնվող հացատունը ու քաղաքից եկած իր սիրելի «հյուրերի» համար հաց էր թխում: Բակով մեկ տարածվել էր թարմ հացի անուշ հոտը: Նրանք, իհարկե, հիմա մեծ հաճույքով կցանկանային պպզել թոնրի շուրջը և մի լավ խփշտել տաք ու համեղ լավաշները, բայց բնությունը կանչում, քաշում էր նրանց... Եվ տղաները, առանց ավելորդ ժամանակ կորցնելու, աստիճաններով շտապ վեր բարձրացան:

Սամն իսկույն քանդեց իր «տուրիստական» իրերով լեցուն պարկի կապը, հանեց թղթի կտորի մեջ փաթաթված կարթերը, ապա տնքալով դուրս քաշեց չուգունե կլորիկ կաթսան, որի զույգ կանթերից բարակ երկաթալար կապելով, մի հարմար բռնակ էր պատրաստել:

Սուրը, որին մինչ այդ անհայտ էր քաթանե պարկի պարունակությունը, կաթսան տեսնելով՝ զարմանքից աչքերը չռեց:

- Այ քեզ բան... Այդ ծանր կաթսան ինչի՞ ես հետդ քարշ տվել: Սամը խորամանկ ժպտաց և ապա պարկից արագ-արագ դուրս թափեց ջարդված հեռադիտակը, ծռմռված դանակները, հին լապտերը, մի երկար պարան և, վերջապես, հաստ երկաթալարից պատրաստված ռետինե ձգաններով երկու աղեղ ու մի տասնյակ նետեր, որոնց ծայրերին մեխեր էր ամրացված: Երբ Սուրն իմացավ այդ «հազվագյուտ գանձերի» դերն ու նշանակությունը, երջանկությամբ բացականչեց.

- Այ թե մտածել ես, Սա՛մ...

- Իսկ էս կաթսան մեզ դեռ էնքան պետք կգա... Ասենք, հենց թեկուզ հիմա: Որ ձուկ բռնենք, ինչի՞ մեջ ենք եփելու: Այ, կաթսան կախ կտանք կրակի վրա, ձուկը կգցենք մեջն ու կեփենք: Գիտես, ի՛նչ համով է լինում, - ասաց Սամն ու դուրս թափված իրերը նորից սկսեց տեղավորել պարկում: Երբ ամեն ինչ պատրաստ էր, նա աչքերին քաշեց իր ծղոտե լայնեզր գլխարկը, չուգունե կաթսայի բռնակը ուսը գցեց ու, դառնալով Սուրին, ասաց.

- Գնացինք:

Տղաներն իրենց ետևից անաղմուկ ծածկեցին դուռն ու փայտե աստիճաններով ներքև իջան:

Գլուխ ութերորդ. ԳԵՏԱՓԻՆ

Կեսօրյա թեժ արևն իր շողերն էր սփռել գյուղի վրա: Տղաները դանդաղ ցած էին իջնում գետափ տանող զառիթափ ճանապարհով: Հեռվում, կանաչապատ բլրակի ստորոտին, արածում էին կոլտնտեսության ձիերը: Իսկ ձիերից մի քիչ հեռու, թավշե կանաչի վրա, կոխ էին բռնել ձիապահ տղաները: Նրանց լիաթոք ծիծաղն ու հարայհրոցը պարզ և որոշակի լսվում էր հեռվից:

Սամը, տեսնելով հեռվում ոտաբոբիկ վազվզող ձիապահ տղաներին, որոնք համարձակ թռչկոտում էին փուշ ու տատասկների միջով, ինքն էլ ցանկացավ ազատվել ավելորդ ծանրություններից: Նա ճամփակեսին կանգ առավ, կոշիկները հանեց ոտքերից, կապիչները իրար կապելուց հետո ուսը գցեց և ապա վեր քշտեց շալվարի փողքերն ու քայլեց առաջ: Նույն բանն արեց և Սուրը: Այդպես հաճելի էր քայլել, թեև արևից տաքացած գետինը, փոքր-ինչ այրում էր նրանց մերկ ոտքերը:

Հասնելով գետափ, տղաներն ուսերից ցած իջեցրին կոշիկներն ու չուգունե կլորիկ կաթսան և կախ տվին մոտակա ծառից: Սուրն իսկույն մագլցեց ուռենիներից մեկի վրա, որպեսզի կարթաձողերի համար երկու ճյուղ կտրի: Իսկ այդ ժամանակ Սամը, նստած ջրից ցցված մի մեծ քարի վրա, հիացած շուրջն էր դիտում:

Չնայած սաստիկ շոգին, գետից դուրեկան զովություն էր փչում: Աքանչելի մի տեսարան էր բացվել նրանց առաջ: Եվ իզուր չէր, որ Սուրն այնպես ոգևորված էր պատմում իրենց գյուղի գեղեցկության մասին:

Գետի հայելանման ջրերի մեջ արտացոլվել էին ոչ միայն ափերին փարթամորեն աճած ծառերը, կապույտ երկինքն ու հանդարտ սահող գորշագույն ամպերի նուրբ ծվենները, այլև օդում ճախրող սևափետուր մանգաղաթևիկները: Նայում էր Սամը ու թվում էր, որ այդ մաքուր, վճիտ ջրերի տակ ծածկված է ոչ թե խճաքարերով, ծովախոտերով լեցուն մի սովորական հատակ, այլ սահուն և անտակ մի տարածություն, որի մեջ ամփոփվում է մի ուրիշ երկինք, մի ուրիշ աշխարհ:

Մի խումբ սպիտակափետուր սագեր, ջրի մեջ ընկած պատառոտված թերթիկների նման, դանդաղ լողում էին հոսանքի ուղղությամբ: Իսկ ափով վազվզում էր մի փոքրիկ աղջիկ և ձեռքին ուռենու դալար ճյուղ բռնած՝ հսկում, որ սագերը շատ հեռուն չլողան: Հանկարծ աղջիկը նկատեց տղաներին և սկսեց ուշադիր զննել այնպիսի մի օտարոտի հայացքով, ինչպես տեղացին կնայեր անծանոթ եկվորին: Սամն այդ հայացքից շփոթվեց, վեր կացավ նստած տեղից ու գնաց դեպի այն ծառը, որի վրայից արդեն ցած էր իջնում Սուրը՝ կտրած ճյուղերը ձեռքին:

Աղջիկը դեռ կանգնած նրանց էր նայում:

...Երբ կարթաձողերը արդեն պատրաստ էին, տղաները սկսեցին փորփրել ափի խոնավ հողը և մի քանի րոպե հետո խայծի համար բազմաթիվ որդեր հանեցին: Խայծերը կարթերին ամրացնելուց հետո, նրանք նստոտեցին ջրից դուրս ցցված լերկ քարերի վրա և կարթերը ջուրը գցեցին:

Պարապությունից տղաները ցածրաձայն սուլում էին ու ջրում կախված իրենց մերկ ոտքերը անդադար տարուբերելով՝ սրտատրոփ սպասում խցանի շարժվելուն: Սուրին, չգիտես ինչու, ամեն անգամ թվում էր, որ խցանը թեթևակի ցնցվում է:

- Ըհը, շարժվեց, - ուրախ բացականչում էր նա և անհամբերությունից կարթը շարունակ ջրից դուրս քաշում:

- Ի՞նչ ես ձենդ գլուխդ գցել: Ձկները կլսեն ու կարթին չեն մոտենա, - սաստեց նրան Սամը:

- Պա՛հ... չէ մի կլսեն: Ջրի տակից նրանք շատ պիտի լսեն, ի՛նչ է...

- Իսկ դու, որ բան չգիտես, մի՛ խոսի: Այ, իսկական ձկնորսները...

Սամը դեռ խոսքը չէր ավարտել, երբ վերևից ուրախ բացականչություններ լսվեցին: Ջրի հոսանքի հետ դեպի իրենց ափն է լողում կարճլիկ գերաններից պատրաստված մի փոքրիկ լաստ: Մեր հերոսներին հասակակից գյուղացի երկու տղաներ (իսկ լաստի վրա չորսն էին) արագ շարժում էին ինքնաշեն թիակներն ու լաստը ամբողջ ուժով դեպի ափ մղում: Մյուս երկուսը, ամուր ու երկար փայտաձողերի օգնությամբ, ուղղություն էին տալիս լաստին: Նրանցից մեկը հանկարծ նկատեց ափին նստած Սուրին ու Սամին և, ընկերներին դառնալով, ինչ-որ բան ասաց: Բոլորը բարձրաձայն ծիծաղեցին:

- Էս մեզ վրա՞ են ծիծաղում, - վիրավորված հարցրեց Սամը՝ աչքը չհեռացնելով նրանցից:

- Ի՞նչ գիտես...
- Ինչի չտեսա՞: Դեռ էն մեկն էլ մատով մեզ էր ցույց տալիս: Սպասիր մի էստեղ գան, տես թե ոնց եմ մռութներին հասցնելու, - աքլորացավ Սամը:
Լաստը դանդաղ մոտեցավ ափին և մեր ձկնորսներից քիչ հեռու կանգ առավ: «Ուղևորները» լաստի վրայից հավաքեցին իրենց շորերը և ափ ելան: Նրանցից մեկը, որ ջրից դուրս գալով լաստին ամրացված պարանն էր ծառի բնից կապում, ցույց տվեց ձկնորսներին ու բարձրաձայն ասաց.
- Տո մի էնտեղ նայեք, է՛... Յանի դրանց գլխին հեչ խելքի պատառ կա... Ոտները չփչփացնում են ջրի մեջ ու դեռ ուզում են չանգալին ձուկ ընկնի:
- Քաղաքից են, էլի, - ավելացրեց մեկ ուրիշը, - դրանք ո՛ւր, ձուկ բռնելն ո՛ւր:
Այս խոսքերը լսելով, Սուրն անհանգիստ շարժվեց նստած տեղում և ջրից կամաց դուրս քաշեց կարթածողի նման բարակ ու երկար ոտքերը: Իսկ Սամը դրա փոխարեն թշերը սպառնալից ուռեցրեց, արհամարհանքով վեր ցցեց կճատ քիթը ու ոտքերը դիտավորյալ ավելի ուժգին սկսեց թափահարել ջրի մեջ:
Սամի արհամարհական, կռվի կանչող այդ շարժումները բոլորովին դուր չեկան հեռվում կանգնածներին: Եվ նրանք ահա թե ինչ որոշեցին...
Նրանցից մեկը՝ նիհար, բայց ճկուն շարժումներով մի տղա, որին ընկերները կատակով «Թլո» էին կանչում, նրա փոքր-ինչ թլվատ լինելու համար, գլխին հավաքեց մյուսներին ու ինչ-որ բան շշնջաց: Թե ինչ ասաց նա, դժվար էր գուշակել: Միայն տղաները նրա խոսքերից քահ-քահ ծիծաղեցին ու սկսեցին արագ հանվել:
Երբ Թլոն խորամանկ ժպիտը դեմքին ետ քաշվեց ափից, մյուսներն աղմուկ-աղաղակով ջուրը նետվեցին: Նրանք ուրախ կատակելով, ձկան նման սուզվում էին ջրի մեջ, հետո դուրս էին գալիս ջրի
երեսն ու ոտնալող տալով զանազան ծամածռություններ անում: Եվ երբ ձանձրանում էին, իսկույն հանգիստ պառկում էին մեջքի վրա ու, ինչպես իրենք կասեին, «դաշնակալող» տալով, հոսանքի հետ առաջ գնում:
Սուրն ու Սամը զգում էին, որ այդ ամենն արվում է իրենց զարմացնելու համար: Եվ նրանք ամեն կերպ աշխատում էին ցույց տալ, որ ամենևին էլ ուշադրություն չեն դարձնում նրանց վրա: Սամն իր բարալիկ ձայնով մի երգ էր ծվծվում, իսկ Սուրն էլ քթի տակ մռմռալով՝ ձայնակցում էր նրան: Չնայած մեր «երգիչները» այդ շլացնող դուետով փորձում էին ցուցադրել իրենց անտարբերությունը, բայց միևնույն ժամանակ աչքի պոչով հետևում էին ջրում լողացող իրենց ախոյաններին:
Թլոն, որ մինչ այդ, չգիտես ինչու, մոտեցել ու կանգնել էր մեր ձկնորսների գլխավերևը, աննկատելի նորից ետ քաշվեց: Հետո նա ուժեղ վազքով, գորտի նման շպրտեց իրեն ջուրը: Ընկերներն այդ տեսնելով, շտապ դուրս եկան ջրից: Սուրն ու Սամը նրանց այդ տարօրինակ տեղափոխությունից ոչինչ չհասկանալով, իրենց համար հանգիստ նստած էին՝ կարթածողները ձեռքներին:
Օգտվելով հարմար առիթից (իսկ այդ պահին Սուրն ու Սամը խոսքի էին բռնվել), Թլոն խորը շունչ քաշեց ու միանգամից սուզվեց ջրի հատակը:
Հանկարծ Սամի կարթածողը թեքվեց ու կռացավ: Նույնիսկ ջրի երեսին տմտմբացնող խցանն էլ ծանրությունից սուզվեց ջրի տակ:
- Վա՛յ, էս ի՞նչ էր... Շուտ արա, Սուր: Կաթսան բեր... Գուցե կենդանի տեղ կհասցնենք, - ուրախ ծղրտաց Սամը:
- Ի՞նչը, - նրա անկապ խոսքերից ոչինչ չհասկանալով, զարմացած ծոր տվեց Սուրը:
- Ընկա՛վ, ձո՛ւկ ընկավ... Ո՛ւխ, ինչ էլ ծանր է:
Սուրը ձկան անունը լսելուն պես, վեր թռավ տեղից:
- Ձո՞ւկ... Սպասիր, Սամ, հանկարծ ջրից չհանես, թե չէ կսատկի, - արագ վրա տվեց նա, իր կարթածողը մի կողմ շպրտեց ու վազեց մոտակա ուռենին: Հենց որ կաթսան ձեռքին նորից ետ եկավ, Սամը ամբողջ ուժով կարթը ջրից դուրս քաշեց:
Այ քեզ զարմանք... Կարթից կախված էին... կոշիկնե՛ր... Սամը տարակուսանքով շուռ եկավ ու նայեց իրենց ետևում գտնվող ուռենուն:

Դե, իհարկե... Կարթից կախված էին հենց իր՝ Սամի կոշիկները:
Եվ մինչ մեր դժբախտ ձկնորսները գլուխ կտրաքացնեին հասկանալու, թե ինչ հրաշքով էին կոշիկները ջրի տակ մտել, նրանցից քիչ հեռու կանգնած տղաները, արդեն փորները բռնած՝ թավալվում էին կանաչների վրա:
Քրքջում էր նաև Թլոն, որ վաղուց դուրս էր եկել ջրի տակից ու այժմ լողալով մոտենում էր ափին:
Երբ ամեն ինչ պարզ ու հասկանալի դարձավ, Սուրն էլ ակամայից սկսեց ծիծաղել:
- Ի՞նչ ես հռհռում, - բարկությունից հանկարծ պայթեց Սամը, ապա ջղային շարժումներով կարթից անջատեց իր թրջված կոշիկները: Լաստի մոտ կանգնած տղաներն այս անգամ ավելի բարձրաձայն քրքջացին: Սամին թվաց, գետինը փախչում է ոտքերի տակից, և ինքը ուր որ է վայր պիտի ընկնի: Դրա հետ մեկտեղ, ինչ-որ բան սեղմում էր կոկորդը: Նա մի կերպ տիրապետեց իրեն, զայրույթից մի քանի անգամ թուքը կուլ տվեց և կռվի պատրաստվելով՝ քայլերն ուղղեց դեպի տղաները: Սուրը երկչոտ քայլերով հետևեց նրան:
Եվ այստեղ անշուշտ երկու «բանակների» միջև ահեղ մի ճակատամարտ տեղի կունենար, եթե այդ միջոցին հեռվից եկող անսպասելի կանչը չսթափեցներ նրանց:
- Է-հե-հե-հե՛յ...
Ձայնի վրա բոլորը միանգամից շուռ եկան:
Գետափ բերող ճանապարհով մի անթամբ ձիու վրա նստած, քառատրոփ դեպի իրենց էր արշավում...
- Շավարշը, տղերք, - ուրախ բացականչեց նրանցից մեկը:
Ձիավոր տղան մոտեցավ և ճարպիկ ոստյունով ցած թռավ ձիու վրայից, շարժելով Սուրի և Սամի նախանձն ու հիացմունքը: Եվ ի զարմանք վերջինների, նա փոխանակ իր ընկերներին միանալու, մոտեցավ իրենց ու մտերմական ձայնով հարցրեց.
- Քաղաքից Նոյեմզար տատի տուն եկողները դո՞ւք եք...
- Մենք ենք, ի՞նչ կա որ, - մռայլ պատասխանեց Սուրը:
- Եկա ասեմ, որ մորքուր Մարթան ձեզ էր ման գալիս, - ասաց տղան ու ձիու սանձից բռնած, ավելի մոտեցավ: - Իմ անունը Շավարշ է, սրանք էլ իմ ընկերներն են... Ուզում եք՝ մեկին ուղարկեմ ձերոնց իմաց տա, որ ման չգան, դուք էլ եկեք... Այ, այս լաստով ներքևի քարայրն ենք գնալու: Էնքան հետաքրքիր տեղ է: Գիտե՞ք, համ էլ էդ քարայրի մոտ մի սպանված ուսուցչի գերեզման կա: Իսկ քարայրն էնքան խորն է ու ոլոր-մոլոր, որ մեջն ընկնեք, կմոլորվեք: Եկեք գնանք, հա՞... - արագ վրա էր տալիս Շավարշը:
Հեռու կանգնած տղաները, Շավարշի մտերիմ խոսակցությունը տեսնելով, զարմացած իրար նայեցին, ապա կամաց-կամաց սկսեցին մոտենալ:
Շավարշի խոսքերից մեր հերոսների աչքերն արտասովոր կերպով շողացին: Եվ մի՞թե աշխարհում նրանց համար ավելի հետաքրքիր բան կգտնվեր, քան այդպիսի ճանապարհորդությունը: Բայց արի տես, որ քիչ առաջ տեղի ունեցած ծաղրն ու ծանակը ստիպել էր տալիս նրանց կասկածելու տղաների ազնվության վրա: Արդյո՞ք մի նոր փորձանք չէին բերի իրենց գլխին ու հեռու կանգնած մի լավ ծիծաղեին, ինչպես քիչ առաջ: Եվ Սամը մռայլվելով ցածրաձայն ասաց.
- Երևում է, դու լավ տղա ես: Մենք քեզ հետ ուր ասես կգնանք, բայց քո ընկերների հետ...
Սամը այստեղ լռեց:
- Քո ընկերների հետ իսկի մի քայլ էլ չենք անի, - իսկույն լրացրեց նրան Սուրը:
Շավարշը խոժոռեց դեմքը և ապա, զննող հայացքը չհեռացնելով իրեն շրջապատող տղաների երեսներից, խստությամբ հարցրեց.
- Ինչի՞... Երևի խաթրներիդ դիպել են, հա՞...
Սուրն ու Սամը լուռ էին:
- Դե որ լռում եք, ուրեմն դիպել են, էլի, - ինքն իրեն լրացրեց Շավարշը և բարկությունից շրթունքները կրծոտելով, բռնեց կողքին կանգնած տղայի օձիքից:
- Ես մեղավոր չեմ, Շավարշ, - շփոթված վրա տվեց տղան, - բոլորը Թլոյի սարքած օյիններն էր: Էդ նա ասաց, որ էս տղու... - Նա մատնացույց արեց Սամին և արագ-արագ պատմեց բոլորը:

- Թլո... Հլա մի մոտ արի:
Թլոն երկչոտ քայլերով առաջ եկավ:
- Հիմի ոնց ես, հը՞... Բա գետինը մտիր, էլի: Քաղաքից մարդ գա մեր գյուղը ու դու նրա խաթրին դիպչե՞ս: Բա որ հանկարծ դու գնաս քաղաք ու քո գլխին էդ օյինը բերեն, լավ կլինի, հա՞...
Թլոն շփոթված՝ կախեց գլուխն ու ոտի բթամատով սկսեց գետափի մանրիկ ավազը փորփրել: Հետո նա մեղավոր մի հայացք գցեց Սուրի ու Սամի կողմը, ապա, դառնալով Շավարշին, հազիվ լսելի ձայնով քթի տակ մռթմռթաց.
- Էլ չեմ անի... թող ներող լինեն:
Շավարշը՝ նշաձև կրակոտ աչքերով խաղողի ողկույզի նման խիտ, գանգուր մազերով այդ տղան, որ իր հասակակիցների մեջ ամենից ճարպիկն էր և ուժեղը, երբեք չէր գժտվում որևէ մեկի հետ կամ անտեղի վիրավորում: Իսկ եթե հանկարծ պատահում էր այդպիսի բան, ապա թեկուզ մեղավորը դիմացինը լիներ, Շավարշը ինքն էր առաջինը խոսում ու վիրավորված ընկերոջ սիրտը շահում: Դրա համար էլ բոլորը սիրում էին նրան ու հավատում:
- Հրես Սևուկին մի քիչ լողացնեմ, ուղարկեմ տուն, ճանապարհ ընկնենք, - տղաների հաշտությունից հետո ասաց Շավարշը, ապա շորերը հանելով, ձիու հետ գետը մտավ:
Հենց այդ միջոցին ճանապարհի վրա հայտնվեց Մանուշը:
- Հե՛յ, Սուր, Սամ... Տուն եկեք: Մորաքույր Մարթան կանչում է: Սուրն ու Սամը հավաքեցին իրենց իրերն ու ճանապարհ ընկան դեպի տուն:
Այսպես սկսվեց նրանց առաջին ծանոթությունը գյուղի տղաների հետ:

Գլուխ իններորդ. ՓԱՅՏԵ ՀԻՆ ՏԱՃՏԱԿԸ

Արդեն մի քանի օր էր, ինչ Սուրն ու Սամը գյուղում էին, բայց դարձյալ, ոչ մի կերպ չէին մտերմանում գյուղի տղաներին: Եթե կար մեկը, որի հետ միայն քիչ թե շատ կարող էին մոտիկություն անել, դա Շավարշն էր: Նա էլ հակառակի նման վերջերս բոլորովին չէր երևում: Գյուղում սկսվել էր աշխատանքի եռուն շրջանը, իսկ Շավարշը գիշեր-ցերեկ օգնում էր հորը, որը կոլտնտեսության գլխավոր մեղվաբույծն էր: Բայց մեր հերոսները, նրանից բացի, ուրիշ ոչ մեկի հետ չէին ցանկանում ընկերություն անել: Մանավանդ, դեռ նրանք ինչպես պետքն է, չէին ծանոթացել գյուղի տղաների հետ, երբ լույս ընկավ այդ խորհրդավոր քարայրը:
Եվ ահա մեր ֆանտազյորների համար, որոնց գլուխները, ինչպես գիտեք, լիքն էին բազմաթիվ ցնորքներով ու երազներով, նոր օրեր սկսվեցին: Նրանք՝ մեկուսացած բոլորից, ամբողջ ժամանակ դարձյալ քիթ քթի տված զանազան ծրագրեր էին կազմում՝ խորհրդավոր քարայրի անհայտ գաղտնիքները հայտնաբերելու համար:
Սամին էլ մի այդպիսի բան էր հարկավոր, որ իսկույն քանդվեր նրա երևակայության կծիկը:
Ո՞վ գիտի... Գուցե այդտեղ ոչ միայն մարդասպաններ կարող են թաքնված լինել, այլև գուցե շատ հին ժամանակներում, օտար բռնակալներից պաշտպանվելու համար պատսպարվել են նաև հին-հին զորավարներ ու ռազմիկներ: Եվ գուցե այդ քարայրի անհայտ խորշերից մեկում իրենք կարողանան հայտնաբերել ստորերկրյա մի ճանապարհ, որը կտանի նրանց լայնարձակ մի սրահ, ուր կարող են պահված լինել անհամար գանձեր, իշխանական սրեր ու վահաններ և ուրիշ շատ ու շատ հազվագյուտ բաներ: Իսկ դրանք հայտնաբերելու համար մարդիկ դարեր շարունակ ակնածանքով ու փառքով կհիշեն իրենց անունները:
Եվ այդ « գուցեները» օր ու գիշեր հանգիստ չեն տալիս Սամին: Ցերեկվա ամբողջ պատկերացումները դրոշմվում էին նրա բորբոքված ուղեղում, և նա գիշերները երազում տեսնում էր այդ ամենը:
Սամին ամենից շատ զարմացնում էր այն միտքը, թե ինչպես գյուղի տղաները՝ ապրելով ու մեծանալով այդտեղ, այսքան ժամանակ կարող էին ձեռքները ծալած հանգիստ նստել, մինչդեռ մի քանի օր էր, ինչ նա իմացել էր այդ մասին, բայց քարայրն արդեն իր անհայտ ու առեղծվածային գաղտնիքներով հանգիստ չի տալիս նրան:

...Մի անգամ, ուշ երեկոյան, երբ տատիկը, մորաքույր Մարթան ու Մանուշը մյուս սենյակում խոր քնած էին, Սուրի ու Սամի միջև այսպիսի մի խոսակցություն տեղի ունեցավ:
- Ուրեմն, իմացիր, վաղվանից սկսում ենք պատրաստություն տեսնել, - սենյակի մթության մեջ խորհրդավոր շշնջաց Սամը, - մենք ամենից առաջ պետք է նավակի մասին մտածենք:
- Նավակի՞, - խզված ձայնով հարցրեց Սուրը:
- Բա ինչ: Հեռավոր արշավները գետի վրա միշտ էլ նավակներով են լինում:
- Ինչի՞ համար: Քարայրը մեր գյուղից այնքան էլ հեռու չի, - շշուկով պատասխանեց Սուրը, - մենք տղաների լաստով էլ կարող ենք գնալ...
Այս խոսքի վրա Սամը հանկարծ նստեց անկողնում:
- Լսի՛ր, Սո՛ւր: Չլինի՞ թե տղաներին բան ես ասել...
- Գժվել եմ, ինչ է:
- Դե երդվիր:
- Ազնիվ խոսք, Սամ, չեմ ասել: Ես մենակ մորաքույր Մարթային եմ հարցրել քարայրի մասին, բայց նա բոլորովին էլ գլխի չընկավ, թե ինչի եմ հարցնում: Հետո... Հետո մեկ էլ Մանուշին եմ ասել թե...
- Մանուշի՞ն... - ընդհատեց նրան Սամը: - Ի՞նչ ես ասել Մանուշին:
- Հեչ: Ես մենակ ասել եմ, որ նա շուտով կլսի մեր հայտնագործության մասին, և կգա մի օր, որ դեռ թերթերում էլ կկարդա մեր անունները: Նա, իհարկե, գլուխս տարավ իր հարցուփորձով, բայց ես հիմար չէի, որ բերանիցս խոսք թռցնեի:
- Դե իմացիր, հա՛... էդ մասին ոչ մի խոսք: Իսկ դու դեռ ասում ես տղաների լաստով գնանք: Լաստն ինչ է որ... Այ, նավակն ուրիշ բան է: Նավակով լողալն ավելի հետաքրքիր է:
- Իսկ քեզ նավակ որտեղի՞ց... Կարծում ես իսկական նավակ ճարելը հե՞շտ է:
- Իսկական նավակ հարկավոր էլ չի: Մենք ինքներս կարող ենք պատրաստել: Ինչ է, կարծում ես, չե՞նք կարող:
- Սամ, գիտե՞ս ինչ... - խորհրդավոր ձայնով շշնջաց Մուրը:
- Ի՞նչ:
- Այ երեկ, երբ տատը ինձ աթար բերելու համար ցախատուն ուղարկեց, այնտեղ, լուսամուտի տակ, ես փայտե մի մեծ տաշտակ տեսա: Մտքովս անցավ, թե չի՞ կարելի դրանից նավակ պատրաստել, բայց մտածեցի, որ հազիվ բանի պետք գա, դուրս եկա և մոռացա քեզ ասեմ:
- Ճի՞շտ ես ասում, Սուր...
- Ազնիվ խոսք: Մենակ թե տաշտակը շատ հին է: Դրանով տատիկը խոզերին է լափ տալիս:
- Ավելի լավ, որ հին է, - ուրախ պատասխանեց Սամը, - թե չէ նորը մեզ իսկի պետք էլ չի:
- Հետո կողքից էլ ճաքած է...
- Ոչինչ, կպատրաստվենք... Ո՛ւխ, էնպիսի մի նավակ պատրաստենք, որ բոլորի բերանը բաց մնա: Նույնիսկ առագաստ էլ կարող ենք վրան ամրացնել, - և հետո ընկճված ավելացրեց, - մենակ թե տատիկը կթողնի՞ ձեռք տանք որ...
- Կթողնի: Շատ որ խնդրենք, բան չի ասի, կթողնի:
Տղաները լռեցին:
Իսկ դրսից լսվում էր ծղրիդների գիշերային համերգը:
- Ճը՛ռռ, ճը՛ռռ, ճը՛ռռ....

Գլուխ տասներորդ. «ՓՈԹՈՐԿԱՆԱՎԱԿԻ» ԱՆՓԱՌՈՒՆԱԿ ՎԱԽՃԱՆԸ

Լույսը դեռ չէր բացվել, երբ Սամն արթնացավ քնից: Արթնացավ ու այլևս չկարողացավ աչքերը փակել: Իսկ Սուրը գլուխը թաղած փափուկ բարձի մեջ, հանգիստ ֆսսացնում էր: Մինչդեռ այդ պահին Սամի գլխում ինչպիսի զարմանալի մտքեր ասես, որ չէին ծնվում:
Այ, ինչ լավ կլինի, եթե տատիկը թույլ տա, որ վերցնեն փայտե տաշտակը: Նրանք օր ու գիշեր կաշխատեն և այդ անպետք տաշտակից մի իսկական նավակ կպատրաստեն: Եվ երբ ամեն ինչ ավարտված լինի, ուտելիքի ահագին պաշար կվերցնեն ու գետով կլողան հեռո՛ւ, հեռո՛ւ... Սամը պատկերացնում էր, թե ինչպես ուժեղ քամին փչում, ուռցնում է կայմին ամրացված առագաստը,

իսկ նավակը կատաղորեն սլանում է առաջ: Գնում են նրանք, գնում... և ահա վերջապես դուրս են գալիս բաց ծով: Սամը պատկերացնում է իրեն նավակի առաջնամասում կանգնած՝ հեռադիտակն աչքերին: Նա հրամաններ է արձակում.

«Ղեկը դեպի ա՛ջ», - բղավում է նավապետ Սամը, բայց կատաղի քամին, ջրի մանր շիթերի նման թռցնում, տանում է նրա յուրաքանչյուր բառը, իսկ Սուրը, աչքերը լայն բացած, նայում է իրեն ու ոչինչ չի լսում: Խլացե՞լ է, ինչ է... Չէ՞ որ առջևից ալիքները ճեղքելով, դեպի իրենց է լողում հսկա շնաձուկը: Նա բղավում է... բղավում է կոկորդ պատռելու չափ, բայց Սուրը դարձյալ ոչինչ չի լսում: Ստիպված նա ցած է թռչում նավապետի կամրջակից ու նետվում դեպի ղեկը: Եվ այն պահին, երբ ղեկն ամբողջ ուժով թեքվում է դեպի աջ, Սուրը նոր միայն նկատում է իրենց մոտեցող շնաձկան ահռելի երախը: Նկատում և սարսափից ուշագնաց լինելով, տապալվում է տախտակամածի վրա: Բայց ինքը, առանց գլուխը կորցնելու, իսկույն բռնում է նախօրոք իրենց հետ վերցրած պայթուցիկ նյութերով լի պահածոյի տուփը, վառում նրանից կախված պատրույգի ծայրը և թափով շպրտում շնաձկան վրա: Լսվում է մի ուժգին պայթյուն և շնաձուկը կտոր-կտոր լինելով, ցրիվ է գալիս այս ու այն կողմ... Այդ ձայնից Սուրը ուշքի է գալիս ու նոր միայն հասկանում, թե ինչ վտանգ էր սպասում իրենց: Եվ որովհետև ուտելիքի պաշարն արդեն սպառվել է, նրանք նավակի մեջ գտնվող դատարկ պարկերը լցնում են շնաձկան մսի կտորներով ու նորից շարունակում իրենց ճանապարհորդությունը... Ծովն անծայր է ու ցամաք չի երևում: Բայց մի քանի ժամ լողալուց հետո հանկարծ Սամը հեռվում ինչ-որ հսկայական սև զանգված է նշմարում, նա, իհարկե, հեռադիտակն անպայման դնում է աչքերին և, մի փոքր նայելուց հետո, ուրախ բացականչում.

«Ցամա՛ք... Ես հեռվում ցամաք եմ տեսնում»:

Նրանք արագ գործի են դնում թիակները, և նավակն ամբողջ ուժով մղում դեպի այդ անորոշ զանգվածը: Քիչ հետո պարզվում է, որ դա մի փոքրիկ կղզի է... կղզու վրա մի քանի մարդիկ ու երեխաներ են կանգնած: Նրանք թույլ ու երերուն շարժումներով թափահարում են իրենց նիհար, ոսկրացած ձեռքերը և նվաղած ձայնով աղաղակում.

«Օգնությո՛ւն, բարի մարդիկ, օգնությո՛ւն...»

«Ղեկը պահել կղզու ուղղությա՛մբ», - հրամայում է ինքը՝ նավապետ Սամը:

«Լսո՛ւմ եմ, նավապետ, պահե՛լ կղզու ուղղությամբ», - պատասխանում է տեղակալ Սուրը, և ահա մի քանի րոպե հետո փրկարար նավակը խարիսխ է գցում կղզու մոտ: Պարզվում է, որ դրանք, իհարկե, թշվառ նավաբեկյալներ են, որոնք տասն օր է արդեն ինչ գտնվում են այդ անհայտ կղզու վրա՝ անօգնական ու քաղցած: Տասն օր նրանք, ծովային բույսերից բացի, ուրիշ ոչ մի բան չեն դրել բերանները: Նավապետ Սամը հրամայում է Սուրին նավակից ցած իջեցնել շնաձկան մսով լցված պարկերը և իսկույն կերակրել թշվառ սովյալներին...

.....

Եվ այսպես շարունակում էր երազել Սամը, իսկ հետզհետե կապտացող երկնքում արդեն հալվում ու թրթռալով աներևութանում էին արծաթափայլ աստղերը:

Երբ աքաղաղներն սկսեցին կանչել, նա արդեն փակել էր աչքերն ու նորից քնել:

... Առավոտյան Սուրն ու Սամը անկողնուց վեր կացան թե չէ, շտապով ցախատուն իջան: Սուրը դուռը ճռնչալով բաց արեց կրնկի վրա: Տղաների անսպասելի ներկայությունից ցախատան թևավոր բնակիչները կչկչոցներով ցած թռան պատի տակ դարսված փայտերի վրայից և նրանց ոտքերի արանքով դուրս փախան: Լույսի բարակ մի շերտ ներս էր ընկել ցախատան նեղլիկ լուսամուտից:

Սամը, որի աչքերը դեռ չէին ընտելացել ներսում տիրող կիսախավարին, շուրջը նայելով անհամբեր հարցրեց.

- Ո՞ւր է...

Սուրը պատասխանի փոխարեն հորանջելով ցույց տվեց լուսամատի տակ ընկած փայտե երկարավուն տաշտակը, որն ամբողջովին ծածկվել էր կեղտի հաստ շերտով: Սամը կռացավ, ուշադրությամբ տնտղեց վաղուց անգործության մատնված տաշտակը և ապա ոգևորված ասաց.

- Ո՜ւխ, այ սա բան է... էստեղ երկու... ասենք երեք հոգի էլ կարող են տեղավորվել:

- Ախր, այս փայտի կտորից ինչ նավակ դուրս կգա, որ կպել ու պոկ չես գալիս: Ավելի լավ է, Սամ, արի մեր գազանանոցի մասին մտածենք, թե չէ դու բոլորովին աչքաթող ես արել ամեն ինչ:
- Բա դու ի՞նչ ես գազանանոցիդ կպել: Ինչ է, կարծում ես գազանանոցը քարայրից ավելի կարևո՞ր է, հա՞... Ասենք, ինչ եմ երկար խոսում: Բռնիր, բռնիր դուրս տանենք:
- Իսկ դու մի՛ հրամայիր, իմացա՞ր:
Եվ Սուրն այլևս չառարկեց. ծուլորեն բռնեց տաշտակի մյուս ծայրից ու անճոռնի շարժումներով, թփթփալով ետ-ետ գնաց: Դուրս գալիս նա ոտքն անզգուշորեն դրեց անկյունում փռված խոզի կարճլիկ պոչին: Խոզն ականջ ծակող ճղղոցով վեր թռավ: Սուրն այդ ձայնից հանկարծակիի եկած, ձեռքից բաց թողեց տաշտակը և, գլուխը ուժեղ խփելով դռան ցածրիկ շրջանակին, վախեցած դուրս շպրտեց իրեն:
Մինչ Սամը կթուլանար ծիծաղից, դռան մեջ հայտնվեց Սուրի երկարավուն դեմքը: Նրա ճակատի վրա հաղթականորեն մի չաղլիկ ուռուցք էր փայլում: Սամը, տեսնելով այդ, սկսեց ավելի ուժգին քրքջալ:
- Ի՜նչ ես ծիծաղում: Կարծում ես վախեցա՞: Բոլորովին էլ չէ, պարզապես այդ անպետքի ճղղոցը չլսելու համար դուրս փախա, - արդարացավ Սուրը և ողջ զայրույթը թափեց դռան տակ կուչ եկած խոզի վրա, ոտքով խփեց նրան: Խոզը նորից ճղղաց, իսկ Սուրը թեթևակի ցնցվեց:
- Ճակատիդ պոպոքը վկա, վախկոտ Նազար, - ծիծաղելով ավելացրեց Սամը:

***

Կեսօր էր:
Արևն իր ջերմացնող ճառագայթներով ողողել էր ամբողջ բակը: Բակի ծայրին, հաստաբուն թթենու տակ փռված կարպետի վրա նստել էին Մանուշն ու նրա հասակակից գյուղացի երկու աղջիկներ: Մանուշը ոգևորված ինչ-որ բան էր պատմում նրանց: Ցախատան առջև գտնվող հսկա ընկուզենու տակ դրված էր փայտե երկարավուն տաշտակը, որը տատը երկար չեմուչումից հետո վերջապես թույլ էր տվել տղաներին վերցնելու: Եվ ահա այդ «հազվագյուտ գանձը» սեփականացնելուց հետո մեր նավաշինարարները եռանդով գործի էին անցել: Սղոցում էին ու տաշում, մեխում էին ու կտրում: Ամբողջ բակը դղրդում էր շրխկ ու թրխկից:
Կոտրված տաշտակի չորսբոլոր թափված էին տախտակի կտորներ, տարբեր չափի փոքրիկ ֆաներաներ, պահածոյի թիթեղյա դատարկ տուփեր և մի քանի տասնյակ ծռմռված մեխեր: Այս ամենը տղաները ձեռք էին բերել մեծ չարչարանքներով:
Սկզբում, երբ դեռ «նավաշինարարական» աշխատանքները չէին սկսել, ամեն ինչ նրանց համար (հատկապես Սամի) հեշտ ու հասարակ էր թվում, բայց հենց որ գործի կպան, ամեն անգամ միշտ մի բան պակասում էր: Տախտակն էին ճարում՝ սղոց չկար, որ կտրեն, սղոցն էին մի կերպ ձեռք գցում՝ մուրճ չէր լինում: Մի խոսքով, նրանք այնքան գործ չէին անում, ինչքան որ այս կամ այն գործիքը գտնելու համար դեսուդեն էին վազվզում:
- Լա՜վ... Իսկ հիմա տաշտակի ճեղքը ինչո՞վ պետք է փակենք, - հարցրեց Սուրը, որ այդ միջոցին երկաթե դուրով, նավակը թիթեղապատելու համար, պահածոյի տուփերն էր կտրատում:
- Դե ասացի, էլի՜... Ձյութո՜վ, - նեղսրտած պատասխանեց Սամը, - ճեղքվածքի արանքը փայտի կտոր կխրենք, ձյութը կհալեցնենք մի ամանի մեջ ու կլցնենք վրան: Սառեց թե չէ, քարի պես ամուր կլինի ու ոչ մի կաթիլ ջուր չի լցվի նավակի մեջ:
- Իսկ ձյութ որտեղի՞ց գտնենք:
- Դե եթե չճարենք, ուրեմն ամեն ինչ հեչ... էլ ո՜չ քարայր, ո՜չ էլ հեռավոր ճանապարհորդություններ, - հուսահատ ասաց Սամը:
- Ինչ է, կարծում ես քաղաքում ենք, որ ամեն ինչ հեշտ լինի գտնել:
- Ախր, մի փոքր կտոր է հարկավոր, Սուր: Այ, էսքա՜ն...
- Որտեղից, է՜, որտեղի՞ց... Այ, եթե տղաներից մեկն ու մեկին ասեինք, դա ուրիշ բան է, նրանք իսկույն կգտնեին:

- Ի՜նչ, ի՜նչ... գիժ հո չես: Հերիք է նրանցից մեկն իմացավ, պրծավ: Ամբողջ գյուղը կզրնգա: Իսկ ես չեմ ուզում, որ ուրիշ մարդ մեջ ընկնի ու փչացնի ամեն ինչ: Հասկացիր, է, դա կարևոր հայտնագործություն է լինելու, դրա համար մենք երկուսով...
- «Երկուսով, հա երկուսո՜վ»: Շաշկի ենք խաղում, ինչ է: Նավակ պատրաստելը հանաք բան չի: Մենակ մենք ոչինչ չենք կարող անել, - հուսահատ ավելացրեց Սուրը:
- Չէ, քեզանից ոչ մի ծովային էլ դուրս չի գա: Քեզ թողնեն՝ հենց մի գլուխ ֆոկուսներից կպչես:
- Ախ, ուրեմն այդպես, հա՞... Դե լավ, - ասաց Սուրը և մի կողմ շպրտելով ձեռքի դուրն ու մուրճը, բարկացած ոտքի կանգնեց: - Դե որ այդպես է, ես էլ չեմ ուզում մեխի գլուխ լինել: Ինքդ պատրաստիր:
Եվ այսպես տղաները շարունակ վիճում էին, բարկանում, մի կողմ էին շպրտում ձեռքների գործիքներն ու կտրականապես որոշում այլևս մատ-մատի չծփել: Բայց քիչ հետո, մոռանալով այդ բոլորը, նրանք նորից հաշտվում էին և համերաշխ ու սիրով գործի կպչում:
Այդպես նրանք աշխատեցին ամբողջ օրը: Ամենակարևոր բանը, որ շարունակ անհանգստացնում էր տղաներին, դա տաշտակի ճեղքը փակելն էր: Ի՞նչ անել, որտեղի՞ց ճարել այդ անիծյալ ձյութը:
Բայց ահա տղաների աստղը, ինչպես ասում են, վերջապես փայլեց: Մանուշի հետ խաղացող աղջիկներից մեկը, որ տղաների վիճաբանությունը լսելով, իրենց տուն էր վազ տվել, շնչասպառ բակ ընկավ՝ սև ձյութի մի մեծ կտոր ձեռքին:
Սուրի ու Սամի ուրախությանը չափ ու սահման չկար: Նրանք ճեղքն անմիջապես փակեցին, տաշտակի կենտրոնում որպես կայմ մի բարակ փայտաձող կանգնեցրին և երկու կողմից երկաթալարով կապեցին տաշտակի ծայրերից: Հետո, Սամի առաջարկով, զանազան ծովահենների նետահարությունից պաշտպանվելու համար, ֆաներաների կտորներից անկյունաձև երկու վահան պատրաստեցին և ամրացրին տաշտակի ծայրերին:
Տաշտակը միանգամից նավակի տեսք ստացավ: Բայց այնպիսի նավակ, որպիսին կարող էր նկարել վեցից յոթ տարեկան երեխան՝ իր անվարժ մատներով: Համենայն դեպս, այդքանն էլ բավական էր, որ մեր նավաշինարարներն իրենց լիակատար բավարարված զգային: Դեռ ավելին, Սամը հիացած՝ երկար ժամանակ պտտվում էր նավակի շուրջը և երջանկությունից փայլող աչքերը նրանից չկտրելով, շարունակ կրկնում.
- Ո՜ւխ, այ սա բան է: Ո՜ւխ, այ սա գործ է...

***

Հաջորդ օրը, երբ տղաները նավակը փորձարկելու համար պատրաստվում էին գետափ գնալ, Սամը հանդիսավոր ասաց.
- Դե, ըհը՜... Մի քանի րոպեից հետո մեր նավակն արդեն ջրի վրա կլինի, բայց դեռ մի հարմար անուն չենք դրել:
- Իսկ դա շատ կարևոր է, հա՞...
- Իհարկե կարևոր է: Բոլոր իսկական նավերը միշտ էլ անուն են ունենում:
- Մերը հո իսկական չի: Պարզապես տաշտակ է, էլի...
- Տաշտակ է, բայց իսկական նավակից ոչ մի բանով պակաս չի, - ուրիշ խոսք չգտնելով՝ վիրավորված պատասխանեց Սամը:
- Գիտես ինչ, - երկարատև լռությունից հետո խոսեց Սուրը, - արի մեր նավակի անունը... Ինչպե՞ս էր, է... Դե, այն, էլի, որ նավապետ Նեմոն ջրի տակով...
- Նաուտիլո՞ս:
- Ըհը՜, Նաուտիլոս: Շա՜տ լավ անուն է: Մի քիչ դժվար է արտասանվում, բայց ուղղակի փայլուն անուն է:
- Ի՜նչ ես ասում: Դա իսկի էլ հարմար անուն չի: Նաուտիլոսը սուզանավ էր, բայց մերը...
Տղաները երկար ժամանակ վիճում էին, բազմաթիվ անուններ առաջարկում, բայց հետո, ոչ մեկը հարմար չգտնելով, դարձյալ լռում էին ու մտասույզ նայում իրենց առջև դրված նավակին:
Վերջապես Սամն ասաց.

- Լսիր... Մտածեցի, մտածեցի ու մի բան որոշեցի: Մեր նավակը փոթորիկների միջով պիտի անցնի, էդպես չի՞...
Սուրը գլխով հավանության նշան արեց:
- Դե որ էդպես է, արի մեր նավակի անունը «Փոթորիկ»... չէ ուղղակի «Փոթորկանավ»: Համաձա՞յն ես:
- Ըհը՛...
Ընկերոջ «հեղինակավոր» կարծիքն իմանալուց հետո, Սամը շտապով ցախատուն մտավ և անմիջապես վերադարձավ մի թիթեղյա ման ձեռքին, որի պատերին դեռ երեկվանից հալեցրած ձյութի մի բարակ շերտ էր մնացել:
- Այդ ինչի՞ համար բերեցիր, - զարմացած հարցրեց Սուրը:
- Անունը դրեցինք, ուրեմն նավակի վրա էլ պիտի գրենք՛. Ձյութը կհալեցնենք ու դրանով կգրենք:
Սուրը փայտե բարակ ձողիկը թաթախեց ձյութի մեջ և նավակի առաջամասի վահանի կողերին նախ երկու հատ «փրկակար օղակներ» նկարեց, ապա անճոռնի ու մեծ տառերով գրեց՝ «Փոթորկանավ»:
Եվ ահա «Փոթորկանավը» պատրաստ է իր հանդիսավոր փորձարկմանը:
Տղաները տնքալով բարձրացրին նավակը և դանդաղ քայլերով դուրս տարան բակից: Հենց այդ միջոցին նրանց առջև ելան Մանուշն ու իր երկու ընկերուհիները: Աղջիկներն ուրախ աղմուկով հետևեցին նրանց:
Տղաները գոռոզ ու ինքնավստահ կեցվածքով քայլեցին գետափ տանող զառիթափ ճանապարհով: Գյուղացի երկու փոքրիկ տղաներ խաղում էին ճամփեզրի կանաչների վրա: Սուրի ու Սամի ձեռքի տարօրինակ նավակը տեսնելով, նրանք զարմանքից պլշեցին իրենց վառվռուն աչիկները և, ապա միանալով խմբին, սկսեցին քայլել նրանց ետևից:
Հասնելով գետափ, Սուրն ու Սամը երկյուղածությամբ ցած իջեցրին «Փոթորկանավը» և, թեթևացած շունչ քաշելով, շուրջները նայեցին:
Տղաների սպասածին հակառակ գետափին շատ մարդիկ կային: Մի քանի կանայք կարպետներ էին լվանում, իսկ նրանցից քիչ հեռու, գետեզրի մանրիկ ավազի վրա արևկող էին արել Թլոն ու իր ընկերները: Նրանց մերկ մարմիններն արևի տակ երկար մնալուց կաս-կարմիր էին դարձել:
Տղաներին տեսնելով՝ Սամի տրամադրությունը միանգամից ընկավ:
«Պրծա՛վ... հիմի կգան, կհավաքվեն գլխներիս ու կսկսեն էլի մի պոչ կպցնել», - անցավ նրա մտքով:
Եվ ճիշտ որ... Քիչ անց Թլոն ու մյուս տղաները հետաքրքրված շրջապատեցին նրանց:
- Այ թե գտել եք, հա՛... «Փո-թոր-կա-նավ», - վանկ-վանկ կարդաց Թլոն և ապա կատակով ավելացրեց, - դե էն ա ասեք՝ փոթորկատաշտակ ու պրծեք, էլի՛... Չէ՛, տղերք, հանաքը մի կողմ, սա ջրի վրա մնացողը չի: Հենց նստեցիք թե չէ, շուռ կգա:
- Բա էդ երկար փայտը ինչի՞ են տնկել վրան, - ավելացրեց մեկ ուրիշը, - ախր, հենց դրանից շուռ կգա:
- Ձեր գործը չի, - վիրավորված մռթմռթաց Սամը: Նա կճատ քիթը արհամարհանքով վեր ցցեց ու դարձավ Սուրին: - Ուշադրություն մի դարձնի, քո գործին նայիր:
Նրանք բռնեցին նավակի ծայրերից և մոտեցրին ջրին: Մանուշն ու մյուս աղջիկները հետաքրքրությունից դես-դեն էին վազվզում ու անհամբեր սպասում նավակի ջուր իջեցնելուն:
Սամը կինոնկարներում միշտ տեսել էր, թե ինչպես նոր նավերի փորձարկման ժամանակ, նախքան ջուր իջեցնելը, որպես օրենք, շամպայնի շշեր են ջարդում նավախելի վրա: Եվ նա գրպանից հանեց քացախի դատարկ շիշը, հանդիսավոր վեր բարձրացրեց ու թափով շպրտեց դեպի նավակը: Բայց շիշը ջարդվելու փոխարեն առաջամասի անկյունաձև ֆաներան խռպոտ ճռնչաց ու թեքվեց մի կողմի վրա:
Հավաքվածներն այս ամենից ոչինչ չհասկանալով, զարմացած նայեցին միմյանց ու վեր քաշեցին ուսերը:
- Էս ի՞նչ օյիններ են սարքում, - Թլոյին դիմեց տղաներից մեկը, - դեռ ջուրը չիջեցրած, սրանք արդեն ջարդում են իրենց նավակը:

- Դե նրանց համար մեկ չի՞, - ծիծաղով վրա տվեց խոսողի կողքին կանգնած կապուտաչյա տղան՝ Սահակը, - կամ ափին ջարդած կամ՝ ջրի մեջ: Մեկ է, վաղ թե ուշ ջարդելու են: Ավելի լավ է, որ հիմա են ջարդում:
Սամը, ուշադրություն չդարձնելով նրանց խոսքերին, բարձրաձայն ասաց.
- Ժամանակն է, նստիր:
Սուրը նախ տանջահար մի հայացք գցեց Սամի վրա, ապա, բռնելով տաշտակի կողերից, վախվխելով իր երկար մարմինը մի կերպ տեղավորեց «Փոթորկանավի» մեջ: Սամն ամբողջ ուժով հրեց նավակը: Նավակը սկսեց դանդաղ լողալ ջրի երեսին: Անհնար է նկարագրել այն ուրախությունը, որ այդ պահին պաշարեց Սամին: Նավակը սուզվելու փոխարեն, հանդարտ լողում էր գետի վրա, տանելով իր հետ Սուրի երկարավուն մարմինը: Ուրախ էր և Սուրը: Նա նույնիսկ ժպտում էր, բայց ժպիտն ավելի շուտ սարսափ ու վհատություն էր արտահայտում, քան թե ուրախություն: Բայց այստեղ հանկարծ կատարվեց ամենաողբալին:
Այն միջոցին, երբ Սամը նավակը հրելով արդեն գետի մեջտեղն էր հասցրել, ինքնավստահ մի շարժումով փորձեց բարձրանալ նրա վրա: Նա ձեռքը գցեց տաշտակի կողին թե չէ... Լսվեց ցավատանջ մի ճիչ, հետն էլ ջրի ուժեղ չրմփոց:
... Երբ Սամն ուշքի եկավ, «Փոթորկանավն» արդեն բերանքսիվայր լողում էր հոսանքի հետ, իսկ Սուրի հետքն անգամ չէր երևում ջրի մեջ:
Թլոն, այդ տեսնելով, սաստեց քրքջացող տղաներին և շտապով իրեն ջուրը շպրտեց: Հենց այն պահին, երբ նա լողալով հասավ շուռ եկած տաշտակին, ջրի տակից փնչալով դուրս թռավ Սուրի երկարավուն գլուխը: Թլոն ձեռքը մեկնեց նրան, բայց վերջինս սարսափած ծղրտաց.
- Մի՛ բռնիր, թե չէ կշփոթվեմ...
Եվ նա գլուխը կորցրած, խելագարի շարժումներով չփչփացրեց ջուրը, շուրջը փրփուրի հսկայական դեզ բարձրացրեց և փնչալով դեպի ափը լողաց: Մինչև անգամ այն ժամանակ էլ, երբ ընդամենը մի քանի քայլ էր բաժանում իրենց ափից, նա դեռ շարունակում էր հուսահատ ծեծկռտել ջուրը:
- Կանգնիր, ի՞նչ ես չմփացնում, ափին ես արդեն, - ծիծաղելով ձայն տվեց կապուտաչյա Սահակը:
Սուրը, այդ լսելով, սրտապնդված ոտքի կանգնեց և ինչ... Այստեղ ջուրը հազիվ նրա ծնկներին էր հասնում: Երբ նա ձկնկուլի նման անճոռնի քայլերով ափ դուրս եկավ, բոլորը բարձրաձայն ծիծաղեցին:
Մինչ Սամը ոտնալող տալով դեռ կռվում էր ջրի հետ ու փորձում շրջված նավակն իր նախկին դիրքում կանգնեցնել, Թլոն օգնության հասավ:
Երբ ջախջախված «Փոթորկանավը» համառ պայքարից հետո ափ հասցվեց, Թլոն ձեռքը մտերմորեն դրեց նրա ուսին ու ցածրաձայն ասաց,
- Ախր, ասում էի, իսկ դու չհավատացիր...
Սամը պատասխանի փոխարեն այս անգամ արդեն երախտալից հայացքով նայեց Թլոյին և դառնալով Սուրին, բարկացած փնչացրեց.
- Բոլորը քո երեսից եղավ: Էնպես էիր փռվել նավակի մեջ, որ կարծես...
- «Նավա՛կի մեջ, նավա՛կի մեջ»: Ախր, ո՞վ քո գլուխը մտցրեց, որ այս անպետք տաշտակից նավակ դուրս կգա:
- Դու, էլ ո՞վ...
- Ե՞ս:
- Բա չէ, ե՛ս: Եթե դու ինձ չասեիր ցախատանը տաշտակ կա, ես որտեղի՞ց պիտի իմանայի:
- Վատ եմ արել, հա՞, որ ասել եմ, ասա, վատ եմ արել, հա՞...
Սամն, իհարկե, ոչ մի կերպ չէր համոզվում, որ տաշտակը կարող էր շուտ շուռ գալ: Նա այս բանում մեղադրում էր Սուրին, թեև Թլոն ու մյուս տղաներն աշխատում էին հասկացնել, որ շուռ գալու պատճառը տաշտակի ծավալն ու թեթևությունն է, բայց Սամը չէր հավատում:
Նա իր ասածն ապացուցելու համար «նավակը» նորից ջուրը հրեց, բայց ոտքը դեռ մեջը չդրած, չրըմփ... դարձյալ ջրի մեջ:

...Եվ ահա այն ճանապարհով, որով եկել էին մեր երկու թշվառ «նավաբեկյալները», ջարդոտված «նավակը» գետնի վրա քարշ տալով, գլխահակ ու տխուր տուն վերադարձան:

Գլուխ տասնմեկերորդ. ՄՈՂԵՍՆԵՐԻ ԵՏԵՎԻՑ

«Փոթորկանավի» փորձարկման այդ խայտառակ ձախողումից հետո Սուրի ու Սամի կյանքը կամաց-կամաց սկսեց սովորական հունով ընթանալ: Ճիշտ է, թեև այդ դեպքից հետո նրանք ամաչում էին գյուղի տղաների աչքին երևալ, բայց և այնպես նրանց մեջ մենակյաց կյանքից ազատվելու ինչ-որ մի տեսակ ցանկություն էր առաջացել:

- Չէ, այսպես բան դուրս չի գա, - մի անգամ վրդովված ասաց Սուրը, - տղաներն ամեն անգամ Կաղնուտի անտառն են գնում, լաստով ուր ասես որ չեն լողում, իսկ մենք քանի օր է այստեղ ենք, բայց գյուղն անգամ դեռ ինչպես պետք է չենք տեսել: Այսպես ասած, ձեռքներս ծալած նստել ենք:

- Ինչի ենք ձեռքներս ծալած նստել: Բա նավակ պատրաստելը... - Սամն այստեղ լռեց ու մի քանի անգամ կուլ տվեց թուքը:

- Նավակ պատրաստե՛լը... պատրաստեցինք, ինչպես չէ: Դեռ մի կարգին չփորձած, անունն էլ պոչից կպցրիր: «Փոթորիկների միջով պիտի անցնի...»: Անցա՞վ, ինչպես չէ: Լավ էր, որ կարողացանք գլուխներս ազատել: Բոլորը հռհռում էին, ինչպե՛ս էին հռհռում: Ասենք, շատ լավ էին անում, տեղն էր մեզ: Ես ասում էի, որ երկուսով բան դուրս չի գա, բայց դու չլսեցիր, քո ասածն արիր:

Սամը ոչինչ չէր գտնում պատասխանելու, իսկ Սուրը ոգևորված դեռ շարունակում էր գնդացրի նման պտպտալ:

- Ամբողջ ժամանակ այդ քոսոտ տաշտակով զբաղվեցինք: Լավ չէր լինի՞, որ դրա փոխարեն «կենդանի անկյուն» ստեղծելու մասին մտածեինք, ասա, լավ չէ՞ր լինի:

- Դե ի՞նչ ես դու էլ հարցնում, հա հարցնում: Ասենք՝ մտածեինք, բա քարա՞յրը...

- Քարայրը տեղից չէր փախչի և հետո տղաների լաստով կարող էինք գնալ: Իսկ դու սեփական նավատորմիղ ունենալու մասին էիր մտածում: Հետո կարծում ես «կենդանի անկյուն» ստեղծելը հասարակ բան է, հա՞... Դա, եթե ուզում ես իմանալ, մի լուրջ... այսպես ասած, հասարակական նշանակություն ունեցող նախաձեռնություն է: Դրա համար դպրոցում մեզ դեռ շնորհակալություն էլ կհայտնեին:

Թեպետ քարայրն իր առեղծվածային գաղտնիքներով ոչ մի կերպ դուրս չէր գալիս Սամի գլխից, բայց Սուրի այդ բովանդակալից ու խորիմաստ ճառից հետո նա վերջապես համաձայնեց հետաձգել իր որոշումը, մինչև որ գյուղի տղաների հետ անկեղծ ու կայուն բարեկամություն կհաստատեին:

...Եվ ահա մի առավոտ Սուրն ու Սամը վերցրին պահածոյի երկու դատարկ տուփ ու գնացին գյուղի եկեղեցին՝ մողեսներ որսալու:

Արևոտ, պայծառ առավոտ էր: Մի հաճելի զովություն էր տարածվել օդում: Մեղմ քամին հանդարտորեն օրորում էր կանաչ բարդիների սլացիկ կատարները: Մեղմաձայն խշշում էին գյուղի շուրջը սփռված ցորենի հասած արտերը, որոնք մայրամուտի բրոնզագույն ցոլքերով բռնկված ծովի նման ալիքվում էին:

Գյուղի գերեզմանատնից քիչ վերև, սևազգեստ վանականի նման փեշերը թավշածածկ կանաչի վրա փռած, կանգնած էր ցածրիկ պարսպով շրջափակված կիսաքանդ եկեղեցին: Տղաները բակ մտան:

Կանաչով ծածկված եկեղեցու լայն ու հարթ բակում արածում էին երկու հորթուկներ: Հորթուկներից քիչ հեռու պառկել էր տասից տասնմեկ տարեկան շիկահեր, պեպենոտ դեմքով մի տղա:

Բակի մեջտեղում կողք-կողքի կանգնած էին մամռոտած ժանգագույն խաչքարերը:

Հարյուրավոր տարիներ առաջ շնորհալի հայ փորագրիչները, մաշված-ոսկրացած ձեռքերով, իրենց սիրտն ու հոգին դրած մետաղյա բրիչների ծայրերին, օր ու գիշեր տառապալից և անքուն փորել-փորագրել, կյանք են տվել այդ անշունչ քարերին: Դարեր շարունակ հողմերն ու մրրիկները, անձրև կարկուտը ծեծել-ծեծկրտել են արդեն ծաղկատար դարձած մարդկային ձեռքի այդ հրաշալիքները՝ փորձելով ոչնչացնել դրանք: Բայց հակառակ բնության տարերքին, դեռ կանգուն են մնացել այդ բեկորները՝ մի ստեղծագործ ժողովրդի փառքն ու իմաստությունը վկայելու համար:

Սամը երկար ժամանակ ուշադրությամբ նայում էր պղնձագույն խաչքարերին, նրանց տակ փռված շիրմաքարերին ու փորձում էր կարդալ անհասկանալի մակագրությունները:
«Աստ հանգչի մարմինն իմաստասեր Բարսեղի, ծառա Հիսուսի Քրիստոսի, վախճանեալ ի օրն վարդավառա»: - Կարդաց նա դիմացը գտնվող քարի վրայի մակագրությունը, և ուսերը վեր քաշեց: Հեռվում, կանաչների վրա պառկած հորթապահ տղան, որ գլուխը վեր տնկած ակնապիշ նայում էր Սուրին ու Սամին, ձայն տվեց.
- Գրաբար է, դժվար թե հասկանաք...
Տղաները թողեցին խաչքարերն ու սկսեցին պտտվել եկեղեցու շուրջը: Մոտենալով կաղնեփայտ հաստ դռանը, նրանք կանգ առան: Հանկարծ Սուրը բացականչեց.
- Նայիր, Սամ, մողեսներ...
Պատի խարխլված քարերի արանքից, արագ ու կտրուկ շարժումներով, ներս ու դուրս էին անում չորսոտնյա սողունների այդ փոքրիկ ներկայացուցիչները:
Սամի աչքերը փայլեցին: Նա մի պահ ձգվեց տեղում, ապա ոտքերի ծայրերի վրա կամացուկ մոտեցավ պատին: Գորշագույն պատն ի վեր, գլուխը ցցած՝ արևկող էր արել մի հողագույն մողես: Արևից տաքացած քարը, երևի հաճելի թմրություն էր պատճառել սողունին և նա անշարժ ծեփվել էր պատին:
- Ամանը մոտ բեր, շուտ, - անհամբեր շշնջաց Սամը, բայց հազիվ էր նա ձեռքը մեկնել մողեսին, երբ Սուրը շտապելուց հանկարծ սայթաքեց ու փռվեց նրա ոտքերի տակ, իսկ մողեսը կայծակի արագությամբ թաքնվեց ճեղքի մեջ:
Սամը զայրույթից ծռմռեց դեմքը և լացակումած ձայնով ծղրտաց.
- Թյո՛ւ... էս ինչ արիր, հը՞... Ի՞նչ արիր: Ընձուղտի նման վեր ես ցցում դունչդ ու ոտքերիդ տակն էլ չես նայում:
- Իսկ դու մի՛ գոռա, իմացա՞ր: Ինքդ չես կարողանում բռնել, ուրիշին են մեղադրում:
Քիչ անց քարի արանքից դուրս եկավ մի ուրիշ մողես և քարացավ տեղում: Սուրի մթագնած ուղեղում «հանճարեղ» մի միտք փայլատակեց:
- Ապա մի կողմ քաշվիր, - գործնականորեն շշնջաց նա և տարօրինակ ձևով չռեց աչքերն ու միօրինակ սվվացնելով, դանդաղ առաջ գնաց: Բայց իզուր... Ոչ նրա չռված աչքերի գերբնական կախարդությունը, ոչ էլ բազմանշանակ սվվոցը չգրավեցին անիծյալ մողեսին: Նա փութկոտ ու վախեցած շարժումներով հետևեց իր ցեղակցի օրինակին:
Եվ այսպես, մեր երկու հերոսները երկար ժամանակ ապարդյուն փորձեր էին անում, բայց ոչ մի անգամ չէր հաջողվում գոնե մեկը որսալ:
Ի վերջո, տղաները ձանձրացան ու պատրաստվեցին տուն վերադառնալ: Բայց դեռ մի քանի քայլ չարած, Սամը, հեռվում ինչ-որ բան նկատելով, կանգնեց:
Գերեզմանատան կողքով անցնող նեղլիկ ճանապարհով գնում էր Շավարշը:
- Շավա՛րշ, հե՛յ, Շավարշ, - ձայն տվեց Սամը:
Նրա ձայնի վրա Շավարշը կանգ առավ, ետ նայեց և ուղղելով թևատակի փոքրիկ կապոցը, հանդարտ քայլերով եկավ դեպի տղաները:
- Ո՞ւր ես, Շավարշ, էլ գետափ չես գալիս, - մտերմագին ձայնով հարցրեց Սամը:
- Գործը շատ է, տղերք, հորս եմ օգնում: Մեղր քաշելու ամենաթունդ ժամանակն է, - պատասխանեց նա, ապա տղաների ձեռքների թիթեղյա ամանները տեսնելով, հարցրեց. - Էս ի՞նչ բանի եք:
Սամն իսկույն մի քանի կցկտուր բառերով պատմեց Շավարշին «կենդանի անկյուն» ստեղծելու իրենց մտադրությունը:
- Ուզում ենք մողես բռնել, բայց չենք կարողանում: Հենց ձեռքներս մոտեցնում ենք թե չէ, մեկ էլ տեսար հո՛պ... մտավ պատի մեջ:
- Չէ, էդպես չեք կարող, - ժպտադեմ ասաց Շավարշը, - դրանք էնպիսի պտուղ չեն, որ ձեռքով բռնվեն: Դրանց մի փալասի կտորով... Կամ հենց թեկուզ այ էդ ծղոտի գլխարկովդ կբռնենք:
Նա ձեռքի կապոցը ցած դրեց, վերցրեց Սամի լայնեզր գլխարկը ու դարանակալեց պատի մոտ: Զարմանալին այն էր, որ երկար ժամանակ Շավարշը նայում էր իր գլխավերևում կանգնած մողեսին,

բայց չգիտես ինչու, չէր պատրաստվում բռնել:
- Շավարշ, բռնիր, է, ախր կփախչի, - շտապեցրեց նրան Մուրը:
- Մի քիչ սպասեք, դեռ ժամանակը չի: Մողեսները միջատներ են ուտում: Նրանք ժամերով սպասում են, երբ պատի վրա ճանճ կամ մոծակ կնստի: Նա կզբաղվի միջատ բռնելով, իսկ ես էլ՝ նրան:
Անցան սպասումի երկար րոպեներ:
Եվ ահա Շավարշը դանդաղ վեր բարձրացավ պպզած տեղից Ու մեկ էլ հո՜պ... գլխարկը ուժեղ թմփացրեց պատին:
Տղաներն անհանգիստ իրար նայեցին:
Մողեսի տափակ, դեղնավուն գլուխը դուրս էր մնացել ճմրթված գլխարկի տակից: Նա անզոր ճիգերով փորձում էր դուրս պրծնել, բայց Շավարշը ժամանակ չտվեց նրան սթափվելու: Ամուր ու ճկուն մատներով բռնեց գերի ընկած սողունի գլխից և ժպտալով դարձավ տղաներին.
- Ամանը մոտ բերեք...
Սամը, պահածոյի տուփը ձեռքին, արագ մոտեցավ ու ձեռքը երկարեց մողեսի պոչին:
- Պոչից չբռնե՛ս, կպոկվի, - վրա պրծավ Սուրը:
Երբ մողեսն արդեն ապահով տեղավորված էր տուփի մեջ և ծածկված թիթեղյա կափարիչով, Շավարշը վերցրեց կապոցն ու ցածրաձայն ասաց.
- Դե ես գնամ, տղերք: Հորս հաց պիտի հասցնեմ: Մողեսներին չմոռանաք արևի տակ պահել, թե չէ կսատկեն: Հետո սատկած ճանճեր, որդեր լցրեք առաջները, որ ուտեն: Տղերքով Կաղնուտի անտառն ենք գնալու, թե կարող եք դուք էլ եկեք: Համ էլ ձեր էդ «կենդանի անկյունի» համար գուցե մի ուրիշ բան էլ կբռնենք: Կգա՞ք...
- Կգանք, Շավարշ, անպայման կգանք, - համարյա միաբերան պատասխանեցին նրանք:
Շավարշը գնաց:
- Տեսնո՞ւմ ես, - նրա գնալուց հետո ոգևորված ասաց Սուրը, - դու դեռ ասում էիր «երկուսով, հա երկուսով»: Տղաները գյուղի ամեն ծակուծուկին ծանոթ են, ինչքա՜ն բանով կարող են մեզ օգնել:
Սամը պատասխանի փոխարեն գոհունակ ժպտաց:

Գլուխ տասներկուերորդ. ԿԱՂՆՈՒՏԻ ԱՆՏԱՌԸ

- Չկա, տատ:
- Ո՞նց թե չկա:
- Չկա, էլի...
- Վերևում դրված էր, բա ի՞նչ եղավ էդ անտերը:
Նայեցի, չկար, - պատասխանեց Մանուշն ու թռչկոտելով գնաց:
Տատը ստիպված, տնքալով վեր կացավ ընկուզենու տակ փռված կարպետի վրայից և ալրոտ գոգնոցը թափ տալով, հացատուն գնաց: Խեղճ պառավը էլ տեղ չթողեց, որ ման չեկավ, բայց ալրամաղը չկար ու չկար:
- Անտերը հո երկինք չհամբարձվեց, - ինքն իրեն փնթփնթաց նա, դուրս եկավ հացատնից և աստիճաններով բարձրացավ վերև:
Իսկ վերևում այդ միջոցին ահա թե ինչ էր կատարվում:
Լուսամուտի գոգին դրված էր փոքրիկ ալրամաղը: Մաղի բերանը ամուր փակված էր հաստ ստվարաթղթով: Ցանցածածկ մաղի տակ տղաները վանդակել էին երկու հողագույն մողեսների՝ «կենդանի անկյան» առաջին բնակիչներին:
Սուրն ու Սամը ուրախ բացականչություններով վազվզում էին սենյակի մի ծայրից մյուսը և մեծ ջանասիրությամբ որսում պատերին նստած ճանճերին: Բռնված ճանճերին մաղի շրջանակի վրա բացված կլոր անցքից նրանք շտապ ներս էին խցկում, որից հետո անցքը իսկույն փակում էին թղթի խցանով: Մողեսներին կերակրելու հենց այդ եռուն պահին էր, որ դուռը բացվեց ու ներս մտավ տատը:
Նկատելով լուսամուտի գոգին դրված մաղը, նա միանգամից պայթեց.
- Ախ, դուք, անիծվածներ: Տաշտակից պրծաք, հիմի էլ հերթը մաղին հասավ, հա՞...

Տղաները տագնապով իրար նայեցին:
Տատը բարկացած մոտեցավ լուսամուտին և այն է ուզում էր մաղը վերցնել, երբ նրա մեջ ծվարած մողեսներին տեսնելուն պես, տեղում քարացավ:
- Էս ի՞նչ բան է: Խլեզներին ինչի՞ եք մաղի մեջ գցել: Մի սրանց տեսեք, ոնց են փչացրել մաղը: Հիմի ես ինչ անեմ, հը՞...
Տատի բարկությունը մեղմացնելու համար Սուրը սկսեց ինչ-որ անկապ-անկապ բառեր կմկմալ:
- Ա՛յ տղա, բոյիցդ գոնե ամաչի: Հորդ շալվարն էլ վրեդ կարճ է գալիս, բայց գլխումդ խելքի կտոր չկա:
- Մի բարկանա, տատ: Ախր դպրոցի համար է: Աշակերտները սրանցով դաս պետք է սովորեն, - աղերսագին բացատրում էր Սուրը:
- Դու իմ աչքին թոզ մի փչի: Բա խլեզներով դաս կսովորվի՞:
Տղաները ձեռք ու ոտք ընկած, բացատրում էին տատին, թե ինչ նշանակություն ունեն մողեսները, ինչի՞ համար են նրանք պետք գալիս դպրոցին: Այդ բոլորից հետո Նոյեմզար տատը վերջապես համոզվեց... ասենք, ոչ թե համոզվեց, այլ պարզապես տեսնելով մաղի անմխիթար վիճակը, հույսը կտրած, ձեռքը թափ տվեց ու գնաց:
- Լսի՛ր, Սամ, - երկար լռությունից հետո ասաց Սուրը, - մենք բոլորովին մոռացել ենք... Ա՛խ, ինչպես ենք մոռացել:
- Ինչը՞...
- Այսօր Կաղնուտի անտառը պետք է գնանք: Տղաները սպասում են, իսկ մենք այստեղ ճանճեր որսալով ենք զբաղված:
- Դե՛ շուտ, որ էդպես է՛ սրանք հավաքենք, նոր...
Տղաներն արագ գործի անցան: Եվ որպեսզի մողեսները լավ զգան իրենց, մաղը նախ ցախատան արևոտ կտուրը տարան, ապա սկսեցին ճանապարհի պատրաստություն տեսնել:
Սամը նորից մեջտեղ բերեց իր ճամփորդական իրերով լի նշանավոր պարկը, հանեց նետերն ու աղեղները և մեկնեց Սուրին.
- Բռնիր...
- Այս ի՞նչ է: Սրանք էլ պետք է հետներս քարշ տա՞նք:
- Սրանք, էսպես ասած, հանդիսավորության համար են: Հետո, ասենք, դու որտեղ ես տեսել, որ իսկական ճանապարհորդներն առանց զենքի անտառ մտնեն: Էն էլ Կաղնուտի նման անտառը (թեև ինքը դեռ չէր տեսել): Ո՞վ գիտի, ինչեր կարող են պատահել: Ասենք, մեկ էլ տեսար, հո՛պ... ծառի վրայից դիմացդ վայրի կատու ցատկեց, իսկ զենքեր չկա՛ն... Դե հիմա արի ու սպասիր, որ նա իր սուր ճանկերով քրքրի քո երկար մարմինը: Կամ էլ հենց թեկուզ...
Եվ Սամը ոգևորված սկսեց Կաղնուտի անտառը լցնել այնպիսի գիշատիչ գազաններով, որոնց միայն ջունգլիներում կարելի է հանդիպել:
Սուրն, իհարկե, շատ լավ գիտեր, որ Կաղնուտի անտառում նապաստակ անգամ հազիվ է պատահում, ուր մնաց թե վայրի կատու: Նա հասկանում էր, որ այդ բոլորը Սամի երևակայության արդյունքն է միայն, բայց վերջինս այնպես տպավորիչ ու սարսափելի ձևով էր նկարագրում անտառը, որ Սուրը վախից ցամաքել էր կանգնած տեղում:
Եվ ահա, Սամի այս սարսափելի նկարագրությունները վերջացան նրանով, որ նա ընկերոջ շալակը տվեց զանազան մետաղյա իրերով լցված պարկը, որի անտանելի ծանրությունից Սուրն ամբողջ ճանապարհին օրորվում էր ու շարունակ փնչացնում:
Գետափին սպասում էին Շավարշը, Թլոն և էլի երկու տղաներ: Նրանք երկար սպասելուց ձանձրացած, արդեն պատրաստվում էին լաստով գետի մյուս ափն անցնել, երբ վերջապես հայտնվեցին Սուրն ու Սամը:
Երբ տղաները տեսան նրանց ուսերից կախված նետ ու աղեղները և Սուրի մեջքին տռզած պարկը, հետաքրքրված շրջապատեցին:
- Այ թե բեռնվել եք, հա՛, - կատակով ասաց Թլոն, - կարծես աշխարհի ծերն եք գնալու:
- Բա էս նետ ու աղեղներն ինչի՞ համար են, - ավելացրեց Շավարշը, - երևի անտառում թատրոն ենք խաղալու, հա՞:

- Ի՞նչ թատրոն: Սամը սրանով գիշատիչներ պետք է որսա, - տնքալով պատասխանեց Սուրը:
Տղաները ծիծաղեցին: Ակամայից ծիծաղեց և Սամը:
- Բավական է, - բարկացած բղավեց Սուրը և ըմբոստ շարժումով ծանր պարկը ուսից ցած գցեց, - բավական է ինձ հիմարի տեղ դնես: Մեջքս կոտրվեց, իսկ դու հանգիստ կանգնած հռհռում ես: Սրանից հետո ինքդ կշալակես քո այդ անիծյալ կաթսան և ժանգոտած դանակներն ու գդալները:
Պարկի պարունակությունն իմանալուց հետո տղաները զարմացած միմյանց նայեցին: Իսկ Շավարշն ասաց.
- Դե լավ, Սուր... Մի տաքացի: Ա՛յ, քիչ հետո անտառից սունկ կհավաքենք: Իսկ սունկը եփելու համար կաթսան ու գդալները մեզ պետք կգան: Պարկն էլ ես կտանեմ, մենակ թե կռիվ մի արեք, լա՞վ... Դե՛, գնացինք:
...Լաստը հասավ մյուս ափը: Թլոն պարանի ծայրը կապեց ափին ընկած մի մեծ քարից, և նրանք մտան Կաղնուտի թավ անտառը:

***

Չորացած տերևներով ու խոտերով ծածկված նեղլիկ կածանով քայլում էին տղաները դեպի անտառի խորքը:
Արևի պայծառ ճառագայթները ծառերի խիտ սաղարթների արանքից լուսավորում էին թափանցիկ մշուշով պարուրված անտառը: Մեղմ քամին հանդարտորեն օրորում էր մասրենիների, վայրի վարդենիների փոքրիկ ու նուրբ տերևները: Կարճլիկ, ցանցառ թփուտների միջից ասես գլխով էին անում գեղեցիկ ու նազելի հովտաշուշանները: Օդը լցվել էր թռչունների ուրախ ծլվլոցով, խոտերի մեջ թաքնված ծղրիդների միալար ճռճռոցով: Անտառային այս կախարդիչ համերգը մերթ ընդ մերթ ընդհատվում էր կիսախավար թավուտից լսվող փայտփորիկի խուլ տկտկոցներով: Ամեն ինչ այնպե՛ս խորհրդավոր էր, այնպե՛ս գրավիչ, որ Սամը հիացմունքից բերանը լայն բացած՝ նայում էր շուրջն ու թեև մենակ չէր, բայց նրա սիրտը լցված էր ինչ-որ անբացատրելի, անորոշ մի ահով, որը միշտ էլ համակում է մարդուն՝ անտառ մտնելիս:
Գեղեցիկ էր Կաղնուտի անտառը, վեհ ու հանդիսավոր: Այստեղ ծառերն ավելի սաղարթախիտ էին ու բարձր, թփուտներն ու մացառներն՝ ավելի շատ, այդ պատճառով էլ անտառը խիտ էր և համարյա անանցանելի:
Սուրը, որ քայլում էր Շավարշի ետևից, հանկարծ կանգ առավ ու զարմացած բացականչեց.
- Վա՛յ... մի այստեղ նայեք:
Տղաները հետաքրքրված իսկույն շրջապատեցին նրան: Կեչու ներքևի ճյուղից, մետաքսաթելից կախված, ցած էր սահում մի մեծ դարչնագույն սարդ: Անտառային այդ գիշատիչ միջատը մի քանի անգամ մեծ էր սովորական սարդերից:
- Ձեռք չտաս, - զգուշացրեց նրան Սահակը, - դա քո տեսած սարդերից չէ, որ կծեց, պրծավ... Ձեռքդ էնքան կքորես, որ կաշիդ կպլոկվի:
Սուրը սարսափած ետ թռավ: Բոլորը ծիծաղեցին:
Սարդը գետին իջավ, թե չէ, Սահակը ոտքը դրեց վրան ու տրորեց:
Տղաները շարունակեցին իրենց ճանապարհը: ... Սուրն ու Սամը որքան խորանում էին անտառի մեջ, այնքան ավելի ու ավելի էին հրապուրվում բնության հրաշալիքներով:
Վերջապես խիտ ու համարյա անանցանելի թավուտը կամաց-կամաց սկսեց նոսրանալ: Անտառածածկ բլրակն անցնելուց հետո տղաները դուրս եկան լայն ու արևոտ մի հարթ տարածություն, որը չորս կողմից շրջապատված էր կարճլիկ ու փարթամ թփուտներով: Թփերի մեջ ամենուրեք սևին էր տալիս քաղցր ու հյութալի մոշը: Մոշուտի բացատն էր դա:
Բացատի արևելյան կողմում, միայնակ կանգնած հաստաբուն ուռենու ստվերում խոխոջում էր մի զուլալ աղբյուր: Տղաներն աղբյուրի մոտ ցած դրին իրենց իրերը և արագ-արագ դեպի մոշի թփուտները վազեցին: Սրանք այնքան կերան այդ համեղ, սև թթի տեսք ունեցող անտառային հատապտուղներից, որ քիչ հետո նրանց մատներն ու շրթունքները թանաքի գույն ստացան:

Տղաներն անտառից բավականին սունկ էին հավաքել: Քիչ անց սառնորակ աղբյուրի մոտ նրանք մի փառավոր խարույկ վառեցին: Սունկերը լցրին Սամի երկկանթանի կլորիկ կաթսայի մեջ և կախ տվին կրակի վրա:
- Մինչև եփվի, եկեք մի լավ բան խաղանք, - առաջարկեց Սամը:
- Ի՞նչ խաղանք, - այս ու այն կողմից հարցրին տղաները:
- «Հնդիկ-հնդիկ»:
- Էդ ի՞նչ խաղ է, Սա՛մ, - զարմացավ Շավարշը:
- Շատ լավ խաղ է... Ո՛ւխ, էնպիսի խաղ է, ո՛ր... - ոգևորված ոտքի թռավ Սամը:
Տղաները պետք է բաժանվեին երկու խմբի: Ամեն մի խումբ պետք է ընտրեր իր ցեղապետը: Ցեղապետերը վիճակ պետք է գցեին, թե որ խումբն է ստանալու նետաձգությունն առաջինը սկսելու իրավունքը: Հետո պայմանավորված հեռավորությունից նրանք նետերով նշանառության տակ էին վերցնելու որևէ ծառի բարակ բունը: Որ խումբը գերազանցեր մյուսին, նա էլ կստանար հաղթողի պսակը:
- Բա հաղթվածները էդպես էլ անպատիժ պիտի մնա՞ն, - հարցրեց Թլոն:
- Պարզ է: Նրանց պետք է գլխատել, - ինքնավստահ տոնով հաստատեց Սուրը:
- Հենց բանն էլ այն է, որ չեն գլխատի: Գլխատելն ի՞նչ մեծ բան է, որ... Գլուխները կտրեցիր թե չէ, շունչներն իսկույն կփչեն և խաղն էլ հետաքրքիր չի վերջանա: Ա՛յ, մի ուրիշ բան կա, որ ավելի հետաքրքիր է: Գիտեք ինչ, տղաներ... Հաղթվածները, ը՛ը... - Սամն այստեղ մտածեց-մտածեց և ապա ավելացրեց, - դե, հասկանալի է, հաղթվածներն ուզած-չուզած պիտի թողնեն, որ թշնամիներն իրենց վրա հալած ձյութ լցնեն ու հետո ամուր կապեն ծառերից: Նրանք կտանջվեն, իսկ հաղթողները, ը՛ը... դե, հաղթողներն էլ կնստեն կոկորդիլոսների արյունով շաղախված կարկանդակներն անուշ անելու:
- Այ թե օյիններ կարող ես մոգոնել, Սա՛ մ, - ծիծաղեց Շավարշը:
-Լավ, ասենք, կարկանդակը կարկանդակ, բայց ինչո՞ւ հատկապես կոկորդիլոսի արյունով, - հարցրեց Սուրը:
- Գիտեք, տղաներ, դա ուղղակի քաջության նշան է: Հին ժամանակներում կարմրամորթ հնդիկները քաջության համար էդպիսի կարկանդակներ են կերել, - արագ հորինեց Սամը:
- Այ թե խաղ է, հա՛: Սրանից հետո մենք ամեն օր կխաղանք, - ուրախացան Մուկուչն ու Սահակը:
Երբ տղաները ոգևորված ոտքի կանգնեցին խաղը սկսելու համար, Սուրը մի կողմ քաշեց Սամին ու ականջին փսփսաց.
- Լսիր: Չնայած դա խելքի մոտ բան է, բայց ասա, Սա՛մ, դու այդ նոր հնարեցիր, չէ՞:
- Ինչը՞...
- Կարկանդակները:
Թեև Սամը պատճառաբանեց, որ իբր այդ սովորությունը եղել է կարմրամորթ հնդիկների մեջ, այնուամենայնիվ, Սուրը մնաց այն համոզման, որ կոկորդիլոսների արյունով շաղախված կարկանդակներ ուտելն իր ընկերոջ բորբոքված երևակայության հերթական ստեղծագործություններից մեկն էր:
Եվ ահա սկսվեց «հնդիկ նետաձիգների» կատաղի մրցությունը: Խաղը գնալով աշխուժացավ: Տղաներն այն աստիճան տաքացան, որ իսպառ մոռացության տվին աղբյուրի մոտ մարմրող խարույկն ու նրա վրա կախված սունկերով լի կաթսան:
Մրցողների ուրախ քրքիջներից ու հարայհրոցներից թնդում էր անտառը:
Եվ քանի որ մեր պարտվողներից ոչ մեկն, իհարկե, չէր համաձայնի իր թշվառ մարմինը խաշել հալեցրած կուպրով, ուստի Շավարշն առաջարկեց ձյութի փոխարեն նրանց երեսները մոշի թանաքագույն հեղուկով սևացնել:
Յուրաքանչյուր խումբ մի քանի անգամ հաղթեց և նույնքան էլ պարտություն կրեց: Տղաներն այնքան կրկնեցին այդ ուրախ, հետաքրքիր խաղը, որ նետերն ու աղեղները լրիվ դուրս եկան շարքից, իսկ նրանց երեսներին այլևս ոչ մի մաքուր տեղ չմնաց, որպեսզի նորից հնարավոր լիներ սևացնել:

Եվ, որովհետև աշխարհում հազիվ թե կոկորդիլոսների արյունով շաղախված կարկանդակներ գտնվեին, ուստի մեր քաղցած «հնդիկները» բավարարվեցին նրանով, որ ագահաբար խփշտեցին կիսաեփ սունկերը: Իսկ մի քանի րոպե հետո դրանից նրանց փորներն այնպես սաստիկ սկսեցին ցավել, որ տղաները երկար ժամանակ գալարվում էին խոտերի վրա:
Երբ ցավերը մեղմացան, նրանք հանգցրին մոխրի տակ դեռևս առկայծող հատուկենտ կրակները և նորից մեկնվեցին փափուկ խոտերի վրա՝ ուժեղ փորացավից հետո մի փոքր հանգստանալու:
- Տղերք, - խոսեց Շավարշը, - ուզո՞ւմ եք, եկեք վաղը քարայր գնանք: Դուք էդպիսի քարայր տեսած չեք լինի: Էնքան ծակուծուկ կա՛, որ մեջն ընկնեք, կկորչեք:
Քարայրի անունը լսելուն պես Սամի սիրտը անհանգիստ թպրտաց:
- Հիշո՞ւմ ես, Շավարշ, - անհամբեր վրա բերեց նա, - դու մի անգամ ասացիր, որ էդ քարայրում գերեզման կա, ճի՞շտ է...
- Իհարկե, կա, բայց հո քարայրի մեջը չի:
- Իսկ ո՞ւմ գերեզմանն է...
- Մի ուսուցչի... - արագ վրա տվեց Մուկուչը:
- Էլի մեջ ընկար, սպասիր, էլի՛, - սաստեց նրան Շավարշը և, մեջքը հենելով ուռենու հաստ բնին, հանդարտ սկսեց... - Ուրեմն, տղերք, բանը էսպես է եղել: Հերս պատմում էր, որ երբ ինքը ջահել տղա է եղել, քաղաքից մի ուսուցիչ է եկել մեր գյուղը: Դե, էդ ժամանակներն էլ խառը ժամանակներ էին:
Մի գիշեր, երբ հերս անտառով ներքևի գյուղից տուն վերադառնալիս է եղել, մի էսպիսի ուժեղ անձրև է բռնել, որ ասես երկնքից կժերով ջուր թափելիս լիներ: Լավ է, որ քարայրը մոտիկ է լինում: Հերս իրեն մի կերպ գցում է քարայրը ու սպասում մինչև անձրևը կտրվի: Բայց մեկ էլ հանկարծ քարայրի խորքից ի՞նչ լսի...
Այստեղ Մուկուչը նորից մեջ ընկավ:
- Կրակոցներ...
- Տո պապանձվի, էլի՛... Կրակոցներ հա կրակոցներ Որ բան չգիտես, անպոչ գդալի պես մեջ մի ընկնի, - արմունկով հրեց նրան Թլոն:
- Հետո, Շավարշ, հետո, - իրար խառնվեցին Սուրն ու Սամը:
- Հետո, ուրեմն, ի՞նչ լսի: Մի սարսափելի տնքո՛ց, մի սարսափելի տնքո՛ց, որ էլ չասած: Ճիշտ է, հերս ջահել, ուժեղ տղա է եղել, թուրը որ բերանը տանեիր, աչքը չէր թարթի: Բայց էդ ժամանակ սիրտը մի տեսակ ահ է ընկնում: Դե գիշեր, քարայրը մութ... էնքան մութ, որ մատդ մարդու աչքը տանեիր, չէր տեսնի, տնքոցներն էլ մի կողմից: Մի խոսքով, որ հերս տնքոցները լսում է, վառում է լուցկին ու ի՞նչ տեսնի... Մեկը հազիվհազ սողում է դեպի իրեն: Հերս էս անգամ գրպանից թուղթումուղթ է հանում, վառում: Ասես քարայրը գլխին փուլ է գալիս... Իր ոտների մոտ, արնի մեջ շաղախված, ընկած է մեր գյուղի ուսուցիչը: Հերս գրկում, բարձրացնում է նրան գետնից ու թե՝ «Ի՜նչ է պատահել, վարժապետ... էս ի՞նչ արյուն է»: Սա որ հորս ձենը լսում է, աչքերը բաց է անում: «Գևորգ, դո՞ւ ես...», - հազիվ ասում է նա ու հենց հորս ձեռքերի վրա տեղնուտեղը...
Տղաները հառաչեցին:
- Ուրեմն, - շարունակեց Շավարշը, - որ սա հոգին տալիս է, հերս թողնում է նրան քարայրում ու գժի նման, անձրևի, ցեխի միջով վազում է գյուղ՝ լուր հասցնելու: Ամբողջ գյուղը իրար է խառնվում: Քաղաքից մարդիկ են գալիս, ստուգում, սրան քննում, նրան քննում, բայց սպանողը չկա ու չկա:
Մի խոսքով, ուսուցչին թաղում են հենց քարայրի մուտքի մոտ, որտեղ իրեն սպանել էին: Նրա խեղճ մերն էլ ամեն օր գալիս, մտնում է քարայրը, վաշ-վիշ անում ու հառաչում: Վերջն էլ հարս ու թոռների հետ մղկտալով վերադառնում է քաղաք:
Շավարշը վերջացրեց իր պատմությունը: Տղաները երկար ժամանակ մռայլ ու լուռ նայում էին իրար ու նրանց սրտերում այդ պահին ալեկոծվում էր անզուսպ կատաղությունը:
- Տղաներ, իմ մտքով մի բան անցավ: Եկեք քարայրին մի էսպիսի անուն դնենք, որ մարդիկ միշտ էլ հիշեն էդ տխուր դեպքը, - առաջարկեց Սամը:
- Ի՞նչ անուն, - միաբերան հարցրին բոլորը:

- Ա՛յ, Շավարշն ասաց, որ ամեն անգամ քարայր էր գալիս սրա խեղճ մայրը ու հառաչո՛ւմ, հառաչո՛ւմ... Եկեք էդ քարայրը հենց էդպես էլ անվանենք «Հառաչանքի քարայր»: Համաձա՞յն եք:
- Համաձայն ենք, համաձայն ենք... - պատասխանեցին տղաները:
Արևն արդեն դանդաղ մայր էր մտնում: Ծառերի սաղարթները բոցավառվել էին մայրամուտի բոսորագույն շողերով:
Տղաները վեր կացան:
Նրանք դեռ նոր էին հավաքել իրենց իրերը, երբ ծառերի ետևից ինչ-որ բարձրաձայն խոսակցություն լսվեց.
- Չեմ թողնի... Նախագահ չէ, նախագահի աստվածն էլ գա, չեմ թողնի...
- Կթողնես... Պար գալով կթողնես:
- Ա՛յ մարդ, բա ձեր փորում խղճի կտոր չկա՞... Ձեր ձեռը ո՞նց է գնում, որ ուզում էք էս մատղաշ ծառերը կտրել: Չէ՛, Սմբատ, էդ լինելու բան չի:
- Ինչի, հորդ անտա՞ռն է:
Ծառերի ետևից դուրս եկան խոսողները: Մեկը ծերունի անտառապահ Համբարձումն էր, իսկ մյուսը՝ գյուղի պահեստապետը: Հենակավորին տեսնելուն պես Սամը մի պահ նայեց Սուրին:
- Դե լավ: Իմ անունը Սմբատ չլինի, թե քո պնչերից չհանեմ, - սպառնալից ավելացրեց հենակավորն ու հեռացավ անտառամիջյան նեղլիկ կածանով:
- Թյո՛ւ, ես քո մարդ ասողի... - բարկացած թքեց նրա ետևից ծերունի անտառապահը:
Տղաները շրջապատեցին նրան:
- Ի՞նչ է պատահել, քեռի Համբարձում: Ի՞նչ էր ուզում քեզանից էդ Սմբատը, - հետաքրքրվեց Թլոն:
Ծերունին ուսից ցած բերեց հրացանը, նստեց մի կոճղի վրա ու սրտնեղած թափ տվեց օձիքը:
- Կերավ, կերավ մեր հոգին էդ ոչուփուչ եղածը: Տո, բա վերջը էդ սաթայելից պրծում չպիտի լինի՞... Ա՛յ մարդ, էս էլ քանի անգամ դրա պահեստում խարդախություն բռնեցին, բայց նորից ձեռքներից ձկան նման դուրս պլստաց, էլի՞: Երեկ էլ Սուքիասենց Մուխայելին ուղարկել է, թե՝ գնա բահի պոչացու կտրի: Առավոտը անտառով անց կենալիս տեսնեմ էդ աննամուս Մուխայելը կացինն առել, ընկել է մատղաշ ծառերին: Որ չտեսա, ծառերի փոխարեն սիրտս կտոր-կտոր եղավ: Ասում եմ, ա՛յ անխիղճ, ինչի ես կանաչ ծառերը կտրում, սա թե՝ պահեստում հարյուր հատ անպոչ բահ կա, Սմբատն ուղարկել է, որ դրանց համար պոչացու կտրեմ: Սուտ... Ի՞նչ բահ:
Պահեստի անունով կտրում է, որ տանի էդ փուչ փչացած Սմբատի այգուն ցանկապատ քաշի:
Ծերունին դեռ խոսքը չէր ավարտել, բացատի ծայրից ականջ ծակող ճղղոց լսվեց, որն իսկույն փոխվեց թույլ վնգվնգոցի:
- Մոշուտի ծերին թակարդ եմ դրել, վայ թե աղվես ընկավ մեջը, - ասաց նա ու ոտքի կանգնեց:
Այդ լսելուն պես տղաներն ուրախ աղմուկով առաջ վազեցին: Եվ մինչ ծերունի անտառապահը կհասներ նրանց ետևից, տղաներն արդեն շրջապատեցին բացատի ծայրին գտնվող փոքրիկ հողաթումբը: Հողաթմբի տակ փորված խոր ու կլոր անցքի առջև դրված թակարդի մեջ հուսահատ թպրտում էր աղվեսի մի փոքրիկ ձագ: Նրա ետևի ոտքը մնացել էր իրար սեղմած երկաթյա երկու կիսաօղակների արանքում և խեղճ կենդանին կըզմըզտում էր ցավից: Հավաքվածներին տեսնելով, նա մի այնպիսի սրտաճմլիկ վայնասուն բարձրացրեց, որ խղճահարությունից Սամի աչքերը նույնիսկ ջրակալվեցին:
- Է՛հ... Որ խելքը գլխին բան լիներ, հո էսքան շուտ թակարդը չէր ընկնի, - հուսահատ ասաց անտառապահն ու անտարբերությամբ ձեռքը թափ տվեց:
- Թե որ քեզ պետք չի, պապիկ, ինչ կլինի մեզ տուր, հա՞, - անհամբեր վրա տվեց Սամը:
- Ախր դուք սրան չեք կարող պահել, կփախչի:
- Չի փախչի: Մենք նրա համար վանդակ կպատրաստենք և նա չի փախչի, - վրա բերեց Սուրը:
- Ճիշտ է, քեռի Համբարձում, տուր, էլի, - միջամտեց Շավարշը, - տղաները դպրոցի համար «կենդանի անկյուն» են սարքում, բայց կենդանիներ չունեն:
Եվ ահա, ծերունի անտառապահն առանց ավելորդ չեմուչումների, երկաթյա օղակների արանքից դուրս հանեց փոքրիկ աղվեսի ոտքը և ժպտալով մեկնեց տղաներին:

Սուրն ու Սամը ուրախությունից քիչ մնաց խելքները թռցնեին:
- Ձեզ լինի, էս էլ ինձանից... էն ոնց ասիք, է...
- Կենդանի անկյուն, - իսկույն ավելացրեց Մուկուչը:
- Հա՛, հա՛... ինձանից ձեր էդ կենդանի անկյունին նվեր:
Բոլորը ծիծաղեցին:
- Խեղճի ոտքը քիչ վնասվել է, բայց ոչինչ, որ լավ պահեք, կլավանա, - ասաց անտառապահը, հրաժեշտ տվեց տղաներին ու գնաց:

Գլուխ տասներեքերորդ. ՆԱՎԱԿՈՒՄ ՄԱՐԴ ՉԿԱ

Այն օրվանից, ինչ Սուրն ու Սամը մտերմացան գյուղի տղաներին, նրանց հետ այլևս ոչ մի ձախորդություն չէր պատահում, դեռ ավելին, ինչ գործ որ բռնեին, զարմանալիորեն բարեհաջող էր վեր- ջանում: Ամենից ուրախալին այն էր, որ նրանց երազած «կենդանի անկյունը» օրեցօր ավելանում էր նորանոր բնակիչներով: Բավական է կարդաք Սուրի ձեռքով գրած այս օրագիրը և դուք դրանում կհամոզվեք:

3 հուլիսի

Այսօր Սամը նորից սկսեց գլուխս ցավեցնել, որ ես մանրամասն գրի առնեմ, թե ինչպես ստեղծվեց մեր «կենդանի անկյունը»: Հետաքրքիր տղա է այդ Սամը: Հենց որ գլուխը մի բան մտավ, էլ նրանից պրծում չկա: «Օրագիր, հա՛ օրագիր... »: Ախր, աղվեսների ու մողեսների ինչերին է պետք օրագիրը:
Ես նրան ասում եմ.
- Սամ, ավելի լավ է օրագրի փոխարեն արի վանդակների վրա փոքրիկ ցուցանակներ կպցնենք ու վրաները գրենք ամեն մի կենդանու բռնելու տեղն ու ամսաթիվը և դրանով էլ գործը կվերջանա:
Իսկ նա, թե՝
- Սա, ախպերս, կատակ բան չի: Մենակ ցուցանակով ոչինչ դուրս չի գա: Այսպիսի նախաձեռնության մասին ոչ թե օրագիր, այլ մի ամբողջ գիրք կարելի է գրել:
Ասենք, Սամը ճիշտ է ասում: Իսկական «կենդանի անկյան» ստեղծելը բույսերի ու ծաղիկների հավաքածուներ հավաքել չի:
Կեսօրին մեկ մոտ եկան Թլոն, Մուկուչն ու Սահակը: Սահակն իր հետ բարակ երկաթալարի մի մեծ կծիկ էր բերել: Բոլորս եռանդով գործի կպանք: Մինչև մորաքույր Մարթայի գալը, մենք աղվեսի համար, որի անունը Դեղնամպիկ էինք դրել, լայն ու ընդարձակ վանդակ պատրաստեցինք: Բայց վատն այն էր, որ Դեղնամպիկն իր նոր բնակարանում առաջվա նման տխուր էր ու խեղճացած: Նա կուչ էր եկել վանդակի մի անկյունում և ուլունքների նման կլոր ու փայլուն աչքերը վախեցած հառել էր մեկ վրա: Մենք նրա առաջ հաց ու միս էինք դրել, բայց Դեղնամպիկը ոչ մի բանի չէր մոտենում: Միայն մեկ-մեկ սուրուլիկ դունչը երկարում էր դեպի ջրամանը և իր կարմիր լեզուն հանելով՝ չփչփացնում ջուրը:
- Չէ՛...իպուր բան է: Մեր Դեղնամպիկը չի ապրի, ա՛յ կտեսնեք, չի ապրի, - հուսահատ կրկնում էր Սամը:
- Մի վախեք, տղերք, - ասում է Սահակը, - սա որ սկսեց ջուր խմել, էլ սատկողը չի...
Բայց Ես ու Սամը բոլորովին հույսներս կտրել ենք:

4 հուլիսի

Ուռա՛... Սահակը ճիշտ էր ասում: Առավոտյան վեր կենանք ու ի՞նչ տեսնենք: Դեղնամպիկը մեծ ախորժակով ուտում է երեկվանից մնացած մսի կտորը: Իսկ մի ժամ հետո նա արդեն կամաց-կամաց, կաղալով ման էր գալիս վանդակում: Մենք ուրախացած վազ տվինք տղաներին լուր հասցնելու:

5հուլիսի

Այսօր Դեղնամպիկն իրեն արդեն բոլորովին լավ է զգում: Նա նույնիսկ լպստում է իր վնասված ոտքը: Մի խոսքով, ամեն ինչ կարգին է: Ասենք, իսկի էլ կարգին չի: Այսօր էլ մողեսները լավ չեն զգում իրենց: Առավոտվանից կպել են մաղի հատակին ու չեն շարժվում:
- Երևի ծարավից շշմել են, - ասում է Սամը, - ախր, մենք բոլորովին աչքաթող ենք արել սրանց: Ամբողջ ժամանակ Դեղնամպիկով ենք զբաղված, իսկ մողեսների մասին չենք էլ մտածում:

- Իսկ ի՞նչ կա մտածելու որ. . . Ուտելու բան ունեն, ուրիշ էլ ինչ է հարկավոր նրանց: Մաղի մեջ այնքան ճանճ ու սարդ ենք լցրել, որ իսկի տեղ էլ չկա շարժվելու: Իսկ ջուր նրանց պետք էլ չի. միջատների հյութով էլ կարող են իրենց ծարավը կոտրել:
Բայց Սամը նորից իր ասածն է պնդում.
- Միջատը միջատ, բայց ջուր նրանց անպատճառ հարկավոր է:
- Բոլորովին էլ հարկավոր չի. . .
- Իսկ դու որտեղի՞ց գիտես, որ հարկավոր չի:
Մեկ է, ինչքան ուզում ես բացատրիր, բայց Սամին չես համոզի: Այդ բոլորը կենդանաբանության դասագրքում եմ կարդացել, իսկ նա կարծում է, որ ես ինձանից եմ հնարում: Լավ էր հենց այդ միջոցին բակ մտավ Շավարշը, թե չէ Սամն արդեն պատրաստվում էր ջրով ողողել մոդեսներին:
Երբ Շավարշն էլ իմ ասածը հաստատեց, Սամը վերջապես համոզվեց ու ձեռք քաշեց ջրից:
- Լա՛վ, բա ինչի՞ չեն շարժվում, - հարցրեց նա:
- Ախր, տղերք ջան, մոդեսները տաքություն շատ են սիրում, - բացատրեց մեկ Շավարշը, - արև որ չի լինում, նրանք էդպես շշմում, մնում են տեղները սառած:
Այ քեզ նորությո՛ւն... Ասենք, ճիշտ որ... Այսօր երկինքն առավոտվանից ամպոտ է և արևի ոչ մի շող չի երևում: Դեռ գուցե անձրև էլ գա: Դրա համար մենք վանդակներն իսկույն վերև տեղափոխեցինք ու Մանուշակին էլ ասացինք, որ նա հսկի մինչև մեր գալը: Տատիկն, իհարկե, հանդ էր գնացել, թե չէ նա վանդակները լուսամուտից վաղուց դուրս շպրտած կլիներ:
Մանուշը մնաց վանդակների մոտ, իսկ մենք գնացինք տեսնելու, թե Շավարշի հայրիկն ինչպես է մեղր քաշում:

6 հուլիսի

Առավոտյան, ցախատան փայտերի արանքներում մենք պատառոտված գրքերի մի քանի հնամաշ կազմեր գտանք և դրանցից փոքրիկ ցուցանակներ կտրտեցինք: Ցուցանակների վրա ես ջրաներկով գրեցի մոդեսներին ու Դեղնամազիկին բռնելու տեղն ու ամսաթիվը, հետո փակցրի նրանց վանդակներին, դե ինչպես իսկական կենդանաբանական այգիներում է լինում: Սամն այսօր կարդաց օրագիրն ու ոգևորված ասաց.
- Ո՛ւխ, այ թե գրել ես, հա՛... Էսպիսի օրագիր իսկի մեր դասարանի բանաստեղծ Գագիկն էլ չի կարող գրել:
Դե ես գիտեմ, որ Սամը սիրում է ամեն ինչ ուռացնել, թե չէ ինչ մի բան է որ. . . Այսպիսի օրագիր բոլորն էլ կգրեն:
Կեսօրին ուժեղ շոգ սկսվեց: Արևն այնպես էր վառում, որ նույնիսկ Դեղնամազիկը կախ էր գցել կարմիր, բարակ լեզուն ու հևում էր: Մենք որոշեցինք գնալ գետափ և մի լավ լողանալ: Նոր էինք բակից դուրս եկել, երբ հեռվում նկատեցինք Շավարշին: Նա երկու ձեռքով ինչ-որ բան բռնած, շրջապատված գյուղի փոքրիկ երեխաներով, դեպի մեզ էր գալիս:
- Տղերք ջան, թե իմանաք ձեզ համար ի՞նչ եմ բերել, - խորհրդավոր ձևով ասաց նա, գետնին դրեց փալասի կտորով փաթաթված անհասկանալի առարկան ու հանդիսավորությամբ բաց արեց:
Փալասի վրա կուչ էր եկել մի փոքրիկ ոզնի: Ես ու Սամը ուրախությունից չէինք իմանում ինչ անել: Ինչպես շնորհակալություն հայտնել նրան այդ թանկագին նվերի համար: Սամը գլուխը կորցրած, անհամբերությամբ երկու ձեռքով բռնեց ոզնուն, բայց ասեղների նման սուր-սուր փշերը ծակեցին մատները և նա վախ-վուխ անելով ետ թռավ:
Երեկոյան, երբ մորաքույր Մարթան տեսավ ոզնուն, բարկանալու փոխարեն ծիծաղելով ասաց.
- Դե, էլ ինչ եք ուզում: Մինչև քաղաք գնալներդ իսկական գազանանոց կունենաք:
Ինչպես երևում է մորաքույր Մարթան անչափ գոհ է մեր «կենդանի անկյունը» կազմակերպելու համար, որովհետև նա ասաց, որ այդ օգտավետ զբաղմունքի մասին անպայման նամակով կհայտնի հայրիկին:
Միայն տատիկն էր, որ չէր կարողանում տանել այս ամենը: Ամեն անգամ մեր կենդանիներին տեսնելիս նա բարկացած տարուբերում էր գլուխը ու ինքն իրեն բարձրաձայն ասում.
- Աչքս լույս, էլ ինչ դարդ ունեմ, քունջուպուճախներս ջանավարներով լցվել են. . .

7 հուլիսի

Այսօր էլ մի նոր ուրախություն պատահեց մեզ:
Երեկոյան գլխապատառ բակ ընկավ Սահակի քույրն ու շնչասպառ ճչաց.
- Շուտ արե՛ք, Սահակը ձեզ կանչում է. . .
- Ի՞նչ է պատահել, - հարցնում եմ ես:
Իսկ նա թուքը կուլ տալով հպիվ պատասխանում է.
- Մեր բախչում Սահակը լորտու է բռնել: Հիմա հերս չի թողնում գա, դրա համար ինձ ուղարկեց, որ ձեզ իմաց տամ:
Լորտուի անունը լսելուն պես մենք գլխապատառ դուրս թռանք բակից ու քամու նման սլացանք Սահակի մոտ: Իսկ մի ժամ հետո մեր բակը, ինչպես մեծերն են ասում, ասեղ գցելու տեղ չկար: Գյուղի բոլոր երեխաները լսել էին մեր «կենդանի անկյան» մասին, հավաքվել, եկել էին տեսնելու:

***

Եվ այսպես, Սուրը երևի դեռ երկար ժամանակ խնամքով գրի կառներ իրենց «կենդանի անկյունը» ստեղծելու ամբողջ պատմությունը, եթե հաջորդ օրը անսպասելի մի դեպք չընդհատեր այն:
...Խաղաղ ու խորհրդավոր իրիկնամուտ էր: Արևը թաքնվել էր Կաղնուտի անտառի ետևը: Հանդից վերադարձող նախիրն արդեն խմել էր գետի սառնորակ ջրից, ու ճանապարհի վրա փոշու ամպ բարձրացնելով, գյուղ էր մտել:
Գետափի փարթամ կանաչների վրա պառկել էին Սուրն ու Սամը և երազկոտ հայացքները հառած գետի հայելանման ջրերին, խորասուզվել էին մտքերի մեջ: Կես ժամ էր, ինչ նրանք սպասում էին ընկերներին, բայց, չգիտես ինչու, տղաներից և ոչ մեկը դեռ չէր երևում:
Սուրը՝ ձեռքերը գլխարկին դրած, լուռ նայում էր գետի հակառակ ուղղությամբ, իսկ Սամը՝ բարալիկ ցողունը ատամների տակ ծամծմելով, մտածկոտ դիտում էր ջրերի վրա աստիճանաբար երկարող ծառերի ստվերները: Նրանցից ամեն մեկը յուրովի պատկերացնում էր իրենց տունը, հարազատներին: Կարոտախառն ինչ-որ հաճելի զգացում էր համակել նրանց մատաղ սրտերը: Սամն արդեն մի նամակ էր ուղարկել մայրիկին, ուր նկարագրել է, թե ինչպես են անցնում օրերը գյուղում, և ամենագլխավորը, որ իրենք մենակ չեն: Նրանք հիմա այնպիսի ընկերներ ունեն, որոնց նմանը գուցե աշխարհում չգտնվի, և թե որքան անհետաքրքիր ու ձանձրալի կանցնեին օրերը, եթե իրենք մտերմացած չլինեին նրանց հետ: Սամը նամակում չէր մոռացել պատմել գյուղից ներքև գտնվող այն խորհրդավոր քարանձավի մասին, որի անունն իրենք «Հառաչանքի քարայր» էին դրել ու թե ինչ հետաքրքիր ու տխուր պատմության հետ է կապված այդ անունը: Եվ վերջապես այն, որ վերջերս իրենք որոշել են մի հետաքրքիր արշավ կազմակերպել «Հառաչանքի քարայրում» եղած խորհրդավոր գաղտնիքները հայտնաբերելու համար: Ճիշտ է, այս բոլորով հանդերձ, նամակն այնքան էլ կարճ չէր ստացվել (խոսքը մեր մեջ, ընդամենը մի ամբողջ աշակերտական տետր), բայց, այնուամենայնիվ, այնքան հետաքրքիր նորություններ էր հայտնել մայրիկին, որ նա հիմա մեծ հաճույքով կարդացած կլինի այն:
Այս մտքերով էր տարված Սամը, երբ հանկարծ Սուրն արմունկով հրեց նրան ու խզված ձայնով ասաց.
- Նայի՛ր, Սամ... Այս ի՞նչ նավակ է լողալով գալիս:
Սամը, նավակի անունը լսելով, տեղից վեր թռավ ու նայեց հոսանքի հակառակ ուղղությամբ:
Հեռվից, գետի մեջտեղով, հանդարտորեն դեպի ցած էր լողում ձկնորսական մի նավակ: Նավակի Կողերից կախ ընկած փայտե թիակներն աննպատակ ճոճվում էին գետի վրա:
Սամի աչքերը փայլեցին:
- Սո՛ւր, տեսնո՞ւմ ես, թե ինչպես են թիակները քարշ գալիս նավակի հետ:
- Ըհը... տեսնում եմ:
- Իսկ գիտե՞ս, թե ինչ է նշանակում դա:
- Ինչ պետք է նշանակի: Երևի տերը պառկած հանգստանում է: Ի՞նչ կա որ...
- Բանն էլ այն է, որ չի հանգստանում: Եթե թիակները աննպատակ քարշ են գալիս, դա նշանակում է, որ նավակում մարդ չկա:

- Դու էլ բան ասացիր: Գուցե տերը քնել է նավակի հատակին, իսկ մենք չենք տեսնում: Նայիր, նավակում կարծես մի բան է երևում:
Սամը վեր ցցեց կճատ քիթը և աչքերը ճպճպացրեց: Սուրը ճիշտ էր ասում: Նավակի մեջ ինչ-որ բան էր սևին տալիս:
Մինչև մեր երկու հերոսները կորոշեին, թե ինչ էր դա, նավակը քիչ մնաց անցներ նրանց մոտով: Հարմար առիթը ձեռքից բաց չթողնելու համար Սամն արագ հանեց շորերը և փորի վրա անճոռնի չլմփաց ջրի մեջ: Նույնն արեց և Սուրը:
Տղաները լողալով մոտեցան նավակին և, կառչելով նրանից, զգույշ մեջը նայեցին:
Նավակում մարդ չկար: Բայց այ քեզ տարօրինակ բա՜ն... Նավակի առաջամասում գտնվող նստարանի վրա տղամարդու շորեր կային և մի զույգ կոշիկ, իսկ ետևի նստարանին՝ ձեռագիր էջերից կազմված մի ստվար թղթապանակ:
Տղաները տարակուսանքով իրար նայեցին:
Քիչ անց գետափին հայտնվեցին Թլոն, Սահակը ու էլի մի տղա: Անծանոթ նավակն ու նրանից կառչած Սուրին ու Սամին տեսնելով, նրանք գորտերի նման, իրար ետևից չլմփացին ջրի մեջ:
Երբ նավակը ափ հասցվեց ու կապվեց առաջին իսկ պատահած ծառից բոլորի ուշադրությունը գրավեց նրա մեջ գտնվող խորհրդավոր հագուստը, որոնք չգիտես ինչպես էին փախել իրենց տիրոջից:
- Տղաներ, ի՞նչ եք կարծում... Ո՞ւմը կլինեն այս շորերը, - հարցրեց Սուրը, ձեռքը երկարելով դեպի նավակը:
- Ձեռք չտաս, - վրա պրծավ Սամը, - ո՞վ գիտի, ինչ կարող է պատահած լինել: Երևի մի մարդասպան-ավազակ դատաստան է տեսել այս շորերի տիրոջ հետ և հետո ծլկել... էսպիսի դեպքում ոչ մի բան ձեռք տալ չի կարելի:
- Ասենք թե ձեռք տվեց, ի՞նչ կլինի որ... - հայացքը շորերից չկտրելով՝ հարցրեց Սահակը:
- Էլ ինչ պիտի լինի: Ձեռք կտա ու մարդասպանի հետքը դրանով կկորցնի: Իսկ հետախույզ շներն էլ կհոտոտեն, կհոտոտեն ու հանցագործի փոխարեն կբռնեն նրան, ով նրանից հետո ձեռք է տվել այդ իրերին: Ա՛յ, հենց, օրինակի համար, Սուրին: Չէ՛, տղերք ինչ ուզում եք ասեք, էստեղ մի բան կա... Ավելի լավ է ոչ մի բանի ձեռք չտանք: Մի քանիսը թող մնան նավակն ու շորերը հսկելու, իսկ մյուսները վազ տան միլիցիայի ետևից, - եզրափակեց Սամը և սկսեց արագ հագնվել:
Մյուսներն էլ հետևեցին նրա օրինակին:
Եվ անշուշտ մի քանի րոպե հետո, ինչպես ասում են, ոչնչից մեծ աղմուկ կստացվեր, եթե Թլոն չկանգնեցներ նրանց:
- Իզուր բան է, տղե՛րք: Գործը էնպես է ստացվել, որ էդ հետախույզ շներն էլ չեն կարող գտնել: Այ, ես լսել եմ, որ հանցագործները դիտմամբ ջրերի միջով են փախչում, որ իրենց հոտը շները չառնեն: Իսկ էս շորերը ես ինչ գիտեմ, թե որտեղից են մեզ մոտ հասել:
- Թլոն ճիշտ է ասում, Սա՛մ, - հաստատեց Սուրը, - ես էլ եմ լսել, որ շները ջրի մեջ հետքերը չեն կարողանում գտնել: Կամ գուցե բոլորովին էլ այն չի պատահել, ինչ մենք ենք կարծում: Ճիշտ չե՞մ ասում, տղաներ...
- Դե իհարկե, ի՜նչ սպանություն, ի՜նչ բան... Երևի տերը քնով է ընկել ու նավակն էլ լավ չկապելու պատճառով, ջուրը քշել բերել է էստեղ, - ավելացրեց անծանոթ տղան, որը, ինչպես հետո պարզվեց, վերևի գյուղումն էր ապրում:
- Գիտեք ինչ, տղաներ, - գյուտ արածի նման բացականչեց Սուրը, - ավելի լավ է, եկեք շորերի գրպանները ստուգենք: Գուցե մի որևէ փաստաթուղթ գտնենք, որից կիմացվի, թե ով է այս նավակի տերը: Իսկ հետո ամեն ինչ հեշտ կլինի պարզել: Ինչի՞ ես լռում, Սամ...
- Դե լավ: Որ էդպես է, մի քիչ հեռու քաշվեք, - համաձայնեց Սամը, ապա թաց ձեռքերը մայկայի փեշով սրբելուց հետո նավակի նստարանի վրայից զգույշ վերցրեց մոխրագույն պիջակը և սկսեց ուշադրությամբ ծոցագրպանները պրպտել:
- Հը, ի՜նչ կա, - հարցրեց Թլոն, որ անհամբերությունից քիչ էր մնում պայթի:

- Դատարկ է, - ցածրաձայն ասաց Սամը և ձեռքը մյուս գրպանը տարավ: Հանկարծ նրա դեմքը պայծառացավ: Եվ ահա բոլորի ներկայությամբ նա դուրս քաշեց դարչնագույն մի փոքրիկ գրքույկ: Գրքույկի վրա ոսկեգույն տառերով գրված էր՝ «Գիտությունների ակադեմիայի անդամ»:
Տղաները հետաքրքրությունից վառված իսկույն հավաքվեցին Սամի գլխին ու սկսեցին հրմշտել իրար: Սամը հանդիսավոր ձևով բաց արեց դարչնագույն գրքույկը ու քթի տակ ինչ-որ բառեր մռթմռթալուց հետո հանկարծ, բոլորի համար անսպասելի, դուրս նետվեց խռնված տղաների միջից և պոռթկացող քրքիջով սկսեց խենթի նման թավալ տալ խոտերի վրա:
- Ուռա՛... Արտեմ Նիկոլաևիչի նավակն է... Ուռա՛... Արտեմ Նիկոլաևիչն այստեղ է:
Երբ հարևան գյուղից եկած տղան նայեց դարչնագույն գրքույկի մեջ փակցված մորուքավոր ծերունու լուսանկարին, ուրախ բացականչեց,
- Վա՛յ... Սա մեր գյուղում է ապրում: Ծուռտիկ Սեդրակենց տնվորն է: Վերջերս է մեզ մոտ ամառանոց եկել: Դե՛, իհարկե, սրանք էլ նրա շորերն են:
Իսկ այդ միջոցին, վերևի գյուղում, գետի կանաչածածկ ափով, հուսահատ դեսդեն էր վազվզում կիսամերկ մի ծերունի՝ պենսնեն քթին: Խոտերի մեջ ընկած չորացած ճյուղերի կտորտանքն ու փշածածկ կարճլիկ թփերը շարունակ ծակծկում էին նրա բոբիկ ոտքերը և պատկառելի ծերունին ծիծաղելի շարժումներով ցատկոտում էր այս ու այն կողմ ու շփոթված նայում վերևի կամրջին, թե մարդ չի՞ երևում, արդյոք:
Այդ ծերունին, իհարկե, Արտեմ Նիկոլաևիչն էր:

Գլուխ տասնչորսերորդ. ԱՐՏԵՄ ՆԻԿՈԼԱԵՎԻՉԻ ՄՈՏ

Արդեն սկսել էր մթնել, երբ նրանք հասան հարևան գյուղը: Այգիների մեջ թաղված փոքրիկ գյուղակը լուռ էր ու խաղաղ: Երբեմն այս կամ այն բակից լսվում էին շների կարճատև հաչոցներ, ապա նորից ամեն ինչ լռում էր, խաղաղվում: Գետափից լսվող գորտերի կռկռոցն ու խոտերի մեջ թաքնված ծղրիդների ճռճռոցն էր միայն, որ խախտում էր շրջապատի անդորրը:
Սամը, որ թևատակին տանում էր Արտեմ Նիկոլաևիչի շորերն ու աշխատությունը, շուտ-շուտ առաջ էր ընկնում և անհանգիստ ձայն տալիս իր ետևից եկողներին:
- Շուտ արեք, տղերք... Ախր, ի՞նչ եք էդպես դանդաղ քայլում: Նա հիմի հուսահատությունից չգիտի, թե ինչ անի, իսկ մենք կրիայի նման ենք գնում:
Տղաներն արագացրին քայլերը: Նրանք նեղ ու քարքարոտ ճանապարհով վեր բարձրացան, անցան գետափին փռված կոլտնտեսության այգիների կողքով և ահա վերջապես կանգ առան մի գեղեցիկ շինության առաջ:
- Ըհը... էս էլ ծուռտիկ Սեդրակենց տունը, - ասաց ուղեկցող տղան, որն, ինչպես գիտեք, այդ նույն գյուղումն էր ապրում, - էն երկու կիսաբաց պատուհանները տեսնո՞ւմ եք...
Տղաները ձգեցին վզները:
- Ա՛յ, հենց էդ կիսաբաց պատուհաններով սենյակում է ապրում ձեր Արտեմ Նիկոլաևիչը: Դե ես գնամ:
- Չէ, չէ: Դու էլ մեզ հետ արի, - առարկեց Սուրը:
- Ախր, ամոթ է, - շփոթված պատասխանեց տղան:
- Ամոթի բան չկա: Արտեմ Նիկոլաևիչը քո իմացածներից չի: Գիտնական է, բայց այնպես հասարակ է, որ ասես իսկի էլ գիտնական չի: Գնանք, - պնդեց Սամը:
Նրանք իրար ետևից անաղմուկ մտան ցանկապատված փոքրիկ այգին, կուզեկուզ անցան պատշգամբի տակով և մոտեցան կիսաբաց լուսամուտներին, որոնք գետնից բավականաչափ բարձր էին գտնվում:
Սամը զգույշ մոտեցավ, կանգնեց ոտքի ծայրերի վրա, բայց տեսնելով, որ նույնիսկ ձեռքը չի հասնում լուսամուտի շրջանակին, ետ քաշվեց:
- Դե, Սուր... օգտագործիր երկար բոյդ, պատուհանը թխկացրու, - կատակով ասաց Սամը և բոլորը ցածրաձայն ծիծաղեցին:

- Ժամանակ եք գտել ծիծաղելու... Մարդու հետ այսպիսի լուրջ բան է պատահել, իսկ դուք առանց մտածելու ծիծաղում եք, - իր վիրավորանքը ծածկելով՝ մռթմռթաց Սուրն ու առաջ եկավ: Բայց ձեռքը դեռ չէր մոտեցրել լուսամուտի փեղկին, երբ ներսից լսվեց Արտեմ Նիկոլաևիչի ծանոթ ձայնը:
- Խնդրում եմ, թանկագինս: Ինչ կերպ ուզում է լինի... Դուք հասկանո՞ւմ եք, նավակի կամ հագուստի մասին չէ, որ այսքան անհանգստանում եմ: Նավակի մեջ, ցավոք սրտի, թողել եմ աշխատությունս... ձեռագիր աշխատությունս: Դա միակ օրինակն էր, դուք պատկերացնում եք, միակ օրինակը...
- Մի մտածի, ընկեր Արտեմ Նիկոլաևիչ: Ուզում է հազար օրինակ լինի, չի կորչի: Հրես գնամ, հեռախոսով ներքևի գյուղերը զանգահարեմ: Երևի արդեն բռնած կլինեն նավակը:
Լսվեց դռան շխկոց: Լույսի մի բարակ շերտ ճեղքեց շրջապատի մթությունը և Արտեմ Նիկոլաևիչի զրուցակիցը շտապով դուրս եկավ այգուց:
Տղաներն իրար անցան:
- Ի՞նչ ես շշմել, թխկացրու պատուհանը, է... - անհամբեր վրա տվեց Սամը:
Սուրն ընձուղտի նման երկարեց բարակ վիզը և կամաց տկտկացրեց լուսամուտի ապակին: Լուսամուտի մեջ հայտնվեց Արտեմ Նիկոլաևիչը:
- Ո՞վ է, - ցած կախվելով հարցրեց նա:
- Այդ մենք ենք, Արտեմ Նիկոլաևիչ, - չգիտես ինչու շշուկով ձայն տվեց Սուրը, - մենք ձեր շորերն ու թղթապանակն ենք բերել:
- Ի՞նչ... ձեռագրե՞րս, - զարմանքից այնպես ուժգին բացականչեց նա, որ պենսնեն թռավ քթի վրայից և սկսեց ժամացույցի լծակի պես ճոճվել օդում: (Այսպիսի թռիչքներ հաճախ էր պատահում նրա պենսնեի հետ): - Դուք ասացիք՝ գտել եք իմ ձեռագրե՞րը...
Պատկառելի ծերունին ուրախությունից այն աստիճան գլուխը կորցրեց, որ մի պահ մոռանալով իր տարիքն ու դիրքը, երեխայի անհամբերությամբ ցած կախվեց լուսամուտից... Բայց այստեղ անսպասելի մի բան պատահեց: Իջնելիս նրա պիջակի կոճակը ընկավ երկաթյա փականին և նա մնաց լուսամուտի փեղկից կախված:
- Ինչո՞ւ ոտքերս գետին չեն դիպչում, - հուսահատ ձայն տվեց Արտեմ Նիկոլաևիչը և կայուն հենարան չգտնելով, սկսեց ոտքերը թափահարել օդում:
Եվ այստեղ ծերուկ գիտնականի ուղեղում երևի մի անգամ ևս ճառագեց Արքիմեդյան այն հանճարեղ միտքը, թե՝ տվեք ինձ հենարան և ես շուռ կտամ ողջ հողագունդը:
Լսվեց շորի պատռվելու ձայն և Արտեմ Նիկոլաևիչը դրմփաց ներքև: Հողագունդը շրջելու փոխարեն նա միայն տնքալով ոտքի կանգնեց, ժպտաց և ձեռքը ետ տարավ ցավոտ տեղերը:
Այս ամենն այնպես անսպասելի կատարվեց, որ տղաները, չկարողանալով օգնության հասնել նրան, միայն թեթևակի փռթկացրին:
- Ուրեմն իսկապես դուք գտե՞լ եք իմ ձեռագրերը, այո՞, - իր լսածին չհավատալով նորից հարցրեց նա:
- Ըհը, գտել ենք, - հուզված ասաց Սամը, - ահա, վերցրեք: Սրանք էլ ձեր շորերն են: Իսկ նավակի մասին մի անհանգստացեք, Արտեմ Նիկոլաևիչ: Նավակը մենք հարմար տեղ ենք թաքցրել, չի կորչի:
Արտեմ Նիկոլաևիչը հանկարծ առաջ ցցեց սուրուլիկ մորուքը, քթի վրա ուղղեց պենսնեն և աչքերը կկոցած մոտեցավ Սամին:
- Սամվե՞լ... Ինչպե՞ս... Ուրեմն այդ դո՞ւ... Դե, իհարկե, այդ դու ես: Բայց սպասիր, ի՞նչ հրաշքով բուսնեցիր այստեղ: Ի՞նչ ես անում այս կողմերում...
- Սամը մեզ հետ ամառանոց է եկել, տատիս մոտ, - նրա փոխարեն պատասխանեց Սուրը:
- Սպասիր, սպասիր... Որքան հիշողությունս չի դավաճանում, այս Լամանչեցի ասպետն էլ քո դասընկեր Սուրենը պետք է լինի, այնպես չէ՞: Դե ներս գնանք, ներս գնանք, թանկագիններս:
Արտեմ Նիկոլաևիչը տղաներին ներս առաջնորդեց: Դա մի լուսավոր, ընդարձակ սենյակ էր՝ զարդարված ոչ այնքան շքեղ կահույքով: Սեղանին, աթոռներին և ամենուրեք թափված էին մեծ ու փոքր բազմաթիվ գրքեր: Թլոն, Սահակը և մեկ էլ ուղեկցող տղան շփոթված կանգնել էին դռան տակ ու ակնապիշ նայում էին սենյակով մեկ փռված գրքերին:
- Իսկ դուք ինչո՞ւ եք դռան տակ կանգնել, առաջ եկեք...

- Մեր ընկերներն են, Արտեմ Նիկոլաևիչ:
- Դե տեսնում եմ, որ ձեր ընկերներն են, բայց ինչու են կանգնել դռան տակ: Առաջ եկեք, տղաներ:
Արտեմ Նիկոլաևիչը պահարանից հանեց մրգերով լի սկուտեղը ու, դնելով իր փոքրիկ հյուրերի առջև, սիրալիր ասաց.
- Դե, թանկագիններս, առանց քաշվելու: Շատ համեղ տեսակից են, այնպես որ միացյալ ուժերով...
Եվ մինչ տղաները եռանդով մաքրազարդում էին սկուտեղը, Արտեմ Նիկոլաևիչն սկսեց պատմել, թե ինչպես էր անհետացել նավակը:
- Արևը մայր մտնելուց առաջ ես նավակը կանգնեցրի դիմացի ափին գտնվող մի գեղեցիկ վայրում: Եվ, որովհետև այդտեղ լիակատար խաղաղություն էր տիրում, ուստի առանց ժամանակ կորցնելու հանեցի շորերս նավակի մեջ ու ջուրը մտա: Կեսօրից հետո գետի ջուրը այնպես տաք ու հաճելի էր դարձել, որ ուղղակի... Այո, այո, ուղղակի չէի ուզում դուրս գալ: Դե ես էլ, ինչպես հարկն է, մի լավ լողացա: Իսկ երբ դուրս եկա շորերս հագնելու, նավակն այլևս իր տեղում չէր: Պատկերացնում եք, բարեկամներս, երբ ես, հիմարս, ոտքերով շարունակ չփչփացրել եմ, ջուրը ալիքվել ու երկար ժամանակ նավակը ցնցել է: Այդ ցնցումներից աստիճանաբար ծառից քանդվել է առանց այն էլ թույլ կապված պարանի օղակը և ջուրը քշել տարել է նավակը: Ինչ անել... Հարկավոր էր շտապ լուր հասցնել մարդկանց, որ ցածում իսկույն բռնեին, բայց այդ խայտառակ վիճակով ես ինչպես կարող էի գյուղ գնալ: Պատկերացնում եք, ինչ կասեին մարդիկ, երբ ես, ծերուկ հիմարս, օրը ցերեկով, այդպես կիսամերկ, գյուղով անցնեի: Ստիպված սպասեցի գետափին այնքան ժամանակ, մինչև որ մութն ընկավ: Թանկագիններս, ես չգիտեմ ինչով փոխհատուցել ձեզ այդ բոլորի համար:
- Ի՞նչ եք ասում, Արտեմ Նիկոլաևիչ: Ինչ մի բան է որ... - ցածրաձայն ասաց Սամը:
- Ոչ, ոչ... խնդրում եմ առանց ավելորդ համեստությունների: Դա իմ երեսուն տարվա տքնաջան ուսումնասիրությունների արդյունքն էր և կկորչեր, եթե այն չընկներ հուսալի մարդկանց ձեռքը: - Արտեմ Նիկոլաևիչը այստեղ ոգևորված ոտքի կանգնեց, սեղանի վրայից վերցրեց «հրաշքով» գտնված իր ձեռագրերը և զավակին գտած մոր քնքշությամբ մի անգամ ևս տնտղելուց հետո, ավելացրեց. - Փոքրիկ բարեկամներս, դուք փրկեցիք սրանք կորստից և արժե դրա համար ձեզ մի լավ բանով... Այո, այո մի լավ բանով փոխհատուցել:
- Փոխհատուցե՞լ, - զարմացած հարցրեց Սուրը և ապա խորհրդավոր նայեց տղաներին:
Հարմար առիթը թաց չթողնելու համար Սամն իսկույն ոտքի թռավ:
- Արտեմ Նիկոլաևիչ, այ եթե մենք մի բան խնդրենք, չե՞ք մերժի...
- Մերժե՞լ... Իսկ ինչ պետք է խնդրեք, որ ձեզ մերժեմ:
- Մենք... մենք ձեր նավակն ենք ուզում: Միայն մեկ օրով, կտա՞ք...
- Նավա՞կը... Հըմ: Իսկ ձեր ինչի՞ն է պետք նավակը:
- Մենք որոշել ենք գետի վրայով հեռավոր մի արշավ կազմակերպել, բայց նավակ չկա, - պատասխանեց Սուրը:
- Հըմ... արշավ, գետի վրայով... իսկ դուք, հարգելի բարեկամներ, թիավարել գիտե՞ք:
- Գիտենք, գիտենք, - այս ու այն կողմից վրա տվին տղաները:
- Դե, եթե այդպես է... Ինչ արած, ես ձեզ վստահում եմ: Նույնիսկ մի ամբողջ շաբաթ թողնում եմ նավակը ձեր տրամադրության տակ: Միայն թե տեսեք, հա, հերոսներ... նավակը իմ սեփականը չի և ես անպայման պետք է վերադարձնեմ իր տիրոջը:
Տղաներն ուրախ աղմուկով ոտքի թռան և շրջապատեցին ծերուկ գիտնականին:
Դժվար է նկարագրել այն հուզմունքն ու ուրախությունը, որ այդ պահին ապրեցին մեր փոքրիկ հերոսները: Նրանք գրկեցին Արտեմ Նիկոլաևիչին և պատրաստվեցին ձեռքերի վրա վեր-վեր թռցնել, բայց հաշվի առնելով նրա տեսակարար կշիռը, բավարարվեցին այդքանով միայն:
Տղաները հանդիսավորությամբ հրաժեշտ տվեցին Արտեմ Նիկոլաևիչին և ճանապարհ ընկան դեպի տուն:

Գլուխ տասնհինգերորդ. ԱՐՇԱՎԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԱԿՆԿԱԼ ԼՈՒՐԸ

Վերադառնալով Արտեմ Նիկոլաևիչի մոտից Սուրն ու Սամը երկար ժամանակ չէին կարողանում պատկերացնել, թե ինչպես պատահեց այս ամենը: Նավակի անակնկալ «հայտնագործությունը» խենթացնելու չափ ուրախացրել էր նրանց, հատկապես մեր օվկիանոսների քաջարի նավապետին: Որքան զարմանալի ու հետաքրքիր զուգադիպություններով է լի կյանքը: Եվ ում մտքով կանցներ, որ սովորական մի օր, այդպես անսպասելի, ասես հրաշքով, նա ձեռք կբերեր այն, ինչի մասին երազել էր տարիներ շարունակ:

Չէ, ինչ ուզում եք ասեք, Սամը հիմա աշխարհի ամենաերջանիկ մարդն է համարում իրեն: Նա մի անգամ ևս հաստատ ու վերջնականորեն որոշեց դառնալ նշանավոր ծովագնաց: Այ, կանցնեն տարիներ, նա կմեծանա, կավարտի դպրոցը և նոր գիտելիքներ ձեռք կբերի: Նա հիմա շատ լավ է հասկանում, թե ինչու էր մայրիկը հանդիմանում իրեն, որ աշխարհագրությունից, իր սիրած առարկայից, երեքներ է ստանում և դեռ ուզում է նշանավոր ճանապարհորդ դառնալ: Չէ, ինչ ուզում է լինի, նա այլևս երեքներ չի ստանա, ոչ միայն աշխարհագրությունից, այլև մյուս առարկաներից: Չէ որ այդ բոլորն էլ այնքան պետք են գալու իրեն: Եվ նա դպրոցն ավարտելուց հետո կգնա աշխատելու... Ա՛յ, օրինակի համար, նավաշինարարական գործարաններից մեկում: Թեկուզ ամենադժվար աշխատանքի էլ ուղարկեն իրեն, էլի կգնա: Կգնա և կաշխատի օր ու գիշեր: Կսովորի, թե ինչպես են պատրաստվում իսկական նավերը: Իսկ տարիներ հետո իր սեփական ձեռքերով նա մի այնպիսի նավ կպատրաստի, որի նմանը հազիվ թե գտնվի աշխարհում: Հետո, մի օր էլ նա մեն-մենակ դուրս կգա օվկիանոս... Բայց սպասիր, իսկ Սուրը, Շավարշը. Թլոն, Սահակը... Չէ՞ որ առանց նրանց ոչ միայն հետաքրքիր չի լինի իր համար, այլ նույնիսկ մեն-մենակ անհայտ ու անանուն կկորչի օվկիանոսների անհատակ ջրերում: Ո՛չ, ո՛չ... նա առանց ընկերների ոչ մի քայլ չի անի: Իրեն հավատարիմ ու նվիրված արշավախումբ է հարկավոր և նա տղաներից կկազմի այդ արշավախումբը, իսկ հետո անտակ ու անեզր օվկիանոսների վրայով ճանապարհ կընկնի մարդկության համար նոր հայտնագործություններ կատարելու: Ո՞վ գիտի, գուցե մի օր որևէ անհայտ կղզում կարևոր ուսումնասիրություններ կատարելիս զոհվի գիշատիչների դեմ մղվող կատաղի մարտերից մեկի ժամանակ: Նա, իհարկե, նախօրոք կտակած կլինի սիրելի ընկերներին, որ իր աճյունը դնեն... դե ասենք, հենց թեկուզ մի ցինկապատ արկղի մեջ ու սուզեն օվկիանոսի հատակը՝ ինչպես նավապետ Նեմոյինը: Չէ որ ինքը աշխարհում ամենից շատ օվկիանոսն է սիրել և թող, ուրեմն, իր խոշտանգված մարմինը թաղվի այդ անծայրածիր ջրերի հատակում, ուր պահված են ստորջրյա հազարավոր հրաշք-գաղտնիքներ:

Երևակայական այս հուզիչ հերոսապատումը ստեղծելուց հետո Սամը դարձավ Սուրին, որ այդ ժամանակ անհանգիստ շուռումուռ էր գալիս անկողնում:

- Դե, ըհը՛... Մենք հիմի էնպիսի նավակ ունենք, որ թեկուզ աշխարհի ծերն էլ գնանք, չի խորտակվի: Միայն թե..

- Միայն թե ի՞նչ...

- Դե էն, որ ինչպես պետքն է թիավարել չգիտենք: Իսկ առանց թիավարելու գետի վրայով ոչ մի արշավ էլ գլուխ չի գա: Կարծում ես, Արտեմ Նիկոլաևիչը իզո՞ւր տեղն էր հարցնում թիավարելու մասին, հա՞... Դրա համար հարկավոր է մի լավ վարժվել:

- Վարժվե՞լ... Իսկ ինչի՞ս է պետք վարժվելը, կարծես թիավարելը շատ մի դժվար բան է, որ վարժվեմ:

- Ուրեմն հեշտ է, հա՞:

- Իհարկե, հեշտ է:

- Որ հեշտ է, դե ասա, ո՞նց պիտի թիավարես:

- Պա՛հ... Շատ հասարակ: Կբռնեմ թիակների պոչերից և ա՛յ այսպես... - ու Սուրը պառկած տեղում սկսեց անճոռնի շարժումներով ձեռքերը ետ ու առաջ ճոճել:

- «Ա՛յ, այսպես...», - հեգնանքով կրկնեց Սամը, - ցույց տալն ավելի հեշտ է, բայց հլա մի իսկականից թիավարիր, տեսնեմ էդպես կբլբլացնե՞ս...

- Եվ կբլբլացնեմ, - համառորեն պնդեց Սուրը:

- Իհարկե, քեզ համար ամեն ինչ հաց ու պանիր է:

- Լավ է, Սամ: Դու միշտ էլ սիրում ես ամեն ինչ ուռեցնել: Թիավարելու համար առանձնապես սովորել հարկավոր չէ:
- Հենց բանն էն է, որ հարկավոր է: Ինչ է, կարծում ես հոսանքին հակառակ թիավարելը հանաք բան է, հա՞: Ճիշտ է, մեր գետը հանդարտ է հոսում, բայց էլի դժվար է:
- Հոսանքին հակառա՞կ...
- Բա ի՞նչ, ջրի հետ պապս էլ կթիավարի:
- Իսկ մենք ինչո՞ւ պետք է հոսանքին հակառակ թիավարենք, որ...
- Չէ, ինչպես երևում է՝ նավարկությունը քո խելքի բանը չի: Սա քո ֆոկուսները չեն, որ հո՛պ, հո՛պ... ու ամեն ինչ պատրաստ է: Ծովագնացության ժամանակ հերիք է մի բան չիմացար, պրծավ... Ոտով-գլխով էնպես կկորչես, որ հեչ տեղդ էլ չեն իմանա: Օրինակի համար, հենց թեկուզ մեր արշավի ժամանակ: Ասենք, հասանք Հառաչանքի քարայրը ու հիմի էլ ուզում ենք ետ դառնալ: Եթե հոսանքին հակառակ թիավարել չգիտենք, ինչպես նավակը տեղ կհասցնենք: Պարզ է, շալակել չենք կարող: Դե եթե չենք կարող, ուրեմն նավակը ստիպված կթողնենք ուրիշներին ու ոտքով ետ կդառնանք:

***

Առավոտյան Սուրն ու Սամը թեյելուց անմիջապես հետո վանդակները դուրս հանեցին ցախատնից, Մանուշին խնդրեցին, որ նա կերակրի Դեղնամազիկին ու ոզնուն, և իրենք շտապով վազ տվին գետափ:
Ուռենիներից ներքև գտնվող խիտ թփուտների մեջ տղաները դեռ երեկվանից խնամքով թաքցրել էին Արտեմ Նիկոլաևիչի նավակը: Ծառերից պոկված տերևախիտ ճյուղերով նրանք այնպես վարպետորեն էին քողարկել այն, որ հազիվ որևէ մեկը գլխի ընկներ, թե այդ թփերի մեջ բան կա պահված:
Եվ որպեսզի ոչ ոք չիմանար թաքստոցի տեղը, Սուրն ու Սամը նախ ուշադրությամբ ստուգեցին շրջապատը, ապա արագ-արագ մի կողմի վրա դարսեցին քողարկող ճյուղերը և նավակը ջուրը հրեցին:
Պարզվեց, որ թիավարելու արվեստը այնքան էլ հեշտ ու հասարակ բան չէր, ինչպես Սուրն էր կարծում: Նրանք եռանդով ու համառությամբ ետ ու առաջ էին շարժում թիակները, բայց իզուր... փայտե բարակ ու թեթև թիակները մեկ անտանելիորեն ծանրանում էին՝ չափից ավելի խրվելով ջրում, մեկ էլ աննպատակ ետ փախչում ջրի երեսով: Այս տքնաջան մաքառումների արդյունքը լինում էր այն, որ նավակը մոլորվածի պես պտտվում էր տեղում և առաջ գնալու փոխարեն անզոր լողում էր հոսանքի հետ: Այդ իսկ պատճառով մեր երկու թիավարներն այնքան գործ չէին անում, որքան գոռում-գոչյուններով հարձակվում միմյանց վրա:
- Դե բլբլացրու, է, - բարկացած ծղրտում էր Սամը, - ինչի՞ ես լռել, բլբլացրո՛ւ...
Իսկ Սուրը հուսահատ մի կողմ էր շպրտում թիակի պոչը, ամբողջ հասակով մեկ ցցվում էր նավակի մեջ և երերվելով բղավում.
- Իսկ դու մի գոռա, իմացար: Դու դիտմամբ չես շարժում քո թիակը, որ նավակը տեղում պտտվի:
Նրանք աղմկում էին, իսկ նավակը կամաց-կամաց հեռանում էր ջրի հոսանքով: Եվ անշուշտ քիչ հետո գետը բոլորովին հեռու կքշեր նրանց, եթե այդ միջոցին չհայտնվեին Սահակն ու Թլոն:
- Հե՛յ, տղերք... էդ ո՞ւր առանց մեզ, - ձայն տվեց Թլոն:
- Սպասեք, մենք էլ ենք գալիս, - ավելացրեց Սահակը: Նավակից լսվեց Սուրի հուսահատ ձայնը.
- Ոչ մի տեղ էլ չենք գնում: Շուտ արեք, օգնության հասեք, տղաներ... Ջուրը քշում է մեզ:
Սահակն ու Թլոն հասկանալով, թե բանն ինչումն է, շտապով հանվեցին ու ջուրը մտան: Սրանք շորերը ձեռքներին պահած լողալով հասան նրանց ետևից և իրենց գցեցին նավակի մեջ:
... Մինչև արևի մայր մտնելը տղաները տուն չեկան գետափից: Թլոյի ու Սահակի համառ ջանքերի շնորհիվ Սուրն ու Սամը արդեն կարողանում էին վարժ թիավարել: Նրանք թիավարելով նույնիսկ փորձեցին գետի հոսանքին հակառակ բարձրանալ մինչև այն ցյուղը, ուր ապրում էր սիրելի Արտեմ Նիկոլաևիչը, բայց քանի որ արևն արդեն մայր էր մտնում, ուստի կես ճանապարհից ետ դարձան:

-Գիտեք ինչ, տղերք, - ոգևորված վրա տվեց Սամը, - քանի որ մենք արդեն սովորեցինք թիավարելը, ուրեմն եկեք հենց էսօր էլ սկսենք մեր արշավը:
- Ի՞նչ ես ասում, Սամ, - տեղից վեր թռավ Սուրը, - այս ուշ ժամի՞ն: Գժվե՞լ ես, ինչ է: Շուտով մութը կընկնի և հետո... հետո ո՞վ գիտի ինչեր կարող են պատահել:
Սուրի սարսափած դեմքը տեսնելով, Թլոն ծիծաղելով ասաց.
- Հը, էլի՞ սիրտդ թփթփաց:
- Ոչ մի թփթփալ: Ես ասում եմ, որ... Ա՛խր, տղաներ, մթի մեջ գետի վրայով ճանապարհորդելու հետ կատակ անել չի լինի:
- Ի՜հ, վախկոտ... Դու միշտ էլ էդպես ես: Սկզբում կբլբլացնես, կբլբլացնես, բայց հենց գործի ժամը եկավ, կսկսես նվնվալ:
- Լսիր, Սամ, - մի փոքր լռությունից հետո խոսեց Սահակը, - ճիշտն ասած, եկեք վաղը գնանք, թե չէ մթնով ինչ պիտի տեսնենք: Ես իմ մասին չեմ ասում: Համ էլ մութը չի բանը: Մենակ ես էնքան եմ մթնով ճամփա ընկել: Ամա թե ուզում եմ ասեմ, լավ չի, տանեցիք կխոսեն:
- Ա՛յ, ճիշտ ես ասում, Սահակ ջան, - իր վախը քողարկելով, իսկույն ավելացրեց Սուրը, - մերոնք էլ կխոսեն: Մորաքույրս... իսկ տատս, ո՜ւ... որ իմացավ, էլ ձեռքից չենք պրծնի:
- Էլի սկսեց: Հա՛յ մթություն, հա՛յ մորաքույրս... Ախր հասկացեք, տղերք, գիշերով մի տեսակ խորհրդավոր է, համ էլ իսկական ծովագնացները մթությունից երբեք չեն վախեցել: Նրանք նույնիսկ պատահել է գիշերները ջունգլիներով են անցել, իսկ շուրջը, ո՜ւ... գիշատիչների սարսափելի մռնչյուններ: Մի տեղ կոկորդիլոսն է երեխայի նման լաց եղել, մի տեղ կատաղի առյուծն է կրճտացրել ժանիքները, իսկ մի ուրիշ տեղ էլ...
- Բավական է, - Սամի նկարագրություններից այլայլված բղավեց Սուրը (աշխարհում նրա համար ոչինչ այնքան սարսափելի չէր, որքան Սամի այդ երևակայական պատմությունները), և նա կամակոր երեխայի շարժումով ոտքը ուժգին չլմփացրեց առջևը գտնվող ցեխաջրի մեջ, - բավական է, քեզ հետ այլևս ոչ մի տեղ...
Նա արագ շուռ եկավ և այն է պատրաստվում էր հեռանալ, երբ Թլոն բռնեց թևից:
- Ո՞ւր: Ի՜նչ ասաց, որ գիժ մոզու նման խրտնեցիր:
- Թող, ասում եմ: Չէ, թո՜ղ,.. Նա միայն իր գիշատիչներով մարդկանց զարմացնել գիտի, թե չէ ձեռքից ոչինչ էլ չի գալիս:
Նրանք այսպես դեռ երկար կվիճեին, եթե Սահակը չընդհատեր.
- Լավ, տղերք: Որ էդպես է, եկեք փորձի համար գնանք: Տեսնենք Սամը ռիսկ կանի մթնով Հառաչանքի քարայրը մտնել:
- Իսկ ինչի՞ց պիտի վախենամ որ...
Սահակն այստեղ խորամանկորեն նայեց Թլոյին, ապա, Սամի համարձակությունը մի անգամ ևս փորձելու համար, ձայնին խորհրդավորություն տալով, շշնջաց.
- Տատս ասում է, որ էդ քարայրում չարքեր կան: Հենց որ մութը վրա է տալիս, նրանք մի էսպիսի վայոց են դնում, մի վայոց... որ էլ չասած:
- Չարքե՞ր... Հի՜-հի՜-հի՜... ի՞նչ չարքեր, - ծիծաղեց Սամը և հետո միանգամից լրջանալով, ավելացրեց, - որ էդպես է, գնա՛նք: Քո էդ չարքերով մենակ էս լողլող նապաստակին կվախեցնես: Դե, ասեք, ո՞վ է համաձայն, որ հենց էսօր էլ ճանապարհ ընկնենք:
- Ե՜ս, - ասաց Թլոն:
- Ես էլ, - վրա բերեց Սահակը:
- Իսկ դո՞ւ, Սուր:
Սուրը լուռ էր:
- Հը, դու չե՞ս ուզում գալ մեզ հետ:
- Դե, ես ինչ... ը՜ ը՜... Իհարկե, ես էլ: Մենք կկանգնենք քարայրի մուտքի մոտ, բայց դու ներս կմտնես: Տեսնենք այնտեղից ինչպես դուրս կգաս:
Տղաները պայմանավորվեցին գիշերը ժամը ուղիղ տասնմեկին կազմ ու պատրաստ հավաքվել գետափին և գետով ճանապարհ ընկնել դեպի «չարքերով լի» Հառաչանքի քարայրը:

- Գնանք Շավարշին էլ ասենք, - հիշեցրեց Թլոն, - թե չէ առանց նրան ի՞նչ արշավ:
Նրանք նավակը տեղավորեցին թաքստոցում և արագ քայլերով գնացին Շավարշենց տուն:

***

Նրան փնտրելու համար տղաները երկար ժամանակ չկորցրին: Իրենց բակի դարբասի մոտ գտնվող տափակ քարի վրա գլխիկոր ու մռայլ նստել էր Շավարշը: Նա ոտքի ծայրով փորփրում էր քարի մոտ թափված հողի փոքրիկ կիտուկը և վրդովված շրթունքներն էր կրծոտում: Շավարշն այնպես էր խորասուզվել իր մտքերի մեջ, որ չնկատեց անգամ տղաների մոտենալը:
- Շավա՛րշ, - ուրախ բացականչեց Թլոն, - էս ո՞ւր ես կորել: Էսօր գիշերը որոշել ենք նավակով գնալ Հառաչանքի քարայրը դու էլ արի, հա՞...
Շավարշը, իրեն չսազող դանդաղկոտությամբ, բարձրացրեց գլուխը, տխուր, ցրված հայացքով նայեց ընկերներին և նորից մտածկոտ շարունակեց հողը փորփրել:
Տղաները դեռ երբեք այդպես չէին տեսել Շավարշին: Նա, որ միշտ էլ առաջինն էր ոգևորվում մի որևէ լավ բան կազմակերպելիս, այժմ մռայլ ու անխոս նստել էր...
Տղաները զարմացած իրար նայեցին:
- Շավարշ, ի՞նչ է պատահել, - անհանգիստ հարցրեց Սահակն ու նստեց նրա կողքին:
Մյուսները, հետաքրքրված Շավարշի տարօրինակ լռությունից, շրջապատեցին նրան:
- Տղերք, - տխրաձայն խոսեց Շավարշը, - հորս դատի են տալու:
- Դատի՞... Ինչի համար, - միաբերան հարցրեցին բոլորը:
- Ես ինչ գիտեմ: Դատի են տալու, որ իբր կեղծիք է կատարել: Երեկ չէ մեկ էլ օրը հորս հետ չորս բիդոն մեղր տարանք կոլխոզի պահեստը: Երեկ հերս գնում է մուտք արած մեղրի օրդերը ստանա, համա էդ կաղ Սմբատը ձենը գլուխն է գցում ու մատ թափ տալով հորս վրա, սպառնում է մուտքի օրդերի փոխարեն նրան դատի տալ:
- Ախր, ինչի՞ համար, - վրդովված հարցրեց Սամը:
- Ես ինչ գիտեմ: Ասել է, շաքարի մեղր է ու էդ կեղծիքի համար էլ պատասխան պիտի տաս: Հիմի սպասում ենք: Շրջկենտրոնից մարդիկ ենք կանչել, որ գործը քննեն: Ոչ կերածներս ենք հասկանում, ոչ խմածներս: Է՛հ... ես ինչ գիտեմ: Խեղճ մերս էնքան լաց եղավ որ...
- Տո էդ կաղ աղվեսը, - բռունցքը կատաղությամբ սեղմած, վեր թռավ Թլոն, - ախ, թե ուժս հերիք էր արել...
- Մի տխրի, Շավարշ, եթե հայրիկիդ գործը դատարան էլ տան, միևնույն է, կազատվի:
- Ճիշտ է, ճիշտ է... - հաստատեցին բոլորը:
Այդ միջոցին դարբասի ետևից լսվեց Շավարշի մոր ձայնը և տղաները ոտքի կանգնեցին:
- Դե, տղերք, ես գնացի... շտապ գործ կա:

Գլուխ տասնվեցերորդ. ՇՇՈՒԿՆԵՐ ԳԵՏԻ ՎՐԱ

Երբ Սուրն ու Սամը տուն վերադարձան, մորաքույր Մարթան անմիջապես սկսեց հանդիմանությունների տարափ տեղալ նրանց գլխին, որ հաց ու ջուր մոռացած՝ առավոտից մինչև իրիկուն կորչում են սատանան գիտի թե ուր, որ առանց հարցնելու անում են այն, ինչ խելքներին փչում է, և որ այդ բոլորը հերիք չի, այս խեղճ երեխին (այսինքն Մանուշին) մենակ են թողնում տանը, իսկ իրենք գլուխներն առած գնում են, ուր սրտներն ուզում է:
Մորաքույր Մարթան, որ բնավորությամբ հանգիստ էր ու լռակյաց, այժմ գնդացրի պես պտպտում էր առանց հանգստանալու:
- Դուք մենակ ձեր մասին եք մտածում: Ուր ասես քարշ եք գալիս, բայց մի անգամ էս էրեխին հետներդ չեք տանում, որ սիրտը մի քիչ բացվի: Եթե էդպես երկար շարունակվի, ես նամակով հորդ իմաց կտամ, թող գա ձեզ տանի:
Կարծես դիտմամբ կրակի վրա նավթ լցնելու համար, Մանուշն էլ մյուս կողմից լացակումած վրա տվեց.
- Ես դեռ իսկի անտառ չեմ գնացել, մորաքույր... Բայց իրենք միշտ գնում են ու ինձ մի անգամ էլ չեն ուզում հետները տանեն:

- Ո՞վ է ամեն անգամ գնում, - խոժոռադեմ հարցրեց Սուրը:
- Դու, Սամը:
- Ստում ես, մենք մի անգամ ենք գնացել միայն, չէ՞, Սամ:
- Չէ, գնում եք, ես գիտեմ, գնում եք, - վրա տվեց Մանուշը:
- Լավ ենք անում:
- Դե որ այդպես է, ես ոզնուն ու Դեղնամազիկին չեմ նայի: Էլի կասեք, չէ՞, կերակրեմ նրանց: Չեմ կերակրի, թող սատկեն:
- Իսկ դու մի սկսիր, իմացա՞ր, - սպառնագին մռթմռթաց Սուրը՝ բռունցքը սեղմելով:
- Մի էդ աննամուսին նայեք, է՛, - վրդովված փնչացրեց տատը, - էստեղ են ասել, որ գորտի երեսին թքեցին, իսկ նա թե՝ անձրև ա գալի: Տո բա ձեր երեսին իսկի մեռոն չկա՞:
Եվ այսպես մորաքրոջ գնդացրի ճարճատյունին իսկույն հաջորդեց տատի որոտաձայն ծանր հրետանին ու հետո ամեն ինչ կամաց-կամաց խաղաղվեց և կյանքը նորից սկսեց իր սովորական հունով ընթանալ:
Մորաքրոջ ու տատի բարկությունը մեղմելու համար տղաները խոստացան սրանից հետո տեղ գնալիս Մանուշին էլ հետները տանել, ապա իրենց առջև դրված կաթնապուրը ագահաբար խփշտելուց հետո գնացին քնելու:
Քնե՛լ... բայց ինչպես նրանք կարող էին քնել, երբ պատից կախված երկար շղթայով ժամացույցն իր խուլ տկտկոցներով շարունակ հիշեցնում էր, որ մի ժամ հետո, այնտեղ, գետափին սպասելու են իրենց ընկերները:
Մանուշը, որ վերջերս էր տղաների սենյակը տեղափոխվել, հակառակի պես անընդհատ շարժվում էր անկողնում և անտեղի հարցեր տալիս:
- Սուր, ա՛յ Սուր... Իսկ անտառում սունկ շատ կա՞:
Լռություն:
- Սամ, ա՛յ Սամ... Որ մի անգամ ինձ էլ անտառ տանեք, ինչ ասեք կանեմ: Ամեն օր ոզնուն ու Դեղնամազիկին հաց ու ջուրը ես կտամ, մողեսների համար ճանճեր կբռնեմ:
Տղաները համառորեն շարունակում էին լուռ մնալ: Դեռ ավելին, նրանք վերմակները գլխներին քաշած, դիտավորյալ ֆսֆսացնում էին, ցույց տալու համար, որ իրենք վաղուց քնած են: Իսկ ժամացույցը, նրանց գլխավերևում կախված ժամացույցը շարունակ...
- Տիկ-տա՛կ, տիկ-տա՛կ:
...Սուրը հանկարծ զգաց, որ մեկը կամաց բոթում է իրեն:
- Ի՞նչ ես քնում: Ժամանակն է, վեր կաց, - շշնջաց Սամը: Սուրը բացեց աչքերը ու նայեց ժամացույցին:
- Դեռ շատ ժամանակ կա:
- Ոչ մի շատ... Շուտ արա, քանի բոլորը քնած են: Բայց արդյո՞ք բոլորն էին քնած:
Մանուշը դեռ նոր էր քնել, երբ հանկարծ նրա ականջին հասավ տղաների խոսակցությունը:
- Սամ, եթե այս բոլորից հետո մորաքույրս իմանա՞... Ավելի լավ է արի մեր գնալու մասին մի թղթի վրա գրենք ու թողնենք, թե չէ նրանք ման կգան:
- Գրել հարկավոր չի: Մորաքույր Մարթան առավոտը շուտ է գործի գնում: Նա կկարծի քնած ենք ու կգնա: Իսկ մինչև նրա աշխատանքից գալը մենք արդեն վերադարձած կլինենք: Դե վեր կաց: Լապտերի մեջ դեռ նավթ էլ պիտի լցնենք, շտապիր:
- Լապտե՞րն էլ պետք է վերցնենք:
- Բա ինչ: Գիշերով ճանապարհ ես ընկնում ու առանց լապտերի՞:
- Ախր նավթի ամանը ցախատնում է ու դժվար է հանել, Սամ: Եվ հետո ինչ մի լապտեր է, որ հետներս տանենք: Բոլորովին ժանգոտված է, ծռմռված:
- Ծռմռված է, բայց ծակ չի: Եթե ուզում ես իմանալ, իսկական ճանապարհորդները միշտ էլ էդպիսի հնացած լապտերներով են ճանապարհ ընկել:
Տղաները զգույշ ցած իջան մահճակալներից և սկսեցին անաղմուկ հագնվել:

- Այ թե հետաքրքիր կլինի, - ոգևորված ասաց Սամը, - պատկերացնո՞ւմ ես, նավակը լողում է գետի վրայով, իսկ լապտերը լուսավորում է մեր ճանապարհը: Էս արշավի մասին դու հետո կգրես, չէ՞, Սուր: Անպատճառ կգրես, որ մեր դպրոցի տղաներն իմանան, թե ինչպես ենք անց կացրել ամառը:
«Այ թե ինչ... Ուրեմն նրանք արշավի են դուրս գալիս, - վերմակի տակից շարունակ ծկրակելով մտածում էր Մանուշը, - իսկ տեսնես ո՞ւր են գնում այս մութ ժամանակ, հետաքրքիր է...»:
...Գիշեր է:
Աստղազարդ երկնքում հանդարտ լողում է մեծ ու կլոր լուսինը: Ամաչկոտ հարսի նման նա մերթ թաքնվում է թափանցիկ ամպերի նուրբ շղարշի ետևը, մերթ դուրս գալով այնտեղից, ամոթխած ժպիտով շարունակում իր ուղին:
Ցածում հանդիսավոր լռություն է տիրում:
Խաղաղվել է գյուղը: Լռել են մարդիկ: Ամբողջ բնությունը թաղվել է իր անմեկնելի խոհերի մեջ: Մեղմ քամին էլ, ասես վախեցած, այնպես զգույշ է անցնում ծառերի խիտ տերևների արանքից, որ հանկարծ ամենափոքրիկ խշշոցն անգամ չխախտի բնության այդ վեհ ու իմաստուն լռությունը: Բայց հեռվում, գետափին ցատկոտող անքուն գորտերն են միայն, որ անտարբեր ամեն ինչին, շարունակում են իրենց գիշերային շատախոսությունը.
- Կը՛ռռռ, կը՛ռռռ, կը՛ռռռ...
- Եռպ, եռպ, եռպ...
...Դռան խուլ ճռռոց լսվեց: Վառված լապտերը ձեռքներին տղաները զգույշ դուրս ելան բակից և արագ քայլեցին գետափ տանող ճանապարհով: Նրանք դեռ մի քսան քայլ չէին արել, երբ թեթև ոտնաձայներ լսելով կանգ առան: Ա՛յ, քեզ փորձանք.,.
Նրանց ետևից գողեգող քայլերով գալիս էր Մանուշը՝ գզգզված խոպոպիկները գլխի վրա ցցված:
- Մանո՞ւշ, - զարմացած առաջ գնաց Սամը:
Մանուշը վարանած կանգ առավ:
- Ինչի՞ ես վեր կացել:
- Դուք գնում եք, դրա համար:
- Մենք ոչ մի տեղ չենք գնում: Ե՛տ դարձիր, լսո՞ւմ ես, - խեղդված ձայնով վրա պրծավ Սուրը:
- Չեմ... Ես էլ եմ գալիս:
- Ախր, ո՞ւր ենք գնում, որ գալիս ես:
- Պա՛հ... Ինչի չգիտ՞եմ, ուր եք գնում: Նավակով արշավի եք գնում: Լապտերն էլ գիտեմ ինչի եք հետևերդ վերցրել: Ես ամեն ինչ գիտեմ...
- Գիտե՞ս... Որտեղից գիտես:
- Լսեցի, ամեն ինչ լսեցի: Դուք կարծում էիք քնել եմ, բայց քնած ժամանակ ես ամեն ինչ լսեցի:
Սամն այստեղ մի այնպիսի հուսահատ հայացքով նայեց Սուրին, կարծես ցանկանում էր ասել՝ «Այ թե խրվեցինք... Ի՞նչ անել, ինչպե՞ս ազատվել սրանից»:
- Հասկացիր, Մանուշ, - մի փոքր լռությունից հետո աղերսագին ասաց Սուրը, - ճիշտ է, դու ամեն ինչ լսել ես, բայց մենք բոլորովին էլ արշավի չենք գնում:
- Սուրը ճիշտ է ասում: Մենք հիմա էնպիսի տեղ ենք գնում, որ քեզ չենք կարող մեզ հետ տանել: Հասկանո՞ւմ ես: Այ, էստեղից շատ հեռու մի մութ ու սարսափելի քարայր կա: Էդ քարայրի մեջ էլ ինչքան ասես կարիճներ ու օձեր կան...
- Խաբում ես:
- Ճիշտ եմ ասում:
- Ինչ անեմ, գալիս եմ, - ոտքերը գետին զարկելով համառեց Մանուշը:
- Ախր, էդ օձերը թունավոր են, որ կծեցին, պրծավ...
- Իսկ ձեզ ո՞նց չեն կծում:
Տղաներն ամեն կերպ աշխատում էին համոզել նրան, որ ետ դառնա, բայց իզուր... Ո՛չ Սամի երևակայությամբ հորինած օձերն ու կարիճները և ո՛չ էլ Սուրի խնդրանքներն ու սպառնալիքները չազդեցին Մանուշի վրա:

- Այ, եթե ինձ չտանեք, ես հենց հիմա ձայն կտամ տատիկին ու մորաքույրին և դուք կտեսնեք ձեր օրը:
Մանուշի այս կործանիչ սպառնալիքը միանգամից թևաթափ արեց մեր երկու ճանապարհորդներին: Նրանք նախ նայեցին իրար, ինչ-որ գաղտնի բան փսփսացին միմյանց ականջի և հետո Սուրը քրոջն ասաց.
- Դե լավ... Բայց տես, հա, որ ճամփին հանկարծ սկսեցիր նվնվալ, պրծավ:
Եվ նրանք երեքով լուռ շարունակեցին իրենց ճանապարհը:
Գետափին, թաքստոցի մոտ, արդեն սպասում էին Սահակն ու Թլոն: Մոտեցողների ձեռքի վառված լապտերը տեսնելով, նրանք ուրախ առաջ եկան:
- Լապտե՞ր: Այ թե բան եք մտածել, հա՛, - հրճվալից բացականչեց Սահակը: Իսկ Թլոն Սամին մի կողմ տարավ և ցույց տալով Մանուշին, սրտնեղած հարցրեց.
- Բա սրան ինչի՞ եք հետներդ քարշ տվել:
Սամը պատմեց նրան քիչ առաջ տեղի ունեցածը: Թլոն ուսերը վեր քաշեց:
Սահակն ու Թլոն նավակն արդեն դուրս էին քաշել քողարկող ճյուղերի տակից: Այնպես որ մեր գիշերային ճանապարհորդները, առանց ավելորդ ժամանակ կորցնելու, իսկույն գրավեցին իրենց տեղերը: Թլոն ամբողջ ուժով նավակը գետի խորքը հրեց, ճարպիկ ոստյունով թռավ մեջը և մեր արշավախումբն սկսեց լողալ դեպի Հառաչանքի քարայրը:
Լուսնի արծաթագույն շողերը ցոլցլալով խաղում էին մեղմ քամուց թրթռացող մանրիկ կոհակների վրա: Գետափի աջակողմյան ծառերի ստվերները, տարօրինակ ձևեր ընդունելով, դանդաղ ետ էին սահում: Թիակների ճողփյուններից առաջացած ջրի մանրիկ շիթերը մերթ ընդ մերթ ցողում էին փոքրիկ ճանապարհորդների հիացմունքից փայլող երեսները:
Տղաների անհանգիստ շարժումներից նավակն անընդհատ օրորվում էր: Նավակի կենտրոնում կուչ եկած Մանուշը շարունակ բղավում էր.
- Կամաց, տղաներ... Վա՛յ, մի շարժվեք, թե չէ շուռ կգանք: Վա՛յ...
- Էլի վայ-վույդ սկսեցի՞ր, - բարկացած ասաց Սուրը և սկսեց ավելի ուժգին թիավարել:
Գիշերվա խաղաղ անդորրության մեջ լսվում Էին թիակների համաչափ ճողփյունները: Լապտերի աղոտ լույսի տակ նավակը գետի հոսանքով առաջ Էր շարժվում: Սամը հպարտ կեցվածքով կանգնել էր նավակի առաջամասում և կոտրված անապակի հեռադիտակն աչքերին, փորձված նավապետի նման հրամաններ էր արձակում.
- Ուժեղ թափով առաջ: Լուսարձակները պահել նավի ուղղությամբ...
Նավի վրայի միակ լուսարձակը ծռմռված լապտերն էր, որն ակամայից Սահակը իսկույն վեր ցցեց:
- Պահել այդպես:
Այդ պահին, նավակի քթի առջև, ջրից ինչ-որ բան դուրս շպրտվեց և նորից չրմփոցով ընկավ ջուրը:
- Վա՛յ, - ցնցվեց Մանուշը:
- Ձուկ էր, ձուկ, - պատասխանեց Թլոն:
- Ձո՞ւկ... Բա նրանք մինչև հիմա ինչո՞ւ են արթուն մնացել:
Եվ այսպես, բավականին ժամանակ էր, ինչ լողում էին նրանք գետի հոսանքով ներքև: Մանուշն արդեն ընտելացել էր նավակի տարուբերվելուն և առաջվա նման ամեն մի փոքրիկ բանից վեր չէր թռչում: Մինչև քարայր շատ քիչ ճանապարհ էր մնացել:
Ահա և գետափի աջ կողմում սևին տվող հսկա ուռենիների այն շարքը, որոնց բարալիկ ու երկար ճյուղերը կախվել ու հեզորեն օրորվում էին ջրերի վրա: Այստեղից գետը թեքվում էր դեպի աջ, որտեղից հարյուր, հարյուր հիսուն քայլ այն կողմ, հենց ուղիղ գետի ափին, գտնվում էր Հառաչանքի քարայրը: Մյուս ափին փռվել էր հարևան գյուղը, որտեղից աղոտ կերպով հատուկենտ փայլփլում էին էլեկտրական լույսերը:
Քարայր հասնելու միտքը անսահման հուզմունքով էր լցրել մեր երկու հերոսների սրտերը: Ահա կանցնեն գետի վրա կախված ուռենիների տակից, կթեքվեն դեպի աջ և Հառաչանքի քարայրն իր մութ ու խորհրդավոր միջանցքներով կհայտնվի նրանց առջև: Մեր հերոսները երբեք չեն մոռանա այս գիշերային նավարկությունը՝ հանդարտ հոսող արծաթափայլ գետի վրա: Չեն մոռանա գյուղն ու

իրենց բոլոր ընկերներին, որ առանց նրանց հազիվ թե այսքան հետաքրքիր անցնեին ժամերը: Այս մտքերով տարված, նրանք դեռ չէին անցել կամարաձև ճյուղերի տակից, երբ հեռվից ինչ-որ ձայներ հասան Սամի ականջին:
Մեր «նավապետը» անհանգիստ շարժումով առաջ ձգվեց, լարեց ուշադրությունը և հանկարծ հազիվ լսելի ձայնով ասաց.
- Ս-ս-ս՛... Սպասեք, հլա մի շարժեք թիակները: Լսո՞ւմ եք...
Նրա այս անսպասելի զգուշացման մեջ բոլորն անհանգիստ տագնապ զգացին: Նրանք շունչները պահած ականջ դրին:
- Լսեցի՞ք, - նորից կրկնեց Սամը: Տղաները գլխով հավանության նշան արեցին:
- Նավակը կամաց մոտեցրեք ափին, տեսնենք ովքեր են:
- Սպասեք, տղերք, - շշուկով ասաց Սահակը, - ես ինքս առանց թիավարելու:
Այդ ասելով նա իսկույն ամբողջ հասակով մեկ կանգնեց նավակի մեջ, բռնեց իրենց գլխավերևը կախված ճյուղերից և ամբողջ ուժով ձգեց իրեն: Նավակն արագ ու անձայն սահեց և խուլ թփոցով դիպավ ափին:
Գիշերային խորհրդավոր լռության մեջ պարզ ու որոշակի լսվեցին հետևյալ խոսքերը:
- Էս չորս բիդոն մեղրը որ ռադ անենք, նոր խիղճս կթեթևանա: Էդ շան որդի Գևոն շրջկենտրոնից մարդիկ է կանչել, որ գործը պարզեն:
- Ոնց չէ... Ամա թե ժամանակին փախցրիր, հա՛, - ցածրաձայն խոսեց մյուսը, - թե չէ որ տանդ մեջ բռնել էին ինչ է, էս անարատ մեղրի փոխարեն պնչներիցդ դառը ծուխ էին հանելու...
- Ո՞ւմ, ի՞նձ... Հա՛, հա՛, հա՛, - հռհռաց առաջին խոսողը, - հիմի էդ բիդոնները մի քարայրի մեջը տանենք, որ մարդ-մուրդ չտեսնի, նոր էն ժամանակ սևն ու սպիտակը թող ջոկեն... Ինձ Հանեսանց Սմբատ կասեն:
Սմբա՛տ...
Այս անունը ռումբի պայթյունի նման ցնցեց բոլորին: Պապանձված տղաների ուղեղներում սկսեցին չարագուշակ մտքեր պտտվել: Ի՞նչ գործ ունի Սմբատն այս ժամին քարայրի մոտ... Կամ թե ի՞նչ մեղրի բիդոններ են, որ նրանք ցանկանում են թաքցնել մարդկանց աչքերից: Հանկարծ նրանց ականջներում դժժաց Շավարշի պատմությունը, և...
- Հարկավոր է Շավարշի հորը իմաց տալ, տղերք, - անհանգիստ ասաց Սահակը:
- Չէ, մինչև մեր գյուղը հասնենք, ուշ կլինի, - շշնջաց Թլոն և ապա փոքր-ինչ մտածելուց հետո ուրախ ասաց, - ես գտա... Ինչի մեկ էլ մեր գյուղը գնանք, հրեն հարևան գյուղը քթներիս տակն է: Դե, ես թռա...
- Սպասիր, Թլո, ես էլ եմ գալիս, - մեջ ընկավ Սուրը:
- Դե լավ, գնացեք, իսկ մենք կհետևենք նրանց մինչև ձեր գալը: Մենակ թե էնպես անցեք մյուս ափը, որ ձեզ չտեսնեն, - ավելացրեց Սամը և արագ հանգցնելով առանց այն էլ հոգեվարք ապրող լապտերը, Սահակի ու Մանուշի հետ ափ դուրս եկավ:
Թլոն ու Սուրը զգույշ շարժեցին թիակները և նավակն անաղմուկ լողաց դեպի մյուս ափը:
Մանուշը, չհասկանալով թե բանն ինչումն է, սարսափած հարցրեց.
- Ի՞նչ է պատահել, Սամ... Ո՞ւր գնացին նրանք:
- Ս-ս-ս... Հետո, հետո ես քեզ ամեն ինչ կպատմեմ: Իսկ հիմա ոչ մի ձայն, իմացա՞ր:
Նրանք զգույշ, խուսափելով ծառերի ճյուղերին կպչելուց, ափի երկայնքով շարժվեցին դեպի քարայրը: Սահակը, որ առաջնորդում էր Սամին ու Մանուշին, հանկարծ կանգնեց և ճյուղերի միջից մատնացույց արեց քարայրի առջև շարժվող ստվերները:
- Շուտ արա, - նորից լսվեց Սմբատի ձայնը, - էս մեկն էլ ներս տանենք, հրես ուր որ է Մուշեղը կգա:
Հեռվում, լուսնյակի լույսի տակ փայլեց վերջին բիդոնը, որն իսկույն անհետացավ քարայրի մութ խոռոչում:
«Մուշեղ...», - կրկնեց մտքում Սամը: Այդ անունը, չգիտես ինչու, ծանոթ թվաց իրեն: Նա ինչ-որ տեղ լսած պետք է լիներ այդ անունը, բայց որտեղ... Սպասիր, սպասիր... Նա հիշեց գնացքը... Վագոնի կեսգիշերվա խոսակցությունը, միոտանուն... նրա խոսակցին՝ Մուշեղին: Դե, իհարկե, այդ նա պետք

է լինի: Ահա թե ինչ դավադրության էին պատրաստվում նրանք այն ժամանակ: Հիշեց՝ և սարսափախառն մի զգացում անցավ նրա սրտով:
Դանդաղ անցնում էին սպասումի տանջալից րոպեները:
Եղանակը սկսել էր ցրտել: Մանուշը կծկված, քիպ կպել էր տղաներին և չէր համարձակվում մի ծպտուն հանել: Սամը չէր հիշում, թե որքան ժամանակ էր անցել, երբ հանկարծ քարայրի առջևից լսվեց Սմբատի ձայնը.
- Շո՛ւտ արա, հրեն Մուշեղը եկավ...
Երեխաները նայեցին դեպի գետը և թևաթափ եղած թռչունների նման նստեցին խոտերի վրա:
Մյուս ափից, դեպի նրանց էին լողում մարդկային երկու մութ ստվերներ:
- Ամեն ինչ կորավ... - հուսահատ հառաչեց Սամը, - մինչև մերոնք հասնեն, նրանք արդեն կտանեն բիդոնները:
- Ճիշտ է, կտանեն... Բա ինչ անենք, հը°: Ախր, մերոնք էս ինչի՞ են ուշանում, է՛, ինչի՞ են ուշանում, - հուզմունքից մատները կոտրատելով ասաց Սահակը:
- Արի բղավենք: Մեր ձենից նրանք կփախչեն, իսկ բիդոնները կմնան քարայրում:
- Հո չես գժվել: Մի քիչ էլ սպասենք, գուցե մերոնք հասնեն:
Մինչև թփերի մեջ կուչ եկած մեր փոքրիկ հերոսները մի ելք կգտնեին, նրանք արդեն լողալով մոտեցան ափին և հանկարծ...
Քարայրի մոտ անհասկանալի իրարանցում ընկավ: Ափ իջած երկու անհայտ մարդիկ ձեռքները արագ գրպանները տարան և...
- Չշարժվեք:
Նույն պահին ափին կանգնած նավակից ձայներ լսվեցին.
- Սահա՛կ, Մանո՛ւշ, Սա-ա՛մ...

Գլուխ տասնյոթերորդ. ՀԱՌԱՉԱՆՔԻ ՔԱՐԱՅՐԸ

Գողացված մեղրի հայտնաբերելու լուրը կայծակի արագությամբ տարածվեց ամբողջ շրջանով մեկ: Բոլորը խոսում էին հենակավորի և նրա ընկերոջ՝ Մուշեղի անակնկալ ձերբակալության մասին, շաքարից պատրաստված մեղրի, Շավարշի հոր զրպարտվելու և Սմբատի կատարած այն բոլոր խարդախությունների մասին, որոնցից, ինչպես կասեր անտառապահ Հւսմբարձում ամին. «Քանի-քանի անգամ է ձկան նման դուրս պլստացել»:
- Համա էս անգամ էլ պրծում չունի, - ասաց նա, երբ լսեց այդ բոլորը, - էստեղ են ասել, է... Փորձված աղվեսը զույգ ոտով է թակարդն ընկնում...
Ամեն տեղ՝ լսվում էին Թլոյի, Սահակի և քաղաքից եկած այն երկու տղաների անունները, որոնց գիշերով քարայր գնալը պատճառ դարձավ գողացված մեղրը հայտնաբերելու:
Թվում էր, այս ամբողջ պատմությունն այսպես էլ կվերջանար, եթե հաջորդ օրը չպատահեր մի ավելի կարևոր դեպք...

***

Կեսօր էր:
Արևի ոսկեգույն ճառագայթները սփռվել էին գետի կապտավուն ջրերի վրա:
Մեր ճանապարհորդների «նավատորմիղը», որը բաղկացած էր Արտեմ Նիկոլաևիչի նավակից և տղաների փոքրիկ լաստից, նորից «խարիսխ գցեց» (այս անգամ արդեն լրիվ անձնակազմով) Հառաչանքի քարայրի մոտ:
Նավակից, որ առաջինն էր մոտեցել ափին, դուրս եկան Սամը, Շավարշը, Մանուշը, Սահակը և իր քույրը, իսկ լաստի վրայից ափ ցատկեցին Սուրը, Թլոն, Մուկուչն ու էլի երկու տղաներ:
Քարայրի մուտքից երկու քայլ հեռու, խոտերի ու գույնզգույն ծաղիկների մեջ սևին էր տալիս մի շիրմաքար:
- Այ, սա էն սպանված ուսուցչի գերեզմանն է, - անհամբեր ասաց Շավարշը և ապա առաջինը մտավ քարայրի մուտքից ներս: Նրան հետևեցին մյուսները:

Դանդաղ, ուշադրությամբ զննելով իրենց շուրջը, երեխաները քայլում էին իրար ետևից: Նրանց ոտնաձայները խուլ դոփյուններով արձագանքվում էին քարայրի խորքում: Որոշ տարածություն անցնելուց հետո քարայրն սկսեց բաժանվել տարբեր անձավների, որոնք մեկը մյուսի հետ կապվում էին նեղ ու խոնավ միջանցքներով: Պատերից սառնություն էր փչում:
Հանկարծ քարայրի խորքից ինչ-որ չարագուշակ վայոց լսվեց, որը քիչ անց փոխվեց խուլ կռինչների: Սուրի մարմնով տարօրինակ մի սարսուռ անցավ: Նրա չռված աչքերը, որ ուղղված էին դեպի ձախակողմյան միջանցքը, տագնապալից փայլեցին:
- Մի այնտեղ նայեք, տղաներ: Այն ի՞նչ է...
Բոլորը նայեցին նրա ցույց տված ուղղությամբ:
Ձախակողմյան միջանցքի պատից դուրս ցցված քարե ելուստի վրայից իրենց էին նայում երկու կրակե աչքեր:
- Վա՛յ, մամա... - աչքերը փակելով, լացակումած նվնվաց Մանուշը:
- Բու է, տղերք, բո՛ւ... - ուրախ բացականչեց Շավարշը և, Սուրի ձեռքից վերցնելով փայտաձողը, ոտքի ծայրերի վրա առաջ գնաց: Նրա ետևից, չգիտես ինչու, կուզեկուզ գնացին մյուսները:
- Ձգույշ, Շավարշ, չփախցնես, - շշնջաց Սահակը:
- Վա՛խ, տղերք, որ էս բվին բռնենք, է՛, մեր «կենդանի անկյունի» նմանը աշխարհում չի լինի,- հուզմունքից դողդողալով, ավելացրեց Սամը:
Քարայրի առաստաղի լայնակի ճեղքից ներս ընկած լույսի շերտը խանգարում էր բվին իր շրջապատը տեսնելու: Նա ամենափոքր շրշյունները որսալով էր միայն, որ զգում էր մոտալուտ վտանգը, այս ու այն կողմ էր թեքում լայն ու տափակ երեսը և անհանգիստ կռանչելով, կարծես պատրաստվում հարձակման:
Շավարշն արագ ու ճկուն շարժումով վեր թռավ ու ձեռքի փայտը ամբողջ ուժով շպրտեց բվի վրա: Բայց թռչունին դիպչելու փոխարեն փայտը աննպատակ շրխկաց պատին և ցած ընկավ: Բուն կատաղած նորից չարագուշակ վայեց, շփշփացրեց ամուր թևերը և պատեպատ դիպչելով, թռավ դեպի հարևան միջանցքը:
Տղաները երկար ժամանակ վազում էին անձավից անձավ, բայց նրանց ոչ մի կերպ չէր հաջողվում բռնել գիշատիչ թռչունին, որը կատաղությունից արդեն հարձակվելու փորձեր էր անում:
- Տղերք, հեռու, - զրնգաց քարայրում Թլոյի ձայնը, - հիմի ես դրա հերը կանիծեմ:
Եվ նա շտապով կռացավ, գետնից վերցրեց պատից թափված մանրիկ քարերից մեկը և պարսատիկը լարեց...
Լսվեց մի խուլ տկոց ու պատի վրայից բուն ցած ընկավ:
Եվ մինչ բուն ուշքի կգար, տղաները նրան շտապով խցկեցին պարկի մեջ:
Այդ «հազվագյուտ գանձը» ձեռք բերելուց հետո երեխաները սկսեցին ավելի ոգևորված շրջել քարայրում: Նրանց թվում էր, որ ամեն անկյունում, պատերի ամեն մի ճեղքում, ինչ-որ անհայտ նորություն թաքնված պետք է լինի, որը ավելի կհարստացնի իրենց «կենդանի անկյունը», բայց իզուր...
Պարկում տեղավորված բուն սկսել էր անհանգստության նշաններ ցույց տալ: Այդ իսկ պատճառով Սամն առաջարկեց շուտ տուն վերադառնալ:
Եվ ահա վերադարձին, երբ նրանք անցնում էին վերջին անձավով, Սուրի զննող աչքերը դարձյալ ինչ-որ փայլփլող կետեր նկատեցին, բայց այս անգամ արդեն գետնի վրա:
- Վա՛յ... լուսատտիկներ...
- Լուսատտիկնե՞ր, - ուրախ բացականչեց Մանուշը և Սահակի քրոջ հետ միասին առաջինը նետվեց դեպի պատի տակ կիտված քարակույտը:
Սուրն օգնության հասավ աղջիկներին և քարերը մի կողմ գլորեց: Պարզվեց, որ այդ փայլփլող կետերը բոլորովին էլ լուսատտիկներ չէին:
- Լուսատտիկները քարայրներում չեն լինում, - շտապով բացատրեց Սահակը: - Դրանք փտած փայտի կտորտանքներ են: Մի տեսակ փայտ կա, հենց որ փտում է, սկսում է մութ ժամանակ լույս տալ:

Բայց Սուրը չէր լսում, նա ձեռքի ափերի մեջ փտած փայտի կտորտանքների փոխարեն հետաքրքրված շուռումուռ էր ...
- Այս ի՞նչ է, քարերի տակից հանեցի:
Տղաները հերթով զննեցին այն: Դա ժանգոտված, ծռմռված ու փոս ընկած մետաղյա մի տափակ ծխախոտատուփ էր:
- Դեն շպրտեք, տղերք: Ինչների՞դ է պետք...
- Սպասեք, - վրա պրծավ Սուրը, - իսկի մտածում եք, թե ի՞նչ գործ ունի այստեղ ծխախոտատուփը: Երեկ նրանք այստեղ են եղել, ուրեմն...
Սամը, հասկանալով, թե խոսքն ում մասին է, անտարբերությամբ ընդհատեց նրան:
- Դեն գցիր, է՛: Երե՛կ... էնքան է ժանգոտել, որ նույնիսկ չի էլ բացվում:
Այդ ասելով նա քաշեց ծխախոտատուփը Սուրի մատների արանքից ու թափով շպրտեց մի կողմ: Մետաղյա ծխախոտատուփը շրխկոցով դիպավ միջանցքի պատին, անսպասելի բացվեց և նրա միջից ցած ընկավ մի խունացած թղթի կտոր: Սուրն արագ ճանկեց այդ թղթի կտորը:
- Տղաներ, նկար է... Իսկ հետևում էլ բան կա գրված:
Այդ լսելուն պես բոլորը հետաքրքրված շրջապատեցին Սուրին, որը ճիգ էր թափում կարդալ խունացած նկարի հետևում գրված հազիվ նշմարվող մակագրությունը:
- Ի-ի-ի... ինձ, - սպ-սպ-սպ,.,
- Սպա՞ս, - կատակեց Թլոն:
Բոլորը ծիծաղեցին:
- Դե ի՞նչ սպաս: Ա՛յ, այստեղ գրված է... ճիշտ է, մի քիչ ջնջվել է, բայց կարդացվում է: Ա՛յ, կարդա, սպ...սպ... սպանեց:
- Ի՛նչ... Սպանե՞ց, - հանկարծակիի եկած բացականչեց Շավարշը: Չարագուշակ մի բան անցավ նրա մտքով, և նա Սուրի ձեռքից խլեց անծանոթ խունացած նկարը և նետվեց դեպի լույսը:
Եվ մինչ զարմացած ընկերները կհասնեին նրա ետևից, Շավարշը կարդաց ծուռումուռ տառերով գրված հետևյալ բառերը:
- «Ինձ սպա-նեց... Հա-նե-սանց Սըմ-բա-տը...»
Սմբատը... Դարձյալ Սմբատը: Եվ այդ պահին նրա գլխում, ծովի փրփրած ալիքների նման, իրար հաջորդեցին կապարի պես ծանր ու մռայլ մտքերը: Նա հիշեց... Հիշեց տարիներ առաջ սպանված ուսուցչի մասին արած հոր պատմությունը և թուլացած նստեց շիրմաքարի վրա:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Թե ինչ պատահեց դրանից հետո, ինչպես այդ կարևոր փաստաթուղթը տեղ հասցրին, ինչպես Շավարշի հայրը ճանաչեց մանկան խունացած նկարը, և թե ինչպես էր Սմբատի ձեռքով սպանված ուսուցիչը մեռնելուց մի քանի րոպե առաջ, իր որդու նկարի վրա գրել այդ տողերը, դրանց մասին ես չեմ պատմի: Միայն այն կասեմ, որ մի քանի օր հետո շրջանային թերթի էջերից մեկում տպվեց Սուրի, Սամի և նրանց այն ընկերների խմբական նկարը, որոնց դուք արդեն ճանաչում եք:
Սուրն ու Սամը ուրախ էին, որ բոլոր հարազատները կկարդան թերթում տպագրվածը և այլևս չեն ասի, որ իրենք ոչ մի բանի պետք չեն գալիս: Նրանք, իհարկե, շատ էին ցանկանում նամակում պատմել նաև գյուղի տղաների մասին, թե ինչպիսի հավատարիմ ու անկեղծ ընկերներ են նրանք և վերջապես այն մասին, որ իրենք հիմա շատ լավ են հասկանում իսկական ընկերության գաղտնիքը:
Բայց քանի որ այդ բոլորը մեկ առ մեկ պատմել հնարավոր չէր, ուստի մեր երկու հերոսները բավարարվեցին նրանով, որ թերթից կտրեցին իրենց և ընկերների խմբական նկարը, դրեցին ծրարի մեջ և, լեզվի ծայրով թացացնելով ծրարի անկյունաձև եզրը, ամուր փակեցին:

1956-1957 թթ.
Երևան